


II³
213

2



2004

Ա. Ա. Ր. Ք

Մեծօրէն

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԼՆՈՍԻ

2832 *5*

1140-ԱԿ

ՊԵՏՄՈՒԹԻՒՆ

Վ. Ե Ր Ո Ւ Յ

Մ Ե Ն Ի Ն

ԿՈՍՏԱՆԴՆՈՍԻ

ԻՆՏԵՆՍԻՎ

Ընտաստասիրեալ ՚ի Հ. Գեորգայ Ոսկեանց
յաշակերտութենէ Տեառն Մխիթարայ
մեծի Աբբայի :




Ի Վ. Ե Ն Ի Ն

Ի Տպարանէ Մեկնարկեան Հարց :

1 8 2 6 :

808
75-9985

28(09) + 9(37)(0924нишисифа)





Շատ պատմութիւն գրքեր, և շատ երևելի մարդիկներու ստորագրութիւններ նկարած են և կամ կրնկարեն պատմիչները, որպէս զի չըլլայ թէ այն մեծագործութիւնները ու երևելի քաջութիւնները որ ատեն մը աշխրբիս վրայ երևցան՝ մոռացութեան անդունդին մէջը թաղվին, և կամ թէ ժամանակին հետ մէկ տեղ կորսուին երթան: Ասան զի ժամանակը ոչ միայն կանցնի կերթայ, այլ նաև իր մէջի եղած բաներն ալ կառնէ կրտանի. ինչպէս գետ մը, որուն ջրը թէ զինքը և թէ ինչ որ իր փոքր ալիքներուն վրայ վերցուցած է քշքշելով կրտանի: Բայց ինչպէս որ պատկերներուն մէջը քիչերը կրնամանին իրենց

գաղափարին, այսպէս ալ պատմութիւններուն կամ վարուց ստորագրութիւններուն մէջէն շատ քիչերը կրնամանին իրենց գաղափարին՝ այսինքն ճշմարտութեան, մանաւանդ երբոր պատմիչ մը գովել կուզէ երևելի մարդուն մէկը : Ասկերպով Հոմերոս նկարած էր Ա. քիւլլէսին վարքը, որ երբոր կարգաց Ա. Ղեքսանդր՝ երանի տրվաւ Ա. քիւլլէսին, վսզի իր գործքերուն աղէկ չափազանց պատմագիր մը գտած էր : Այսպէս կրնեն պատմիչներուն շատերը, վասն զի կուզեն գովաբան և ոչ թէ պատմաբան ըլլալ, և անոր համար ալ ճարտասանական ձևերու ձեռք կրզարնեն՝ մանաւանդ չափազանցութեան ձևին : Սեզի Ղոստանդիանոսին վարուց պատմութիւնը գրած ատեննիս ամենեկին հարկաւոր չեղաւ չափազանցութեան ձև բանեցընելու, վասն զի իր գործքերը իրենցմէ չափազանց են, և իրենք զիրենք բաւական կրգովեն առանց իր պատմիչը աշխատցընելու՝ որ ճարտասանական ար-

հետներէն գովեստ փոխ առնու՝ ու ա-
նոնցմով զարդարէ անիկայ :

Իրաւցընէ այսպիսի սուրբ՝ քաջ՝
մեծագոր՝ ու երևելի ինքնակալի մը վար-
քը հարկաւոր համարեցանք տպելու ու
մեր ազգին մէջը տարածելու, մէյմը որ
հոգնած մտքերու հանգիստ ու քրտընած
մարմիններու ախորժ պաղըշտըկում մի
կրնար ըլլալ, կամ աղէկ կըլլայ ու վախ-
ճաններնուս մօտիկ կուգայ եթէ ըսենք
նէ՛ գեղեցիկ ու օգտակար նիւթ իրարու
հետ անոր ըրած բաներուն վրայ խորա-
թայ ընելու. և մէյմ ալ որ աղէկ օրի-
նակ խոնարհութեան կրնար ըլլալ մեծա-
տուններուն, որ միահեծան թագաւոր
ըլլալով ու Հոռովմայեցւոց ընդարձակ և
անզուգական տէրութեան գաւազանը իր
ձեռքը կրելով այնպիսի խոնարհութիւն-
ներ կընէր որ կարծես թէ կըմոռնար իր
ինչպիսի մեծ մարդ ըլլալը : Ա՛ս միայն
մեզի բաւական պատճառ ու յորդոր
կրնար ըլլալ իր վարքը տպելու, մէկ դի-
թողունք մէկալ առաքինութիւնները՝

որոնցմով զանազան վիճակ ունեցողնե-
րուն զանազան օրինակ կուտայ : Եթե
աս գրգոյկը կարդացօղը աղքատ ու հա-
սարակ մարդ է, կըսորվեցընէ անոր իր
օրինակաւը թէ ինչպէս աստուածպաշ-
տուութիւնը պիտի սիրէ ամմէն բանէն ա-
ւելի, և թէ ինչպէս առաքինի հպատա-
կութիւն պիտի ընէ իր մեծերուն : Եթե
հարուստ է, վերի ըսած խոնարհութե-
նէ՝ ի գատ կըսորվեցընէ անոր իր օրինա-
կաւը թէ ինչպէս աղքատասէր ու ողոր-
մած պիտի ըլլայ, և թէ ինչպէս աղ-
քատներուն ձեռքերը՝ որ Քրիստոսին
գանձանակներն են՝ պիտի լեցընէ : Եւ
դարձեալ թէ պիտի շիհոգայ մինակ իր
տունը թէ արդեօք պակասութիւն մը
ունի՞, այլ նաև պիտի հոգայ Աստուծոյ
տունը : Աոստանդիանոս իր տունը զար-
դերէն կըմերկացընէր որպէս զի եկեղե-
ցիները զարդարէ, և այնչափ հոգ չէր
տանէր իրեն բնակութեան տուն շինելու,
որչափ Աստուծոյ բնակութեան տուներ
այսինքն եկեղեցիներ շինելու՝ որպէս զի

հաւատացեալք զՄատուած փառաբա-
նեն : Եւ միթէ շատ մի ըրաւ , ոչ երբէք ,
վասն զի հարուստները Մատուծոյ գան-
ձապետն են , և յայտնի է որ գանձապե-
տը պիտի աւելի հոգ տանի գանձին տի-
րոջը քան թէ իրեն : Եւթէ իշխանաւոր
է , կըսորվեցընէ անոր իր օրինակաւը թէ
ինչպէս իր դատաստանին մէջ արդարու-
թիւնը նախագահ պիտի ըլլայ , և թէ
ինչպէս իր հպատակեալները պիտի հո-
գայ ու սիրէ , զորօրինակ տանուտէր մը
կըհոգայ ու կըսիրէ իր ընտանիքը : Կոս-
տանդիանոսին բարութիւնը մեզի հա-
մարձակութիւն կուտայ ըսելու թէ նաև
կըսորվեցընէ իր օրինակաւը հոգևոր ա-
ռաջնորդներուն թէ ինչպէս հոգ պիտի
ունենան եկեղեցւոյ ու հաւատոյ վերա-
բերեալ բաներուն վրայ : Մհա Կոստան-
դիանոսին վարուց ստորագրութե պատ-
կերը , որուն գոյնը թէպէտ հասարակ
գոյն է՝ այսինքն աշխարհաբառ լեզուն ,
բայց պատկերը տակաւին գեղեցիկ է ,
վասն զի բուն գաղափարը գեղեցիկ է :

Աս սուրբ և երևելի Թագաւորին
պատմութիւնը պատրաստ շինած գտանք
Խտալացւոց լեզուին մէջը, բայց չուզե-
ցինք բառ առ բառ Թարգմանել, վասն
զի Թէ պակասութիւն և Թէ աւելորդու-
թիւն ունէր: Պակասութիւն, որ Հայոց
ազգին վերաբերեալ բաները կըլուէր,
և գուցէ ալ որ չէր գիտեր: Աւելոր-
դութիւն, որ իր պատմութեան ընթաց-
քը շատ տեղ կըկտրէ խորհրդածութի
խորհրդածութի վրայ դիզելով: Ստոյգ
որ Աստանդիանոսին ըրած բարեգոր-
ծութիւնները ան պատմիչին առիթ կու-
տային Ժամանակիս անկարգութիւննե-
րուն վրայ խօսիլ, բայց մենք անոնք
լռեցինք որպէս զի չերևանք Թէ կարդա-
ցողներուն ճարտարմտութեանը վրայ
ամենևին ապաւինութի չունինք, որպէս
Թէ իրենք իրենցմէ չեն կրնար իմանալ .
մանաւանդ որ շատ անգամ լռութիւնը
աւելի կազգէ քան Թէ խօսիլը:

Ինքզ գրողներուն մէջը հասարակ
սովորութի է հրաւիրել մէկը մէկալը որ

իրենց գրգերը կարդան : Մեզի աւելորդ կերևայ աստուորութիւնբանեցընել, վսզի մենք չըհրաւիրած արդէն Վոստանդիանոսին մեծ անունը կըհրաւիրէ զլսօղնեւրը՝ որ իրեն վարուց պատմագրութիւնը առնեն կարդան, բայց ոչ եթէ միայն կարդան, այլ և զարմանան, ոչ միայն զարմանան, այլև օրինակ առնեն անկից ու հետեին, և հետեւելով անոր առաքիւնութիւններուն՝ անոր փառացը՝ որ ունի հիմակ արքայութեան մէջը՝ արժանի ըլլան :

Հիմակ ատեննիս է որ աս համառօտ խօսակցութիւնը ընելէն ետքը Վոստանդիանոսին վարուց թատրոնին վարագորը (փէրտէն)բանանք, ու կարդացողին ցըցընենք թէ Վոստանդիանոս ինչպէս կըծնանի, ինչպէս կըմեծնայ, ու ինչ բաներ կընէ :

Պարտ է առն թագաւորի 'ի վեր
քան զամենայն զկրօնասիրութեան և
զաստուածպաշտութեան յանձին ու-
նել զգեղեցիկ հոգատարութիւն:

Տակիտոս:





J. F. S. 1811

ZERKOWE L. SC.

Կրկին ազանց փառք և Պսակք
յաւ անդ փրկչին կապին անքակ:


ԳՐԱԾԱՌԻԹԻՒՆ

Վ. Ե. ԲՈՒՅ

ՄԵԾԻՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՍԻ

ԻՆՏԵՆՍԻՎՆԵ



Կոստանդնուսի Մատենադարանի Գրադարան, իր հորը լե-
սար ըլլալը, ու իրեն Գրադարանի անունը
ըրած գործերը:

Ամբ թիվ 274 մինչև 3292.

Կոստանդ. Շրոտոս Կոստանդնուսին հայրը՝
Արեղիանոս ինքնակալին զորաց գնդիմը վրայ զօ-
րապետ էր: Արքոր պատերազմ ընելու Պարսկաս-
տանին կողմերը կերթար՝ հանդիպեցաւ վանապա-
նիմը (մէքեան տրվողիմը) Գրեպան ըսված գեղին մե-
ջը: Տեսաւ անոր աղջիկը որ վայելուչ ձիւքերով
զարդարված էր շեղինէ անունով, ու անիկայ իրեն
հարսնացուց, և անկից ծնաւ զԿոստանդիանոս
յամին 274:

Ի այց ասկից չիկրնար նախատինքմը դրվել

Աոստանդիանոսին վրայ ցեղին անարգութեն կողմանէ, որովհետեւ իր հայրը Աոստանդ Շլոուս ծնած էր 'ի Աղողիայ՝ որ Աղողիոս ինքնակալին եղբօրը աղջիկն էր, և Աւտրոպիոս իշխանէն, որ հարստութեամբ և ազնուականութեամբ շատ երեւելի էր: Աոստանդիանոսին առջի հասակին վրայ լուութեամբ կանցնին պատմիչները՝ ինչպէս որ իրենց հասարակսովորութիւն է, որ երբոր երեւելի մարգումը վարք կրպատմեն, ան հասակէն պատմել կրսկսին, որ ժամանակ որ՝ իրենց հոգւոյն առաքինութիւն ու մարմնոյն ուժը ցըցուցին: Աւ որովհետեւ աս չէր կրնար երենալ տղայութեն հասակին մէջ, ան ատենը միուս ինք իրեն տէր չըլլալուն պատճառաւ, անոր համար պատմիչները ան հասակին վրայ լուութիւն ծածկոցմը կըծըգեն. որպէս զի չըլլայ թէ տղայութեն ատեն ըրած գործքերով անոնց անուանը ու համբաւին վրայ արատմը դնեն: Թէպէտ ասիկայ մենք չենք կրնար զրուցել քաջիկ Աոստանդիանոսին տղայութեան հասակին վրայ՝ որ պղտիկուց կըցուցներ բնութեն ձիրքերը, որոնցմով զարդարված էր. ուր մնաց որ քաջ պատերազմօղ հայրմը ունենալով՝ բոլորովին տըված էր զինքը զէնքերու վարժութիւններուն և պատերազմական հմտութիւններուն, և քանի որ ոտք ոտք տղայուն հասակէն կելար՝ անխրտար քայլ աւ քայլ զինուորական կրթութիւններու մէջ կըմտնէր:

Արբոր ասանկ Աոստանդիանոս պատանեակը
 որ աւուր վրայ յառաջ կերթար յոյս տալով ամ-
 մէնուն, թէ ատենօք մենծ մարդ պիտի ըլլայ, իր
 հայրը Աոստանդ Շ լոռոս, ինչպէս որ արժանի էր
 կեսարական պատուով պսակվեցաւ Ղիօկղետիանոս
 և Մաքսիմիանոս ինքնակալներէն, որոնք տես-
 նալով Աոստանդայ քաջութիւնները, մեծահո-
 գիութիւնը, ու առատաձեռնութիւնը, և այն ամ-
 առաքինութիւնները որ կրկայլէ իշխանիմը, ուղե-
 ցին զանի կեսար ընել Ղաղերիոս ըսված մարդու մը
 հետ: Ընկրտար աս Ղաղերիոսը Աոստանդէն վար
 էր, ինչկրտար որ եղեր կովեր արածօղմը՝ իշխա-
 նիմը զաւակէն, և այնպիսի իշխանիմը զաւակէն
 որուն վրայ բնութիւն իր ձիրքը տուած ըլլայ:
 Թէպէտ քաջ էր արտօքին պատերազմի մէջ՝ բայց
 ներքին մարմնոյ ախտերը ու կիրքերը զնրքը գերի-
 ըրած էին իրենց, ինչպէս քիչմը վերջը կրպատ-
 մենք: Ըրդ՝ որպէս զի աս երկու կեսարները ինքնա-
 կալներուն հետ պատուելի կապանօքմը կապվին՝
 ըսաւ Ղիօկղետիանոս որ Աոստանդը կարգըվի
 Թէոդորային հետ՝ որ Մաքսիմիանոսին խորթ աղ-
 ջիկն էր. և Ղաղերիոս ալ Աղերիային հետ՝ որ էր
 իրեն հարազատ աղջիկը: Արբոր զօրքը իմացան
 թէ աս երկուքը կեսար եղեր են՝ սկսան ծափ զոր-
 նել ու ուրախութենէ վեր վեր ցածկել, խոստա-
 նալով իրենց ամենայն յաղթութիւնները, թէ որ

բաղդը ստիպէ զիրենք պատերազմելու . որովհետև
 գիտէին թէ երկուքն ալ քաջ ու կտրիճ պատե-
 րազմական էին : Վիոկղևտիանոս երկուքին ալ քա-
 ղաքներ բաժնեց , որոնց վրայ որ պիտի տիրէին :
 Աոստանդայ վիճակեցաւ մեծն Ռիւթանիա , Սպանիա ,
 և Վաղղիա : Իսկ Վաղերիոսին Ախրիկիա , Սակեդո-
 նիա , Թրակիա և Յունաստան : Ետ դժարը եկաւ
 Աոստանդայ թողուլ իր սիրելի կնիկը , բայց ինչ
 պիտի ընէր , չէր կրնար քան զինքը ուժովին դէմ
 դառնալ : Ուզելով Աոստանդ իրեն ընկած քա-
 ղաքներուն այցելութիւն ընել , ըսաւ Վիոկղևտի-
 անոսին թէ կուզեմ երթալ : Պատասխան տրվաւ
 Վիոկղևտիանոս՝ թէ որ դուն կերթաս , թող որդիդ
 Աոստանդիանոս իմ քովս պատանդ (բէհին) ըլ-
 լայ : Եհա հոս տեղս իմացաւ Աոստանդ հայ-
 րական սիրոյն բռնաւորութիւնը՝ երբոր ինքնալ
 գերի ընկաւ անոր տակը : Թէ ինչխըտար ցաւալի
 եղաւ այս բաժանումը , կարգացողը կրնայ հաս-
 կընալ ասիկայ ան միաւորութենէն՝ որ երկու
 մարդ որչափ մէկ եղած են սիրով՝ այնչափ բաժնըվիլը
 դժարնին կուգայ : Որդին դեռ տասներութը տար-
 վան առոյգ պատանի՝ մտածելով որ սիրելի հօրը
 երեսաց տեսութենէ պիտի զրկըվի՝ ու անողորմ բռ-
 նաւորին իշխանութեան տակը պիտի մտնայ՝ կըխշ-
 խշար սիրտը , ու արցունքով աչվոնները կըլեցվէր .
 հայրը տեսնելով իր աչքին բիբը վտանգի մէջ ,

ու վերջին երթաս բարովը որդւոյն բերնէն լսելով
կըկսկծար ու կըմորմոքէր . և իրեն պատերազմա-
կան կտրիճութիւն՝ հայրական գութէն կը յաղթըվէր :

Մտանկ սիրուն ու վայելուչ էր աս շնորհալի
պատանւոյն դէմքը , ատանկ քաղցրահայեաց անուշ
աչվըները , ատանկ փայլուն երեսին ու մազերուն
գոյնը , ատանկ գեղեցիկ հասակին վայելուցութիւնը ,
ինչվան տեսնողները՝ Աոստանդիանոսին վրայ կը սկը-
սէին բնութիւնը գովել : Վանի որ աս առոյգ պա-
տանին Ղիոկղեփանոսին առջև կը քալէր , Ղի-
ոկղեփանոս կը զուարճանար , ու անի իր որդւոյն
պէս կը սիրէր : Ինքը ուր որ ըլլայ թէ սեղանի վրայ
թէ հրապարակի մէջ՝ կուզէր որ իր աջ դին ըլլայ
Աոստանդիանոս : Ուստի երբոր Ղիոկղեփանոս
պատերազմի ալ գնաց Պարսիկներուն դէմ՝ տարաւ
հետը զԱոստանդիանոս : Ըն տեղս Աոստանդիա-
նոս ցըցուց իր ձեռվըներուն քաջութիւնը ու մար-
մնոյն արագութիւնը : Մամէնէն առաջ զէնքի վա-
զեց , թշնամիներուն դէմը ելաւ առանց վախնալու՝
պատերազմեցաւ կտրիճութեամբ ինչվան զօրքը յոր-
դորվեցան , ու օրինակ առին անկից պատերազմ ընե-
լու : Վտնըվեցաւ աս քաջազօր պատանին ուրիշ
պատերազմիմը մէջ ալ ապստամբներուն դէմ՝
որոնց զլուխնին կըսվէր Մ. քիւլէս , և գրեթէ մի-
նակ ինքը եղաւ յաղթօղը : Երբոր աս քաջութիւն-
ները ցըցուց Աոստանդիանոս՝ Ղիոկղեփանոս զին-

քը ամբողջ գնդիմը զօրագլուխ ըրաւ : Ըն ատեն
 Արստանդիանոս ամուսնացաւ ու իրեն կին առաւ
 ՉՄիներվինան :

Գ. Բ :

Առարանդայ Կոտայարո-Լիւնը :

Ամբ ան 300 մինչև 9303 •

Ըս ատեններս Հռովմայեցւոց տէրութիւնը հանգիստ
 խաղաղութիւն մէջ էր, որովհետև թէ կեսարներուն
 և թէ ինքնակալներուն տէրութիւնը մէջ երբոր խռովու-
 թիւն շոշորդմը կերենար, շուտմը միւսը վրան կը-
 հասնէր՝ օգնութի կուտար, ու ասանկ իրար կը-
 բրնէին : Թէպէտ ասկից ժողովրդեան վրայ հար-
 կը կըծանրանար, ու տրտունջը մարդիկներուն բեր-
 նէն չէր պակսեր, մանաւանդ որ Վիոկլետիանոս
 աշխրբիս մէջ անուն ձրգելու համար՝ մեծամեծ շէն-
 քերու ձեռք կըզարնէր, ու քաղաքը շէնցնելու ետևէ
 կըլլար, ոչ իր՝ այլ ժողովրդեան ստրկովը : Աը-
 հրամայէր որ Վիկոմիդայ քաղքին մէջ տաճարներ,
 կրկէսներ, բաղնիքներ, ու փառաւոր դարպասներ
 շինվին : Ըտանկ սիրուն ու հոյակապ էին աս շէն-
 քերը, ինչվան անցնող դարձօղները, ու պանդուխտ
 ճամբորդները քաղքէն անցած ատեննին երբոր ա-

սոնք կրտեսնէին ոտվընին կրկապվէր, ու չէին կըր-
նար կշտանալ անոնց նայելէն: 'Ա վրձ այսր անի թէ
որ այնպիսի փառաւոր շէնքերուն վրայ անհաճոյ
բանմը կերենար 'Ղիովղետիանոսին աչքին, կըհրա-
մայէր որ փրլցընեն ու նորէն շինեն: 'Ն հասանկ
էր 'Ղիովղետիանոսին տակը եղած ժողովրդոց խեղճ
ու ողորմելի վիճակը: 'Ղանք տեսնա՞ք թէ Աոստանդ
ինչպէս կրկառաւարէր իր ժողովուրդը, մեւնդ թէ
լաւագոյն կըլար որ ըսէինք իր ընտանիքը: Ա՞ն զի ոչ
եթէ թագաւոր էր որ կըտիրէր ան քաղաքներուն
վրայ, այլ հայր էր որ իրեն խնամոցը յանձնըված
գերդաստանը սիրով ու անուշութիւն կըպահէր: Չէր
ուզեր որ իր թագաւորական գանձին մէջը պարաս
ստակ կենայ, ուսկից որ շահմը չըլար, կըբաշխէր
անոր ասոր՝ որ գործածեն ու վաստըկին, և թէ որ
օրմը կանցնէր առանց պարգև տալու՝ կըցաւէր: 'Իր
հպատակներուն վրայ ծանր տուրք չիգնելէն ետև,
եղածներնալ կըթեթեցնէր: 'Ն սկից կերևայ թէ
աշխարհս շատերը տեսաւ 'Ղիովղետիանոսին պէս
թագաւորներ, բայց Աոստանդայ պէս խիստ քիչ:
'Իր պալատին մէջ ամենեւին չէին գտնվեր ոսկիէ ու
արծձէ ամաններ, ծանտր դին ունեցող տան զար-
դարանքներ, ոչ ոսկուով նախշած ու մարգարտով
բանած հագուստներ: 'Արիչ բանի չէր փափայքեր,
բայց միայն իր հպատակներուն սիրտը ամմէն դիաց

գոհ ընել, և անանկով անոնց սրտին քան թէ ըստակներուն իշխել :

Հասաւ Ղիովղետիանոսին ականջը Աոստանդայ գովութիւր, ու նեղացաւ իր սիրտը : Ղեսպան խրկեց որ դադրի ատանկ ժողովուրդ կառավարելէն, ըսելով թէ չիվայլէր իրեն մեծութեւն անանկ խոնարհուիլ ու աղքատուիլ ապրիլ : Ըս որ լսեց Աոստանդ՝ ըսաւ դեսպաններուն որ քիչմը կենան, ինչքան ըսածներնուն պատասխանը առնուն : Ե ուտմը խապար խրկեց իր հարուստ հպատակներուն՝ թէ ահա հիմակ է ժամանակը ձեր աղէկութիւնը ցըցնելու ու ձեր սէրը ձեր թագաւորին վրայ, և պատմեց անոնց դեսպաններուն խօսքը : Ե առ ժամանակ չանցաւ նայիսաս դիէն ան դիէն թափեցան ժողովեցան հարստութիւններ արծաթ՝ ոսկի՝ մարգրիտ՝ ու ամմէն պիտուական բաներ : Անչեց Աոստանդ դեսպանները ու ցըցուց իրենց ան հարստութիւնները՝ ըսելով թէ կըտեսնաք աս մեծութիւնները, ասոնց ամմէնուն տէրը ես եմ, և պահելու համար տըված եմ իմ հպատակներուս : Գարմացան մնացին դեսպանները, ու սկսան էրնէկ տալ իրեն հպատակներուն՝ որոնց թագաւորը իրենց հայրերնին է : Ետ դարձան դեսպանները, և Աոստանդ ալ այն ամ հարստութիւնները ետ դարձուց, և շնորհակալ եղաւ իրենց ցըցուցած սիրոյն վրայ :

Ղիովղետիանոս և Մաքսիմիանոս ինքնակալ-

ները հրաման հանեցին, որ ամմէն դիաց հալածեն քրիստոնեայները ու չարչարեն, և աս հրամանը պատուիրեցին ամմէն տեղ տարածել: Թող տրվաւ Աստանդ որ աս հրամանը իր տէրութենէ մէջ ալ տարածվի՝ որպէսզի անոնց բարկութիւնը իրեն վրայ չարթնցնէ: Բայց արգելեց քաղաքատեղին ու իշխաններուն, որ չըլլայ թէ մի կուր ընուն թի ընեն ուրանալու իրեն հաւատքը կամ կուռք պաշտելու: Այլ թէ ինչխորտար կըսիրէր Աստանդ քրիստոնեայները ասկից կերևայ: Աննչեց իր դէմը ամմէն քրիստոնեայ իշխանները՝ ու ըսաւ, ընտրեն որն որ կուզեն, կամ հրաժարիլ իշխանութէ, ու մերկանալ իշխանական զարդերը, կամ կուռք պաշտել: Ասոնցմէ ոմանք աւելի սիրեցին աշխրփիս փառքը քան թէ արքայութեն, ու ուրացան հաւատքնին, իսկ ոմանք հանդերձեալ փառաց արթնութենայելով՝ հրաժարեցան աշխարհային փառաց, և քաշվեցան տրներնին: Տեսնալով Աստանդ ասոնց հաւատարմութիւնը իրենց Աստուծոյն, ու անոնց անհաստատութիւնը, կանչեց առջևը ուրացողները, ու բարկութիւն ըսաւ իրենց: Այլ քան զամ մարդ անարդ ուրացողներ, թէ որ դուք՝ ձեր Աստուծոյն՝ որուն ամմնէն աւելի պէտք է որ ծառայէք, հաւատարիմ չէք, հապա ձեր իշխանին ինչպէս կըրնաք հաւատարիմ ըլլալ, և այսպէս վընտեց զանոնք ու կանչեց մէկալ իշխանները:

ԳԼ. Գ.

Պիեղեփիանոս եւ Սաբաթիանոս իւրաքարէն ինքն
 նախալուին: Պիեղեփիանոս ինչպէս զՎոսպոսիանոս
 ինսոր ընել, եւ Ղադերիոս զանիւայ իւրեք ժե:

ԱՄ ան 305:

Ինչպէս վերը ըսինք ժանտաբարոյ Ղադերիոս կե-
 սարը Վոստանդայ ընկերը, փափաքելով մեծագոյն
 իշխանութիւն, և ուզելով իր փառասիրութիւն քաղցը
 յագեցնել՝ զօրք ժողովեց անհամար բազմութիւն, ու
 պատերազմի պատրաստութիւն տեսաւ, որ եթէ իրեն
 անօրէն խորհուրդը խօսքով միայն չիկրնար կատա-
 րելնէ՝ զէնքերու ուժովը կատարէ: Այլաւ գնաց ՚ի
 Նիկոմիդա, ու ըսաւ Ղիոկղետիանոսին որ հրա-
 ժարի ինքնակալութիւն: Թէպէտ Ղիոկղետիանոս ՚ի
 սկզբան ասոր դէմ դրաւ, բայց չիկրցաւ դիմանալ,
 շուտով թուլցաւ, յանձն առաւ ոչ միայն
 հրաժարիլ, այլև իր ընկերը զՍաբաթիանոս
 յորդորել որ իրեն նմանի: Ղադերիոս թէպէտ չէր
 ուզեր որ Սաբաթիանոս ալ հրաժարի, որպէսզի
 անոր տեղը Վոստանդ չըլլայ ինքնակալ, բայց կըլլախ-
 նար ժողովուրդէն՝ որոնք որ կըսիրէին զՎոստանդ:
 Ուստի ահամայ կամօք յանձն առաւ, կամ մանա-
 ւանդ թէ բռնադատեցաւ զՎոստանդ իրեն թաղա-

կից ընել : Գիօղեօտիանոս ուզեց զՎոստանդիանոս
 և զՍաքսենտիոս կեսար ընել կեսարներուն
 տեղը՝ որոնք որ ինքնակալ պիտի ըլլային : Ար-
 կուքնալ չուզեց Գաղերիոս : Վոստանդիանոսը չու-
 զեց, վնդի ականջը լեցված էր անոր պատերազմներու
 մէջ ըրած քաջութիւններովը, վասնալով որ չըլլայ թէ
 իր հօրը հետ մէկ տեղ խօսք ընեն, ու իրեն գլուխը
 բանմը հասցընեն : Սաքսենտիոս ալ չուզեց, վնդի
 բնուէ մէջ չափէ դուրս անկարգ, ու չափէ դուրս
 անողորմ հրէշմի էր : Ինքը ընտրեց իրեն ուզածին
 պէս զՍեբրոս՝ որ կոչվեցաւ Վաղերիոս, և զՏազա՝
 որ կոչվեցաւ Սաքսիմիանոս երկուքնալ ցած ցեղէ,
 զիրենք ընտրող Գաղերիոսին նման : Չիկրնալով
 համբերել Գիօղեօտիանոս Վաղերիոսին անառակ
 վարուցը վրայ, ըսաւ Գաղերիոսին : Ըտ ինչ է,
 ատ կսքաւասէր ու կերօղ և արբեցօղ մարդը
 կեսար պիտի ըլլայ : Ըն որ ցորեկը գիշեր կընէ, և
 գիշերը ցորեկ : Ըրամներես, պիտի տրվաւ Գաղերի-
 ոս՝ ատիկայ որ խիստ աղէկ գիտէ կառավարել զօր-
 քը ու պատերազմիլ : Ըտ աղաչեց Գիօղեօտիա-
 նոս որ անոր տեղը թող ուրիշմը ընտրէ, բայց իր
 աղանչանքը չիլսվեցաւ :

Ըհա Գիօղեօտիանոսին ձեռքը ուրիշ իշխաւ-
 նութի չիմնաց՝ բայց եթէ օրմը սահմանել որ
 Սաքսիմիանոսին հետ մէկ տեղ հրաժարին ինքնա-
 կալուէ ինքը՝ ի Աիկոմիդայ, և Սաքսիմիանոս ի

Միլան: Սահմանված օրը բերին Ղիօկղետիանոսին գահը ու դրին ընդարձակ դաշտիմը վրայ: Վահին վրայ նստաւ Ղիօկղետիանոս, ու իրեն ամեն զօրքերը ու պալատականները շարվեցան իր դէմը. որոնց մէջը Աոստանդիանոս կայտառ ու կտրիճ պատանին ալ իրեն գնդին գլուխը կայնած էր: Ժողովուրդը անթիւ անհամար խոնեցան հոն տեղս, և դաշտին երեսը լեցուցին, որ առանց աղաղակի ու շըշընկոցի սովոր չէ ըլլալ: Վաղերիոս ժողովրդեան նշան տալէն ետքը լուռ կենալու, ոտք ելաւ Ղիօկղետիանոս աչքըները ջերմ արտասուօք լցված, ու հանվեցաւ իր թագաւորական լաթերէն և նշաններէն. և իմացուց ժողովրդեան՝ թէ ալ ինքը ինքնակալ չէ, այլ Վաղերիոսն է: Ըմեն տեսնողներուն միտքը խորհուրդ ընկաւ՝ թէ ուրեմն Վաղերիոսին տեղը կեսար Աոստանդիանոս պիտի ըլլայ, և սկսան ուրախանալ ու անոր անունը լսելու պատրաստվիլ: Եւ երբոր տեսան որ Ղիօկղետիանոս ուրիշ անուններ տրվաւ, իրար անցան, ու սկսան մէկզմէկու հարցընել թէ անունը փոխեր է Աոստանդիանոսը, և երբոր ստոյգը իմացան, ուրախութիւնին տրտմութի փոխվեցաւ, ու զարմացան թէ ինչ պատճառաւ զրկեցաւ Աոստանդիանոս:

Ըստ ամենայն ըլլալէն ետեւ Ղիօկղետիանոսին երեսները կարմրցան, և ամօթը զինքը ստիպեց, որ վազէ մտնէ ՚ի կառս: Զեծաւ՝ ու ժողովուրդը

Ճեղքելով գնաց քաշվեցաւ իր հայրենեաց քա-
ղաքը :

Նոյն օրվան մէջ Սաքսիմիանոս ալ Սիլան
քաղաքը հրաժարեցաւ ինքնակալութիւն իր զօրաց
ու ժողովրդոց առջևը : Ըստնցմէ ետքը նստան եր-
կու նոր ինքնակալներ, ու բաժնեցին իրենց մէջը
երկիրները : Բայց Վաղերիոս գոռոզութիւն իրեք բա-
ժինը իրեն առաւ, և նաև ըսաւ իմ հրամանիս տա-
կը ըլլան կեսարներնալ : Աւրախութիւն ու ցնծութիւն էր
անոնց՝ որոնք որ Արոստանդայ վիճակեցան, տրամութիւն
և ողջ՝ որոնք որ Վաղերիոսին : Արոստանդայ ինք-
նակալութիւն առաջին պտուղը քրիստոնեայները
ճաշակեցին, վն զի իսկոյն հրաման հանեց իր տե-
րութեանը մէջը՝ որ ան առաջին հալածանքին հրամա-
նը վերնայ, և քրիստոնեայները համարձակ իրենց
պաշտօնը կատարեն :

Բայց ինչխըտար որ Արոստանդայ իշխանութիւն
տակը եղօղները հանգիստ ու խաղաղ էին, անխը-
տար Վաղերիոսին տակը եղօղները հալածանք ու
չարչարանք կը բաշէին անողորմ բռնաւորին ձեռ-
քէն : Վիտեմ շատ հեռու կիյնամ ուղածէս. բայց
կարդացողին բարի հետաքրքրութիւնը գոհ ընելու
համար կը պատմեմ Վաղերիոսին ինչպիսի մարդ ըլ-
լալը ու իր ըրած գաղանութիւնները :

ԳՎ: Դ.

Գաղերիոսին Գալանային Բարբառ:

ԱՄ ան 305 •

Ուրախանալով Գաղերիոս՝ որ իրեն անօրէն կամ-
քը կատարեցաւ, և սրտին խորհուրդը յաջողեցաւ՝
սկսաւ գաղանային կատաղութեամբ խեղճ ժողո-
վուրդը նեղել ու կողոպտել: Գիօկղեստիանոսին
դրած տուրքը նոր նոր եւելցուց, և այս պաշտօնը
այնպիսի մարդիկներու տրվաւ՝ որոնք որպէսզի աղէկ
իրենց իշխանին աչքը մտնեն, իրարու հետ կըմաքա-
ռէին (եարըշկբռնէին) թէ ո՞վ կրնայ շատ կողոպտել
ժողովուրդը, ու ստակ փրցնել: Հրաման հանեց
Գաղերիոս՝ որ ամենուն երկիրները չափվին, ինչխը-
տար որ ծառ, որթ, (ասմա) կենդանի ու մարդ
կայնէ համրվին ու անոնց վրայ տուրք դրվին:
Ամեն տանուտէր պէտք էր որ իր ընտանիքովը եր-
թայ Գաղերիոսին առջին ու համար տայ: Աւ-
չըլայ որ մէկը սուտ խօսի՝ զաւակները հօրը առ-
ջը ծեծել կուտար՝ որպէս զի հօրը ըսածին դէմ
վկայութի տան: Այնպէս գերիները կըչարչարէր,
որ բերներնէն խօսքմը առնու իրենց տէրանցը դէմ:
Շատ անգամ կըչարչարէր նաև կարգըված կնիկ-
ները, որ իրենց էրիկներուն վրայ յանցանքմը դնեն:

Եթէ ասոնցմով Վաղերիոս չէր կրնար շահիլ՝ նոյն իսկ տանուտէրներուն չարչարանք կուտար՝ որոնք որպէս զի խալըսին տանջանքէն, կըսէին չէ թէ իրենց ունեցածին թիւը, այլ ինչ որ Վաղերիոս կուզէր՝ որ ունենան: Ամենուն վրայ միօրինակ տուրք կըդնէր, թէ մեծ ըլլայ թէ փոքր, թէ առողջ և թէ հիւանդ, թէ բազմօրդի և թէ անորդի: Եւ աս տառապանքէն և ոչ իսկ մահը կրնար խալըսել զանոնք, կենդանիները պէտք էին վճարել մեռնողին համար: Աս տուրքէն 'ի զատ՝ ուրիշ շատ տուրքեր ալ կար, որոնց պահանջողները որպէս զի հաճոյ ըլլան իրենց իշխանին՝ քիչմալ իրենք վրան կաւելցնէին: Իսկ քրիստոնեայները՝ որոնց քրիստոնեայ ըլլալը իրենց յանցանք կըսեպվէր, պէտք էին ամեն տուրքերը կրկին վճարել: Շնորհքմը եղած կըլար քրիստոնէիմը եթէ աքսոր կըխրկըվէր, կմ գլուխը կըկտրվէր, բայց ասի ալ Վաղերիոսին այնչափ հաճելի չէր: Ան ատենը կուրախանար, երբոր աչքովը կըտեսնար որ քրիստոնեայմը հոգին կուտայ կոր սաստիկ ու կսկծցնող տանջանքներու մէջ: Անոնցմէ շատերը կապել կուտար ցիցիմը (խաղըխիմը) ու կայնեցնել կուտար կասկարայի (սկարայի) վրայ, ու տակէն կրակ վառել կուտար, ատանկ որ ոտվըներնուն թաթերուն (տապաններուն) կաշին կըզատվէր ոսկրներէն, ու կոլըրվէր: Իսկ մարմիններուն չորս դին քսել

կուտար նորմարած ջահեր (մաշալաներ) , և ուղղի շատ ատեն չարչարանքը տւէ , ու շուտով չիմեռնին՝ երեսնին ու բերաննին պաղ ջուր լեցնել կուտար : Բայց աւելի ուրախութի կունենար , ու աւելի ախորժակաւ (իշտահով) կերակուր կուտէր ան օրը՝ երբոր քրիստոնեայ մը մեծամեծ ու զարհուրելի արջերու առջև կընետուէր , ու անոնցմէ պատառ պատառ կըփառատուէր : Այսպիսի գաղանային կատաղութիւնները 'ի սկզբան քրիստոնեայներուն միայն ըրաւ՝ որոնց յանցանքը քրիստոնէութիւն էր . ետքը սկսաւ ուրիշ մեծամեծներուն ալ ընել . և անոնց յանցանքն ալ իրենց հարստութիւն էր : Իսկ խաթուները գերի կանանց հետ մէկտեղ անարգ ծառայութիւններու մէջ դնել կուտար , որոնց վրայէն ծեծ ու պատիժ չէր պակսէր : Այլ որոնք որ տուրքին պատճառաւ կաղքատնային , ու չէին կրնար վճարել , զանոնք նաւով ծովուն մէջը թափել կուտար իբրև անպիտան աղտ մը քաղքին : Ահա Գաղերիոս Արմենդարիոսը այսպիսի՝ չըսեմ գաղան , հապա մէկ արտաքոյ կարգի հրէշ մի էր :


Բայց մենք առաջ երթանք Արստանդիանոսին գործքերը . քննելու :

ԳԼ . Ե .

Առարտնդիտեսս պանտպան շրտնգնէրոս մէջ իկնայ
Ղաղէրիոսին խովե, անոնյմէ իրնալեան, ու իր հօրը
խովե իւրլայ :

Ամ ան 305 .

Ղաղերիոս տեսնալով Աոստանդիանոսին հողւոյն
առաքինութիւնները, ու պատերազմական քաջու-
թիւնները՝ վախցաւ, ու իր պալատին մէջը առաւ, որ
չըլլայ թէ իր հօրը աթոռը նստի, ու իրեն սրտին
չար խորհուրդները պղտորէ : Աոստանդ՝ թէպէտ
չատ անգամ կըգրէր Ղաղերիոսին՝ որ իր սիրելի
զաւակը խրկէ, ըսելով՝ թէ շատոնց կարօտ մնացեր-
եմ իրեն տեսութեանը . բայց Ղաղերիոս պա-
տասխան կուտար, թէ չեմ կրնար խրկել, վասն
զի ես ալ շատ կըսիրեմ զինքը, և զըժուարս կուգայ
անկից զատվիլ : Ըստպէս պատասխան կուտար
Ղաղերիոսը Աոստանդայ, խարխըրելով զանի,
բայց օր աւուր վրայ խորունկ մըտմըտուքի մէջ
կիյնար, ու հնարքներ կըփորնտուէր՝ թէ ինչպէս
Աոստանդիանոսը մէջ տեղաց վերցնէ : Հայտնի
մեռցընել կըվախնար, վասն զի զօրքը իր յոյսը անոր
վրայ դրած էր . իսկ խրկել՝ բանին ձեռք չէր իտար .
անոր համար տարակուսանաց ու զանազան խոր-



Հուրդներու ալիքներուն մէջ միտքը կը ծփար : Այլ-
 քապէս փնտռեց գտաւ հնարքմը զՎոստանդիանոս
 մեռցնելու :

() Իմը իրրեւ թէ անոր ուժը ուզելով փորձել ,
 հրամայեց իրեն՝ որ տեսարանի (խաղի տեղի) մէջ
 կռուի ամէհի առիւծիմը հետ : Ըն գտնըվողները
 սկսան ափսոսալ ու ցաւիլ Վոստանդիանոսին վրայ ,
 վախնալով թէ առ կտրիճ հասակին վայելուչ ծա-
 ղիկը պիտի շուտմը թուամի , ու պատառ պատառ
 գետինը պիտի իյնայ առիւծին ձեռքէն : Սուտի սըր-
 տերնուն ցաւէն Վաղերիոսին գլուխը անէծք ու
 նշովք կը թափէին : Բայց ինչ կընայիս Վոստան-
 դիանոս առանց վախնալու առիւծին դէմը անցաւ ,
 ու անոր ահագին մարմինը գետինը զարկաւ սպան-
 նեց : Սափ զարկին մէկէն ամմէն տեսնողները ,
 ու գովեցին Վոստանդիանոսին արիութիւնը ու
 հնազանդութիւնը : Թէ որչափ աս գովութիւնը
 Վաղերիոսին սիրտը նեղացուց՝ ասկից յայտնի
 կերեայ . որովհետեւ համարձակեցաւ այնպիսի վտանգի
 մէջ ձգել զանի , ուսկից որ շատ դժուարաւ կընար
 խալըսիլ : Ըն ատենները Սարմատացիները ահագին
 բաղնութեամբ գլուխ վերցուցած էին , ու ասպա-
 տակութեամբ (չէ թէ ծիութեամբ) կաւրէին կը բան-
 դէին կոր Վիկոմիդա քաղքին շրջանակը (էթրաֆը) :
 Հրամայեց Վաղերիոս Վոստանդիանոսին , որ քիչ
 ջօրքով անոնց դէմը երթայ ու պատերազմի :

Պնաց Աոստանդիանոս փոքրիկ գնդովմը, ծեծկը-
վեցաւ, յաղթեց, ու անոնց զլուխը մաղերէն բռնած
քաշքըրտելով բերաւ ձգեց Վաղերիոսին ոտքին
տակը: Այլ ոչ ասով գոհ (սանահաթ) եղաւ Վա-
ղերիոս, ուղեց ուրիշ անդամներնալ փորձել Աոս-
տանդիանոսին բազդը: Տըվաւ իրեն քիչմը զօրք,
ու դարձեալ խրկեց Սարմատացւոց դէմ, որոնք որ
ճախճախուտ (ճիմճիմէլի) ու անմատչելի տեղմը
ամրացած (սիփեկըլէնմիշ եղած) կեցած էին: Ան-
ցաւ Աոստանդիանոս քաջութեամբ իր գընդին
զլուխը, ու յաջողութեամբ անցաւ լճին մէջէն՝ ուր
տեղ որ Վաղերիոս իր յոյսը դրած էր, թէ կամ
ջրէն կըխղզըվի, կամ թշնամիներուն շատութենէն:
Աոստանդիանոս աս երկու վտանգէն ալ զինքը ու
իր զօրքը խալըսելէն ետեւ՝ յաղթեց թշնամիներուն,
ու զանոնք ցիրուցան ըրաւ:

Աոստանդիանոսին հայրը Աոստանդ լսելով իր
որդւոյն ըրած քաջութիւնները, չէր կրնար իր
հայրական սրտին գութը զսպել, ու կարօտէն կը-
մաչէր՝ մանաւանդ երբոր իմացաւ թէ Վաղերիոս
ետեւէն է Աոստանդիանոսը իրեն չար նախանձուն
զոհ ընելու: Վիրմալ գըրեց Աոստանդ Վաղերի-
սին, ըսելով՝ թէ ալ ծերացած եմ մեռնելս մօ-
տիկցած է, խըրկէ իմ սիրելի զաւակս, որ մէյմը
գրկեմ պագնըվիմ ու ատանկ մեռնիմ: Աոստան-
դիանոս առաւ աս գիրը իրեն ձեռքը, ու ելաւ Վա-

ղերիօսին առջին՝ աղաչելով որ ալ աղատ ընէ զինքը :
 Ինչպէս աս ատենը կրցաւ Վաղերիօս սուտ պատ-
 ճառներով ուշացնել , որ չերթայ Աոստանդիանոս իր
 հօրը քովը . բայց հիմայ հատնելով իր ստուծիւննե-
 ղը , հրաման տրվաւ որ երթայ : Բայց ըսաւ , կե-
 նաս մինչև վաղը առտու՝ որ ես անկողնէս ելլամ ,
 ու ինչ որ պիտի ըսեմնէ՝ ըսես , ու անանկ երթաս :
 Ըս հրամանը որ ելաւ՝ շուտմը խապար խրկեց
 Աոստանդիանոս , որ ամմէն ձիերը պատրաստվին ,
 որպէս զի փոխն՝ ի փոխը կարօղ ըլլայ զանոնք շուտով
 լծել ու քալեցնել : Չսպասեց երկրորդ օրը Վա-
 ղերիօսին ելլելուն , վախնալով որ գուցէ միտքը
 կըփոխէ , այլ կէս զիշերանց հեծաւ , ու ելաւ
 ճամփայ : Վաղերիօս կըկարծէր թէ Աոստանդիա-
 նոս իր պալատին մէջ իրեն կըսպասէ , անոր համար
 ուշացուց անկողնէն ելլելը ինչպէս կէս օր : Աէս
 օրէն ետեւ ելաւ ու հրամայեց , որ կանչեն զԱոստան-
 դիանոս : Արբոր ըսեց թէ կէս զիշերանց գացերէ՝
 խիստ բարկացաւ , ու շուտմը ետեւէն մարդ խրկեց ,
 որ զանի բռնեն , ու ետ դարձնեն . բայց անկարե-
 լի եղաւ : Ասան զի Աոստանդիանոս ատանկ կտր-
 գաւորած էր որ՝ այն ձիերը , որ զինքը կըտանէին՝
 չէին կրնար ետ դառնալ : Ըսանկով հասաւ Աոս-
 տանդիանոս ի Պողոնիա , ուր տեղ որ էր իր հայրը :

ԳԼ . Գ .

Առաքանդ իբնանի : Առաքանդիանուս իեսար իբլայ .
 — Երբը իբնն ըբած Գործերը :

ԱՄ ան 306 .

Երբոր տեսաւ Աոստանդ իր սիրելի որդին, որ
 ամաէն վտանգներէն խալըսած եկաւ հասաւ, վաղեց
 պըլըվեցաւ անոր վիզը, գրկեցին մէկզմէկ, ու պագ-
 նըվեցան այնպիսի սաստիկ սիրով որ անխըտար
 տարվան մէջ երկուքներնուն սրտին մէջնալ բորն-
 կած էր : Աոստանդ աս ուրախութիւնը ունենալէն
 ետքը պատրաստութիւն տեսնելու ետեէ եղաւ,
 նաւով ինկիլթէռոային կողմերը երթալու, ու բար-
 բարուներուն հետ ծեծկըվելու համար . որո՞ք գլուխ
 վերցուցած ու ապստամբած էին : Աստի երբոր յա-
 ջող հովը ունեցաւնէ՛ առաւ իր հետը զԱոստան-
 դիանոս, ու հայր և որդի երկուքնալ քաջ պա-
 տերազմօղ՝ մէկ տեղ գացին, ու յաղթեցին թշնամի-
 ներուն :

Աս յաղթութենէն ետքը հիւանդութիւնմը
 ընկաւ Աոստանդայ վրայ, անխըտար սաստիկ՝
 ինչվան բերաւ հասցուց մահուան դուռը : Ա՛ն-
 նելու երբոր մօտիկցաւ, կանչեց Աոստանդ իրեն
 իշխանները, ու անոնց պատուիրեց, որ իրեն տեղը

նատեցնեն իր Աոստանդիանոս անդրանիկ որդին :
 Իսկ մէկալ երկու որդիքը, ք Վաղմատիոս ու
 Յուլիոս Աոստանդ սոսկական (պայաղի) կեանք
 վարեն : Սեռածին պէս Աոստանդ՝ զօրքը բովան-
 դակ վառված ըլլալով Աոստանդիանոսին սիրովը, եր-
 բոր վրանէն (չատրրէն) դուրս կելլար՝ ուր տեղ որ մե-
 ռած էր իր հայրը, անոր առջին գացին, ու ցրցու-
 ցին իրենց կամքը թէ կուզեն զինքը ինքնակալ
 ընել : Չուզեց Աոստանդիանոս անոնց կամքը կա-
 տարել, ըսելով թէ առաջ Վաղերիոսին իմա-
 ցընենք, ու անոր հրամանին սպասենք : Սը-
 տիկ չըրին զօրքը ու մեծամեծները, այլ բռնադա-
 տեցին որ հագնի թագաւորական ծիրանին : Աոս-
 տանդիանոս երբոր տեսաւ թէ չեն մտիկ ըներ կոր
 իրեն՝ հեծաւ ձիոււմը վրայ ու սկսաւ փախչիլ .
 բայց պարապ տեղ, վասն զի վրան հասան շուտմը
 ու ակամայ հագուցին իր հօրը լաթերը :

Ըս ըլլալէն ետեւ Աոստանդիանոս իր հօրը
 փառաւոր թաղում մի ըրաւ, ինչպէս որ կրվայէր
 այնպիսի մեծ ու երևելի ինքնակալիմը : Աոստան-
 դիանոս գիտնալով որ Վաղերիոսին կամացը դէմ
 է ասիկայ, ու լսելու ըլլայնէ՝ պիտի բարկանայ,
 որպէս զի անոր բարկութիւնը քիչմը ցածցընէ,
 գեսպան (էլչի) խրկեց Վաղերիոսին, և տրվաւ
 գեսպանին ձեռքը թուղթմը որով կը քանքատեր
 զօրքին ու մեծամեծներուն ըրածին վրայ, որ ատանկ

առանց սոցասելու իրեն հրամանին՝ զինքը ինքնակալ նստեցուցին : Այլ դեսպանին հետ մէկ տեղ խրկեց նաև իր պատկերը դարնի (թէՖնէ) պսակով պսակված : Հաղիւ թէ Գաղերիոս կարգաց աս թուղթը ու տեսաւ պատկերը , բոլոր բարկութեամբ բռնկեցաւ , ու անխըտար կատղեցաւ , մինչև ուղեց մէկէն թուղթը , պատկերը , ու դեսպանը կրակը ձգել ու երել : Արբոր քիչօր բարկութիւնը իջաւ ու հանդարտեցաւ , միտքը ընկաւ Աոստանդիանոսին քաջութիւնը , ու իրեն զօրաց կարը՝ ճութիւնը , խոնարհեցաւ իրեն բարձր հպարտութենէն , և պարտաւորեցաւ զԱոստանդիանոս ընդունիլ իբրև Աեսար , և ոչ իբրև ինքնակալ : Ուստի անոր տեղը ինքնակալ նստեցուց Աւերոս Աեսարը , ու Աոստանդիանոսին իմացուց , որ գոհ ըլլայ ամենէն վար կեսար սեպվելով : Հանձն առաւ ասիկայ Աոստանդիանոս , որով իրաւցընէ ցըցուց իրեն առաքինութիւնը : Ըսկից ետքը Աոստանդիանոս հանդարտեցնելու համար զԳաղղիա (Ֆրոանսա) Գերմանացուց ու փռանկ ըսվածներուն ձեռքէն , առաւ հետը իր քաջ պատերազմական զօրքը , ու գնաց անոնց հետ ձեծկրվեցաւ , յաղթեց ու երկութիւն թագաւորնալ բոնեց , և գազաններու առջին նետել տրվաւ : Ընկից գնաց Պրուտացուց դէմ , արեց կործանեց ու կրակի տրվաւ անոնց գեղերը , էրիկմարդ ու կնիկմարդ , ծեր և տղայ , մեծ

ու պղտիկ շամիրել (շիշ անցնել) տրվաւ : Իրաւ-
ցընէ խիստ անողորմութիւն է աս բանս, և չի-
վայլէր որ այնպիսի զթած հօր որդիմը՝ այսպիսի
անգթութիւններ ընէ, թէպէտև 'ի սկզբան իրեն
տէրութեանը վախ ձգելու համար ըրած ըւ-
լայ : Ասով ատանկ սաստիկ վախ ձգեց անոնց
վրան, ինչվան մէյմընալ չելան ասպատակու-
թիւն ընելու : Օգուշութեան համար նաւերով
զօրք դրաւ Աոստանդիանոս Ալին գետին վրայ, և
մեծ կամուրձմընալ շինել տրվաւ գետին վրայ՝
որպէս զի թէ որ պէտք ըլլայ շուտով կարօշ ըւ-
լան անցնիլ :

Աոստանդիանոսին առաջին գործքերուն մէկ-
նալ եղաւ քրիստոնէից հալածանքը դադրեցնել,
ու հրաման տալ, որ համարձակ իրենց կրօնին պաշ-
տօնները կատարեն :

Աոստանդիանոս յիշելով իր հօրը՝ մահուան
ատեն տուած խրատները՝ մեծ սէր ցրցուց իրեն
եղբարցը, զանոնք իրեքնալ ք Ղաղմատիոս, Հու-
լիոս Աոստանդ, ու Անիքաղիանոսը մեծամեծ
պաշտօններու հասցուց : Իսկ իրեն քուրերնալ ք
Աոստանդիա, Անաստասիա և Աւարոպիա մեծ իշ-
խաններու հետ կարգեց, ու անոնց փառաւոր
հարսնիք ըրաւ :

ԳԼ Լ:

Հոովմայեցոց աստատելիք Վաղերիոսէն, ու կոստանդնուսէն ինքնախալ ըլլալը:

Ամբ ամն 307, և 308:

Ուովմայեցիները տեսնալով որ իրենց պատիւը ու իշխանութիւնը քանի կերթայ կրքիչնայկոր, ու Վաղերիոս իրենց վրայ բռնակալութիւն ընելէն 'ի զատ, իրենցմէ հարկ կառնէ ու իրենց վրայ իրեն իշխանները կրդնէկոր, ամմնքը մէկ տեղ միաբանեցան՝ ու Մաքսենտիոսը Մաքսիմիանոսին որդին՝ իրենց վրայ ինքնակալ դրին՝ որ կեսար չըլլալուն համար ցաւէն քաշված էր Հոովմայու մօտ գեղիւր մէջ, և հոն տեղս հեշտութեան ու դատարկութեան տրված էր ինքը զինքը: Աւստի երբոր լսեց թէ Հոովմայեցիք կուղենկոր զինքը ինքնակալ ընել, իրեն յոյսը կենդանացաւ, ու վազեց եկաւ Հոովմ, և նստաւ Վաղերիոսին ամոռը. վասն զի Վաղերիոս Հոովմ չէր բնակեր: Աս որ լսեց Մաքսիմիանոս, որ հրաժարած էր ակամայ ինքնակալութենէ, ինքնալ եկաւ Հոովմ, ու աղաչեց իր որդւոյն՝ որ զինքը իրեն գահակից ընէ: Մաքսենտիոս իր հօրը խաթրը չաւրելու համար՝ հնազան-

գեցաւ իրեն, ու սկսան հայր և որդի ընթնակալել
 Հոովմայու մէջ :

Երբոր Վաղերիոսին ականջը հասաւ աս բա-
 ներս, գիտնալով Սաքսենտիոսին վախկոտ ու ան-
 ճարակ ըլլալը, բանի տեղ չխնայեց, միայն իմա-
 ցուց Սևերոս ընթնակալին, որ երթայ ծեծկըվի
 Հոովմ քաղքին հետ, ու ան անարի ապստամբը
 նուաճէ : Ելաւ գնաց Սևերոս շատ զօրքով դէպի
 Հոովմ, կարծելով թէ զօրաց շատութիւնը կը-
 վախցընէ Հոովմայեցիները ու ստուգիւ յաղ-
 թութիւնը կըստանայ : Բայց երբոր Հոովմ
 հասաւ, ու տեսաւ քաղքին մեծ պատրաստութիւ-
 նը ու դռներուն գոց ըլլալը, մտքին խորհուրդը
 պղտորեցաւ, ու խիստ վախցաւ : Մանաւանդ երբոր
 տեսաւ, որ Սատիկանմը (մուպաշիրմը) իրմէն էզմը
 զօրքով դիմացի կողմը անցաւ : Իսկ մնացածներ-
 նալ չէին ուզերկոր պատերազմիլ և աւրել այնպիսի
 քաղաքմը, որ ամմէն քաղաքներուն գլուխնէ : Սև-
 տի առանց պատերազմ ընելու, ետ դարձաւ ու սկը-
 սաւ փախչիլ : Ենկաւ ասոր ետեւէն Սաքսիմիանոս
 հալածեց զանի, ինչվան Սևերոս փախաւ, և մտաւ
 իր զօրքովը Սապեննա քաղքին մէջ : Սաշարեց
 Սաքսիմիանոս քաղաքը ու կեցաւ, տեսնայ թէ
 ինչ պիտի ընէ Սևերոսը : Երկայն ժամանակ քաղ-
 քին շրջանակը նստելէն ետքը՝ մըտմըտաց խաբէու-
 թիւնմը ընել Սևերոսին, որովհետև քաղքին

բերողը խիստ մամուր էր և շատ դժար էր պատերազմելով ներս մտնել : Վիտնալով Սաքսիմիանոս որ Սևերոս իրեն զօրացը վրայ հաւատարմութիւն չունի, ու դողու մէջ է որ չըլլայ թէ զինքը մատնեն ասյնպիսի բանմը ըրաւ որ աս վախը անոր սրտին մէջը աւելի ևս խօթեց : Արկեց քաղքէն ներս քանիմը լրտեսներ (չաշուտներ) որ երթան քաղքին մէջ աս դին անդին ժուռ գան : Արբոր ասիկայ լսեց Սևերոս վախցաւ սաստիկ, և կարծեց թէ եկած են իր զօրացը հետ միաբանութիւն ընելու համար, որպէսզի զինքը մատնեն : Արտեսները դիտնալով Սևերոսին շփոթութիւնը, գացին իրեն ու ըսին, թէ շատ չի վախնայ, վասնզի թէ որ ինքիրէն կըթողու ինքնակալութիւնը, ու կուտայ ինքը զինքը Սաքսիմիանոսին ձեռքը, անտարակոյս անոր գթութեանը կը հանդրպի, և կըխալըսի մահուանէ : Հաւտաց Սևերոս անոնց խորհուրդին, հանեց թագաւորական ծիրանին ու խրկեց Սաքսիմիանոսին : Իսոյց Սաքսենտիոս բռնեց զինքը, կապեց շղթայով ու բանտը դրաւ, ըսելով թէ ես խապար չեմ ան դաշնադրութենէն : Ասոր վրայ երբոր լսեց, թէ Վաղերիոս մեծ պատրաստուի պատերազմի կըտեսնէկոր, անմիջապէս մեռցնել տրվաւ զինքը, միայն աս շնորհքը եղաւ Սևերոսին, որ իրեն կամքին թողվեցաւ մեռնելուն եղանակը : Աւ ինքնալ ընտրեց բաղնիքի մէջ երակները (տամարները) կըտրել տալ ու առանկ մեռնիլ : Սևե-

բոսին մահը լսածին պէս Վաղերիոս աւելի ևս բարկացաւ, ու միտքը դրաւ որ երթայ սրէ անցնէ Հռովմայեցիները, ու Հռովմ քաղաքը կրակի տայ: Ըստ խորհրդով շատ զօրք ժողվեց ու սկսաւ քալել դէպ'ի Խտալիա:

Մաքսիմիանոս տեսնելով զինքը քիչվոր, դիմեց Վիոկղետիանոսին, որ ատենօք իր գահակիցն էր, ըսելով թէ ինչպէս ես հասարակած բարոյն համար յանձն առի ինքնակալութիւնը, դունալ եկուր, հագիր ծիրանին, ու յանձն առ աշխատութիւնը, ինչպէս որ մէկ տեղ վայելեցինք, այսպէս ալ մէկ տեղ աշխատինք: Վիոկղետիանոս երբոր առաւ աս խապարը այսպէս պատասխան տրվաւ: «Եթէ Մաքսիմիանոս տեսնելու ըլլար իմ մեղքովոս տնկրված աղւոր հունտերը՝ ի Սաղոն, ստոյգ դիտեմ որ ինձի խրատ չէր իտար թող տալու աս իմ սիրելի բնակութիւնս, ու չէր ուզեր որ մեզ դարձեալ ետ դառնամ խնդրելու այնպիսի երազի նման տերութիւնմը»:

Վիոկղետիանոսէն յոյսը կտրեց Մաքսիմիանոս, ելաւ գնաց Աոստանդիանոսին, որ ան ատենը կրբընակէր Ըրաղէս քաղաքը, որպէս զի անկից օգնութիւնմը գտնէ: Եւ որպէս զի Աոստանդիանոս դէմ չիդառնայ, կարգեց անոր հետ իրեն աղջիկը՝ որ կըսվէր Վլարիա Մաքսիմիանէ վաւստա, և զինքը հարսնիքին մէջ ինքնակալ ըրաւ: Ըսով

Մաքսիմիանոս կարծեց թէ ալ դիւրաւ կրնայ Արստանդիանոսին հաւանութիւնը որսալ : Բայց Արստանդիանոս իմաստութեամբ մտմտալով Մաքսիմիանոսին ուղածին վրայ, պատասխան տրվաւ իրեն, թէ թողութիւն ընէ դեռ իմ ժամանակս չէ, ու կարողութենէս դուրս է, այնպիսի հղօր ու խորամանկ մարդու դէմ ելլել ու կռուիլ : Ուստի հերիք սեպեց Մաքսիմիանոս, որ Արստանդիանոս Վաղերիոսին հետ գոնէ չիմիաբանի :

Վաղերիոս անթիւ անհամար զօրքով եկաւ հասաւ Խտալիա մտքին մէջը դնելով որ 'ի հիմանց կործանէ զՀուովմ, ու իրեն սուրը Հռովմայեցիներուն արեան մէջը թաթխէ : Բայց երբոր պինտ ամուր ու պատրաստ դտաւ քաղաքները՝ չիհամարձակեցաւ շատ առաջ քալել, որ չըլլայ թէ չորս դիէն զինքը պաշարեն Մաքսենտիոսին զօրքը, ուստի վաթսուն մղոն հեռու Հռովմայէն բանակեցաւ :

Մէյմալ նայիս որ Վաղերիոսին զօրքը քիչ քիչ սկսան հեռանալ իրմէն ու ասդին անդին ցրուիլ հռովմայեցի լրտեսներուն ձեռքովը, որոնք առատ ստակ կրբաշխէին, ու մէկուն մէկալին պարգեներ կըխոստանային : Վաղերիոս տեսալով զինքը մեծ վտանդի մէջ՝ դեսպաններ խրկեց Հռովմ աղաչելու Մաքսենտիոսին, որ հաշտութիւն ընէ իրեն հետ : Արբոր Մաքսենտիոս յանձն չառաւ իրեն հետ խաղաղութիւն ընել, ետ դարձաւ ու սկսաւ վախ-

չիլ : Հրեշտակ խրկեց Սաքսիմիանոս Պաղղիայէն
 Աոստանդիանոսին , որ գոնէ փախչելու ատենը իրեն
 ետեէն իյնայ ու անոր մնացած զօրքնալ ջարդէ :
 Բայց Աոստանդիանոս ասիկայ կտրըճուծի չիսե-
 պեց , անոր համար և ոչ տեղացը շարժեցաւ :

ԳՂ. Բ.

Սաքսիմիանոս իոզէ իր որդին իջեցնել ինքնախաւով :
 Իջեցնէս և Սաքսիմիանոս իւր լան ինքնախաւ :

ԱՄ ան 308 .

Դարձաւ Սաքսիմիանոս Հռովմ , ու տեսաւ որ
 իր որդին գլուխ վերցրնելով կը հըպարտանայկոր
 ըրած յաղթութեանը վրայ , և զօրքնալ բովանդակ
 անիկայ կը ճանչնան կոր իրենց ինքնակալ , սիրտը
 նեղացաւ ու սկսաւ ինքը զինքը յառաջ ձգել , գո-
 վել իրեն քաջութիւնները , ու վար զարնել իր որ-
 դին : ()ր մը կանչեց բոլոր Հռովմայու զօրքը ու
 ժողովուրդը , և որդւոյն ալ ապսպրեց որ հոն տեղս
 գտնըվի : Արբոր ամէներ ժողվեցան , սկսաւ Սաք-
 սիմիանոս ատենաբանութիւնմը ընել , ու խելմը
 խօսելէն ետքը , դարձաւ իր որդւոյն ու յանդիմանեց
 զինքը , իրեն պակսութիւնները երեսը զարնելով :
 Անարժան ևս ըսաւ ատ թագաւորական ծիրանւոյն

ու քաջեց կոնկէն հանեց: յողովուրդը ու զօրքը
 իրարու երես սկսան նայիլ ու ըսել, արդեօք որդ-
 ւոյն թմբու թիւնը աւելի է, թէ հօրը յանդգնու-
 թիւնը: Մաքսենտիոս ամչնալէն քաջվեցաւ մտաւ
 զօրաց մէջ ու շերեցաւ: Օրքը չիկրնալով տա-
 նիլ իրենց ինքնակալին նախատանացը՝ ոտք ելան,
 ու պռուալով իրար անցան: Մաքսիմիանոս գարծուց
 շուտմը խօսքը ու ըսաւ զինուորներուն, մի շփոթիք,
 ես զձեզ փորձելու համար ըրի, որպէս զի տեսնամ
 թէ արդեօք սրտանց կըսիրէք կոր իմ որդիս: Եւ յս-
 պէս ըլլալով ալ, զօրքը կատղեցաւ Մաքսիմիանոսին
 վր, և եթէ չիփախէր պիտի փառատէին զինքը:

Գնաց Մաքսիմիանոս Գաղղիա Արստանդիանո-
 սնոսին գանդատ ընելու իր որդւոյն դէմ: Արստան-
 դիանոս գիտնալով Մաքսիմիանոսին խռովասէր
 բնութիւնը, անոր խօսքին ամենևին ականջ չիդրաւ.
 մանաւանդ թէ ըսաւ իրեն, թէ կուզեմ ես Մաք-
 սենտիոսին հետ խաղաղութեամբ երթալ:

Երբոր Մաքսիմիանոս ասանկ Արստանդիանո-
 սէն յոյսը կտրեց, ելաւ գնաց Գաղերիոսին, ազա-
 շելով՝ որ գոնէ ինքը դարձեալ ելլէ ու պատերազմ
 տայ իր որդւոյն դէմ: Բայց անկից ալ իր յոյսը
 պարապ ելաւ, վասն զի և ոչ Գաղերիոս՝ որ Մաք-
 սենտիոսին յիսերիմ (խարէզի) թշնամին էր, ու զեց
 Մաքսիմիանոսին տրված խորհրդին ականջ դնել:
 Բայց աղաչեց իրեն Գաղերիոս որ շնորհք ընէ կե-

նայ իր քուլը ինչպէս ինքը զ] իկիանէսը ինքնակալ ընէ Սևերոսին տեղը, որպէս զի իրեն ներկայու թեամբը փառաւոր ըլլայ հանդիսութիւնը:

Ըս իկիանէսը առաջուց ոչ պատիւմը ունէր և ոչ ազնուական ցեղէ էր: Վաղերիոս հանած էր զինքը աղօսին գլխէն, ու խոթած էր ասպետութեան կարգին մէջը. իսկ հիմակ ան ամրցած ձեռքերուն՝ ինչպէս սովոր է երկիր հերկողներուն ձեռքը ըլլալ, տըվաւ արքունական գաւազանը:

Սաքսիմինոս երբոր լսեց իկիանէսին ինքնակալ ըլլալը, խիստ բարկացաւ, վասն զի կը յուսար որ Վաղերիոս զինքը ինքնակալ կընէ, որովհետև ինքը կեսարիմը պէս կը տիրէր ան ժամանակը Ըստրեստանի ու Ագիպտոսի վրայ: Ուստի շատ անգամ գրեց Վաղերիոսին գանգատելով, որ ատ անարգ մարդը ինքնակալ ըրաւ, ու զինքը ետ ձգեց: Եւ երբոր տեսաւ՝ որ Վաղերիոս զինքը կը խաբարէրէկոր, ան ալ ինքիրէն գլուխ վերցուց, ու իր զօրքէն և իշխաններէն ինքնակալ եղաւ: Եւ այսպէս վեց ինքնակալ ունեցաւ աս ատենս հռովմայեցւոց տէրութիւնը: Ըրևմտեան կողմը էին Աոստանդիանոս Սաքսենտիոս ու Սաքսիմիանոս: Իսկ արևելեան դին Վաղերիոս իկիանէս և Սաքսիմինոս: Ըսոնց վեցնալ զանազան բնութիւններու վիճակեալ մարդիկ էին, ուստի ինչպէս կրնար անոնց մէջը խաղա-

ղութեան ներդաշնակութիւնը մնալ : Վաղերիոս պատերազմօղ ու անգութ մարդընէր : Մաքսիմիոս անգութեան վրայ եւելցուցած էր զիններբութիւր ու անառակութիւր : Վիկիանէս քաջ պատերազմօղ էր, բայց և սաստիկ ուսման ու արհեստի ատելութիւն ունէր : Մաքսիմիանոս պատերազմասէր, բայց միանգամայն և փառասէր էր : Մաքսենտիոս անգութ ու անառակ և վախկոտ էր : Մնած մինակ Կոստանդիանոս՝ որ աս մոլութիւններուն վրայ տիրած ըլլալուն համար, կամաց կամաց տիրեց նաև ան մոլութիւնները ունեցողներուն վրայ, ինչպէս կրտսնենք ետքը :

Մաքսիմիանոս բոլորովին յուսահատած վերի ըսած երկու ինքնակալներէն ուզեց մէյմընալ Վիոկղետիանոսին երակը (նամզը) քննել, որպէս զի տեսնայ թէ արդեօք իր կամքը կատարելու միտք ունի թէ չէ. այսինքն իր որդւոյն դէմ պատերազմ ելլելու : Բայց երբոր անիկա հաստատ գտաւ իր առաջադրութեանը մէջ, ալ կատղեցաւ չափէ դուրս ու բարկութենէն ինչ ընելէքը չէր գիտեր : Ահ թէ՛ աս փառաց և պատուոյ կոյր ցանկութիւնը ինչ բաներ ընել չիտար մարդուս :

ԳԼ Թ.

Մաքսիմիանոս ինչէ Աոստանդիանոսին որչառ տնցնել,
Բայց չնկրնոր :

Աժ ան . 309 :

Արդ՝ Մաքսիմիանոսին երբոր ճարը հատաւ, գիրմը
գրեց իր աղջկանը, որ Աոստանդիանոսին կինն էր,
ըսելով՝ որ աղաչէ Աոստանդիանոսին, որպէս
զի թող տայ իրեն բնակիլ իր տերութեանը մէջ, և
խօսք տրվաւ որ ալ հանդարտ կընստի ու խռովու-
թիւն չիհանէր : Աոստանդիանոս՝ թէպէտ գիտէր
անոր կեղծաւորութիւնը ու խորամանկութիւնը, 'ի
վերայ այսրամենայնի թագուհւոյն աղաչանացը հա-
մար՝ սիրով առաւ անիկայ իր պալատին մէջ, ու
ամեն տեղ իր աջ դին կընստեցնէր :

Մաքսիմիանոս որպէս զի հաւտացընէ թէ
մտքին մէջ շարութիւն չիկայ, դարձեալ հրաժա-
րեցաւ ինքնակալութենէ, ու հանց թագաւորա-
կան ծիրանին. ըսելով՝ թէ ալ կուզեմ քաջլած
ապրիլ : Այսպէս կըսէր դրսանց, բայց ներսէն
ուրիշ կերպ կըմտածէր, և առթիմը (սէպէպիմը)
կըսպասէր որ Աոստանդիանոսը վար իջեցընէ ակո-
ռէն, ու ինքը տեղը անցնի : Իրաւցընէ գտաւ առի-

Թը, բայց չի գտաւ ան մարդը՝ որուն վրայ աս առի-
 Թը բանեցընէ:

Պէտք եղաւ Աստանդիանոսին երթալ զօրքով
 ծեծկըվիլ Փռանկներուն դէմ, որոնք որ Ուէնօ
 գետէն աս դին անցած՝ ասպատակութի ու վնասներ
 կընէին կոր: Չար ու խաբեբայ Մաքսիմիանոս ծե-
 բը բարի խորհուրդ տուողիմը պէս ինքը զինքը ա-
 ուջ նետեց, ու խորհուրդ տրվաւ Աստանդիանոսին
 որ հետը շատ զօրք չիտանի, որպէս զի իրեն ծան-
 բութիւն չըլլայ: Երբոր Աստանդիանոս հեռացաւ
 քաղքէն՝ խօսք հանեց Մաքսիմիանոս, թէ Աստան-
 դիանոսը մեռած է: Ուստի ըսաւ հիմակ ինձի կիյ-
 նայ անոր տեղը ինքնակալ նստիլ, և այսպէս հագաւ
 Թագաւորական ծիրանին, ու նստաւ Թագաւորա-
 կան աթոռին վրայ: Իմացուց ամմէն մեծե-
 բուն իշխաններուն ու զօրապետներուն, թէ զինքը
 ճանչնան այսուհետեւ ինքնակալ:

Վասկածելով արդէն Աստանդիանոս աս բա-
 նիս վն, լրտեսներ դրած էր քաղքին մէջ, որ բանմը
 ըլլայնէ՝ իրեն շուտովմը իմացընեն: Ուստի անոնցմէ
 աս լուրը առածին պէս Աստանդիանոս՝ շուտմը
 աս դիէն ան դիէն որչափ կրցաւ զօրք ժողվեց, ու ե-
 կաւ հասաւ ան ատենը՝ որ ժամանակ որ Մաքսիմի-
 անոս մտքին մէջ կըղնէր կոր, թէ կրնայ աս ճամ-
 բով Աստանդիանոսին ինքնակալութիւնը յափըչ-
 տակել անոր ձեռքէն: Հաղիւ քիչմը ատեն ունե-

ցաւ Մաքսիմիանոս փախչելու, ու Մարտիրոսի մօտ քաղքի բերդիմը մէջ պահելու: Ղնաց ետեւն Աոստանդիանոսի զօրքովը, ու պաշարեց քաղաքը: Ուզեցին զօրքը սանդուխներով (վերափնններով) բերդէն ներս թափվիլ, բայց չհկրցան վասն զի սանդուխները կարճ եկան: Ըն առնը՝ որ Աոստանդիանոս պիտի թող տար քաղաքը ու ելար երթար՝ բերդին վրայէն գլուխը դուրս հանեց Մաքսիմիանոս ու վարձայեցաւ: Տեսաւ Աոստանդիանոս զինքը, մօտ գնաց ու ըսաւ իրեն: «Ո՛վ ապերախտ, և խաբերայ, աս է քու հատուցումդ ինձի քեզի, ըրած բարիքներուս համար, բայց ես դարձեալ կըններեմ քեզի, եթէ դուն քեզմէ անձնատուր» (Թէսլիմ) կըլլաս ինձի: Մաքսիմիանոս չուզեց հաշտրվիլ, այլ նախատական խօսքերով սկսաւ անարգել Աոստանդիանոսը: Ըս միջոցիս մէջ նայիս Աոստանդիանոսին զօրքը դուռը բացին ուներս մտան, և Մաքսիմիանոսին չորս դին պաշարեցին: Ըզէկմը յանդիմանեց զինքը Աոստանդիանոս զօրաց առջևը, ու քաշեց հանեց կռնրկէն թագաւորական ծիրանին, բայց չիմեռցուց:

Ըսկից ետքը գնաց Աոստանդիանոս այցելու թիւն ընելու Արեւիկային ըսված քաղքին, շինել տրվաւ անոր բերդերը, ու քաղաքը մեծամեծ ու սիրուն շէնքերով վարդարեց, որոնց մէջը երևելի էր արդարեւ զայլատր: Ըն տեղս Յուլիս ամսոյն

25. Արստանդիանոս իրեն թագաւորութեան տարե-
դարձը ըրաւ փառաւոր հանդիսութեամբ : Ալ Նոյն
օրվան մէջ Ալմենէս ճարտասանը գովասանական
խօսքմը ըրաւ Արստանդիանոսին հրապարակաւ , և
միանգամայն աղաչեց որ շնորհք ընէ այցելութիւն
մի ալ ընել Աւգոն քաղքին , որուն մէջը ինքը ճար-
տասանութեան դաս տըլօղն էր : Արստանդիանոս
ան ժամանակ յարմար ատեն չունենալով չիզնաց .
բայց խոստացաւ Ալմենէսին թէ կուգայ : Ալ 'ի յի-
շատակ Սաքսիմիանոսին վր ըրած յաղթութեանը ,
հարուստ ընծայներ խրկեց անկից Ապողոն չաս-
տուածոյն տաճարը՝ որ էր յԱլթոն քաղաք :

ԳՎ . Ժ .

Մասնիմանոս իսպէ պարսպանդիանոս մտայնէլ :
Արարատապարարէն 'ե հահ : Ալ Վարդէրիս չարաչար
իւսասիլէ :

ԱՄ ան 310 :

Ա երջապէս Սաքսիմիանոս չուզեց խաղաղու-
թեամբ ապրիլ Արստանդիանոսին հետ : Վանի
որ միտքը կէյնար իրեն խայտառակութիւնը՝ կըհա-
լէր կըմաշէր ու կըմտմտար , թէ ինչպիսի կեր-
պով վրէժխնդրութիւն ընէ Արստանդիանոսին :

Աղաչեց իր աղջըկանը որ գիշերը Աոստանդիանոսին հետ քնանալու ատենը դուռը բաց ձգէ . և յայտնեց իրեն , թէ կուզէ մեռցընել Աոստանդիանոսը : Աղջիկնալ իր հօրը աչքէն չխնալու համար՝ երեսանց բարի է ըսաւ , ես քու կամքդ կըկատարեմ , ու գնաց ըսաւ Աոստանդիանոսին՝ որ զգոյշ կենայ . չըլլայ թէ ան չար ծերը իրեն գլխուն բանմը հասցընէ : Աս որ լսեց Աոստանդիանոս զարհուրեցաւ ու ըսաւ մտքին մէջը . սս ինչ ապերախտութիւն է որ ինձի կրնէկոր : Բայց որպէս զի իմանայ ստոյգ , թէ ատանկ չար մտքի վրայ է Սաքսիմիանոս , ապսպրեց իր կնոջը , որ ան գիշերը պառկի անարգ ներքինւոյմը հետ , և ինքը գնաց ուրիշ տեղ պառկեցաւ : Արբոր մութը կոխեց ու ամմէնքը իրենց տեղերնին գացին պառկելու , նայիս կէս գիշերուն եկաւ Սաքսիմիանոս , գտաւ դուռը ուղածին պէս բաց , և քանիմը պահապաններ դռան առջևը կեցած : Ըսաւ անոնց որ թող տան զինքը ներս մտնելու , որովհետեւ մեծ տեսիլ երեցաւ ինձի սս գիշեր , ու եկայ առանց ուշացընելու յայտնել Աոստանդիանոսին : Անոնքալ նայելով երեսին ու խօսքին անկեղծութիւնը , կարծեցին թէ սիրտն ալ ատանկ է , ու թող տրվին որ ներս մտնէ : Սաքսիմիանոս առանց ոտքի ձայն հանելու ներս մտաւ , քաշեց նիզակը , ու խեղճ ներքինւոյն փորը խօթելէն ետքը , արիւնոտ նիզակը ձեռքը՝ ուրախութիւն

դուրս ելաւ, ու պօռչըտալով կրսէր պահապաններուն. „ Կոստանդիանոս մեռաւ . Կոստանդիանոս , մեռաւ “ : Ընոր ետեւէն դուրս ելաւ Կոստանդիանոս զննուորներով պաշարված ու չեխելով ըսաւ իրեն . „ կեցիր յիմար ծեր ուր կերթաս “ :

Նետել տրվաւ առջևը Ներքինւոյն զին (լէշը) ըսելով „ Ճանչցիր, զով մեռցուցիր “ : Խելքը գլխէն ելաւ Սաքսիմիանոսին, ու սրտին ցաւէն կուղէր իր փորը խոթել արիւնոտ նիզակը : Ըսնել տրվաւ Կոստանդիանոս նիզակը անոր ձեռքէն ու ըսաւ . „ չես արժանի այսուհետեւ աս աշխրբիս լոյսը տեսնելու, ընտրէ ինչ մահ կուզես “ : Ընտրեց կախաղանը և կախվեցաւ : Կոստանդիանոս գթալով իրեն վրայ մեռմէն քարերէն փառաւոր գերեզման շինել տրվաւ և անոր մէջը թաղեց : Վանք հիմայ տեսնենք Վաղերիոսին չարաչար սատկիլը :

Ըն ատենները որ Վաղերիոս խրկածէր իր մարդիկները ասդին անդին ստակ ժողվելու իրեն հպատակներէն, Ըստուած ալ երկինքէն խրկեց իրեն արժանի պատիժմը : Ըրտաքոյ կարգի ցաւմը բռնեց իրեն մարմինը քան զամմէն ցաւերը սաստիկ : Վանիմը որ աս ցաւը քաշիլէն ետքը, բուրել սկսաւ անոր մարմինէն ամենագարշելի հոտմը, որ ոչ միայն կը հոտեցնէր իր պառկած խուցը ու արքունի պալատը, այլ նաև բոլոր քաղաքը : Ըս

ցուին սաստիկութիւնը անկից կրնայ քիչմը իմաց-
 վիլ, որ քիչ ժամանակվան մէջ մարմնոյն կէսէն
 վերի դին ամենեւին միս չիձգեց, բոլորովին հալե-
 ցուց: Իսկ կէսէն վարի դին ուռեցուց, ինչպէս
 պինդ լեցուն տիկմը (Թուլումը) կուռի: Աս հե-
 րիք չէ, սկսան մարմինէն դուրս գունդ գունդ գար-
 շելի որդեր ելլալ ու քալել: Վոյլ ոչ որ կըհա-
 մարձակէր երթալ, գացողներնալ ստրկի պատ-
 ճառաւը կերթային: Վժիշկներ ու վիրաբուժներ
 (Ճէռահներ) կերթային կուղային, բայց անոնցմէ
 հիչ մէկ օգուտմը չէր տեսներ ողորմելին: Վայտի
 կոճեղիմը (քիւթիւկի) պէս անշարժ՝ ցաւերու ու
 որդերու մէջ թաղված էր: Տարիմը և աւելի ևս
 տեւց աս հիւանդութիւնը, որ ոչ կըռնանար և ոչ
 կըմեռնէր: ()րմը իրեն բժիշկներուն մէկը՝ որ քրիս-
 տոնեայ էր, ըսաւ իրեն: Տէր իմ, ասիկայ բնա-
 կան մարմնոյ հիւանդութիւն չէ, այլ ճշմարիտ հզօր ու
 ամենակարօղ ԱՅ աջն է, որ զքեզ կըտանջէ կոր:
 Տիչէ ըրած անգթութիւներդ քրիստոնեայներուն,
 աղքատներուն, ու ամմէն քու հպատակներուդ:
 Աս ցաւը անոնց համար կըքաշեսկոր: Ղանչցաւ
 Վաղերիոս ճշմարտութիւնը ակամայ, ու մտմտաց՝
 որ հալածանաց վճիռը ետ դարձնել տայ: Բայց
 ինչպէս որ հպարտ իշխաններուն սովորութիւնն է՝
 չուղեց ցըցնել, թէ առջի ըրած գործքերովը սխա-

լած է, և իրեն պատիւը պահելու համար այսպէս
հրովարտակմբ գրել տրվաւ :

„Այն ամենայն խորհուրդներուն մէջը, որոնց
„վրայ գիշեր ցորեկ զբաղեալ էինք տէրութեան
„բարւոյն համար, մէկն ալ Հոովմայեցոց օրէն-
„քին և կարգին դէմ եղած բաները շիտկելն էր, և
„քրիստոնեայնները համոզել, որ ճանչնան անոնց ե-
„րեսէն ընկած կրօնը : Արցաւէինք մենք տեսնալով
„զանոնք ատանկ յամառ իրենց կարծիքին մէջը, որ
„ոչ երբէք կուզէին նմանիլ իրենց նախնեաց
„դրած իշխաններուն, մանաւանդ թէ իրենք ուզած-
„նին պէս օրէնք կը դնէին ու կըխաբէրէին ժո-
„ղովուրդը անդին ասդին ժողովներ ընելով : Հուսկ
„յետոյ երբոր մենք վճիռմբ հանեցինք զամենքը
„նախնեաց կրօնը խօթելու՝ շատերը մահուան
„վտանգներու մէջ ընկան, և շատերն ալ մեռան :
„Արդ տեսնալով հիմակ որ ասոնց մեծ մասը իրենց
„կարծիքներնուն մէջ դեռ յամառութեամբ կեցած
„են, ու ինչպէս որ պարտաւորութիւն ունին չեն
„պաշտեր կոր մեր աստուածները, այլ կը պաշտեն-
„կոր իրենց Աստուածը առանց մեր խաթրը նայ-
„ելու, որ միշտ կը գթանք ու սովորութիւն ունինք
„ամենուն շնորհք ընելու : Ասոր համար լաւագոյն
„սեպեցինք որ ասոնց կամքը կատարենք, այնպէս՝ որ
„կարօղ ըլլան քրիստոնէութիւնը պահել, և իրենց
„տեղերը ժողովիլ : Այց գիտնան որ կանոնի դէմ

,,բան պիտի չընեն, իսկ ուրիշ բաներուն համար զատ
 ,,գրովմը դատաւորներուն կըմացընենք, թէ ինչ
 ,,պիտի ընեն : Աւստի սա շնորհքը իրենց ըլլալուն
 ,,պատճառաւր, պէտք է որ աղօթքընեն Աստուծոյ
 ,,մեր առողջութեան, թագաւորութեան ու նաև
 ,,իրենց համար, որպէս զի տէրութիւնը ամեն
 ,,կողմանէ յաջողութեան մէջ ըլլայ, ու իրենք ալ
 ,,կարող ըլլան հանգստութեամբ ապրիլ իրենց
 ,,տանը մէջ“ :

Աս հրովարտակին ետեւէն նայիս բանտերուն
 ու սուրբ Ալկեղեցիներուն դռները բացվեցան, խոս-
 տովանողները ու ամեն քրիստոնեայ հաւատացեալ-
 ները սկսան միաբան գովել զԱստուած :

Բայց Վաղերիոս և ոչ ասկից օգուտմը տե-
 սաւ, ամիսմը ասոր վրայ ապրելէն ետքը, չարաչար
 սատկեցաւ :

Թագաւորեց 19 տարի և երկու ամիս : Ատքը
 չաստուածներուն կարգը խօթեց զանի Մաքսեն-
 տիոս, որ կըբաղձար երկինքը չաստուածներով
 լեցընել :

Ահա ան՝ որ ճշմարիտ ու ուղղափառ կրօնին
 թշնամութիւն ըրաւ, չիկրցաւ իրեն թշնամին զԱ՛ծ
 հաշտեցնել : Աս աշխրբիս մէջը դեռ Աստուծոյ
 բարկութեան համը առաւ, ու անդիի աշխարհքնալ
 կառնէկոր ու պիտի առնէ յաւիտեանս յաւիտենից :

ԳԼ ԺԵ.

Արտատանը իմանա Քարէ արտաներուան իրապէս, ու Լու-
դոն խաղին այլերու-էլան իրնէ :

Ամ ան 311 •

Լս առնենքս Գաղղիային մօտիկ տեղվանք բար-
բարոսները դարձեալ գլուխ վերցուցին, ու Հինգ
վեց ազգ մէկ տեղ եկան, խօսք ըրին, որ Արտատան-
դիանոսին երկիրները թալեն ու աւրեն : Բայց
ինչ օգուտ զօրքին շատութիւնը՝ երբոր իմաստուն
գլուխ չիկայ, նման գաղանիմը որ խիստ մեծ մար-
մին ունենայ, բայց առանց գլխոյ : Ըսոնք երբոր
պատրաստութի տեսնելու ետեւէ էին մէկէն Գաղ-
ղիա զարնելու ու քանդելու, ահա Արտատան-
դիանոս եկաւ հասաւ իր զօրքովը : Արտատան-
դիանոսին անունը լսած առննին կանկ առին ու-
ժերնին կտրեցաւ, ու զէնքերնին ձեռքերնէն վար-
ընկաւ : Բայց Արտատանդիանոս չըսեմ յանդգնու-
թեամբ, այլ արիութի քանիմը պաշտօնատէր-
ներ հետը առաւ, ու գնաց թշնամիներուն կողմը :
Մտաւ անոնց բանակին մէջ, ու տեսնելով որ
վախերնէն թուլցած մնացեր են, ըսաւ անոնց, թէ մի
վախնաք Արտատանդիանոս եկած չէ, դեռ շատ հե-
ռու է, ելէք պատերազմեցէք քանի որ ժամանակ
ունիք յազթութիւնը ձեռք ձգելու :

Աս լսածնին պէս թշնամիները իսկոյն հաւտացին, սիրտ առին, ձեռքերնին զէնքի տարին, ու իրար յորդորեցին պատերազմելու :

Եւ զարձաւ Աոստանդիանոս, ու բաժնեց զօրքը գունդ գունդ թշնամիներուն դէմ, և երկու կողմէն ալ պատրաստվեցան : Արբոր նշան տրվեցաւ, Աոստանդիանոսին զօրքը ամ ուժով սաստիկ խիտ (սըխ) կարկտի պէս թշնամիներուն վր թափեցան, կէսմը վիրաւորեցին, կէսմը սպաննեցին, ու կէսմընալ լեռներու ու անտառներու մէջ ցիր ու ցան ըրին : Աոստանդիանոս աս յաղթութիւնը ընելէն ետքը՝ զօրքը ժողվելով ետ քաշեց, ու գնաց անկից մեծ Բրիտանիա, ուր տեղ որ փոքր ապրտամբութիւններու շոշորթ կերևար կօր՝ խաղաղացուց :

Այս ամենայն ընելէն ետքը՝ Աոստանդիանոսին միտքը ընկաւ Աւմենէս ճարտասանին գովասանքը, որ թորէվէրին քաղաքը իրեն վր ըրած էր, և որուն մէջը խնդրած էր Աոստանդիանոսէն՝ որ շնորհք ընէ այցելութիւն մի ալ ընել Աւդոն քաղքին : Աւստի հոն գնաց՝ ու երբոր հասաւ, քաղաքացիքը դէմը ելան շատ մեծ հանդիսիւ (զիննէթով), ընդունեցան զինքը, ու իրենց կարողութենէն վեր փառաւորութիւն ու պատիւ ըրին :

Աոստանդիանոս քաղաք մտնելու ատենը վերցուց աչվըները ու չորս դին նայեցաւ : Տեսաւ որ

արտերը ու ագարակները անշահ խոտերով ու փուշերով լեցվեր՝ ու անտառ եղեր են : Հարցուց քովիններուն թէ ինչ պատճառաւ ատանկ առանց հերկելու ու ցանելու ձգեր են : Պատասխան տրվին քովինները ու ըսին : Վ՛վ հզօր թագաւոր, երկիրը չի բերեր կոր անչափ՝ որչափ որ տուրք կուզվիկոր : Ուստի ատոր համար շատերը իրենց երկիրները երեսէ կը ձգեն, ու չեն աշխատիր կոր անոնց վրայ : Հատերնալ՝ որպէսզի խալըսեն իրենք զիրենք տուրքէն, կելլեն կերթան կոր քաղքէն հեռու, ու անտառներու և քարայրներու (մաղարաններու) մէջ կը բնակին կոր : Թէ որ Աոստանդիանոսին տակի եղած մարդիկը ասխեղճութեան մէջ էին, հապա ինչ պիտի ըլլայ ուրիշ անողորմ իշխաններուն տակի եղած մարդիկներուն վիճակը :

Կանչեց Աոստանդիանոս քաղքին մեծամեծները՝ ու հարցուց անոնց, թէ ինչ բանի աւելի կարօտութիւն ունի քաղաքը : Ընոնք ալ անմիջապէս Աոստանդիանոսին ոտքը ինկան ու ցըցուցին, թէ որչափ պարտք ունէր քաղաքը արքունի գանձին, քիչ հինգ տարվան հարկը՝ որ չէր վճարված : Աոստանդիանոս լըլսելը ամմէննալ պարգևեց, ու տուրքին չորս մասին մէկնալ վերցուց : Ըսով ոչ միայն օգուտ եղաւ քաղքին ու քաղաքացիներուն, այլ նաև Աոստանդիանոսին, որ յառաջ ամմենեկին ստակ չէր կրնար առնել, ետքը սկսաւ առնել :

Ըս երախտեաց շնորհակալութիւն ընելու համար, Կոստանդիանոսին անունը դրբին իրենց քաղքին վրայ:

Ըսոր նման բաներ շատ քաղաքներուն ըրաւ Կոստանդիանոս: Ըյնպիսի օրէնքներ դրաւ ու այնպիսի կառավարութի իր տէրութեան մէջ խօթեց, որ իր ժողովրդեան ամենևին նեղութիւնմը քաշել չիտայ: Ամանապէս քաղաքապետներուն ու դատաւորներուն ալ ապսպրեց, որ արդարութի դատաստան ընեն, անիրաւութիւն չընեն, ու ժողովուրդը չհիշարչարեն:

ԳԼ: ԺԿ.

Հոռովայեցիք Կոստանդիանոսին խապչեն՝ որ պիտի Մասնենդիանոսին յետեւեալ տպարե. եւ Կոստանդիանոսս պրոփ իերկայ դեպ ՚ի Իսպաղիայ, եւ ճամբուն պիտի ելլող Բշնաթիները իրայլեն:

Ամբ ան 311 և 312:

Մաքսենտիոս Հոռովմ երբոր լսեց, թէ Կոստանդիանոս իր հայրը մեռցնել տրվաւ, սաստիկ բարկացաւ ու մտմտաց որ ելլէ պատերազմ տայ Կոստանդիանոսին դէմ: Եւ այսպէս նախ Հոռովմ ժողովրդեան ու իր զօրքին հրամայեց, որ որչափ Կոստանդիանոսին արձանը գտնեննէ՝ ջախ-

ըախենն ու տղմերու (չամուռներու) մէջ ասդին անդին քաշքըշեն : Իսկ իրեն հայրը չաստուածներուն կարգը խօթել տուաւ , և ժողովրդեան պատուիրեց որ պաշտեն անիկայ :

Բայց Մաքսենտիոս Առստանդիանոսին դէմ մեծ պատերազմ չիբանայէն յառաջ , ուղեց պատերազմիլ Եղէքսանդր անունով ապստամբ ոստիկանիմը (փաշայիմը) դէմ՝ որ Եփրիկէ Մաքսենտիոսին երկիրներուն վր տիրած էր , և իրեք տարիի չափ ինքնակալութիւն ըրած էր : Կրկեց ասոր դէմ Ուուֆօն ոստիկանը և Չէմաս զօրագլուխը , որոնք ծեծկըվեցան , բունեցին ապստամբը ու խեղդել տըվին : Մաքսենտիոս երբոր յաղթութե լուրը (խապարը) հռովմ առաւ , սկսաւ հպարտանալ ու մեծ մեծ խօսիլ , և փառաւոր յաղթանակմը կանգնեց : Բայց ո՞վ կրնայ պատմել ան արիւնհեղութիւնները ու անիրաւութիւնները՝ որ Եփրիկէի մէջ եղան : Մէկ խօսքով համառօտ մը ըսեմ , անչափ հոգի ապրտամբին հետ միաբան սեպվեցան , ուստի և մեռնելու արժանի , որչափ որ հարուստներ կային :

Եւ յսպիսի անարգ յաղթութեան վրայ Մաքսենտիոս անչափ կը հպարտանար , ինչվան կըսէր , թէ ես եմ աշխրբիս վրայ ինքնակալ , և մէկալ ինքնակալները իմ իշխանութենէս կախված են , որոնք թէ որ կուզեմ կրնամ վար ձգել , ու իմ իշխանութիւնս անոնց վրայ բանեցնել : Չէր գիտէր որ զոր-

մելին որ ինքը իր աթուէն վար պիտի էյնար : Աւորովհետեւ ինքը իր յոյսը դրած էր իր զօրքին վրայ, անոր համար կը ջանար որ զօրաց սիրտը շահի : Ուստի Հռովմային դանձը անոնց բաշխելով, վեց տարվան մէջ հատցուց լըմնցուց, որ հազար տարվան աշխատանքով դիզված էր : Աս բաւական չէ, ծերակուտին երեւելիները ու հարուստները մեռցընել կուտար, և անոնց հարստութիւնները կառնէր : Օգրքը ինչ անզգամութիւն ինչ արիւնհեղութիւն որ կընէր, աչք կը քոցէր, չիլսելու կը զարնէր : Արբեմն ինքը հրաման կուտար զօրապետին՝ որ երթայ մեծ մարդմը մեռցնէ, ու ինչ ունի չունի առնէ : Աւերջապէս իր զինուորներուն սիրտը գոհընելու համար չարիք չէր թողուր, որ չընէ : Ասով մեծ վնաս հասցուց իրեն թագաւորութեանը . վասն զի զինուորները ուտելու խմելու ու ժուռ գալու ետեւէ ըլլալով, մէկ դի ձգեցին զինուորական կրթութիւնները, ու դատարկութիւնը և մարմնոյ դիւրութիւնները իրենց բան գործըրին :

Ասի տեսնելով ծերակոյտը և բոլոր Հռովմային ժողովուրդը զՄաքսենտիոս ինքնակալ ընելուն համար զըջացան, թէպէտ շատ ուշ . որովհետեւ տեսան որ յոյսերնին պարապ ելաւ, ու իրենց երեցած քաղցր ինքնակալութիւնը՝ անողորմ բռնաւորութիւն փոխվեցաւ : Ակսան ճարը փնտռել թէ ինչպէս

ընեն՝ որ աս ինքնակալին կենքը շարքիս մէջէն վերցնեն : Ոմանք միաբանութեամբ հրեշտակներ խրկեցին զանազան ինքնակալներու , աղաչելով՝ որ գան խալըսեն զիրենք սա անողորմ բռնաւորին ձեռքէն : Իսկ ծերակոյտը՝ Աոստանդիանոս ինքնակալին ծածուկ հրեշտակ խրկեց , իրենց ողորմելի վիճակը անոր առջևը դնելով , ու խնդրելով՝ որ գայ պատերազմի Սաքսենտիոսին դէմ : Աոստանդիանոս ՚ի սկզբան վախցաւ աս բանիս ձեռք զարնելու , որովհետև Սաքսենտիոսին բանակը (օռտուն) խիստ շատուոր էր , հարիւր վատսուն հազար ռոտանաւոր զօրք ունէր , և տասնը ութը հազար ձիաւոր : Իսկ ինքը ունէր միայն ձիաւոր ու ռոտանաւոր ընդ ամ մէնը ութսուն հազար : Բայց ետքը մտմտալով՝ որ Սաքսենտիոսին զօրքը անառակութեամբ (զէֆֆով սէֆայով) ուժերնին կորսընցուցած են , և միանգամայն գթալով չ՝ ումայեցուց խեղճութեան վրայ , յանձն առաւ , ու պատերազմի պատրաստութիւն տեսնելու ետեւե եղաւ : Բայց յառաջ քան պատերազմի ձայն դուրս հանելը , Իիկիանէս ինքնակալին բարեկամութիւնը որսալ ուզեց : Ասուցաւ անոր հետ և խաղաղութեան դաշն (խաւըլ) դրաւ , խօսք տալով՝ որ պատերազմը լըմնալէն ետև , իր քոյրը Աոստանդիա իրեն կնութեան կուտայ : Երբ որ անկից Աոստանդիանոս ապահով եղաւ՝ պատերազմը հրատարակեց : Ութսուն հազարին մէջէն էն

քաջերը քառասուն հազար հողի ընտրեց մէկդի
 հանեց. իսկ մնացել քառասուն հազարը՝ քաղաքը
 պահելու համար ձգեց: Անցաւ ասոնց զլուսնին ու
 սկսաւ քալել դէպ ՚ի Իտալիա երեք հարիւր տաս-
 վերկուերորդ տարւոյն զարնանային (իւքպահարին)
 ատենը: Սաքսենտիոս երբոր լսեց, թէ Աոստանդի-
 անոս կուգայկոր, իր զօրքը իրեք բաժնեց, կէսմը՝
 Տորին քաղաքը դրաւ, կէսմը՝ Աերոնա քաղքին
 սահմանները (սինոնները), և կէսմընալ Հոովմ պա-
 հեց: Իայց ասոնց ամենուն ալ ըրած զգոսանքներ-
 նուն համը դեռ բերաննին ըլլալով չէին ուղեր
 դաշտին վերևը ելլել ու զէնքի ձեռք զարնել: Իսկ
 Աոստանդիանոսին զօրքը բոլորովին տարբեր, օր
 աւուր վրայ պատերազմելու փափաքը անոնց սրտին
 մէջը կըբորբօքէր, մանաւանդ երբոր իրենց առջի
 ըրած քաջութիւննին ալ միտքերնին կուգար՝ չէին
 կրնար ալ զիրենք բռնել: Այլաւ հասաւ Աոստան-
 դիանոս Սուղա քաղքին դրան առջևը: Տեսաւ որ
 քաղաքը խիստ ամուր է զօրքով լցված, ու դռները
 դոց, մարդ խրկեց ներս՝ որ բանան դռները, ու
 քաղաքը իր ձեռքը տան: Արբոր քաղաքացիքը մը-
 տիկ չըրին, Աոստանդիանոսին զօրքը մէկ կողմանէ
 կրակ տրվին քաղքին, և մէկալ կողմանէ տեգերը
 կարկըտի պէս ներս թափեցին: Իացին դռները,
 մտան ներս, ու սկսաւ կէսմը հուրը կէսմը սուրը
 ջարդել քաղաքը: Քաղքին խեղճութիւն տեսնալով

Աոստանդիանոս՝ դժացաւ, հրամայեց որ մարեն կրա-
 կը ու ալ չիջարդեն: Ահա Աոստանդիանոսին զօր-
 քին առաջին խըշմին աս քաղաքը հանդիպեցաւ:
 Ասկից ելան գացին ինչվան Տօրին քաղաքը ուր
 տեղ որ Անքսենտոսին զօրքին մէկ մասը կեցած էր:
 Աոստանդիանոս քննեց տեսաւ որ թշնամին անչափ
 զօրաւոր չէ ոտանաւոր զօրքով, որչափ որ ձիաւորնե-
 րով, որոնք երկան ինչվան ձիերը իսկ գոցած զրահ
 (զըրխ) հագած էին: Աս զրահը անանկ հաստ էր,
 որուն ոչ տէգ կանցնէր, ու ոչ սուրը կըկտրէր: Հրա-
 մայեց անմիջապէս իր զօրքին, որ ամմէնը ձեռքերնին
 հաստը ու խոշոր վիրգեր (սօփաներ) առնեն, և
 առաջին անգամուն՝ որ թշնամիները իրենց վրանին
 կըվազեն՝ ետ քաշվին, ինչվան որ ամմէնը իրենց
 տեղերնէն շարժին ու առաջ գան: Ատքը մէկէն
 ետ դառնան, պըտուտ ընեն ու անոնց չորս դիէն
 պատեն ու սկսին վիրգերով ծեծկըվիլ անոնց հետ:
 Սոյոյ ինչպէս որ ըսաւ, ատանկալ եղաւ: Անքսեն-
 տոսին զօրքը կուրօրէն (քեօռքեօռունա) ընկան
 փախչողներուն ետեւէն, ասոնք փախչելնինի՝ մէկէն
 ետ դարձան մէջերնին առին բոլոր թշնամիները, ու
 սկսան ան հաստը վիրգերը առջևը եկողին գլուխը
 զարնել:

Թշնամիք տեսնելով աս անակնունելի դիպ-
 ուածը թէպէտ մէկ կողմանէ ձեղքեցին դուրս ե-
 լան, բայց և այնպէս շփոթեցան մնացին, մինչև

էզմը ջարդը վեկէն ետքը, ուղելով տեղմը փախչիլ
 ու պահել տիլ՝ հասան Տիրոն քաղաքին տակը: Վա-
 ղաքացիք Աոստանդիանոսէն վախնալով՝ դռները գո-
 ցեցին, ինչվան հասաւ Աոստանդիանոս ու ջարդեց
 մնացածներնալ, ու ետքը բանալով զԱոստանդիանոս
 պատուով ներս ընդունեցան: Ախիտ ուրախացաւ
 Աոստանդիանոս անոնց ըրածին վրայ՝ ու քաղաքը
 առաւ իրեն պաշտպանութիւն տակը: Ասոնց նայելով
 մօտիկ եղող քաղաքները նախանձեցան, իրենք ալ
 հրեշտակ խրկեցին Աոստանդիանոսին, աղաչելով՝ որ
 զիրենք ալ առնէ իւր պաշտպանութիւն տակը: Այլաւ
 գնաց անկից Աոստանդիանոս Աիլան, երբոր մտաւ
 քաղաքը՝ ինչ կընայիս մեծէն ինչվան պզտիկը սկսան
 ծափ զարնել ու պօռալ՝ կեցցէ Աոստանդիանոս, կեց-
 ցէ Աոստանդիանոս: Վրանի մը օր Աոստանդիանոս
 հոն տեղս կեցաւ, որպէս զի զօրքը քիչմը հանգ-
 չին աշխատութենէն, ու հոգի առնեն: Անկից զար-
 կաւ դէպ'ի Պրիսկիա, և ահա ճամբուն վրայ Աու-
 րիցիոս զօրապետին զօրքէն գոռոգմը իրեն դէմը ե-
 լաւ: Աս Աուրիցիոսը՝ Անքսենտիոսին զօրքին երկ-
 րորդ մասին վրայ զօրապետ մի էր, որ Աերոնա
 քաղաքին մօտերը սպասելով, խրկած էր իրմէն հե-
 ոու զօրաց գունդմը, որպէս զի Աոստանդիանոս
 առջի բերանը անոնց հետ պատերազմի, ու ինքը
 ժամանակ ունենայ պատրաստվելու: Օասոնք եր-
 բոր տեսան Աոստանդիանոսին զօրքը, մէկէն վրանին

վազեցին ու զամենքը ջարդեցին : Իսկ մէկ քանին որ խալըսեցան՝ շուտով՛ը իմացուցին իրենց զօրապետին : Առերիցիոս աս լուրը ընդ առնելը՝ սաստիկ վախցաւ ու զօրքովը քաշվեցաւ մտաւ Աերոնա քաղաքը : Հատ դժուար էր աս քաղաքը առնել, վասն զի շատ ամուր էր, ու շատ ալ զօրք ունէր ներսի դին : Լաբաց ասկից պէտք էր, որ Աոստանդիանոս Լատիկէս գետէն անդի դին անցնէր որ խիստ վաղուն էր, և ժայռերով ու փոսերով ալ լըված էր : Լա նաև դիմացի դին ալ պահապաններ կեցած էին թշնամիներուն կողմանէ որ մարդ չանցընեն : Բայց աս պահապաններուն հսկողութիւնը (արժուն կենայը) դիւրաւ խաբվեցաւ Աոստանդիանոսէն : Ասն զի Աոստանդիանոս էզմը հեռացաւ անոնցմէ, ու գնաց գետին անդիի ծայրէն՝ ուր տեղ որ գետը լանցած էր ու հեղուկ կը վազէր, լողալով (իւզմիւշը լըալով) զինքը և իր զօրքը անցուց անդին : Պահապաններուն ամենևին հոգը չէր, վասնզի և ոչ մտքերնէն կանցնէր, թէ Աոստանդիանոս զինքը և իր զօրքը ատ վտանգին մէջ կը ձգէ : Անտիկցաւ Աոստանդիանոս քաղքին ու պատնէշներ (մէդէրիզներ) դրաւ անոր չորս դին և պաշարեց : Առերիցիոս զօրապետը ներսէն սկսաւ վախնալ ու նեղը ընկաւ, պէսպէս հնարքներ բնորոշու ետևէ եղաւ, որպէս զի Աոստանդիանոս թող տայ քաղաքը ու երթայ : Հուսկյետոյ տեսնալով որ շատ ուշացընէ պիտի, ու

չիղիմանայ, գաղտուկ գողի ճամբայներէն ելաւ փախաւ: Գնաց մօտիկ քաղաքներէն էզմը զօրք ժողովեց, ու անոնցմով սկսաւ յառաջ գալ Արստանդիանոսին վրայ: Արստանդիանոս երբոր իմացաւ ասիկայ իր վիճակը խիստ վտանգաւոր իրեն երեցաւ, ինչու որ երկու թշնամիներուն մէջը պիտի իյնար իր բանակը. 'ի վերայ այսր ամենայնի քաջութեամբ իր զօրքը երկու բաժնեց, կէսը՝ ձգեց քաղաքը պաշարելու, ու կէսը՝ հետը առաւ, ու ինքնալ սկսաւ առաջ երթալ: Ահա թշնամիները երեցան ու իրարու մօտիկցան: Արստանդիանոս նայեցաւ թշնամիներուն և նայեցաւ իրեն, շատ քիչ գտաւ իր կողմը: Մանաւանդ որ՝ անոնք չէին հօգնած, իսկ իրեն զօրքը նոր պատերազմէն ելած էին: Արկու կողմէն ալ պատերազմի ձևով դիմացէ դիմաց շարվեցան երկան բարակ երկու շարք: Տեսաւ Արստանդիանոս՝ որ իր կողմը հազիւ թշնամիներուն կէսը հասած էր. հրամայեց որ փոխեն դիրքերնին, և մէկ շարք կենան: Այլ այսպէս հազիւ հաւասարեցաւ թշնամեոյն ճակատին: Արբոր ասանկ պատրաստվեցան՝ երկու կողմէն ալ նշան տրվին, ու իրար զարնըվեցան, ատանկ որ ժամեր (սահաթներ) կանցնէր՝ ոչ մէկ կողմը և ոչ մէկալ կողմը կը յաղթըվէր: Բայց վասնզի Արստանդիանոս անձամբ մըտած էր պատերազմին մէջը իրեն զօրքին օրինակ ըլլալու համար, անոր պատճառաւը սիրտ կառնէին

իր զօրքը : Ա Երջապէս Աոստանդիանոսին կողմը վրայ
 եղաւ ու յաղթեց , ու ան սարսափելի թշնամիներու
 բանակը բովանդակ սրէ անցուց : Աս սաստիկ
 կոտորածին մէջ Սուրիցիոս զօրապետն ալ զար-
 նըվեցաւ ու ինկաւ : Օտեծը լըմըննալէն ետքը
 Աոստանդիանոսին զօրապետները ու իշխանները
 ժողվեցան անոր գլուխը՝ ու անուշուժեամբ իրրե
 թէ իրեն յանդիմանութիւնմը ըրին՝ ըսելով . « Ո՛վ
 » Տէր , չնս գիտեր որ մենք զմեզ քու վրայ դրած
 » ենք : Աթէ ամենակարողին զօրութիւնը պահե-
 » լու չըլլար զքեզ ասչափ վտանգներէն , որոնց
 » մէջը առանց վասնալու զքեզ ձգեցիր , կըզըկըվէինք
 » այսօրվան օրս յաղթութենէն՝ որ ունեցանք մեր
 » իշխանին ներկայութեամբը : Հասյա չափաւորէ
 » քու անխնայ վստահութիւնդ , չըլլայ թէ քուկին
 » իյնալովդ մենք ալ իյնանք թշուառաբար » : Շնոր-
 հակալ եղաւ Աոստանդիանոս աս քաղցր ազդա-
 րարութեան համար , տեսնալով որ իր զօրապետ-
 ները սրտանց զինքը կըսիրեն կոր :

Արբոր պատերազմին բօթ լուրը հասաւ Ա Ե-
 րոնա քաղաքը , և թէ իրենց գլուխին պատե-
 րազմի մէջ մեռաւ , իրենք իրենցմէ բացին քաղքին
 դռները ու անձնատուր (թէսլիմ) եղան Աոստան-
 դիանոսին : Աոստանդիանոս գթացաւ անոնց վրայ ,
 ու ապսպրեց իր զօրքին՝ որ չըլլայ թէ յափշտա-
 կութիւնմը կամ զէնմը ընեն մէկուն . միայն հրա

մայեց՝ որ գերիններուն ոտվընին շղթայ (զէնճիլ) դնեն, բայց անչափ բազմութեան շղթայ չիբաւելով, հրամայեց՝ որ որչափ զէնք ունիննէ տան: Եւ ասով իրենց ամենեին վնաս մը չեղաւ:

Ասկից ետքը սկսաւ Աոստանդիանոս յառաջ գալ դէպ ՚ի Հոովմ: Ղ'ամբան ուր տեղ որ կը հանդիպէր, քաղաքացիք իրենք իրենցմէ կը բանային դռները, ու զիրենք կը յանձնէին Աոստանդիանոսին: Եւ աս ճամբորդութիւնը ուրիշ բան չեղաւ՝ բայց եթէ քաղաքներ առնել:

ԳՂ: ԺԳ:

Սասանեանոս զօրքը կը հասնէ Հոովմայէն գոսրս, եւ Աոստանդիանոս կը հասնէ Հոովմ:

ԱՄ ԹԻՆ 312:

Սաքսենտիոս Հոովմ թէպէտ կը ըսէր Աոստանդիանոսին ըրած քաջութիւնները, և թէ ինչպէս իրեն երկու բանակնալ զարնելեցան Աոստանդիանոսէն ու յաղթը վեցան. ՚ի վերայ այսր ամենայնի անհոգ կը լար բանի տեղ չէր սեպեր, կարծելով թէ ինչպէս Սևերոսին ու Գաղերիոսին զօրքը ցրուեց, ասանկ ալ Աոստանդիանոսին զօրքը կընայ ըստկին զօրութեամբը անկից հեռացնել: Այսպէս

կրմտածէր անխելք Մաքսենտիոսը, բայց ուրիշ կերպ կրմտածէին իրեն զօրապետները ու իշխանները՝ որոնք զիտէին Աոստանդիանոսին և իր զօրքին քաջութիւնը, անոր համար ահու գողու մէջ ընկան, մտմտալով թէ կարգը իրենց եկաւ Աոստանդիանոսին խշմին հանդիպելու: Այլան Մաքսենտիոսին առջին ու ըսին իրեն, թէ նորէն զօրք ժողվել տայ որչափ որ կրնայ. վասնզի կըսէին թշնամինիս առիւծիմը պէս վրանիս կուգայկոր, չըլլայ թէ մեր արիւննովը լեցընէ քաղաքը: Աւստի եղած զօրքին վրայ էղմընալ եւեցուցին, ու սկսան գունդ գունդ (պէօլիւկ պէօլիւկ) Հռովմայէն դուրս ելլել: Անցան Միլվիոն կամրջէն, հեռացան ինը մղոնի չափ, և Սուսի սօսի ըսված տեղը՝ որ է ըսել կարմիր քարեր, բանակեցան (օռտու խուռմիշ ըրին):

Վոնէ հիմակ Մաքսենտիոս իրեն վախկոտութիւնը ու մարմնոյ հանգստութիւնը մէկ դի ձգէր, ու զօրքաց հետ մէկ տեղ ծեծկըվելու երթար, որպէս զի իր զօրքը տեսնալով զինքը՝ հոգի առնէին ու քաջութեամբ պատերազմէին: Աստաւ իր պալատին մէջը հանգիստ՝ ըսելով թէ հարցուցի աստուածներուն և հրաման չիտըվին որ ելլեմ Հռովմայէն: Ասկից ՚ի զատ Մաքսենտիոս աս տարվան Հոկտեմբեր ամսոյն քսանըհնգին ուզած էր իրեն թագաւորութեան տարեգարձը ընել խաղերով ու զանազան զուարճութիւններով: Երողովուրդը տես-

Նալով ասի՝ ալ չիկրցան համբերել, համարձակ պօռչըտալ սկսան՝ ու անարգել զինքը, երեսը զարնելով իրեն տմարդութիւնը ու թմրութիւնը՝ որ զօրքը դաշտին վրայ իրեն համար կեանքերնին կըղնեն կոր, ինքը խաղերու ու զբօսանքներու ետեւ է: Ախցաւ Մաքսենտիոս ու շուտմը ծերերէն մէկ քանին խրկեց՝ որ երթան Սիբիլայից գրքերէն տեղեկանան թէ ինչպէս է իր վիճակը: Անո՞ք ալ այնպիսի պատասխանմը բերին իրեն՝ որ երկու նշանակութիւն ունէր, ըսին թէ «Նոովմայ» ին թշնամին պիտի կորսըվի»: Անկնեց Մաքսենտիոս աս խօսքը Աոստանդիանոսին վրայ, ու անմիջապէս ելաւ գնաց իր զօրքին բանակը: Ուր տեսնանք թէ վնասը ինքը մի քաշեց՝ չէնէ Աոստանդիանոս:

Բանիմը որ յառաջ Աոստանդիանոս իր զօրքովը եկած հասած էր Սոսսի քաղաքը ըսված տեղը, և դուրսը տեսնալով Մաքսենտիոսին զօրքը ուրախացած էր մեծապէս: Ասան զի թէ որ քաղքին մէջ մնային՝ պատերազմը երկան պիտի տւէր, թէ բերդին ամուր ու լան ըլլալուն համար, և թէ պարենին (զահրէին) շատութեանը համար: Արդ կեցնել տրվաւ իր զօրքը թշնամիներուն դէմը, ու ծեծկրվելու պատրաստվեցաւ:

Բայց Աոստանդիանոսին պատերազմը պատմէլէն յառաջ՝ կըստիպէ զմեզ երեւելի դիպուածմը

որ աշխրբիս մէջ հռչակեալ է . այսինքն սուրբ
խաչին երևնալը Արստանդիանոսին՝ որով Արստան-
դիանոս զօրացաւ, ու յաղթեց Սաքսնտիոսին :
Աւետի նախ և առաջ պատմենք թէ ինչպիսի խաչ
էր, ու ինչպէս երևցաւ :

ԳՂ. ԺԳ.

Արստանդիանոսին սուրբ խաչը իւրեւայ . ու անոր
զօրութեամբը ինչպիսի Սաքսնտիոսին :

Ամ ան 312 .

Ան ատենը՝ որ Արստանդիանոս կուղէր իր զօրքը
յորդորել՝ ու անոնց սիրտ տալ չի վախնալու թշնա-
միներուն շատութենէն, ահա ինքը վախնալ սկսաւ,
բոլորովին ուժը կտրեցաւ, և յոյսը ու ապաւինու-
թիւնը՝ որ ունէր իր զօրքին վրայ, կորսնցուց :
Մտմտութեամբ առաւ զինքը, քանի որ կընայէր
Սաքսնտիոսին բանակին՝ վախ ու դողմը զինքը
կըբռնէր : Մէյրը կըմտմտար որ թող տայ ու
փախչի, մէյմընալ կըմտմտար նախատինքը, որ
ասով իրեն այնչտի ժամանակվան ստացած պա-
տիւր պիտի կորսնցնէր : Արբոր ասանկ սրտին խոր-
հուրդները խռովեալ ծովու ալիքներու նման աս-
դին ան դին կերերային, միտքը եկաւ՝ որ աս ա-

մենայն դժուարութիւններուն կրնայ յաղթել աստուծոյ մը զօրութիւնը : Բայց ահա նոր խորհուրդ մը տանջել սկսաւ զինքը , մտմտաց թէ այնչափ աստուածներուն մէջէն՝ որ աստուծոյ զօրութիւնը կրնայ իրեն օգնել , որպէս զի անիկայ իրեն օգնութիւն կանչէ : Սկսաւ քննել ամմէն Խնքնակալներուն վիճակը՝ որ շատ չաստուածներ պաշտելով ձախորդ գացած էր բաներնին , և ետքը չարաչար սատկած էին : Մի միայն իր հայրը գտաւ՝ որ բարեպէս թագաւորած ու մեռած էր : Բննեց անոր գործքերը , միտքը եկաւ ան սէրը՝ որ իր հայրը քրիստոնեայներուն վրայ ունէր , թող տալով անոնց պաշտելու իրենց Աստուածնին , անատեն՝ որ ուրիշները չարաչար կը հալածէին ու կը նեղէին : Աս խորհուրդը մտքին մէջէն չելաւ թէ քրիստոնեայներուն Աստուածն է ճշմարիտ Աստուած : Աս միջոցիս մէջ վերցուց աչվըները դէպ 'ի երկինքը , ու տեսաւ որ երկինքէն լուսաւոր և պայծառ խաչմը վար կիջնար , որուն վրայ այսպէս գրված էր « ասով պիտի յաղթես թշնամուդդ » : Աս տեսիլքը նաև Աոստանդիանոսին զօրաց երեցաւ , և ամմէննալ ահու դողու մէջ ընկած կը զարմանային , ու չէին կրնար իմանալ թէ ինչ կը նշանակէր ան տեսիլքը : Ասոր վրայ ինչպէս իրիկուն մտմտաց : Գիշերը երբոր ծանրացեալ խորհուրդներով կը քնանար , Բրիստոս երեցաւ իրեն ձեռքը խաչմը

բունած, և հանդարտեցուց զինքը, մեկնելով՝ թէ
ինչ կընշանակէր ան խաչը, և հրամայեց որ դը-
րօշակմը (պայրախմը) շինել տայ ու անոր վրայ
ատ երեցած խաչին նմանը ձևացնէ, որով անտա-
րակոյս կըյաղթէ: Արթնցաւ Աոստանդիանոս
քնէն, ու գիտուն և հանճարեղ արուեստաւորներ
կանչել տրվաւ: Իրեն երեցած խաչը՝ լեզուաւ
եկարեց անոնց, ու հրամայեց որ շինեն սաստիկ
փառաւոր՝ որչափ որ կարելի է: Աս խաչին
ձևը Ալեսբրիոս այսպէս կըստորագրէ: „Խաչին
„բունը (խաչափայտին կեօվտէին փայտը) կըսէ,
„ոսկեզօծ երկան գեղարդ (մզրախ) մի էր, որուն
„մէջ տեղէն կանյնէր երկան փայտմը՝ որ կընէ
„խաչաձև: Աս խաչին վերի դին՝ թևերուն վրայ
„ոսկիէ պսակ մի կար ազնիւ ու մեծագին քա-
„րերով ընդելուպեալ (կիյտիրմիշ եղած), և ան
„պսակին մէջ տեղը փակագիրմը կար այսպէս **Ք**
„որ հռմբէէն կըկապէր Վրիստոս: Խաչին երկու
„թևերէն ծիրանի դրօշակմը ոսկի ծոպերով (սա-
„չախներով) կախված էր, որ զարմանալի պայծա-
„ռութիւնմը ունէր: Ղրօշակին վրան՝ իր ու եր-
„կու որդւոցը ոսկիէ կիսարձանները դնել տը-
„վաւ: Աս խաչին նշանը նման արքունի դրօշակին՝
„յիսուն կտրիճ՝ ու բարեպաշտ զինուորներուն
„յանձնեց, որ ծեծին մէջ աղէկ զգուշանան ու պահ-
„պանութիւն ընեն անոր“: Ասոր նմաննաւ ուրիշ

դրօշակներ ամեն մէկ գնդին գլուխը շինել տրվաւ, թէպէտ անչափ ծանտր ու մեծադին չէին: Ահա հաններուն ու ուրիշ զէնքերուն վրան ալ տպել տրվաւ աս խաչին պատկերը: Այլ իր սիրտը քրիստոնէական կրօնին սիրովը վառված ըլլալով՝ շուտ մը կանչել տրվաւ երկու առաքինի ու ընտիր հայրապետներ, որոնք էին Աուրիցիոս և Ավսիոս ու անոնցմէ հարցուց տեղեկացաւ թէ ինչպիսի կրօն է քրիստոնէայներուն կրօնը: Արբոր անոնցմէ ամեն սկզբունքը քրիստոնէութեան սորվեցաւ, անչափ սիրտը կապվեցաւ ու սիրեց աս կրօնը՝ ինչ վան ըսաւ, թէ ես ալ քրիստոնէայ եմ: Անկից ետեւ ալ միտքը դրաւ որ քրիստոնէական կրօնը իր տէրութեանը մէջ աճեցնէ ու առաջ տանի, ու կռապաշտութիւնը բոլորովին ջնջէ:

Աս ասանկ ըլլալէն ետքը դարձեալ զօրացաւ Աոստանդիանոս, ու սրտին մէջը ծեծկըվելու փափաք մը ընկաւ, ժամէ 'ի ժամ (սահաթէ սահաթ) կըսպասէր Մաքսենտիոսին գալուն, որպէս զի ծեծը ս'ըրսի: Թէպէտ առաջ պղտիկ պատերազմներ կըլային, ինչպէս ամեն պատերազմներու մէջ սովոր է ըլլալ, բայց դեռ երեւելի գնդերը տեղերունէն չէին շարժած:

Արբոր Մաքսենտիոս իր բանակին մէջ ոտքը դրաւ, ցածկեց Աոստանդիանոս վազեց իր զինուորներուն, ու շուտ մը կարգ խօթեց: Աըջանը տա-

լուն պէս, ահա ասոնք ասդիէն, անոնք անդիէն
առաջ եկան ու սաստիկ ուժով իրար զարնըվեցան :
Սաքսենտիոսին ձիաւոր զօրքը մէկէն վաղեցին Աոս-
տանդիանոսին վրայ : Աոստանդիանոս ետ դարձաւ
ու իրեն ձիաւորներովը զարնըվեցաւ անոնց : Ըն-
տեղս Սաքսենտիոսին կողմը չիդիմացաւ, սաստիկ
ջարդըվեցաւ : Արոնք որ խալըսեցան փախչելով՝
բօժ լուրը հասուցին բանակին : Ըռաջին վախ-
ցօղը, ու փախչօղը եղաւ Սաքսենտիոսը : Զօրք-
նալ իրեն նայելով մեծ մասը սկսան փախչիլ դէպի
Հոովմ : Բայց օղորմելին Սաքսենտիոս որչափ
մահուանէ կըփախչէր՝ ա՛նչափ մահը անոր ետե-
ւէն կըվազէր ինչպան եկաւ հասաւ բոնեց զինքը
Տիրերիա գետին վրայ : Ասան զի ինքը անոր վրայ
պղտիկ նաւակները մէկզմէկու մօտեցնել տալով ու
երկըթէ ճանկերով բոնեցնել տալով կամուրջմը
(քէօփրիւմը) շինել տրված էր, որպէս զի Աոս-
տանդիանոս իր զօրքովը թէ որ վրայէն անցնելու
ըլլայ՝ արձըկեն ճանկերը ու քայքայելով նաւակնե-
րը՝ գետը ըյնի ու խըղզըվի : Ի՛նչ որ Աոստանդիա-
նոսին վրայ կըմտածէր՝ իրեն վրայ եղաւ : Արբոր
անոր վրայէն ինքը ու իր զօրքը իրար հըմըշտըկելով
կանցնէր, քայքայեցան ճանկերը, բացվեցան նա-
ւակները ու ընկաւ գետին մէջը : Իրար անցան զօր-
քը, ու շիօթեցան. զէնքերուն ու վահաններուն
ձայնէն մեծ աղմուկ (վէլվէլէ) ելաւ, ու Սաքսեն-

տիոսին նայողմը չի գտնուվեցաւ թէ ուր ընկաւ և
 ինչ եղաւ, և ատանկ թշուառաբար խղղըվեցաւ :
 Արկրորդ օրը փրնտուեցին իրեն զին (լէշը), և
 գտան գետին տակէն : Ատրեցին գլուխը ու երկան
 փայտիմը վրայ անցուցին և բերին Հոովմ քաղաքը :
 Յայց դաշտին վրայ դեռ պատերազմը կը լար կոր,
 վասնզի քաջ Պրետորեան գունդը մահերնին աչ-
 վընին առնելով, անխնայ պատերազմեցան ինչվան
 ընկան ամեննալ մեռան : Յայց աս ծեծին մէջը
 երևելի ու պատմելու արժանի դիպուածմը եղաւ :
 Ըն յիսուն հոգիէն, որ դրօշակը կը կրէին, հիւ
 մէկը չը վիրաւորվեցան, բացի մէկէն՝ որ երբոր տե-
 սաւ զինքը վտանգի մէջ՝ դրօշակը քովինին տրվաւ,
 և հազիւ թէ դրօշակը ձեռքէն ելաւ՝ զարնըվեցաւ
 նետովմը, ու վիրաւորվեցաւ : Ար գունդը որ՝ կը-
 տկարանար, Արստանդիանոս կը հրամայէր, որ դրօ-
 շակը հոն տանին. գացածին պէս՝ զինուորները
 աներևոյթ զօրութիւնմը կ'առնէին ու կը յաղթէին :
 Ըհա Արստանդիանոսին ատ քիչվոր զօրքը իրեք
 սոսկալի մեծամեծ բանակներ զարկաւ ու յաղթեց :

ԳԼ ԺԵ.

Վոստանդիանոս յազլեանախա իւնիսէ Հոովմ :

Ամ ան 312 :

Եւ երջանիկ պատերազմը՝ որ Լստուծոյ զօրութեամբը գրեթէ եղած էր, լըմննալէն ետև չուղեց Վոստանդիանոս անմիջապէս քաղաքը մտնել, այլ ան օրը դաշտին վրայ անցուց, որպէս զի զօրքը քիչմը հանդչին ու հոգի առնեն : Արկրորդ օրը առաւօտանց կարգեց իր զօրքը գունդ գունդ ու սկըսաւ փառաւորապէս գալ դէպ 'ի Հոովմ : Հոովմսոյեցիք երբոր լսեցին թէ Վոստանդիանոս Հոովմ կրմտնէկոր՝ ծերակոյտը ու ժողովուրդը ուրախութեամբ դիմացը ելան : Մհ թէ ինչ ուրախութիւն, ու ինչ ցնծութիւն ունեցաւ աս ատենս Հոովմ քաղաքը : Եւ յաղթութեան մէջ եղած բաները, բոլորովին ներհակ էին ուրիշ եղած յաղթութիւններուն : Ուրիշ յաղթութիւնները յաղթողին ուրախութիւն, յաղթըվողին տրտմութիւն կը բերէին, հոս տեղս յաղթըվողը առաւել ուրախացաւ քան թէ յաղթողը : Աստի կը զարներ բոլոր քաղաքը, և որչափ որ ուրախութեան նշաններ կարնէ կը ցըցընէր : Վեղեցիկ կը ստորագրէ 'Ազարիոս ասենաբանը Վոստանդիանոսին Հոովմ մտնելը՝ որ իրաւ-

ցընէ արժանի է իր խօսքերով Տոս տեղս գրել, որ
 կարդացողը ոչ միայն իմանայ, այլ և զարմանայ,
 „Չեղաւ՝ կըսէ, աս օրէն՝ ՚ի զատ այսպէս երջանիկ
 „ու ուրախալի օրմը շուովմ քաղքին շինութենէն
 „հետէ : շիչ մէկ յաղթութիւնմը որուն վրայ
 „նախնինները կըպարծենան՝ ասոր հետ չիհամե-
 „մատվիր՝ որնոր Աոստանդիանոս ըրաւ : Չիտեսանք
 „Աոստանդիանոսին կառքին (առապային) առջևը
 „շղթայով կապված թշնամիներուն զօրապետնե-
 „րը • բայց բոլոր շուովմ քաղքին ազնուականները
 „ազատեց շղթայներէն : Տաղթողը չիբանտարկեց
 „(հափրղը չիդրաւ) բարբարոսները, այլ բանտէն
 „դուրս հանեց հիւպատոսները : Արոնք որ աս հան-
 „դէսը (ալայը) զարդարուն ըրին, օտարական գե-
 „րիները չէին, այլ շուովմ էր՝ որ ազատութիւն
 „ստացաւ : շուովմ չյաղթեց թշնամւոյն՝ այլ ին-
 „քը զինքը փրկեց : Չիհարստացաւ աւարաւ (եաղ-
 „մա ընելով), այլ դադրեցաւ, որ ալ աւար չըլլայ
 „անողորմ բռնաւորէն, և որ ամէն ուրախութեան
 „ծարն է, ծառայութեան տեղը տէրութեան իրա-
 „ւունք ստացաւ : Պատերազմի գերիներուն տեղը՝
 „իւրաքանչիւրոք իր սրտին մէջը ուրիշ տեսակ գե-
 „րութիւնմը կըգտնէր : Արտեսնային՝ որ մարդկային
 „ցեղէն զարհուրելի հրէշները շղթայներով կապ-
 „ված են, այսինքն, հպարտութիւնը՝ խոնարհած է,
 „խաբէութիւնը՝ յաղթըված է, բռնաւորութիւնը,

„կատաղութիւնը, անգթութիւնը, գոռոզութիւնը,
 „յանդգնութիւնը, ցոփութիւնը (էտէփսիզութիւ-
 „նը) անառակութիւնը, կատղած թշնամիները, ու
 „րոնց փորձը առինք, բարկութենէն կրկրճըտէին
 „ակռանին, տեսնալով՝ որ ալ չեն կրնան մեզի վնա-
 „սել“:

Իրաւցընէ ինչ որ Վաղարիոս ատենարանը
 գրեց, ճշմարիտ էին. չէին ճարտասանական ճոռո-
 մաբանութիւն (տիւլպազութիւն): Որովհետեւ Վոս-
 տանդիանոս շուովմ մտած ատենը արիւն չըբաւ.
 միայն քանիմը խորհրդականներ ու Մաքսենտի-
 ոսին որդին՝ որ դեռ պղտիկ էր մեռցնել տրվաւ,
 որպէս զի խռովութեան առիթը վերնայ: շրաման
 հանեց որ բանտերուն դռները բացվին, ու ազատ
 ըլլան որչափ որ բանտարկեալներ կային, որոնց
 վիզը Մաքսենտիոսին անօրէն սրին կըսպասէր:
 Ինչ անիրաւութիւններ ու ինչ յափշտակութիւն-
 ներ եղած էր նէ, հատուցում ըլլայ ըսաւ. և ամ-
 մէն մարդ իր կորսընցուցածը դարձեալ թող առ-
 նէ: Վերակուտական իշխանութիւնը մեծցուց, ու
 առաջուց ունեցած պատիւը և իշխանութիւնը տը-
 վաւ իրեն: Մնոնք՝ որոնք որ սքսոր (սիւրկիւն)
 եղած էին, ետ դարձուց. և որոնք որ բանտերու
 մէջ կեանքերնին կըմաշէին, խալըսեց: Մնոնց թիւը
 լեցնելու համար ու միանգամայն պատիւ ընելու հա-
 մար, ընտրեց իր տէրութեանը մէջ երևելի մար-

դիկներ, ու անոնց կարգը խօթեց: Բայց վասն զի
 Հռովմացեցիք հպարտ էին, և չէին ուզեր որ իրենց
 հաւասար ըլլան օտար ազգէ եղօղները, որոնց իրենք
 բարբարոս կրկանչէին, անոր համար խիստ դժարնին
 եկաւ իրենց Առստանդիանոսին աս գործքը: Սակայն
 որպէս զի ապերախտութիւն ըրած չըլլան, ձան
 չիհանեցին: Առստանդիանոս առջի անգամուն՝ որ
 մտաւ ծերակուտին մէջը խոստացաւ իրենց, որ ամե-
 նելին ունեցած իշխանութիւններնին ու արտօնու-
 թիւններնին չիպակսեցնէր, այլ մանաւանդ թէ կը-
 պայծառացնէ որ աւուր վրայ իրենց պատիւը: Այս-
 պիսի անուշ խօսքով ատանկ շահեցաւ անոնց սիր-
 տը՝ մինչև շնորհակալութեան համար ծերակոյտը
 ժողովրդեան հետ խօսք ըրաւ, ու Առստանդիա-
 նոսին յաղթութեան կամարմը կանգնեց որուն վրայ
 այսպէս գրված էր: “ Ի փառս օգոստայիառ վիւա-
 ,, փիայ Առստանդիանոսի և բարեպաշտ բարերջանիկ
 ,, ծայրագոյն ինքնակալի, որ աստուծոյ զօրութիւնը,
 ,, իրեն սրտին մեծ քաջութեամբը, զօրքին օգ-
 ,, նականութեամբը, ու իրեն արդար և հզօր
 ,, ղէնքերուն յաղթանակաւը, հասարակապետու-
 ,, թիւր փրկեց. ու նոյն ժամանակվան մէջ գրանը-
 ,, վօղ բռնաւորին, ու անոր կողմնակալներուն ձեռ-
 ,, քէն խալըսեց: Աս երախտեաց շնորհակալ ըլ-
 ,, լալու համար ծերակոյտը ու Հռովմ քաղքին ժո-

„ զովուրդը աս յաղթութեան կամարը իրեն կընուի-
 րեն “ :

Աս կամարին մէկ կողմը գրված էր « ապարին
 ապարողին . և մէկալ կողմը խաղաղութեան հիմա-
 դրին . ուր զօրութեամբ կիմացվի “ . կրկանգնրվի աս
 կամարս “ :

Աս կամարը զարդարելու համար հանած էին
 ասդիէն անդիէն զանազան զարդեր , ու դրած էին
 աս կամարին վրայ , առանց քննելու՝ թէ արդեօք
 կը յարմարի Աստանդիանոսին թէ չէ : () Գրօրինակ
 Պարթևներուն արձանները , որոնք երեսներնուն վը-
 ընկած կեցած էին Աստանդիանոսին արձանին առ-
 ջևը , որոնց հետ Աստանդիանոս ոչ պատերազմ
 ըրած էր , և ոչ անոնց յաղթած էր : Ինչպէս նաև
 Տրայիանոսին կտրած գլուխը՝ որ դրված էր Աս-
 տանդիանոսին ըրած յաղթութիւններուն մէջը . և
 սակայն Տրայիանոս Աստանդիանոսէն երկու հարիւր
 տարի յառաջ էր : Աստանդիանոսին անունը գրած
 էին այն շէնքերուն վրայ՝ որոնք որ ուրիշները շի-
 նել տրված էին՝ և ոչ թէ Աստանդիանոս : (Ե) Ե-
 ղունք , որ միօրինակ ալ չէին զարդերուն բարա-
 կութիւնը , ոմանք խիստ աղւոր էին , և ոմանք շատ
 տղեղ : Արոնք որ իրենք շինած էին՝ շատ անշահ
 էին , վասն զի առջի բարակ արհեստները ան ատեն
 մոռցրված էր : Բայց ոչինչ ընդդէմ է՝ որ Աս-
 տանդիանոսին հաճելի եղած ըլլայ աս կամարը՝ չի-

նայելով թէ ինչ բան է, այլ նայելով թէ ինչ պիտի սրտով շինված է: Բայց Ափրիկեցիք չափը անցուցին վասն զի զՎոստանդիանոս և իր ընտանիքը չաստուածներուն կարգը խօթեցին՝ ու սկսան պաշտել: Իտալացիք իրեն նուիրեցին միայն ոսկիէ վահանմը (խալխանմը) ու պսակմը: Այց օր աս ուրախութիւնը տևեց Հռովմ: Ամեն զիաց՝ հոն կը վազէին Իտալացիք, որպէս զի իրենք ալ ուրախութեան ընկեր ըլլան: Տեսարաններ խաղարկութիւններ ու զանազան ուրախութեան հանգեսներ անպակաս եղան ան վեց օրվան մէջ: Բայց ժողովորդեան աչքը միշտ Վոստանդիանոսին վրայ էր որուն որչափ որ կը նայէին՝ անչափ սիրտերնին կը կապվէր անոր հետ:

ԳԼ՝ ԺԳ՝

Առաքանդիմանսն էրեւելի գործերը հասով կեցած
արեւնը :

ԱՄ ան . 312 :

Երբոր աս հանդիսութեան օրերը անցան, ուղեց
Առատանդիանոս քաղքին հարկաւոր եղած բաները
հոգալ ու կարգ խօթել : Աւ որովհետև ամմէն բա-
նէն աւելի ստըկի հարկաւորութիւն կար, անոր հա-
մար բացաւ իր առատ ձեռքը, և բաշխեց ամմենուն՝
որոնք որ կարօտութիւն ունէին : «Ախ որբերուն
(էօքսիւզներուն) այրիներուն ու անմեղ դատա-
պարտվողներուն վրայ ցըցուց իր առատաձեռնու-
թիւնը, որոնց ամմենուն հագուստը ու կերակուրը
թագաւորական ծախքով ճարեց : Իր դուռը ամմէ-
նուն բաց էր, ո՛վ որ կուզէր կերթար իրեն հետ
կըխօսէր, և ինչ որ կըխնդրէր՝ միայն թէ արդար
ըլլայ խնդրածը, կընէր : Այսան զի Առատանդիա-
նոս կանոն ըրած էր իրեն աս իմաստուն խօսքը՝ թէ
« ամմէն հպատակ պէտք է որ ուրախութեամբ
« դուրս ելլայ իր թագաւորին առջևէն . և թագա-
«ւորը երբոր կիմանայ, թէ մէկուն խնդրածը ար-
«դար է, պէտքը չէ որ ուշացնէ և ոչ մէկ վայր-
«կեան մը իր հպատակին մխիթարութիւնը » : Գա-

նազան օրէնքներ դրաւ՝ որոնց ամմէննալ զլիա-
ւորաբար աղքատներուն ու ողորմելի վիճակ ունե-
ցողներուն օգուտ էին : Ալ եթէ արդարութիւնը՝
որ զինքը կրբռնադատէր մէկումը հարստութիւն-
ները առնելու, կամ մէկէն տուժելու (ճերէմէ առ-
նելու), իր ստրկէն առածին չափ ետ կուտար, և
այսպէս արդարութիւնը չէր զրկեր զողորմածու-
թիւնը : Իր բարկութիւնը միայն Պրետորեան ըսված
զօրքին վրայ թափեց, որոնք համարձակութիւն
գտնելով Վաքսենտիոսէն՝ թող չէին տրված չարիք
որ չըրած չըլան, որոնց սուրերնին ամմէն տեսակ
մարդկան արիւնը խմած էր, սոսկականէն սկսեալ
ինչվան ինքնակալներուն : Տնջեց վերցուց անոնց
գունդը, և ամմէն մէկերնին բաժնեց զանազան գըն-
դերու : Կմանապէս ջնջեց և քաղաքը պահօղ զին-
ուորները, որոնք փոխանակ հսկելու հասարակաց
խաղաղութեան վրայ, շատ անգամ իրենք խռովու-
թիւն կը հանէին :

Վարդիկները ասանկ կարգաւորելէն ետքը
Վոստանդիանոս իր բարեխնամ աշխարհները դարձուց
չէնքերուն վրայ : Աւզեց որ աղւոր ու սիրուն շէն-
քերով ալ պայծառացընէ զ՝ ռովմ : Բիչ ժամա-
նակվան մէջ մեծամեծ շէնքեր շինել տրվաւ, որոնք
իրենց գեղեցկութեամբը ու մեծութեամբը ետքի
եկողներուն Վոստանդիանոսին առատաձեռնութիւ-
նը ու բարութիւնը քարոզեցին, ու իրեն յիշա-

տակը անմահ ըրին : Առիթինաղ ըսված լեռան վր
 բաղնիքներ շինել տրվաւ հասարակաց օգտին հա-
 մար , որոնք թէ որ իրենց մեծութեամբը ու գե-
 ղեցկութեամբը առջի շինած բաղնիքներէն վեր
 չէիննէ՝ վարալ չէին : Ասկիէ ու արծրթէ արձաններ
 կանգնել տրվաւ : Ասոնցմէ 'ի զատ քաղքին մեծ
 մասը՝ որ աւրրված էր պատերազմներէն ու բռնա-
 ւորներէն շինել տրվաւ : Այն քաղաքները՝ որ, իրենց
 առջի գեղեցկութիւննին կորսնցուցած էին , զորօրի-
 նակ Սոտոնա , Ամիղիա , Իկուրիա , և Ադրուրիա
 դարձեալ գեղեցկացան : Այլ Առամիդիայ մայրա-
 քաղաքնալ որ կործանած էր , Աոստանդիանոսին
 հրամանաւը նորէն շինվեցաւ : Աս Աոստանդիա-
 նոսին բարեղարդութեան համբաւը երբոր աս դին
 անդին հռչակվեցաւ (չաւ եղաւ) նայիս ամմէն դիաց
 չէ միայն մօտիկ տեղվանքներէն , այլ և հեռու
 տեղերէն հրեշտակներ (էլէֆներ) եկան Աոստան-
 դիանոսին , ըսելով թէ մենք ալ քու հպատակներդ
 ենք , ասկից ետև Աաքսենտիոսին տեղ մեր թա-
 գաւորը զքեզ կըճանչնանք , և քեզի հարկ կու-
 տանք , միայն թէ դու ալ մեզի տէրութիւն ըրէ ու
 զմեզ պաշտպանէ : Միտով Աոստանդիանոս ականջ
 դրաւ ասոնց խօսքին ու մեծամեծ պարգևներով ու
 արտօնութիւններով ետ դարձուց զանոնք , որոնք՝
 որ քաղքէն որ կանցնէին , ուր որ կըհասնէին , կը-
 գովէին զԱոստանդիանոս . ու կըսէին , էրնէկ մեզի

որ ասանկ բարերար թագաւորմը ունինք հիմակ վրանիս : Աոստանդիանոս ինչվան հիմակ ինչ որ ըրաւ՝ դրեթէ ամմէնուն հաճոյքը ու կախքը կատարեց , միայն երբոր կարգաւորելու եղաւ տուրքը՝ քաղցր ներդաշնակութեան մէջ քանիմը տարածայնութիւններ դուրս ելան : Օտերակոյտը առաջվան պէս կուզէր , որ ազատ ըլլայ ամմէն տուրքերէն ու ծանրութիւններէն : Աոստանդիանոս տեսնալով որ անով բոլոր տուրքին ծանրութիւնը խեղճ ժողովրդեան վրայ կիյնակոր՝ ըսաւ թէ ասիկա արդարութիւն չէ , որ կարողութիւն ունեցողը չիտայ , ու չունեցողը տայ : Աւտի ժողովրդեան տուրքը թեթեցուց , ու ծերակուտին վրայ դրաւ : Բայց աս շնորհքը ըրաւ անոնց , որ իւրաքանչիւր ոք որչափ որ կրնայ՝ այնչափ վճարէ , որպէս զի արտունջ չըլլայ :

ԳԼ ԺԵ .

Աստուծոյ զմեզս յարեւոյտն ինչպէս ինչպէս
 ուստի համար ինչպէս ինչպէս հետ իրեն գրած
 հրովարտելու :

Ամ ան 312 .

Աստուծոյ զմեզս զուրկ առ բարեզարդութիւն
 ներք ըրած ատենը միտքը ընկաւ իրեն բարի առա-
 ջարդութիւնը քրիստոնէական կրօնը աճեցնելու .
 ուստի ամենայն փութով և յօժարութեամբ ե-
 տեան ընկաւ սատանայական կռապաշտութիւնը աշ-
 խրոքիս մեջէն վերցնել : Այլ թէպէտ զուրկ ա-
 ռաքեալներուն ատենէն սկսեալ ծածուկ քրիստո-
 նեայներ կային , և օր աւուր վրայ կըշատնային ,
 բայց քաղքին մեծ մասը կուռք պաշտելու ատանկ
 ջերմեռանդ էր՝ ինչպէս իրենց ունեցած կուռքերովը
 գոհ չէին ըլլար , այլ նաև ուրիշ ազգերուն կուռ-
 քերը բերել կուտային ու կըպաշտէին : Այլ զա-
 նոնք պաշտած ատեննին և ոչ պղտիկ սնտոյ պաշ-
 տօնմը կուղէին թող տալ : Արդ՝ այսպիսի կռա-
 պաշտ ազգմը սատանային ձեռքէն հանել ու գծած
 եկեղեցւոյն գիրկը դնել իրաւցնէ շատ դժար բան
 էր : Բայց Աստուծոյ զմեզս ապաւինելով Աստուծոյ
 զօրութեանը կամաց կամաց քրիստոնէութիւնը ա-

նոնց մէջը սերմանել սկսաւ այսպէս : « Ախ՛ս՛ ըսաւ թէ ես քրիստոնեայ եմ , ու քրիստոնէներուն Աստուածը կը պաշտեմ : Ատքը իրեն ոսկիէ արծա- նը ձեռքը խաչովմը հրապարակի մէջ՝ ուր որ միշտ բազմութիւն կը լլտար , կանգնել տըվաւ : Աւ ար- ձանին բերնէն այսպէս կը խօսէր : ,, Աս աս փրկա- ,, կան նշանաւ՝ որ է յաղթանակ ճշմարիտ զօրու- ,, թեան՝ ձեր քաղաքը բռնաւորին լուծէն ազատե- ,, ցի , և ծերակուտին ու Հոովմային ժողովրդեան ,, իրենց առաջուց ունեցած փառաւորութիւնը ,, տըվի “ :

Տարիմը ետքը երբոր գնաց Միլան՝ Վիկիա- նէսին հետ իր քոյրը կարգելու համար , անոր հաւանութեամբը հրովարտակմը (Ֆէրմանմը) գրեց ու տարածեց . որպէս զի քրիստոնեայները ալ չի- հալածվին , ու թող տըրվի անոնց իրենց կրօնին պաշտօնը կատարելու : Վիկիանէս թէպէտ սաստիկ կատէր քրիստոնեայները , բայց Աոստանդիանոսին բարեկամութեանը համար սկսաւ անուշ աչքով նայիլ իր տակը եղած քրիստոնեայներուն , ու քաղց- րութեամբ անոնց տիրել : Աս հրովարտակը բառ առ բառ թարգմանեցինք ու գրինք հոստեղս պատ- մութեան կարգը պահելու համար , թէպէտ ետեի տարին գրված էր : Աւ այս էր հրովարտակին կերպը :

» Մենք Աոստանդիանոս և Վիկիանէս օգոս-

„տափառք յաջողութիւն գտնելով Սիլան աղգա-
 „կից (խըսըմ) եղանք : Եւ երբոր սկսանք հոգ
 „տանել . հասարակապետութեան վերաբերեալ օգ-
 „տին ու ապահովութեանը վրայ , նախ առաջին
 „ան բանին վրայ ուղեցինք մտածել , որով որ աստ-
 „ուածային պաշտօնը կը յառաջանայ : Կուզենք
 „ուրեմն որ թէ քրիստոնեայները և թէ ուրիշները
 „ինչ կրօն որ կուզեն՝ դաւանին , որպէս զի երկնից
 „օգնութիւնը մեզի ու մեր հպատակեալ ժողովրդոց
 „ընդունինք : () գտակար խորհրդով որոշեցինք
 „ամէնուն ազատութիւն տալ ընդունելու քրիս-
 „տոնեայներուն կրօնը կամ թէ ուրիշ կրօն , որն
 „որ բարեգոյն կըսեպեն , որպէս զի Մատուծոյ ծայ-
 „րագոյն զօրութիւնը , որուն որ պաշտօն կը մա-
 „տուցանենք , ամէն բանի մէջ միշտ մեզի քաւիչ
 „ըլլայ : Ուստի գիտնաք ամէնքդ ալ (կըսէ դատա-
 „ւորներուն) մեր բացարձակ կամքը , որով քրիստո-
 „նեայներուն հրաման կուտանք , թէ որոնք որ կու-
 „զեն ծառայել իրենց կրօնին սրբազան բաներուն՝
 „ամենեին մէկէմը նեղութիւն չիկրեն , ու ոչ որ
 „կարօղ ըլլայ զանոնք խռովել : Երգելք չըլլան
 „աս բանիս որպիսի և իցէ վճիռներ՝ որ երբեմն գրե-
 „ցինք ձեզի թուղթերուն մէջը քրիստոնեայներուն
 „դէմ : Սանաւորաբար ու յայտնապէս ուղեցինք
 „ձեզի ասի իմացնել , որպէս զի գիտնաք՝ որ քրիս-
 „տոնեայներուն հրաման տրուած է իրենց պաշտօնը

„ամբողջ կատարելու : Բայց և ուրիշներն ալ որ
 „քրիստոնէական կրօնը չեն ուզեր, զանոնք ալ
 „չենք բռնադատեր, որպէս զի խաղաղութիւնը մեր
 „տէրութեանը մէջ պահելի :

„Ասկից 'ի զատ քրիստոնեայներուն օգուտ
 „ընելու համար կը հրամայենք, որ իրենց ժողովա-
 „տեղիները՝ որոնց վրայ որ հրաման խրկըված էր
 „ձեզի, զանոնք եթէ մենք առած ենք նէ կմ' ուրիշը
 „գնածէնէ առանց ուշացնելու, առանց կռուելու
 „առանց ստակը ու գինը պահանջելու ետ դարցը-
 „նէք : Իսկ որոնք որ այնպիսի տուները պարգև
 „առած են, նոյնպէս առանց ուշացնելու ետ դարձը-
 „նեն : Եթէ գնօղները կամ պարգև առնօղները
 „մեր մարդասիրութենէն բանմը կը յուսան, տէ-
 „րութեան փոխանորդին (վէքիլին) իրենց ուզած-
 „նին զրուցեն, որպէս զի ինչպէս որ բարի կերև-
 „նայ այնպէս հոգանք : Հոգ տարէք, որ ան տու-
 „ները քրիստոնեայներուն հասարակութեանը շու-
 „տով տրըվի : Իսկ եթէ իմանալու ըլլաք, որ այն
 „տեղերէն 'ի զատ ուրիշ հարըստութիւններալ ոչ
 „եթէ սոսկական մարդիկներ, այլ իրենց հասարա-
 „կութիւնը՝ այսինքն եկեղեցին ունի եղեր՝ զանոնք
 „ամէնը վերի ըսած թէութիւններով առանց
 „դժուարանալու, առանց կռուի դարձեալ իրենց
 „հասարակութեանը ու եկեղեցիներուն ետ տալու
 „հոգ տարէք : Անանկ որ՝ առանց գինը առնելու

„ետ դարձընօղները գիտնան, որ մեր առատաձեռ-
 „նութիւնը իրենց զէն ընել չիտար: Աս բաներուն
 „մէջ ձեր կարողութիւնը ու իշխանութիւնը՝ ի պործ
 „դնելու ջանացէք, և մեր կամքը քրիստոնեայնե-
 „րուն հասարակութեան բարւոյն համար շուտով
 „կատարեցէք, և հասարակաց խաղաղութեան փոյթ
 „տարէք: Ասով Աստուծոյ օգնականութիւնը՝
 „որուն պաշտպանութեամբը մեծ վըտանգներէն
 „խալըսեցանք, մեր ամէն աշխատանքը յաջողու-
 „թեամբ լըմընցնէ, ու ժողովուրդը ամէն տեսակ
 „երջանկութեամբ երանելի ընէ: Ալ որպէս զի
 „աս հրամանը ամէնը գիտնան, անդին աս դին կը-
 „պուցէք, ու ձեր իշխանութեան կնիքնալ կոխեցէք
 „որպէս զի չիգիտցօղ չըլայ“:

ԳԼ. ԺԲ.

Առաքանդիանոս քրիստոնեայնէրոան ապարտալէտանը հա-
 մար Սաբաթիմիոսին հրովարտալ իւ հանել իոպայ, և
 էիլ զէցայն զանազան Բարիքներ ի ընէ:

Աժ ան 312 :

Առտանդիանոս երբոր Հռովմ մտաւ, Սաբսն-
 տիոսին պալատին մէջը թուղթմը գտած էր, որ Սաբ-
 սիմիոս գրած էր Սաբսնտիոսին: Աս թղթին

մէջը Մաքսիմիանոս խօսք կուտար Մաքսենտիոսին, թէ ինքն ալ իրեն հետ մէկ տեղ կոստանդիանոսին թշնամութի կրնէ: «Այլէ կրսէր ես քեզի կօզնեմ, միայն թէ սըվոր տունը քանդելու ու զինքը նուաճելու կարենաս: Եսոր նման բաներ դտաւ կոստանդիանոս ան թղթին մէջը: Իայց ինչ օգուտ, որ կոստանդիանոս ամենին թշնամութեան նշանմը չիցըցուցած ատենը՝ Մաքսիմիանոս ինքիրէն դուրս հանեց իր թշնամութիւնը: Ասն զի երբոր կոստանդիանոս քրիստոնէական հաւատքը տարածելու ու հալածանքը դադրեցնելու ետէ կըլար, նայիս Մաքսիմիանոս նորէնոր հալածանքներ քրիստոնեայներուն դէմ դուրս կըհանէր: Եւ թէ որչափ անգթութիւններ ըրաւ, եթէ մեր նպատակէն շատ հեռու մնալու չըլայինք՝ կըպատմէինք քիչ մը հոստեղս: Ինչ որ էնէ կոստանդիանոս թէպէտև թէ գրով և թէ գործքով Մաքսիմիանոսին թշնամութիւնը կըտեսներ, ՚ի վերայ այսր ամենայնի չիգիտնալու ու չիտեսնալու կըզարնէր, բայց ՚ի վախճանի իմացուց իրեն, ու պատմեց թէ ինչպէս Եստուծմէ իրեն տեսիլք եղաւ, ինչպէս անոր զօրութեամբը Մաքսենտիոսին յաղթեց, և թէ ինչպէս Մաքսենտիոս չարաչար ստուկեցաւ: Ես երեք բանն ալ սուր սլաքի պէս Մաքսիմիանոսին սիրտը վիրաւորեցին: «Ախ որ՝ յաղթութիւնը քրիստոնեայներուն Եստուծոյն զօրութեանը կուտար, որ ինքը չէր ընդուներ: Երկ-

րորդ կը պատմէր թէ ինքը յաղթօղ եղաւ՝ որ չէր
 ուզեր : Աւ երրորդ Սաքսենտիոսին չարաչար մահ-
 ուան լուրը (խապարը) իրեն կուտար, որնոր Սաք-
 սիմինոս կը բաղձար Աոստանդիանոսին վրայ լսել,
 Ռայց ամմէնէն աւելի անոր դժարը եկաւ՝ երբոր
 տեսաւ թէ ինքնալ Աոստանդիանոսէն բռնադա-
 տեցաւ քրիստոնեայներուն հալածանքը դադրեցը-
 նել, ու անոնց ազատութիւն տալ : Ասնդի Աոս-
 տանդիանոս իր ու Ղիկիանէսին անուճովը անոր
 աս բանիս համար գրած էր, որոնց դէմ դնել չէր
 կրնար : Ուստի կէսմը ուզենալով ու կէսմը չուզե-
 նալով հրովարտակմը գրեց, ու Սապինոս ըսված
 իւր քաղաքապետին խրկեց, որուն մէջը այս-
 պէս կը գրէր : « Ինչպէս որ մեր դիւցազունք Ղիոկ-
 ,, Ղետիանոս ու Ղաղերիոս իշխանները ըրին, այս-
 ,, պէս մենք ալ անաչառութեամբ (առանց խաթեր
 ,, նայելու) կուզենք պահել չաստուածներուն պաշ-
 ,, տօնը : Ռայց և կրներենք քրիստոնեայներուն՝ որ
 ,, կարօղ ըլլան իրենց կրօնին ծառայել, նայելով
 ,, անոնց շատութեանը, որոնք եթէ չարչարելու
 ,, կամ աքսորելու ըլլանք, տէրութիւնը շատ հա-
 ,, տակներ պիտի կորսնցընէ, որոնց որ հարկաւորու-
 ,, թիւն ունի՝ մարդիկները շատցընելու համար : Աւ
 ,, ասկից ետեւ չենք ուզեր որ քաղաքներուն կառա-
 ,, վարները զանոնք չարչարեն, այլ կը հրամայենք

» որ ջանան քաղցրութեամբ ու փառք և պատիւ
 ,,խոստանալով անոնց միտքը փոխեն“ : Ասով երևե-
 լի օգուտ մը չեղաւ քրիստոնէական հաւատքին
 արևելքին կողմերը՝ ինչպէս որ արևմտեան կողմերը
 եղաւ : Այսն զի Արևմտանդիանոս իրեն կենդանի
 օրինակաւը քան թէ ուրիշներուն մեռեալ խօսքե-
 թովը շատերը կը դարձնէր : Մանաւանդ որ սրբուհի
 Հեղինէն ալ ըսելով իր որդւոյն գլխէն անցած բա-
 ները, ու քրիստոնէայ ըլլալը, ան ատենը Հռովմ
 եկած ու քրիստոնէայ եղած էր, և իրեն որդւոյն
 հետ ուղղափառ սուրբ հաւատքը քարոզելու ու
 տարածելու ետևէն էր :

Արևմտանդիանոս ուղղափառ հաւատքի դար-
 ձուց, ու քրիստոնէայ ըրաւ Փաւստա իր կնի-
 կը, Աւարոպիա իր զոքանչը (Խայնանան), ու իր
 զակրները, որոնց ամմէնուն վարպետ բռնեց որ
 զանոնք սուրբ հաւատքին մէջը կրթեն ու սորվեցը-
 նեն : Իր պալատին դուռը ամմէն եպիսկոպոսնե-
 թուն բաց էր, որոնց հետ ոչ միայն սիրով կընըս-
 տէր կըխօրաթէր, այլ նաև շատ անգամ անոնց
 հետ թէ մեծ մարդ ըլլան և թէ պզտիկ կերակուր
 կուտէր : Իսկ Մեղքիատէս սրբազան պապին՝ որ
 ան Ժամանակը քրիստոսին եկեղեցին կը կառավա-
 րէր՝ Ատերանեան ըսված պալատը պարզ և տրվաւ :
 Աս պալատին քովը կից մայր եկեղեցիմը կար սուրբ
 Յովհաննէս աւետարանչին նուիրեալ, որ Արևմտան-

դիանոս շինել տրված էր, ուր տեղ որ Լատերանեան ըսված ժողովը ետևի տարին եղաւ :

Ըսկից 'ի զատ նաև ուրիշ շատ օգնութիւններ ալ ըրաւ Կոստանդիանոս թէ՛ Սեղքիատէս պապին, և թէ անոր սրբազան ժողովոյն : Ըմմէն տեսակ ծանրութենէ, որ սովորաբար կը դրվի քաղաքացիներուն վրայ՝ զանոնք ազատ ըրաւ, ու նաև զանազան արտօնութիւններ տրվաւ իրենց : Ոսկուով ու արծրթով ի չպէս կը վայլէր իրեն առատաձեռնութեանը, եկեղեցիները զարդարեց, ու հարստացուց : Իսկ ուր որ եկեղեցիները քիչ էին՝ հոն տեղս շինել տրվաւ. զորօրինակ յԱղուանս, յԱստիայ 'ի Կաբուա, 'ի Աեապօլիս, և ուրիշ շատ տեղեր ալ, որպէս զի հաւատացեալները կարող ըլլան անոնց մէջը ժողովիլ, ու սաղմոսելով զՍտուած փառաբանել և իրենց ջերմեռանդութիւնը ընել : Ի այց ասոնց մէջը երևելիները էին սուրբ Պօղոսին, սուրբ Խաչին, սուրբ Սարկեղինոսին, սուրբ Պետրոսին, ու սրբուհի Էկնէսին եկեղեցիները. որոնք Կոստանդիանոս զանազան ատեններ շինել տրված էր հռովմ :

ԳԼ: ԺԹ.

Առաքանդիանոս Էրեւոյ Սիլան : Անկեց Էրեւոյ Էրայու
 Ըէ Բարբարոսնէրոն : Ինկեանէս Էրայուլէ Ծախիթ
 նոսին, եւ Սախիթնոս շարաշար Էրասոյն :

Ամ ամ 313 .

Երկու ամիս ու կէս կեցաւ Արստանդիանոս Հռովմ[՝]
 Ինչպէս որ աս բարեկարգութիւնները ըրաւ : Ետ-
 քը ելաւ գնաց Սիլան Ի հկիանէսին խոստացած հարս-
 նիքը ընելու : Խիստ փառաւոր ու շքեղ եղաւ աս
 հարսնիքը՝ ինչպէս որ կը վայլէր երկու ինքնակալնե-
 րուն մեծութեանը : Ստոյգ աս պատճառաւ պէտք էր,
 որ Արստանդիանոսին ու Ի հկիանէսին մէջ անլուծա-
 նելի բարեկամութիւնը ըլլար ասկից ետքը, ըստ որում
 ոչ միայն դաշնադրութիւն, այլ և ազգակցութիւն իրա-
 րու հետ կապւեցան, վասն զի Արստանդիանոսին
 քոյրը Արստանդիա՝ Ի հկիանէսին կնիկը եղած էր :
 Բայց աս բարեկամութեան տեղը մեծ թշնամութի
 եղաւ մէջերնին, և թէ ինչպէս՝ ետքը կը պատմենք :
 Միայն հիմակ կըսենք թէ ինչպէս որ շատ անգամ
 մարդս ինք իր վնասուն պատճառ կը լլտայ, այսպէս ալ
 Ի հկիանէս ինք իր ձեռքովը իր տունը կործանեց,
 թագաւորութիւնը կորսնցուց, և շարաշար մահուամբ
 ալ սատկեցաւ : Հարսնիքը չեղած մարդ խրկե-

ցին Վիոկղետիանոսին որ հրամմէ գայ, ու ինքնալ գտնըվի ատ ուրախութեան մէջ :

Եւ երբոր չեկաւ՝ խիստ կծու խօսքերով իրեն թուղթմը գրեցին, որ Վիոկղետիանոս կարդացած ատենը աւելի ևս մահուան դուռը մօտիկցաւ, որովհետև արդէն օր աւուր վրայ շունչը կը հատնէր կոր : Սեպուհադոտութեան (գարա սէվտայի) մէջ ընկած էր, ու երկու տարվան տղու պէս կուլար ու կը պօռչըտար, ոչ կուտէր ոչ կը խըմէր՝ ինչվան անօթութենէն բոլորովին ուժը կը տրեցաւ ու մեռաւ :

Երբոր Արստանդիանոս ու Վիկիանէս հարսնիքին օրերը ուրախութեամբ կանցնէին՝ ահա բօթլուր եկաւ երկուքին ալ : Արստանդիանոսին հրեշտակ եկաւ թէ՛ Վուանկները դարձեալ ոտք ելան ու զարկին Ղաղղիա : Իսկ Վիկիանէսին նմանապէս միգ եկաւ թէ Սաքսիմիանոս անհամար զօրքով իր երկիրներուն վրայ կը քայլէ կոր : Ուստի հոն տեղս տէրութեան հարկաւոր եղած բաներուն վրայ քիչմը խորաթայ ընելէն ետքը՝ զատվեցան երկուքնալ Միլանէն : Արստանդիանոս շուտով զօրք առաւ հետը, ու վազեց գնաց բարբարոսներուն դէմը կեցաւ : Արստանդիանոսին և բարբարոսներուն մէջէն Սէն գետը կը վազէր : Սուտմետէն դուրս ձայն հանեց Արստանդիանոս թէ՛ գետին վարի դին շիօթութիւն մը ելերէ, ուստի պիտի ելլայ երթայ հոն՝ նայի չըլլայ թէ ապստամբութիւնը հոն ալ տարածի : Բայց

քիչմը հեռացածին պէս՝ մօտ անտառմը էզմը զօրք
 խօթեց ու ապրսպրեց անոնց՝ թէ որ բարբարոսները
 ասդին կանցնին մէկէն ինչպէս անձրեալից ամպմը՝ որ
 անձրև իր ծոցը չիկրնալով կրել՝ սպստիկ կըթափէ,
 ատանկ դուք ալ թշնամիներուն վրան վազեցէք :
 Իրաւցընէ խօսքը գործք եղաւ : Ասան զի ապրս-
 տամբները տեսած ատեննին որ Աոստանդիանոս
 անյայտ եղաւ՝ անցան գետէն ասդին, և շուտմը
 յիմար ձկներու պէս ձկնորսին ուռկանին (տուզա-
 խին) մէջը պըլլըվեցան, ու գերի ընկան : Ալ որ-
 պէսզի ամմէն անգամ այսպիսի ապստամբութիւն-
 ներու ձեռք չիզարնեն, Աոստանդիանոս զանոնք
 ամմէնքը գազաններու առջին նետել տրվաւ : Ինչ-
 պէս Աոստանդիանոս, ասանկ ալ Աիկիանէսը՝ յաղ-
 թեց իր թշնամուոյն այսպէս :

Սաքսիմինոս զօրք ժողված էր եօթանասուն
 հազար հօգիի շափ, ու անոնցմով եկած հասած էր
 ինչվան Բիւզանդիոյ նեղուցը այն է (պօղազ իչին) :
 Ալ թէպէտ ձմեռվան գէշ եղանակներէն ճամբա-
 ները աւրըված էին՝ ի վերայ այսր ամենայնի Սաք-
 սիմինոս իր զօրքովը հասաւ Բիւզանդիոյ դռներուն
 առջևը : Ալ դեռ Աիկիանէսին զօրապետները չէին
 իմացած անոր գալը : Տասնըմէկ օր պատերազմ ը-
 նելէն ետքը յաղթեց պարսպապահ զինուորներուն
 ու տիրեց Բիւզանդիոյ : Անկից գնաց ու պաշարեց
 Արակլիս, որ թէպէտ աղէկ դիմացաւ ու անիկայ

առաջ երթալէն արգելեց, բայց վերջապէս ան ալ
 յաղթը վեցաւ: Անոր ալ երբոր տիրեց՝ լսեց թէ
 Ղիկիանէս 18 մղոն հեռու տեղմը երեսուն հազար
 զօրօք դաշտիմը վրայ նստերէ: Ասոր վրայ քիչմը
 շփոթեցաւ ու կանկ առաւ, բայց ետքը իր զօրքին
 քաջութեանը ու միանգամայն շատութեանը նայե-
 լով քաջալերեցաւ, ու քալեցուց ինչվան հասաւ
 թշնամոյն: Ղիկիանէս տեսնելով թշնամոյն շա-
 տութիւնը՝ ու իրեն քիչվորութիւնը, անոր զօրքին
 քաջութիւնը՝ ու իրենին անարի վախկոտութիւնը,
 մանաւանդ որ շատերը ակամայ բռնած զինուոր
 ըրած էր առանց զինուորական կրթութեան՝ վախ-
 ցաւ, և իրաւցնէ վախնալու ալ բան էր: Մտմը տաց
 որ պատերազմը սկըսի մայիս ամսոյն առջին օրը,
 վասն զի գիտէր թէնոյն օրը Մաքսիմիանոսին կե-
 սարութեան ու թերորդ տարեդարձն էր: Ուստի
 նոյն օրը երբոր անոր զօրքը ուտելու խմելու ետևէ
 կըլլան ինքը դիւրաւ կրնայ յաղթել: Իսկ Մաքսի-
 միանոս կարծելով թէ ստոյգ պիտի յաղթէ, կուզէր
 պատերազմը ընել ապրիլ ամսոյն ետքի օրը, որպէս
 զի երկու ուրախութիւն ունենայ մայիսին առջին
 օրը՝ մէյմը յաղթութեան, մէյմընալ իր կեսարու-
 թեան տարեդարձին: Եւ ուխտ ըրած էր՝ որ եթէ
 յաղթելու ըլլայ բոլորովին ջնջէ քրիստոնէական
 հաւատքը, չէ միայն իր տէրութեանը մէջէն, այլ
 նաև բոլոր Առովմայեցւոց տէրութեանը մէջէն:

Եւ ասոր համար նաև Հայոց հետ ալ պատերազմ
 բրած էր, որովհետև տեսած էր որ անոնք աստ-
 ուածպաշտութեան մէջ շատ ջերմեռանդ են: Բայց
 քնն օգուտ որ ամօթով դարձած էր ան պատերազ-
 մէն: Ուստի աս իրեն չար դիտաւորութեանը հա-
 մար՝ Աստուծոյ բարկութիւնը իրեն վրան շարժեց
 այսպէս: Իկկիանէս երբոր գիշերը կը քնանար՝ հրեշ-
 տակմը երևցաւ իրեն ու ըսաւ, թէ մի վախնար
 պիտի յաղթես Սաքսիմինոսին, բայց միայն աս
 աղօթքը որ պիտի ըսեմ քեզի հիմակ՝ քու զօր-
 քիդ սորվեցնես, ու ան աղօթքը իրեք անգամ ըսել
 տաս զօրքիդ ու ատանկ սկըսիս պատերազմելու: Եւ
 աս էր հրեշտակին ըսած աղօթքը: « Կաղաչենք քե-
 ,, ղի ո՛վ Աստուած ամենաբարձր և ամենասուրբ,
 ,, կաղաչենք քեզի. մեր փրկութիւնը ու մեր թա-
 ,, գաւորութիւնը քեզի կը յանձնենք: « Եւ էի որ
 ,, տըվիր մեզի մեր կեանքը մեր երջանկութիւնը,
 ,, ու մեր յաղթութիւնը: Աստուած ամենակալ,
 ,, Աստուած ամենասուրբ ըէ մեզի, քեզի ենք բա-
 ,, ցած մեր ձեռվըները, ըէ մեզի ո՛վ սուրբ Ա՛ճ: «
 Կարդացողին ասիկայ անհաւատալի բանմը չերևայ,
 որովհետև Իկկիանէս ալ ամպարիշտ կուսպաշտնե-
 րուն մէկն էր: Այնպէս Աստուած շատ անգամ
 անօրէն ամպարիշտը ձեռք կառնէ, մէկալ անօրէնը
 պատժելու համար: Իողունք որ Աստուած երբեմն
 թող կուտայ բարբարոսներուն նաև քրիստոնէսայնե-

ըր չարչարել, որպէս զի դառնան իրենց գէշ ճամբէն, ու զգաստանան: Օգործինակ կըկարգանք սուրբ գրոց մէջնալ՝ որ Աստուած ասորեստանեայց թագաւորին ձեռքովը չարչարեց հրէայները՝ որպէս զի դառնան, ինչպէս որ յաջողեցաւ, ու դարձան:

Արդ Միկիանէս քնէն արթնցած ատենը, գրագիրմը կանչեց ու գրել տրվաւ հրեշտակէն սորված աղօթքը: Աւ ապսպրեց որ էզմը օրինակէ անկից՝ ու զօրաց մէջը տարածէ, որպէս զի բերան սորվին:

Արբոր պատերազմին օրը եկաւ՝ դիմացէ դիմաց շարվեցան: Աւ պատերազմը չըսկսած, ահա Միկիանէս, իր զօրապետը ու զօրքը մէկ տեղ վահանները գետինը ձգեցին, սաղաւարտնին գլխերնէն վար առին ու ձեռավընին դէպ ՚ի երկինքը վերցուցած իրեք անգամ այն աղօթքը ըրին: Անելէն ետքը գլուխնին գոցեցին ու վահանները ձեռքերնին առին: Աս որ տեսան դիմացի կողմէն զարմացան մնացին ու իրարու սկսան հարցնել, թէ ատինչ կրնեն կոր:

Արբոր երկու ճակատ իրարու աւելի ևս մօտիկցաւ, Միկիանէս խօսիլ սկսաւ Մաքսիմինոսին հետ որ հաշտութիւն ընէ, վասն զի չէր ուզեր այնչափ պատերազմիլ որչափ խաղաղութիւն ընել:

Ահա աներևոյթ զօրութիւնմը Միկիանէսին զօրքը զօրացուց ու քաջալերեց, ատանկ որ՝ ամ-

մէննալ հրամանի կըսպասէին որ պատերազմը սկըսին : Յանձն չառաւ Սաքսիմինոս , այլ ուզեց պատերազմիլ ու իր բաղդը փորձել : Բայց ո՞վ թէ քանիցաւով և տրտմութեամբ : Աշանը տըվածին պէս Ղիկիանէսին զօրքը կատղած առիւծներու պէս վազեցին Սաքսիմինոսին զօրքին վրայ : Բանիմը ժամ վրայ անցաւ նայիս թշնամիներուն կողմը մարդ չիմնաց ջարդը վելու : Հոն տեղս իմացաւ Սաքսիմինոս թէ քրիստոնեայներուն Լստուծոյն դէմ պատերազմ չըլլը վիր եղեր : Ահու դողու մէջ ընկաւ , հրեսէն գոյնը գնաց : Հանեց թագաւորական լաթերը , ու գերիի զգեստմը հագաւ , և ատանկ շուտով սկսաւ փախչիլ՝ որ քսանը չորս ժամուն մէջը 160 մղոն ճամբայ քալեց , ինչվան հասաւ Աիկոմիդա ու անկից Վապադովկիա , և բարկութենէն բռնեց էզմը կուռքերու քահանայներէն ջարդել տըվաւ , որոնք սուտումուտ խօսքերով զինքը համոզած էին թէ պիտի յաղթէ :

Իսկ Ղիկիանէս երբոր հասաւ Աիկոմիդա մեծ հանդիսութեամբ ու փառաւորութեամբ գոհութի մատոյց քրիստոնէներուն Լստուծոյն , որ իրեն աս յաղթութիւնը յաջողեց : Աւ հրովարտակմընալ հանեց՝ որուն մէջը զանազան շնորհքներ ու զանազան արտօնութիւններ քրիստոնեայներուն համար գրած էր : Հոն շնորհակալութիւնը ընելէն ետքը՝ առանց ժամանակ կորսնցընելու Սաքսիմինոսին

ետևէն ընկաւ, որպէս զի քանի որ անոր զօրութիւնը
 տկարացած է նէ, կարող ըլլայ բոլորովին նուաճել
 զինքը : Իայց Սաքսիմինոս որչափ որ կրցած էր
 զօրք ժողված էր Կապագովկիա, ու անոնցմով
 գացած պահվտած էր Տաւրոս ըսված լեռան նե-
 ղուցին մէջը : Աւ հոն տեղս պզտիկ պզտիկ բեր-
 դեր ու զանազան արգելքներ շինել տրված էր ճամ-
 բուն վրայ : Արպէս զի թէ որ Աիկիանէս իր ետևէն
 ըյնի նէ, հոն հասած ատենը քիչմը կանկ առնէ ու
 առաջ քալել չիկարենայ, ինչվան ինքը երթայ
 Ագիպտոս ու նորէն զօրք ժողվէ : Արբոր Սաքսի-
 մինոս գնաց՝ ահա Աիկիանէս եկաւ հասաւ զօրքովը,
 և քանիմը անգամ Սաքսիմինոսին զօրացը հետ
 ծեծկրվելէն ետքը յաղթեց անոնց ու սրէ անցուց :
 Արբոր լսեց Սաքսիմինոս թէ աս խորհուրդնալ
 չիյաջողեցաւ սաստիկ վախցաւ, ու խորունկ յուսա-
 հատութեան մէջ ընկաւ, ատանկ որ ինչվան աշխրո-
 քէս զըզվելով ինքիրէն կըսէր, ինչո՛ւս պէտք է
 ասկից ետքը ապրիլ, լաւ է որ ես զիս մեռցնեմ,
 քան թէ թշնամուոյս ձեռքը իյնամ որ իմ արիւնս
 կուզէ խմել : Աս մտքով հրամայեց՝ որ իրեն առաա
 ու մեծահաց սեղանմը դնեն համեղ կերակուրներով
 ու տեսակ տեսակ անուշ գինիներով զարդարված :
 Աստաւ սեղանի վրայ, ու պինտ կուշտ ուտել
 խմելէն ետքը՝ անուշ գինուոյ բաժակին մէջը կը-
 տորմը թոյն (զէհիր) խառնեց ու խմեց, կարծելով

Թէ ատանկով հանգիստ կըմեռնի: Խեղճ ողորմելին որչափ պօռաց, ու որչափ կանչվըռտեց որովհետեւ անուշ գինիները ու կերակուրները, որ խոնրված (թըխմըված) էին ներսի դին, թող չէին իտար՝ որ թոյնը շուտով իր զօրութիւնը ներգործէ: Աերսի դին հնոցի (քիւլհանի) պէս կըվառէր կը բորբոքէր, ան աստիճանի որ՝ կսկծէն առջու պէս բառանջել կուտար իրեն: Սարմնոյն կաշին տաքութենէն թոռմած ու սեցած էր: Ոչ դեղթափի (բանդէհիր) կըխըմէր, և ոչ թող կուտար՝ որ մէկը քովը հանդըպի: Սոված շան պէս հողուն վըայ կըտապըլտըկէր, և ուղենալով ներսի կրակը մարել ափովը հող կընետէր բերանը ու կըկըլէր: Բարկութենէն գլուխը պատէ ՚ի պատ կըզարնէր անանկ ուժով՝ ինչպէս աչվըները դուրս ցաթկեցին իրենց ծակերէն: Հուսկյետոյ անօրէն ու ամպարիշտը ակամայ բացաւ իր բերանը քրիստոնեայներուն Աստուածը գովելու, ու անոր անյաղթելի զօրութիւնը պիղծ լեզուովը խոստովանելու: Հրաման հանեց՝ որ քրիստոնէից ազատութեան համար Աոստանդիանոսին ու Աիկիանէսին հրովարտակը իր տէրութեան մէջ ալ տարածվի, բայց անով չհկըրցաւ Աստուծոյ բարկութիւնը ցածցնել: Չորսօր աս դառն տանջանքը քաշելէն ետքը սատկեցաւ չարաչար, և գրեթէ աս աշխրբին մէջ ալ դժոխքին համը սուաւ: Բայց թշուառականը հա-

զար անգամ գոհութիւն կուտար, եթէ անչափ միայն սաստկութիւն ունենար՝ իրեն յաւիտեանս յաւիտենից քաշելու տանջանքը : Ասան զի հոս մարմնովը մինակ կերէր ու կըտոչորէր, հոն հոգւով և մարմնով պիտի երի :

Ահա այսպիսի չարաչար մահուամբ վերցաւ աշխրբիս մէջէն ամպարիշտ Աքրսիմինոսը, որ ոչ միայն իր կենդանութեան ատենը պատժը վեցաւ, այլ նաև մեռնելէն ետքն ալ : Ասան զի անոր մարմինը ինչպէս շան սատակմը ատանկ թաղեցին առանց հանդիսութիւնմը ընելու, որ իրեն նախնեացը և ոչ մէկումը՝ որչափ և գէշ մարդ ըլլար, ասկերպով եղած էր : Ինքնակալութեան անունը արքունի հրովարտակաւ վերցըվեցաւ անոր վրայէն, ու գրվեցաւ բռնաւորի անուն : Այլ անոր չարաչար սատկիլը լըսողները անէծք ու նզովք ետևէն կըխրկէին ու կըսէին. գըտար ո՞վ թշուառական. գտար արժանի պատիժդ : Արչափ որ իր արձանները կար, կամ ջարդեցին, կամ լեզունին մատվընին ու ձեռվընին կտրեցին, կամ սևցուցին, և կամ այնպիսի երևութի մէջ խօթեցին՝ ինչպէս որ եղած էր ինք իր կենաց վերջին օրերը : Աերջապէս ինչ բանով որ կընային անոր վրայ աւելի նախատինքմը դնել ետ չէին ձգեր : Իրեն շինել տըված շէնքերը տակնու վրայ ըրին, որպէս զի իրեն յիշատակը իրեն հետ կորսըվի երթայ :

Իսկ **Լիկիանէս** ըսաւ թէ պիտի ջնջեմ իր բու-
 լոր ցեղը, ուստի նախ անոր կնիկը խղզել տրվաւ
 Օրոնդ ըսված գետը, որուն մէջը որ թշուառա-
 կան կնիկը շատ անմեղ ու առաքինասէր խա-
 թուններ խղզել տրված էր իրեն չար կամքը չիկա-
 տարելնուն համար: Ատքը մորթել տրվաւ երկու
 որդիքը մէկը ութը տարվան մանչ զաւակ, ու մէ-
 կալը եօթը տարվան աղջիկ զաւակ, որ նշանած էր
 Անտիտիանոսին: Մեռցնել տրվաւ նաև զՎանտի-
 տիանոս որ Վաղերիոսին որդին էր, և զՎաղերիա-
 նոս որ Աւերիանոսին որդին էր, երկուքնալ պա-
 տանի ծաղկահասակ ու Վաղերիոսին շատ սիրելի
 էին, մանաւանդ իր որդին Անտիտիանոս, որնոր
 Սաքսիմինոս մեռնելէն յառաջ՝ **Լիկիանէսին** յանձ-
 նած էր: Օստոնք մեռցուց **Լիկիանէս** Վաղերիո-
 սէն վըրէժխնդրութիւն ընելու համար՝ որ թող-
 տրված էր Սաքսիմինոսին ինքնակալ ըլլալ: Մեծ
 ապերախտութիւն ըրաւ հոս տեղս **Լիկիանէս** որով-
 հետև Վաղերիոսն էր որ ձեռք բռնեց իրեն, ու
 ինչվան ինքնակալութեան պատուոյն հասցուց: **Լի-**
կիանէսին բարկութենէն չիկրցան փախչիլ նաև
 Պրիսկիա այրի թագուհին, և Վաղերիա՝ Վաղե-
 րիոսին կնիկը, որոնք թէպէտ շատ անդին ասդին
 պահվըտեցան, բայց վերջապէս գտնըվեցան ՚ի թե-
 սաղոնիկէ, և հոն տեղս գլուխնին կտրել ու մար-
 միննին ծովը նետել տրվաւ: Վերջապէս **Լիկիա-**

նէսին բարկութեւն հանդիպեցան նաև Աողիկիանոս
և Յիրմիղիանոս, որոնք որ շատ սիրելի էին Մաք-
սիմիանոսին, վասն զի նման իրենց իշխանին քրիս-
տոնեայները չարչարելու ու ջնջելու ետևէ էին :

Ահա անիկայ՝ որ ջնջելու զենալով քրիստո-
նէական կրօնը, Աստուած ջնջեց իրեն ցեղը :

ԳԼ Ի.

Առաքելականացի զարգացումն, ու եկեղեցական-
անկումն զանազան օգնութիւններ իրեն :

ԱՄ ամ 313.

Մաքսիմիանոս երբոր սատկեցաւ եկեղեցին քրիս-
տոնէից խաղաղեցաւ, հալածանքը դադարեցաւ . և
հաւատացեալներն ալ շունչ առին ու խալճսեցան
ան զրպարտութիւններէն, վատահամբաւութիւն-
ներէն, չարչարանքներէն ու պէսպէս նեղութիւն-
ներէն, որոնց մէջը ընկած էին Մաքսիմիանոսին
բռնակալութեան ատենը : Ամեն մարդ ինչ որ
կորսնցուցած էրնէ դարձեալ ձեռք ձգեց ու տէրու-
թիւն ստացաւ : Եկեղեցիները բացվեցան, ու քա-
հանաները համարձակ զԱստուած փառաբանել
սկսան, և այսպէս ճշմարիտ աստուածաշտութիւնը

յաղթեց յիմար կռապաշտութեան : Աս դին ան-
դին սիրուն ու հոյակապ եկեղեցիներ շինվեցան,
ու հոգևոր և մարմնաւոր զարդերով պայծառացան :
Աոստանդիանոսին առատաձեռնութիւնը չէր դադ-
րեր մէկուն մէկային բարիք ընելէն . մանաւանդ
Ափրիկեցի քրիստոնեայներուն , որոնք սաստիկ
վշտացած էին՝ Սաքսենտիոսին ձեռքէն քաշած
բաներնուն համար : Հատ օգնութիւններ շատ
արտօնութիւններ ըրաւ անոնց : Ալ որպէս զի
քիչմը սիրտերնին առնէ , բունց Սաքսենտիոսին
գլուխը հոն խրկեց , և խոստացաւ անոնց՝ թէ աս-
կից ետքը այնպիսի նեղութիւններ չեն քաշեր ,
այլ զիրենք սիրով ու անուշութեամբ կրկառաւա-
րէ : Աս բարեաց համար խիստ ուրախացան Ափ-
րիկեցիք ու շնորհակալ եղան , և որպէս զի իրենց
երախտագիտութիւնը ամենեկին չիմոռցրվի , Աոս-
տանդիանոսին անունը իրենց քաղքին վի գրրին :

Հրաման խրկեց Աոստանդիանոս Աննուղի-
նոս ոստիկանին (փաշային) որ աղէկ աչքը բանայ ,
ու ետ դարձընել տայ՝ ինչ որ Սաքսիմիոսին ա-
տենը եկեղեցիներէն յափշտակված է . վասն զի
ըսաւ „շատ անգամ փորձըված է , որ երբոր Աճ՝
„ճշմարիտ հոգևով կրօնի և բարեպաշտութեան
„ժողովուրդէն կրփառաւորվի , թագաւորութիւններ
„կրծաղկին , խաղաղութի ու մեծ շահ կըլլայ , որոնք
„հետերնին կըբերեն հաստատուն երջանկութիւր “ :

Հրաման մալ հանեց ուղղափառ եկեղեցականներուն համար՝ որ ազատ ըլլան ամմէն թագաւորական տուրքերէն, որպէս զի թող տան աշխարհային հոգերը ու զբաղմունքը՝ ու բոլորովին իրենք զիրենք Աստուծոյ ծառայութեանը նուիրեն, վասն զի ըսաւ. « ծառայութիւնը՝ որ անոնք կրնեն », Աստուծոյ, թագաւորութեան յաջողութեան, յորդառատ աղբիւր է « : Աւ թէպէտ այս բարիքը խափանելու Վոնատեան ըսված հերետիկոսները շատ աշխատեցան՝ բայց չիկրցան, մանաւանդ թէ Աոստանդիանոս ետքը ուրիշ վճիռմընալ հանեց, որ ոչ միայն ամիրիկեցի եկեղեցականներուն այլ նաև ամմէնուն ՚ի հասարակի ըլլայ աս ազատութիւնը : Բայց որովհետև ասկից մեծ մլաս կրնար ծագիլ ուրիշներուն, մանաւանդ հարուստներուն, ինչու որ շատերը կերթային եկեղեցական կըլային, և այսպէս անոնց բեռը իրենց վրայ կէյնար, ատոր համար հրաման հանեց Աոստանդիանոս՝ որ չըլլայ թէ եկեղեցականները շատնան, միայն մեռնողներուն տեղը լեցվի : Աւ վասն զի ասկից ալ մլաս կրնար ծագիլ, թէ եկեղեցւոյն՝ որ իրեն պաշտօնեայները չէին կրնար շատնալ, ու միանգամայն հարստանալ հարուստ մարդմը եկեղեցական ըլլալով, վասն զի Աոստանդիանոս ասըստըրած էր որ հարուստները կարող չըլլան եկեղեցական ըլլալու, որպէս զի իրենք տան տուրքը ու աղ-

քատները խալըսին, և թէ իւրաքանչիւր անձանց,
որ չէին կրնար աւետարանական կատարելութեան
ճամբան մտնել: Ուստի պէտք եղաւ, որ Աոստան-
դիանոս խոհեմութեամբ ասոր ալ ճարը գրանէ:
Թուղթմը գրեց Աիկիլիանոսին՝ որ Աարդագինոյ
եպիսկոպոսն էր, որպէս զի իր արքունի դանձապե-
տէն եղմը ստակ առնէ ու իր քովը պահէ, և քիչ
քիչ որչափ որ պէտք ըլլայ՝ բաժնէ Ափրիկէին,
Վուսիտիայ, և Մաւրոտանիայ: Աս թըղթին մէջը
գրած էր նաև Աոստանդիանոս, թէ միտք ունիմ
Ղոնատեան ըսված հերետիկոսներուն յանդրգնու-
թիւնը զսպել, որ խուփութիւն կը հանէին կոր
Ափրիկէ ու քրիստոնեայները կը նեղէին կոր: Ատ-
քը կը խօսինք ասոնց վրայ. հիմակ միայն ըսենք
ան՝ երկու ժողովը՝ որ եղաւ ասոնց համար, մէկը
Հոովմ յամին 312. Հոկտեմբեր 2. և մէկալը
Արելատ յամին 314: Աս ետքի ժողովին՝ Աոստան-
դիանոս թուղթմը գրեց այսպէս: «Շատ բաներ
արդարութեան դէմ ըրի, և չէի հաւտար՝ որ
Աստուծոյ ծայրագոյն զօրութիւնը տեսնայ իմ
սրտիս գաղտուկ բաները: Իրաւքընէ արժանի
էի, որ Աստուած իմ կուրութեանս նայելով
այնպէս հատուցում ընէր, ու ամէն տեսակ չա-
րիքը իմ գլուխս թափէր: Բայց անոնց տեղը ամե-
նակարօղն և մշտնջենաւորն Աստուած, որուն
բնակութիւնը երկինքնէ, ինձի բարիք ըրաւ՝ որուն

„ես ամենեին անարժան էի : Անպատմելի ու ան-
 „թիւ է Աստուծոյ բարերարութիւնները , որոնց-
 „մով ամենաբարին Աստուած ճոխացուց իր ծա-
 „ռան“ : Տեսնայ կարդացողը աս խօսքով իբրև
 հայելոյմը մէջ Աոստանդիանոսին քրիստոնէական
 խոնարհութիւնը՝ որ խիստ օտար կերևայ այնպիսի
 մեծ ինքնակալիմը բերնէն այսպիսի խոնարհական
 խօսք լսել :

Աս տարւոյն մէջը Աոստանդիանոս հրաման
 մալ հանեց , որով ցըցուց թէ ինքը մխիթարիչ
 կուզէ ըլլալ վշտացեալ ու տառապեալ մարդիկնե-
 րուն : Ըսաւ թէ , ով որ կամ աղքատութեան
 համար , կամ ծառայութեան համար , կամ ուրիշին
 ձեռքով , կամ ինքիրենը , վերջապէս որպիսի և իցէ
 եղանակաւ գերի ընկած է՝ ազատ ըլլայ , թէպէտև
 գերի ըլլալէն ետքը վաթսուն տարի ալ վրան ան-
 ցած ըլլայ : Աւ աս հրամանը հրատարակեց Առովմ
 ապրիլի 12 :

ԳԼ ԻԸ.

Արստանդիանոս Ա իկիանէսին հէօ Երէնու անգամ իւրայս
 Կէրապլի, ու Երէնու անգամ ալ իւրայլէն :

ԱՄ ան 314 :

Ուովմայեցւոց ընդարձակ տէրութիւնը՝ որ քիչ
 մը յառաջ եօթը ինքնակալ ունեցած էր, հիմակ
 ունեցաւ միայն երկու, այսինքն՝ Արստանդիանոս
 ու Ա իկիանէս : Իայց Ա իկիանէսին տեղը խիստ
 ընդարձակ էր, վասն զի իրեն տակը ունէր փոքր
 Ասիա, արևելեան գաւառները, Ագիպտոս ու հին
 Ալեքիկիա, որոնք ամմէննալ երևելի ու ծաղկեալ
 տեղվանք էին : Իսկ Արստանդիանոս ունէր Իտա-
 լիա, Սպանիա, Վաղղիա, Ինկիլթէռոա, ու քա-
 նիմը Ափրիկէի գաւառներ :

Ան ատենը Փասիան ըսված անունով մարդ
 մը կար, որ երևելի էր թէ հարստութեամբ, և
 թէ ցեղին ազնուականութեամբ : Ասոր հետ կար-
 գած էր Արստանդիանոս իր քոյրը Անաստասիա,
 ու ուղած էր զինքը կեսար ընել, բայց քանիմը
 թէութիւններ դրած էր՝ որուն Փասիան չէր հա-
 նած, և ասոր համար օր աւուր վրայ կուշանար
 կոր : Արդ՝ երբոր տեսաւ Փասիան, որ Արստան-

դիանոս միտքը փոխելու պէս չէ, ու իր մտքին վրէ
 Հաստատ կեցեր է, Վիկիանէսին կողմը բռնեց,
 անոր հետ միաբանեցաւ ծածուկ, և սկսաւ Աոստան-
 դիանոսին դէմ ձեռաց տակէն գործել, թշնամու-
 թիւն ընել, ու ապստամբութիւն հանելու ետևէ ըլ-
 լալ: Եսկ Աոստանդիանոս՝ որ աչքը չորս բացած էր
 միշտ իր պաշտօնատարներուն վրայ, և միշտ հե-
 ուռանց կրգիտէր անոնց բռնած ճամբան, տեսաւ՝
 որ աս Վասիանը գէշ նշաններ կը ցըցնէկոր,
 ետևէն ընկաւ աշխատեցաւ, ու ասոր անոր հարցը-
 նելով վերջապէս հաւատարիմ պաշտօնատարնե-
 րուն ձեռքովը իմացաւ, թէ Վասիանը գէշ մտքի
 վրայ է: Ենանկ կարգաւորեց ամեն բանը՝ որ նոյն
 օրը՝ որ պատրաստած զօրքը ոտք պիտի հաներ,
 բռնեց մեռցուց անիկայ: Վիկիանէս երբոր տեսաւ,
 թէ բանը ուշացաւ՝ խրկեց Վասիանին եղբայրը, որ
 կըսվէր Սենեկիոն, որպէս զի Վասիանին քաջալե-
 րութիւն տայ իր կողմանէն ապստամբութիւնը ա-
 ուջ տանելու: Սենեկիոն երբոր իմացաւ թէ Աոս-
 տանդիանոս մեռցնել տրվեր է Վասիանը, ետ դար-
 ձաւ: Աոստանդիանոս թէպէտ իմացած էր Սենե-
 կիոնին աս բանիս համար գալը, բայց անհոգ եղաւ,
 ու թող տրվաւ որ ետ դառնայ: Ետքը զղջացաւ
 իր անհոգութեանը վրայ ու մարդ խրկեց Վիկիա-
 նէսին՝ որ իր ձեռքը տայ Սենեկիոնը, Ստիկ չը-
 բաւ Վիկիանէս, ու Սենեկիոնը չհարվաւ: Աոս-

տանդիանոս առանց բերան բանալու, ու խօսքմը զրուցելու՝ շուտովմը քսան հազար քաջ պատե-
րազմօղ զօրք ժողվեց, ու ճամբայ ելաւ, որպէս
զի ուր որ գտնէ զարնէ զՂիկիանէս: Գտաւ ա-
նիկայ դաշտիմը վրայ որ 35 հազար զօրքով կեցած
էր, ծեծկրվեցաւ անոր հետ ամբողջ օրմը. երկու
կողմնալ ոչ կը յաղթէր ոչ կը յաղթուէր: Բայց
իրիկվան դէմ էն ետքի անդամուն՝ որ զարնըվե-
ցան, Կոստանդիանոսին կողմը յաղթուածան դրօ-
շակը կանգնեց: Այն զի թէպէտ Ղիկիանէս զօր-
քին շատուծեամը Կոստանդիանոսէն վեր էր, բայց
քաջուծեամը քան զնա շատ վար էր, մանաւանդ
որ՝ Կոստանդիանոսին տեղը շատ յարմար էր պա-
տերազմելու: Ըրդ՝ աս զարնըվիլը այնպէս սաստիկ
ուժովմը եղաւ՝ որ Ղիկիանէսին կողմը խառնըվե-
ցան ու ջիրուցան եղան դաշտին վրայ: Արբոր տե-
սաւ Ղիկիանէս՝ թէ ալ յաղթուածինը կորսընցուց,
փուծացաւ մնացած տասը հազար զօրքովը փախչիլ,
որպէս զի գոնէ զանոնք խալըսցնէ: Թող տըվաւ
դաշտին վրայ քսան հազար մեռեալ ու վիրաւոր,
և բովանդակ պատերազմական կարասիքը: Այ-
զելով հասաւ Սերմիա, փլցուց կամուրջը՝ որ կար
Սափա գետին վրայ, և առաւ անկից իր կինը, իր
որդին, ու իր գանձը և գնաց Գաակիա և Թրա-
կիա: Չգեց հոն տեղս գունդմը զօրք, որպէս զի
Կոստանդիանոսին արգելք ըլլան: Գնաց ինքը Ըրդ-

րիանուպօլիս (էտիրնէ), և հոն տեղս Վաղենտինոս
հաղարապետը կեսար ըրաւ, որպէս զի թէ զՎոստան-
դիանոս բարկացրնէ, և թէ իր զօրքը նոր հրամայ-
օղմը ունենալնուն համար սիրտ առնեն: Վաղենտի-
նոս աս պատուոյն ամենեկին անարժան էր, վասն զի ոչ
քաջութիւնմը ըրած էր, և ոչ ազնուական ցեղէ էր:

Վոստանդիանոս թշնամիներէն մընացած աւա-
րը առաւ, ու շուտմը Վիկիանէսին ետևէն ընկաւ: Սալա
գետին վրայի կամուրջը շինել տրվաւ, ան-
ցաւ, ու հասաւ մինչև Վիլիպպոպօլիս (Ֆիլիպպէ),
ու բանակեցաւ: Վիկիանէս հրեշտակ խրկեց Վոս-
տանդիանոսին՝ որ հաշտրվի իրեն հետ, ու խա-
ղաղութիւն ընէ: Պատասխան տրվաւ Վոստանդի-
անոս, թէ իրմէ խաղաղութիւն չի կրնար ունէ ինչպէս
որ՝ նոր դրած Վեսարը վար չի ջեցրնէ: Եւսոր վրայ
Վիկիանէս դարձեալ հարկաւորեցաւ զէնքի ձեռք
զարնել ու իր բաղդը փորձել: Պատերազմ բացաւ
մեծ ու ընդարձակ դաշտիմը վրայ որ կկոյնար Վիլիպ-
պոպօլիսին ու Եդրիանուպօլիսին մէջ տեղը: Պատե-
րազմեցան ինչպէս իրիկուն ու երկու կողմանէ ալ
հաւասար ընկան: Իրիկվան դէմ մութը կոխելու
ատենը երբոր Վիկիանէս կը քաջվէրկոր, Վոստան-
դիանոս հինգ հաղար մնացած զօրքովը՝ ուժովմը
զարնելիցաւ, ու անով յաղթութիւնը ձեռք ձգեց:
Եւս որ եղաւ, խիստ վախցաւ Վիկիանէս ու ըսաւ
ինքիրէն, քանի որ գիշերին մութը կը կոխէ՝ ինձի

ապահով ճամբայ կրթացվի փախչելու : Մըտմըտաց
 ու ըրաւ, ելաւ փախաւ գիշերանց դէպ 'ի Պէռային
 (Պէյ օղլուն) լեռները : Աոստանդիանոս ետեւէն վա-
 ղեց ու սկսաւ քալել դէպ 'ի Ռիզանդիա, բայց
 ուշ իմացաւ թէ Ղիկիանէս ուրիշ ճամբէն փախեր է :
 Արկրորդ օրը առտըվանց Ղիկիանէս խրկեց Աոստան-
 դիանոսին Մեսդրիան ըսված կոմսը՝ որ լեզուանի
 մարդ մի էր, որպէս զի Աոստանդիանոսին հետ հաշ-
 առութիւն ընէ : Աոստանդիանոս քանիմը օր անոր
 խօսքին ականջ չիդրաւ, բայց հուսկ յետոյ յանձն
 առաւ հաշտութիւն ընել, վախնալով՝ որ գուցէ բա-
 նը ձախորդ կերթայ, մանաւանդ որ՝ էզմը ճամբուն
 կերակուրէն ալ թշնամիները յախշտակած էին :
 Խօսեցաւ Աոստանդիանոսին հետ կոմսը այսպէս :
 „ Ըտ յաղթութիւնները որ ըրիր քու քաղաքակից-
 „ ներուդ դէմ, աւելի թշուառութիւն պէտք է ը-
 „ սել՝ քան թէ յաղթութիւն : Ասան զի քաղաքա-
 „ կան պատերազմի մէջ՝ յաղթողը յաղթըվողին հետ
 „ մէկ տեղ կըտառապի : Աւստի ո՞վ որ չուզէր խա-
 „ ղաղութիւն ընել՝ պատճառ կըլլայ ամմէն չարեա-
 „ ցը՝ որ պատերազմէն կըհետեւին „ : Պարապ գտնը-
 վելով նաև ըսաւ, թէ իմ տէրերս Ղիկիանէս և
 Աղենտինոս խրկեցին զիս հրամանոցներնուդ՝ որ
 երկարատե խաղաղութեան, և միանգամայն տէրու-
 թեան հանգստութեան, ու յաջողութեանը համար
 խօսիմ : Աոստանդիանոս լսածին պէս Աղենտինոսին

անունը՝ կրակ կտրեցաւ ու ըսաւ կոմսին՝ « գնա՛ ըսէ
 ,, տիրոջդ՝ ես չեմ եկած Սփլիանոս ծովէն ինչվան հոս
 ,, պատերազմելով ու յաղթելով, որպէս զի երկու
 ,, ինքնակալներուն իշխանութեանը բաժանորդ (հի-
 ,, սէտար) ընեմ անարգ գերիիին մէկը : Ս՛ւր թողունք
 ,, որ՝ և ոչ իմ ազգականիս խնայեցի իր ապերախ-
 ,, տութեանը համար : Ընեմ ուղեր խօսիլ, ինչվան
 ,, որ առանց ժամանակ կորսնցնելու վար չիջնարնէ
 ,, Սաղենտինոսը » :

Արբոր տեսաւ Իկիանէս թէ Կոստանդիանոս
 իր խօսքին վրայ պինտ կեցեր է՝ ակամայ Սաղենտի-
 նոսը վար առաւ ու մեռցուց : Բայց ասով ալ չի-
 կրրցաւ Կոստանդիանոսին բարկութիւնը ցածցնել
 ինչվան որ՝ չիտրվաւ անոր էզմը գաւառներ, այսինքն
 Յունաստան, Սակեդոնիա, Պաննոնիա, Տար-
 տանիա, Տակիա, Սէզիա այն է (Պօսնայ), և հին
 Իւրիկիա :

ԳՎ. ԻՅ.

Աստուծոյ խնայողութեամբ ու ինչպէս իրարու որդեակաց հետքովն
 ՚ի զոնք հետապարտութիւնն իւնեն : Աստուծոյ խնայողութեամբ
 էր բազմաթիւութիւնն որչա՛ս իւրեւորաց, ու զանազան օրհնութիւնք
 իւրեւորաց :

Ամբ ան 314 մինչև 318 •

Աս հաշտութիւնը ըլլալէն ետև Աստուծոյ խնայողութեամբ
 և ինչպէս մէջերնին խորհուրդ ըրին որ իրենց որ-
 դիքը կեսար ընեն, որպէս զի թագաւորական իշ-
 խանութիւնը իրենց ցեղին մէջը հաստատ մընայ :
 Աստուծոյ խնայողութեամբ որդի ունէր՝ մէյմը Արիսպոս
 Սիներվինայէն ծնած, որ ան ատենը 21 տարւան
 էր, և մէյմընալ Աստուծոյ խնայողութեամբ որ ծնած էր Վաւս-
 տայէն 316 () գոտոս 7 : ինչպէս մի միայն
 որդի ունէր քսան ամսըվան որ և կըկոչվէր ինչպի-
 նէս : Աս երեք իշխանաւորները հիւպատոս եղան ե-
 րեք տարի ետևէ ետև այսպէս : Տարի մը Աստուծոյ
 խնայողութեամբ ըրաւ հիւպատոսութիւն ինչպէսին որդ-
 ւոյն հետ . և տարի մընալ ինչպէս ըրաւ հիւպա-
 տոսութիւն Աստուծոյ խնայողութեամբ որդւոյն հետ . որով-
 հետև ասոնք շատ պղտիկ ըլլալուն համար իրենք
 իրենցմէ չէին կրնար կառավարել . և տարի մընալ
 Արիսպոս առանձին հիւպատոսութիւն ըրաւ :

Ըս միաբանութիւնը անոնց մէջը տեւեց ութը տարիի չափ: Այլ այսչափ տարւան մէջ Արոտանդիանոս պատերազմ ընելէն դադրելով քիչմը հոգի առաւ: Ահսաւ իր քաղաքներուն տես երթալ ու ամմէնուն իմաստուն կառավարութիւնմը խօթելու ետեւէ ըլլալ: Ըս ճամբորդութեան մէջ զանազան քաղաքներուն զանազան օրէնքներ դրաւ: Արովհ հետեւ զանազան տեղեր ուրիշ ուրիշ բնութիւն ու սովորութիւն ունին մարդիկ, ուստի անոնց բնութեանը ու սովորութեանը նայելով Արոտանդիանոս՝ յարմար օրէնքներ դրաւ. ինչպէս բժիշկը հիւանդին հիւանդութեանը յարմար դեղ կուտայ:

Աարդացօղը չիճանձրացընելու համար մէկ երկուքմը միայն հոս տեղս կը պատմենք թէ ինչպիսի օրէնքներ էին անոնք: Ին ատենները սովորութիւն էր՝ որ երբոր մէկը մահապարտութեան յանցանքմը կընէր՝ անոր ճակատը կը դրոշմէին, (տամիչա կը զարնէին) որով շատ կաւրըվէր մարդու կերպարանքը, ու կը հանէին ամիսի թէ ատրոնին մէջ սուսերամարտիկներուն առջին, որպէս զի անոնց հետ կը ունին: Սուսերամարտիկ կը սվէին քաջ ու արիւնխամօղ զինուորները, որոնք իրարու հետ տեսարանի մէջ սրով կը կուռէին, և որն որ քաջ էր զմէկալը կը մեռցնէր: Ըրդ՝ յանցաւորները ասոնց առջին կը հանէին ճակատին դրոշմած, որպէս զի ամմէնուն առջին սպանվին: Արոտանդիանոս արգելեց՝ որ ասոնց

Ճակատը չի դրոշմեն : Այսն զի մարդուս երեսը կը-
նրմանի կրսէր երկինքին գեղեցկութեանը, ուստի
պէտքը չէ նաև յանցաւորներուն վրայ աս երկնաւոր
գեղեցկութիւնը աւրել : () օրէնք մի ալ դրաւ գա-
ղանային անգըթութիւն մը զսպելու համար . այսինքն
որպէս զի ծնողքը իրենց զաւակնին չի մեռցնեն :
Այսն զի շատ տեղեր մանաւանդ Վատալիա աղքատ-
ները չի կրնալով իրենց զաւակը պահել, ծնածին
պէս կը բռնէին կը մեռցնէին, թէ զանոնք աշխրբիս
տառապանաց մէջէն խալըսելու համար, և թէ ի-
րենց ծանրութիւն չըլլալու համար : Արդ՝ Աոստան-
դիանոս հրաման հանեց՝ որ ատանկ բնութեան դէմ
բաներու ձեռք չի զարնեն, այլ թէ որ չեն կրնար
ծնած տղուն ապրուստը իրենց քրտնքովը ճարել,
թող տղան գրկեն ու տանին տեղացի դատաւորին,
ու անկից ողորմութիւն խնդրեն : Այլ որ անանկ ալ
չեն կրնար տղան մեծցընել՝ թագաւորական ծախքով
կարող ըլլայ մեծնալ : Վարձեալ օրէնք մի ալ
դրաւ՝ որ յանցաւորները ու ՚ի մահ գատապարտ-
վողները խաչ չի հանեն, որպէս զի անարգութիւն
չըլլայ խաչին . որուն վրայ փրկիչն մեր խաչված էր
զմեզ փրկելու համար : Այլ նախատինքը խաչին
վրայէն վերցնելու համար, ամմէն պիտուական բա-
ներուն վրայ խաչ տպել տրվաւ : Արէայները երբ-
որ տեսան թէ Աոստանդիանոս քրիստոնեայներուն
աղէկ կրնայի կոր՝ ու զիրենք երեսէ ձգած է, ըսին

Թէ՛ անիկայ մեր վրայ թագաւոր չենք ճանչնար : Եւ այսպէս սկսան համարձակ անօրէնութիւններ ընել , ու քարկոծել զանո՛ք՝ որո՛ք որ հրէութիւնը թող տըված , ու քրիստոնեայ եղած էին : Աոստանդիանոս ասոնց յանդգնութիւնը զսպելու համար՝ բըռնեց անոնցմէ մէկ քանիին ականջը ու մէկ քանիին քիթը կտրել տըվաւ , ու քաղբըներուն մէջը փողոցէ փողոց (սօխախէ սօխախ) պտըտցուց , որպէս զի ուրիշներն ալ տեսնան ու վախնան , և այնպիսի աներեսութիւններ չընեն : Ա՛վ որ կուզէ ըսաւ քրիստոնեայ ըլլալ ազատ է , ոչ ոք իրեն վնաս մը կընէ , և եթէ մէկը ընելու ըլլայ երել կուտամ այնպիսին : Ի՛այց թէ որ մէկը՝ քրիստոնէական կրօնը կուրանայ ու կերթայ հրէայ կըլլայ , գիտնան որ՝ կըպատժըվին թէ՛ ըլլօղը , և թէ՛ ընօղը : Ըսոնց նման շատ օրէնքներ դրաւ Աոստանդիանոս ան ութը տարւան մէջ , երբոր քաղքէ քաղաք կըպըտըտէր , որոնց մէկ քանիին ալ՝ ետքի գլխին մէջը կարդացօղը կըհանդըպի :

Գ. Ի. Ի. Գ.

Արտատանդիանոս իւրեւայ Հառոյ՛մ, ու հոն տեղս իւր լա-
 գաւորութեան արտաներսրդ արեւտարչը իւնէ՛. Խ զա-
 նապան իարգելը իւրնէ՛ :

Ամբ ամ 315 մինչև 319.

Արտատանդիանոս քաղաքները պարտելով եկաւ
 հասաւ ինչպան Հռովմ ամ Տ՛ն 315 : Հոն տեղս իր
 թագաւորութեան տասներորդ տարւոյն տարեդար-
 ձը փառաւորապէս ըրաւ : Ինչպէս որ սովորութիւն
 էր, երբոր այսպէս հանդիսութիւնմը կըլլար՝ ժողո-
 վուրդը իրենց բաներնին գործքերնին մէկգի կըձգէին՝
 ու իրենք զիրենք զանազան խաղերու, զբօսանքնե-
 րու, ու զուարճութիւններու կուտային : Բայց ու-
 րովհետեւ շատ հեթանոսական աւելորդապաշտու-
 թիւններ ալ կըլլային, անոր համար Արտատանդիանոս
 ապսպրեց՝ որ ատ սնոտիապաշտութիւնները չընեն,
 որովհետեւ ինքը ուրիշ կրօն ու ուրիշ Աստուած
 կրպաշտէ : Աւ աս հանդիսութեան յիշատակը ա-
 ռանց մոռնալու պահելու համար, նոյն օրը հրաման
 հանեց՝ որ Մայիսոն քաղաքը շինվի, ուր որ ինքը
 ծնած էր, ու թագաւոր ըլլալէն ետքնալ շատ ան-
 դամ անոր տեօ գացած էր, ու հոն տեղս օրերով
 կեցած էր : Հատ բարեկարգութիւններ խօթեց

Արստանդիանոս նաև աս անգամուն Հռովմ՝ եկած
ատենը : Ան տարաձայնութիւնները ու ան կոխուն-
ըը՝ որ կըլլային ծերակուտին , աղնուականներուն ,
ու ռամիկ ժողովրդեան մէջը՝ դաղրեցուց , ու ատանկ
օրէնքներ դրաւ՝ որ ատ խռովութիւնները մէյմընալ
չըլլան :

Հրովարտակմբ հանեց՝ որ կուոց քահանայնե-
րը ամենեկին տըներէն դուրս զո՛հ չիմատուցանեն :
Ասան զի ասոնք կելլային հարուստներուն տուները
կըպըտըտէին , ու իրենց կուռքերուն կենդանիներ
կըմօրթէին : Ալ որուն տունը որ կերթային՝ կըս-
կըսէին ան տանուտէրը գովել , ու սուտ գուշակու-
թիւններ ընել իրեն ըսելով՝ թէ իր բանը գործքը
յաջող պիտի երթայ , քրիստոնէական կրօնը պիտի
ջնջըվի սանկ ու նանկ պիտի ըլլայ : Ասոնց բերանը
որպէս զի գոցէ Արստանդիանոս՝ ըսաւ , որ տաճարէն
դուրս զո՛հ չիմատուցանեն : Ալ եթէ մէկը աս հրա-
մանը չիպահէր՝ այնպիսին երել կուտամ :

Իսկ դատաւորներուն համար հրաման հանեց
որ աղէկ դատը հասկընան նեղ սիրտ չըլլան , համ-
բերօղ ու երկայնամիտ ըլլան , դատերը շատ չեր-
կընցնեն , լրած ատեննին քաղցրութեամբ լսեն ,
խոժոռութիւն չիցըցնեն , ու ամմէնէն աւելի ար-
դարութեան սիրօղ ըլլան : Ալ եթէ ստակ առնե-
լով ծուռ դատաստանմը կտրելու ըլլան , զիտնան՝ որ
ոչ միայն իրենց պատիւը ու փառքը կըկորսնցնեն ,

այլ նաև ամմէն հետևեալ վնասները իրենք կը քա-
 շեն : « Ո՛վ որ ըլլայ թող ըլլայ՝ ըսաւ , եթէ կրնայ
 ,, ցըցընել որ իմ դատաւորներուս կամ խորհրդա-
 ,, կաններուս կամ պաշտօնատարներուս մէկը արդա-
 ,, բուժեան դէմ բանմը ըրած է , գայ ինձի առանց
 ,, վախնալու ու խօսի : իրեն ամմէն խօսքին ականջ
 ,, կը դնեմ , ու ես անձամբ կը տեղեկանամ , եթէ
 ,, կրնայ ցըցընել ըսածը՝ վրէժխնդրութիւն կընեմ ,
 ,, Արդառնամ ըսելու վերի ըսածս , թող ըսէ ինձի
 ,, առանց վախնալու , անանկ՝ ինչպէս որ իր խիղճը
 ,, կը զարնէ . եթէ կրնայ ճշմարտութիւնը ցըցընել
 ,, կը պատժեմ անիկայ , որն որ զիս խաբեց ճշմարտու-
 ,, թե կերպարանքովը : Այլ ինձի պարտք կըսեպեմ
 ,, բարիք ընելու անոր՝ որն որ ինձի ճշմարտութիւնը
 ,, յայտնեց : Ասանկով Աստուած ալ կօգնէ ինձի
 ,, ու յաջողութեամբ և պատուով կը պահպանէ թէ՛
 ,, տէրութիւնը , և թէ՛ զիս » :

Ասով ցըցուց Աոստանդիանոս թէ որչափ կը-
 բաղձար որ արդարութիւնը իրեն դատաստանէն չի-
 վըռնտըրվի , և թէ որչափ ետևէ էր՝ որ անմեղմը
 անիրաւութիւնմը չիկրէ ու չիչարչարվի : Արով կե-
 րևայ՝ եթէ արդարութիւնը ձեռքը բռնելու ջըլ-
 լար , նաև յանցաւորներուն պիտի ներէր , զորօրինակ
 ըրած գործքերնալ կը ցըցնեն : Այլ զի հրամայեց որ
 նորէն բանտեր շինվին , բայց չէ թէ այնպէս խաւա-
 րային ու նեղ , այլ լուսաւոր ու ընդարձակ , նպ զի

բնակարան ըլլայ ըսաւ յանցաւորներուն, և ոչ թէ մահու գերեզման: Օչառ զատ տեղեր դնել տրվաւ՝ որոնք որ մինակ պարտքի համար բանտ մըտած էին, և որոնք որ յանցանաց համար: Այլ գթալով անոնց՝ որոնք որ պարտքի համար կապված էին՝ ըսաւ, որ եթէ պարտքին մեծ մասը կրվճարեն՝ պարտատէրները կարող չըլլան ամմէնը պահանջելու:

Իսկ եթէ մէկը այնպէս յանցանքմը կրնէ, որ արժանի ըլլայ ինչ ունի չունի կորսնցընելու, նախ քննըվի ըսաւ, ու նայվի, թէ որ յանցանքը ընելէն յառաջ՝ մէկումը պարտք կամ պարգևմը ըրած է նէ, աըրվի, որպէս զի անմեղները յանցաւորներուն համար անիրաւութիւն չիկրեն: Ամանապէս իրեն կնկանը ու որդւոցը ապրելու չափ բաժին ելլէ: Աղէկ աչլընին բանան՝ ըսաւ, պահապանները՝ որ չըլլայ թէ բանտարկեալները չարչարեն, որպէս զի անոնցմէ ստակ փրցընեն: Վիտնան այնպիսիները որ բարկութեն կըհանդըպին, ու արժանի պատուհասէն չեն խալըսիր:

Աս բարեկարգութիւններէն՝ ի զատ ուրիշ բարեկարգութիւն մի ալ ըրաւ Աոստանդիանոս, որով եկեղեցական կառավարութեան մեծ շահ ու օգուտ եղաւ: Ա երցուց ամենևին պապեան ըսված օրէնքը, որ կըպատուիրէր թէ՛ որոնք որ աշխարհք մտած են ու զաւակաց տէր եղած են, շատ քաղաքական ծանրութիւններէն ազատ ըլլան, ու ասոնց բեռը դրվի անոնց վըայ՝ որոնք որ չեն կարգըված, որպէս զի

ասանկով մարդիկները շատնան : Իրաւցընէ թա-
 գաւորմը՝ որ սուրբ աւետարանին լուսէն զուրկ
 է, բարի կըսեպէ իրենն աս բանս ու օգտակար : Բայց
 Աոստանդիանոս սորված ըլլալով սուրբ աւետարա-
 նէն՝ թէ որչափ վեր է կուսութեան վիճակը՝ որ
 ինչվան մարդիկները անմարմին հրեշտակներուն կը-
 նըմանցնէ՝ վերցուց ան օրէնքը, ու անոր ներհակը
 դրաւ . այսինքն կուսութեան վիճակը սիրողներուն
 բեռը թեթեւցուց, ու կարգըվողներուն վրայ դրաւ :

Շատ օրէնքներ դրաւ Աոստանդիանոս ամուս-
 նութեան վերաբերեալ բաներուն վրայ, որպէս զի
 անկարգութիւններուն դուռը գոցէ, որոնք սովոր
 են ըլլալ աս նիւթիս մէջ : Եւ ան օրէնքները՝ որ-
 պէս զի աղէկ պահվին՝ չիպահոյններուն սաստիկ
 մեծ պատիժ սահմանեց :

ԳՎ . ԻԳ .

Սուրբ Գրեգոր լուսաւորելչը ու Տրդատ Լուսաւորչը
 շուրջ 11-րդ դարէն Արարատի մարտիրոսին հետ ուսու-
 խանից ըլլալու համար, ու անոնց Ռաբանոս-Լեւոն
 Լուսաւորչը :

Ամ ամ 318 *

Լուսաւորչին անգամուն՝ որ Արարատի մարտիրոս յաղթա-
 նակաւ շուրջ մտաւ, եկեղեցական իշխանութեան
 գաւազանը Սեղբիատէս սրբազան պապին ձեռքն էր,
 որ կառավարեց եկեղեցին ինչպէս 314 տարին : Ան-
 կից ետքը յաթող հայրապետութեան նստաւ սուրբ
 Սեղբեստրոս սրբազան քահանայապետը : Արդեք որ
 կրսեն՝ թէ Արարատի մարտիրոս սուրբ Սեղբեստրոս հայ-
 րապետէն մկրտեցաւ՝ պէտք է որ աս անգամուն
 շուրջ եկած ատենը մկրտված ըլլայ, վասն զի
 առաջին անգամուն՝ ինչպէս ըսինք, սուրբ Սեղբեստ-
 րոսը յաթող հայրապետութեան դեռ չէր նստած :
 Բայց որովհետեւ ասոր վրայ պատմիչները խիստ
 տարաձայն են, անոր համար կարդացողը որոշէ ինք-
 իրեն որ կարծիքը որ կուզէ : Մենք շատերուն
 կողմը բռնելով, ինչպէս խոհեմութիւնն ալ կրտոր-
 վեցընէ, Արարատի մարտիրոսին մկրտութիւնը մահուան
 ատենը կրգնենք, ու հոն տեղս կրպատմենք եղած

Հանդիսութիւնները: Միայն հոս տեղս մեզի կըմընայ պատմել Տրդատ թագաւորին սուրբ Վրիգոր լուսաւորչին հետ Հռովմ երթալը:

Արդ սուրբ և աստուածասէր Հայոց թագաւորը մեծն Տրդատ երբոր լսեց, թէ իր մտերիմ ու սիրելի բարեկամը թգրց թագաւորը մեծն Աոստանդիանոս քրիստոնէական կրօնքը ընդունել է, ու իր մօրը բարեպաշտուհի Հեղինեայ գործակցութեամբը սուրբ հաւատքը տարածելու կաշխատիկոր, խիստ ուրախացաւ, ու իսկոյն մեր սուրբ Վրիգոր լուսաւորիչ հայրը իր հետը առնելով, գնաց Հռովմ մեծի Աոստանդիանոսի Անքնակալին հետ ուրախակից ըլլալու:

Ահ թէ ինչ ուրախութիւն, ու ինչ ցնծութիւն եղաւ արդեօք երկու քրիստոսասէր հայրապետներուն, ու բարեպաշտ թագաւորներուն մէջը: Սուրբ Վրիգոր լուսաւորիչը սուրբ Սեղբեստրոս պապին հետ կըպագտըվէին ու կուրախանային, որ քրիստոնէական ուղղափառ սուրբ հաւատքը կուպաշտութեան վրայ տիրեց, ու աստուածպաշտութեան ծաղիկը բուրեց, և իր անուշ հոտովը աշխարքըս լեցուց: Իսկ Տրդատ Աոստանդիանոսին հետ ձեռք ձեռքի կուտային՝ ու իրարու շնորհաւոր ըլլալըսէին, և մէկը զմէկու իրենց դարձը կըպատմէին: Արբոր լսեց Աոստանդիանոս սուրբ Վրիգոր լուսաւորչին քաշած չարչարանքները, ու ըրած հրաշքները, խոնարհութեամբ ծունկ չոքեցաւ ու անկից

օրհնութիւն խնդրեց: Աս երկու քաջազօր թագաւորները իրարու մէջ թուղթ սիրոյ և միաբանութեան գրեցին. որպէս զի իրենց սէրը հաստատուն մնայ, և երկու սուրբ հայրապետներնալ ան թուղթը հաստատեցին: Արգրենք հոս տեղս թղթոյն օրինակը ոչ ամբողջապէս այլ պակսեցնելով այնչափ որ կարդացօղն ալ աչքին առջևը բերելով սուրբ Վրիգոր լուսաւորչին ու Տրդատ թգրին ունեցած ուրախութիւնն, ունեցած սէրերնին ու ըրած միաբանութիւնն ինքնալ ուրախանայ, անլուծանելի սիրով կապվի, ու ինքիրէն դաշն դնէ հաւատարիմ՝ ըլլալու սուրբ Ակեղեցւոյն, օրինակ առնելով իրեն նախնիներէն, որոնք՝ չէ թէ միայն խօսքով, այլ և գրով աս միաբանութիւնը ըրին: Ալ յայտնի է թէ սուրբ Ակեղեցին նոյն սէրը ու նոյն ուրախութիւնը, որն որ ցրցուց սուրբ Վրիգորին ու Տրդատայ՝ կը ցրցնէ նաև անոնց՝ որոնք որ անոնց պէս իրենց խորհրդով չուովմ կերթան ու այսպիսի բաղձալի միաբանութիւնմը կընեն: Արդ այս է գրած թղթերնուն քաղուածքը:

“Ամօք և կարողութեամբ համագոյ սուրբ
 „Արրորդութեան, շօրն անհասի, և միածնի Որդւոյ
 „նորա Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Վրիստո-
 „սի, և կենդանարար և ազատիչ սուրբ շողոյն:
 „Այս մեր կտակ կայսերական՝ Աստուծով հաստա-
 „տուն և անփոխադրական կացցէ: Որ գծագրեցաւ

,, հզօր հրամանաւ մշտայաղթ կայսերս Աոստանդիաւ
 ,, նոսի մեծի և օգոստոսփառ թագաւորաց թագաւորի
 ,, տիեզերատարած և աշխարհածաւալ և անխո-
 ,, նարհելի իշխանութեանս հռովմայեցւոց : Որք զօ-
 ,, րութեամբ ճշմարտին Աստուծոյ տիրեմք տիեզե-
 ,, րաց 'ի ծագաց Ովկիանոսի ահագին ծովուն մինչև
 ,, յելս արևու յաղթօղ զօրութեամբ պարծանաց
 ,, խաչին Վրիստոսի :

,, Աւ ստորագրեցաւ հրովարտակս հրամանաւ
 ,, մեծի պապիս հռովմայեցւոց Ալեսքիոսի Սեղբեստ-
 ,, րոսի աթոռակալի գլխաւոր առաքելոցն Պետրո-
 ,, սի և Պօղոսի : Որ երկնաւոր բանալեօք ունիմ
 ,, զիշխանութիւն յարևմտից մինչև ցելս արևու 'ի
 ,, վերայ ամենայն ազգաց և ազանց քրիստոսադա-
 ,, ւանից կապօղ և արձակօղ յերկինս և յերկրի ,
 ,, և հրամանահան հզօր յընդհանուր յեկեղեցիս
 ,, Վրիստոսի :

,, Վանդի 'ի հրաւիրմանէ Հոգւոյն սրբոյ մեծն
 ,, Յօհաննէս , որ և Տրդատ ասի արքայն հայոց ,
 ,, և կենդանի վկայն Վրիստոսի և մեծ խոստովանօղ
 ,, տէր սուրբ Վրիգոր լուսաւորիչն ամենայն արևե-
 ,, լից և հիւսիսոյ , սիրելի եղբարք մեր 'ի Վրիստոս'
 ,, և բուն բարեկամք բարձրագահ իշխանութեանս
 ,, մերոյ , և հաւատարիմ հազարապետք խորին խոր-
 ,, հրրդոց մերոց , ժառանգակալք՝ աշխարհակալք 'ի
 ,, բոլոր արքայութեանն արշակունեաց :

„յամանեցին 'ի տեսութիւն տեղոյս տէրու-
 „նական տանս. արևմտեան և արևելեան ժառանգ-
 „սուրբ և գլխաւոր առաքելոցն, և փոխանորդի սո-
 „ցա պատուեալ պապիս. և պերճապսակ կայսերս
 „նորընծայի 'ի հաւատս քրիստոսի Մատուծոյ. և
 „մեծի դշխոյիս Էդիսնեայ հզօր թագուհւոյս և ծի-
 „րանածին զարդու զաւակաց զօրացելոց :

„Ասն որոյ հրճուեալ բերկրեցաւ աստուած-
 „ահաստատ թագաւորութիւնս մեր, և մեծահան-
 „դէս հանդերձանօք ընդ առաջ ելաք արարատեան
 „թագաւորութեանն՝ և ասքանաղեան գնդին : Աւ-
 „պատուեալք 'ի միմեանց, երկրպագութիւն մա-
 „տուցաք անմահ արքային տեառն մերոյ Հիսուսի
 „Վրիստոսի : Աւ ողջունեալ զմիմեանս՝ դարձաք
 „'ի վկայարան սուրբ առաքելոցն, և երկրպագեցաք
 „աստուածարեալ սուրբ նշխարաց նոցա՝ փառաւո-
 „րելով զՎրիստոս զպսակիչն սրբոց :

„Ամօքն Մատուծոյ, և միջնորդութեամբ սուրբ
 „Մատուածածնին, և սուրբ առաքելոցն, և ամենայն
 „սրբոց երկօքին արքայք, և երկօքին հայրապետքս՝
 „և երկօքին ազգս հռովմայեցիք և հայք՝ միաբան
 „միախորհուրդ համաշունչ եղբարք գրեցաք մի-
 „մեանց, և դաշինս և ուխտս հաստատեցաք յաւի-
 „տենական 'ի միջի մերում՝ առաջի փառաց փայտեայ
 „նշանիս Վրիստոսի, արիական լափինացիքս և ան-
 „յաղթելի թորգումացիք“ :

Արդ՝ աս գովելի ու բաղձալի միաբանութիւնը ըլլալէն ետքը՝ սուրբ Ղրիգոր լուսաւորիչը սուրբ Սեղբեստրոսէն պէսպէս հոգևորական իշխանութիւններ առաւ, նմանապէս Տրդատ ալ Աոստան գիանոսէն, և անանկ կեցիք բարով ըսելով փառօք և պատուով ետ դարձան :

ԳՎ . ԻԵ .

Աոստանգիանոս զանապէս հոգևոր բարեկարգութիւններ իրէն :

Ամբ ամ 318 մինչև 321 .

Ինչպէս որ Աոստանգիանոս կը հոգար՝ որ ամմէն քաղաքական բաները իր կարգովը ու ճամբովը ըլլայ, ասանկ ալ կրնայէր՝ որ իր տէրութեանը մէջ հոգևոր օգտին մնասակար բանմը չըլլայ : Աւ զորօրինակ մշակմը՝ որչափ որ իր արտերը (թառլաները) գէշ խոտերէն մաքրած ըլլայ, ամմէն անգամուն աչքէ անցուցած ատենը՝ աչքին գէշ խոտ մը կը հանդըպի՝ ու մաքրելու բան կը գտնայ, այսպէս ալ Աոստանգիանոս թէպէտ աստուածպաշտութիւնը առաջ տանելու համար շատ բարեկարգութիւններ ըրած էր, բայց շատ անկարգութիւններ ալ իր աչքէն փա-

խած էին : Ուստի աս անկարգութիւնները վերցուց : Որոնց մէկը էր կիրակի կամ տօն օրերը բան բանիւ , կամ բանի գործքի զբաղիւ : Միայն երկիր գործողներուն աչք գոցեց , ան ալ որպէս զի մեծ մնասմը չընեն երկրագործները օդին գէշութեան պատճառաւ : Բայց որոնք որ աս վտանգը չունէին՝ անոնց ալ հրաման չիկար բանելու : Հրաման խըրկեց դատաւորներուն՝ որ կիրակի օրերը դատաստան չընեն : Այնպէս զինուորներուն՝ որ զէնքի վարժութիւնը կիրակի կամ տօն օրերը թող տան , որպէս զի աշխարհական զբաղմունքներէն բոլորովին քաշված ըլլալով , ազատ ըլլան եկեղեցին երթալու ու աղօթք ընելու : Բայց որովհետև խօսքը այնպէս չիշարժէր զմարդը ինչպէս գործքը , անոր համար ինքը իր ընտանիքովը կիրակի ու տօն օրերը եկեղեցին կերթար ամմէնուն առջևը աղօթք ընելու ջեռմեռանդութեամբ , ու սաղմոս ըսելու :

Հրովարտակմը հանեց Հռովմայեցիներուն համար 321 Յուլիս 3, որ եկեղեցիները կարօղ ըլլան իրենց արդար ժառանգութիւնը պահել և թէ որչափ որ իրենց պարգևներ եղած է նէ օրինաւոր (հախ) ըլլայ : Որպիսի և իցէ կախարդութիւնը արգելեց ամենևին թէ ուրիշին կենացը և թէ պարկեշտութեան դէմ ըլլայ : Բայց կռապաշտներուն աչք գոցեց , որպէս զի իրենց տրտունջնին ու աղաղակնին քիչ մը դադրեցընէ , և չըլլայ թէ բարիքմը մտա-

ծելնինի մեծ չարիքմը ըլլայ, որ շատ անգամ կրպատահի անոնց՝ որոնք որ առանց խոհեմութիւն բանեցընելու ամմէն տեսակ երևեցած բարւոյն ձեռք կը զարնեն. չեն գիտեր որ ան կեղծաւորեալ բարւոյն տակը ինչ մեծամեծ չարիք կան: Աման խորամանկ օձին՝ որ փափուկ խոտին տակը երկընցած կը պահ վըտի, ու ձեռք երկնցընողիմը կը սպասէ: Ստոյգ որ՝ հին ատենները կռապաշտները շատ աւելորդապաշտութիւններ ունէին, բայց գլխաւորաբար Հռովմայեցիները. որոնք՝ որչափ որ քաջ, որչափ որ խմաստուն, ու որչափ որ ուրիշ ազգերէն վեր էին, այնչափ աս հեթանոսական աւելորդապաշտութեան մէջ թաղված էին: Արհաւտային ամմէն տեսակ սուտ խօսքերուն, միայն թէ ցոյցմը ունենար բարութեան, կամ կրօնասիրութեան: Անոնց թողունք իրենց աւելորդապաշտութիւնները, ու մեզի առնենք անոնց կրօնասիրութիւնը, ու վստահութիւնը, որ ունէին իրենց չաստուածներուն վրայ. եթէ անոնք փայտերու ու քարերու ատանկ ժիւծառայեցին՝ մենք քրիստոնեայքս ճշմարիտ Աստուծոյ ինչ ծառայութիւն պէտք է որ ընենք:

Արդ՝ Արստանդիանոս գիտնալով, որ Հռովմայեցիները իրեն մէկ քանի ըրած բաներուն համար շատ առնըված են, ու խիստ դժարնին եկած է, որոնց մէջը էր մէկնալ արգելելը՝ որ տունները զոհ չըլլայ, անոր համար ինչ նոր բան որ կընէր խոհե-

մութիւն կրբանեցնէր, ու զանոնք շատ չէր սրխմեր, որպէս զի չըլլայ թէ նետը շատ հեռու տեղ հասցընեմ ըսելնինի, աղելը աս դին խորտակի, ու ապրտամբութիւնմը հանելու պատճառ ըլլայ:

Թող կուտանք Աոստանդիանոսին ուրիշ անթիւ անհամար օրէնքները՝ որոնք որ փառաւորեցին և կրփառաւորեն իրեն անմահ անունը: Միայն երկու խօսքով կըսենք, թէ չիմնաց ընդհանուր կառավարութեան վերաբերեալ բան մը՝ որ Աոստանդիանոսին աչքին տակէն փախչի, և կամ թէ Աոստանդիանոս անոր վրայ հոգ տարած չըլլայ:

ԳԼ ԻՕ:

Աոստանդիանոս կընտանձէ Գոնտաբեան հերէփիկոս
նիբոան յանպգնութիւնը:

Ամբ ան 314 մինչև 321:

Դոնատեան ըսված հերետիկոսները ուզենալով Եփրիկէի մէջ եղած եկեղեցիները իրենց կողմը դարձնել, սկսած էին կէսմը բռնութեամբ ու կէսմը շողոքորդութեամբ մէկը մէկալը շահիլ, ինչպէս որ հերետիկոսներուն սովորութիւնն է: Բայց որովհետև ճշմարտութիւնը իրենց թշնամին էր, անոր համար ետքը ետքը յաղթը վեցան անկից. վասնզի

Ճշմարտութիւնը ամեն ստուծիւններուն յաղթօղ է :
 Ասոնք թէպէտ երկու ժողովու մէջ այսինքն չուով
 մային , և Արեւատայ դատապարտվցան , բայց 'ի
 վերայ այսր ամենայնի անով չի դադրեցաւ իրենց
 կատաղութիւնը : Շփոթութիւն շփոթութեան
 վրայ կագ ու կռիւ անպակաս կըլլար ասոնց ու Ար-
 կիլիանոս եպիսկոպոսին մէջը : Վիրմը գրեցին հե-
 րետիկոսները Աոստանդիանոսին որ դատաւոր նստի
 ու դատաստան ընէ իրենց մէջը : Աղէկ պատասխան
 տրվաւ անոնց Աոստանդիանոս « Իզմէ կը խնդրէք՝
 ,, որ աշխարհական եմ , ձեր մէջը դատաստան ընե-
 ,, լու . երբ ես ալ քրիստոսին (այսինքն անոր փոխա-
 ,, նորդին՝ որ է սրբազան պապը) դատաստանին կըս-
 ,, պասեմ « : Բայց որպէս զի բան հասկընալ սիրօղ
 կարգացօղը կարօղ ըլլայ իմանալ տեղն 'ի տեղը՝
 թողութիւն կը շնորհէ մեղի , որ քիչմը մեր սահմա-
 նէն (սինօռէն) դուրս կելենք , ու կը պատմենք թէ
 որոնք էին Ղոնատեան ըսված հերետիկոսները , և
 կամ թէ ուսկից առաջ եկան :

Ասոնց գլուխը եղաւ Ղոնատոս ըսված ցած
 ցեղէ եպիսկոպոսին մէկը , ան՝ որ Արթագինոյ չարա-
 ժողովին մէջը գլուխ եղաւ ու Արկիլիանէս եպիս-
 կոպոսը դատապարտեց և աթոռէն վար իջեցուց :
 Աւ ասանկ եղաւ : Բողոքոս և Աելեսիոս սարկաւագ-
 ները սաստիկ սրդողած ըլլալով Արկիլիանոս եպիս-
 կոպոսին՝ որ իրենց տեղը եկելեցուցն Արթագինոյ

եպիսկոպոս եղած էր, գացին միաբանութիւն ըրին մէկ քանի երէցներուն հետ՝ որոնց որ ձեռքն էր Ափրիկէի եկեղեցւոյն գանձը: Իսկ Աիկիլիանոս եպիսկոպոս ըլլալէն ետքը, ուզեց բովանդակ գանձը ձեռք բերել: Պատասխան տրվին երէցները՝ թէ ցրուած են, չենք կրնար տալ հիմակ քեզի: Աւասոր վրայ նայիս աւելի ևս Աիկիլիանոսին ծուռ աչքով նայիլ, ու մէկուն մէկալուն սրտին մէջը անոր դէմ թշնամութիւն սերմանել սկսան, որպէս զի անոնցմով ժողովմը կազմեն: Իրենց աս չար խորհուրդը շատ առաջ տարաւ Պուկիղլա ըսված սպանիացի հարուստ տիկինմը, որ մեծ ռս ունէր Աիկիլիանոսին: Այսն զի Աիկիլիանոս ղինքը մէկ քանի պակասութեան համար խրատած ու յանդիմանած էր, որուն շատ դժարը գալով առիթ կրփնտուէր շարունակ թէ ինչ կերպով վրէժխնդրութիւն ընէ: Պատաւ հիմակ յարմար ժամանակը, ձեռք առաւ իր հարստութիւնը, ու անով սկսաւ մէկուն մէկալուն սիրտը դարձընել Աիկիլիանոսէն: Աերջապէս գրտնըվեցան եօթանասուն եպիսկոպոսի չափ՝ որոնք խորհուրդ ըրին մէջերնին, որ ժողովմը ընեն ու Աիկիլիանոսը վարիջեցընեն: Աս խորհրդով ժողովեցան Աարթագինէ, ուր կըսպասէր իրենց Աիկիլիանոս իրեն գղերներովը մայր եկեղեցւոյն մէջը, որպէս զի հոն ըլլայ ժողովը: Ասոնք եկեղեցին երթալու տեղ, գացին մտան հասարակ տունմը ու հոն կազմեցին

չարաժողովին ատեանը : Կանչեցին Կիկիլիանոս ե-
պիսկոպոսը՝ որ գայ, և երբոր չեկա՝ դատապարտե-
ցին զինքը : Ըմենեին չիվախցաւ անկից Կիկիլիա-
նոս, որովհետև ինքը միաբան էր ուրիշ ուղղափառ
եկեղեցիներուն հետ՝ և գլխաւորաբար Հռովմայի
եկեղեցւոյն հետ « որ՝ ինչպէս իսկ սուրբ () Գրիգորի-
նոսը, միշտ ունեցաւ առաքելական աթոռոյն գըլ-
խաւորութիւնը » :

Կոստանդիանոս աս բանս երբոր իմացաւ՝ հրա-
ման խրկեց փոխանակի բղշխին (քօնսօլօզ վէքի-
լին) որ նայի, հոգ տանի, ու եպիսկոպոսները ի-
րարու մէջ հաշտեցընէ : Ըս միջոցիս մէջ Կոստան-
դիանոս գիր առաւ Գոնատեաններէն՝ որ իրենց
դատը տեսնէ, ինչպէս վերը ըսինք : Կոստանդիանոս
ան վերի գրած պատասխանը տալէն ետքը՝ անոնց
դատը յանձնեց սուրբ Սեղքիատէս պապին : Սըր-
բազան պապը շուտմը Հռովմ 19 եպիսկոպոսներ
ժողովեց, ու անոնցմով 313 հոկտ. 2 ժողով ըրաւ :
Սողովին մէջը գտնուեցաւ նաև Գոնատոս տասը
եպիսկոպոսներով : Չեռքէ անցուցին ամմէն ամ-
բաստանութեան թղթերը, որ Գոնատոս բերած էր :
Սայեցան, քննեցին, ու տեսան՝ որ զրպարտութե-
նէ ուրիշ բան չիկայ : Իսկ Գոնատոս յանցաւոր
ելաւ շատ անկարգ բաներ ընելուն համար որոնց մէ-
ջը էին կրկին մկրտութիւնները ու կրկին ձեռնա-
դրութիւններ՝ որ ըրած էր քանիմը եպիսկոպոսնե-

րուն, եկեղեցական կանոններու դէմ: Խորկեց սրբազան պապը ժողովին գործքը Աոստանդիանոսին, որուն Աոստանդիանոս ամենայն խոնարհութիւնով ծռեց, ու իբրև ԱՅ ձայնմը մտիկ ըրաւ: Բայց ասով Ղոնատեանները ձայներնին չհկտրեցին, դարձեալ ընկան Աոստանդիանոսին ըսելով թէ՛ շատ քիչվոր էին եպիսկոպոսները ու անոր համար չհկրցան իմանալ ստոյգը: Աոստանդիանոս յուսալով թէ գուցէ կը շըտկըվին ու ուղղութիւն կուգան, ուզեց անոնց կամքը կատարել ու ուրիշ ժողովմը ընել տալ: Ատուգիւ մեղադրելի է հոս տեղս Աոստանդիանոս՝ որ սրբազան պապը վճիռ հանելէն ետքը՝ դեռ ճշմարտութիւն միտուելու ետևէ է, թէպէտև հերետիկոսներուն համար ըրած ըլլայ, և ոչ թէ իրեն հիմ: Ասան զի ո՛ր որ սրբազան պապը իբրև եկեղեցոյ գլուխ կրխօսի իբրև Աստուած կրխօսի, ուստի և չիսըխալիր: Ինչ որ է նէ Աոստանդիանոս բարի բաղձանքով՝ որպէս զի Ղոնատեաններուն բերանը գոցվի ու շատ ալ ականջ չհցաւցնեն, ժողով ընել տրվաւ Արելատեան ըսված պալատին մէջը՝ Օգոստոս ամսոյն առաջին օրը 314: Աս ան երկու ժողովներն է, որ վերը պատմեցինք: Եպիսկոպոսներուն թիւը եղաւ 200 հոգի՝ որոնց ամմէնուն ճամբուն ծախքը Աոստանդիանոս քաշեց: Արբազան պապին կողմանէ ժողովին մէջը եկան սուրբ Աեղբեսարոս՝ որ սուրբ Աեղքիստէս պապին յաջորդը

եղաւ, Աղողիանոս ու Ախտոն քահանայները, և Եւզինէոս ու Աիւրակոս սարկաւագները: Վիտնայ կարգացօղը որ սրբազան պապը ամմէն ժողով գալ չիկրնալուն համար՝ իր կողմանէ հրեշտակներ (էլչիներ) կըխրկէ. որոնք ժողովին գլուխը կընստին, ու ժողովին գործքը աղէկ հասկընալէն ետքը՝ սրբազան պապին կըբերեն: Սրբազան պապը կընայի կըքննէ, ու ինչպէս որ իրեն կերևայ՝ անանկ կըհաստատէ, և ան հաստատածը անսըխալ է:

Եւրդ՝ երբոր նստան եպիսկոպոսները՝ սկսան Ինկենտիոս գրագրին ամբաստանութիւնները մտիկ ընել, որ զլխաւոր ամբաստանողներուն մէկն էր: Բայց որովհետև ինչպէս որ աւագին վրայ շինած տունը շուտով կըփլչի, ասանկ ալ Ինկենտիոսին ստութեան վրայ շինած ամբաստանութիւնները՝ չըսեմ՝ շուտով փլան, այլ իրար շուտով փլցուցին, ատանկ որ՝ ինչպիսի ինքը իր բերնովը խոստովանեցաւ, թէ ուրիշը զինքը դրդեց ատ ամբաստանութիւնները ընելու:

Եւ ժողովին մէջնալ դատապարտվեցան Ղոնատեանները, ու արդարացան Աիկիլիանոս և Վելիքս, որ զԱիկիլիանոս եպիսկոպոս ձեռնադրած էր: Ղատը լըմըննալէն ետքը ժողովին հայրապետները 22 կանոն հաստատեցին, ու խրկեցին սրբազան պապին որ հաստատէ, ու եկեղեցիներուն մէջը հաստատել տայ:

Եւ ոչ ասով խաղաղեցան դոնատեանց խոռովու-
 թիւնները, այլ անամօթութեամբ դիմեցին Արս-
 տանդիանոսին, ըսելով թէ՛ դու զմեզ դատէ, դու
 մեզի դատաւոր նստէ: Բարկացաւ Արստանդիա-
 նոս ու գիրմը գրեց եպիսկոպոսներուն ասանկ:
 „Բահանայներուն ըրած դատաստանը պէտք է այն-
 „պէս սեպել՝ որպէս թէ Աստուած նստած է դա-
 „տելու. որովհետեւ անոնք ուրիշ բան հաւտալ
 „կամ ուրիշ կերպ դատել չեն կրնար, բայց եթէ
 „ինչ որ քրիստոսին դատաւորներէն սորված են:
 „Արդ ի՞նչ մտքի վրայ են աս չարաբարոյ մարդիկ-
 „ները (կիմանայ Ղոնատեանները) մանաւանդ թէ
 „սատանային ծառայօղները: Արկնաւորը թող տա-
 „լով աշխարհական բան կրինդրեն: Աս ի՞նչ գէշ
 „ու կատղած յանդգնութիւն է: Ակեղեցական
 „բաներու մէջ բողոք կրվերձընեն կոր (Ֆիրեատ
 „կրնենկոր) ինչպէս հեթանոսներուն դատաստանին
 „մէջ կըլլայ“: Աս խօսքով ցըցուց Արստանդիա-
 նոս՝ թէ որչափ քրիստոնէական հաւատքին վրայ
 ամուր խարխիս հաստատութեան ձգած է իր
 միտքը՝ ատանկ որ շարժելու պէս չէ: Բայց ՚ի վե-
 րայ այսր ամենայնի ան հնարքները, ան շողքոր-
 դութիւնները, ու ան վարպետութիւնները՝ որ Ղո-
 նատեանները բանեցուցին, կրցան Արստանդիանոսին
 հոգւոյն վրայ տիրել, ու զինքը համոզել, որ անձամբ
 իրենց դատը տեսնէ: Աւստի ժամ որոշեց իրենց, որ

ամբաստանօղները ու ամբաստանվօղները Հոովմ գտնըվին որպէս զի զիրենք դատէ: Եւ միանգամայն խոստացաւ 'Ղոնատեաններուն որ' եթէ կրնան յանցաւոր հանել Աիկիլիանոսը մէկ բանի մէջ՝ ես յանցաւոր կըսեպեմ զինքը ամմէն բանի մէջ . վասն զի ինքը չէ թէ ուրիշ կերպ պիտի դատէր, այլ միայն ամբաստանօղներուն կամքը կատարելով անոնց բերանը պիտի գոցէր, եթէ ստուծիւնը գոհ կըլլայնէ ճշմարտութենով: Չեկաւ Աիկիլիանոս ինչ ատեն որ Աոստանդիանոս որոշած էր: Եւ ահա ասկից առիթ առին ամբաստանօղները աղէկմբ լեզունին սրելու, ու սուտ զրպարտութիւններով զԱիկիլիանոս քարկոծ ընելու: Արպիսի և իցէ Աոստանդիանոս ներեց Աիկիլիանոսին, ու իրեն իմացուց որ գոնէ Միլան երթայ որպէս զի ինքը ու ամբաստանօղներն ալ գան հոն ու դատը տեսնէ:

Ղնաց Աոստանդիանոս Միլան, տեսաւ անոնց դատը, ու արդարացուց Աիկիլիանոսը: Չափէ դուրս կատղեցան 'Ղոնատեանները' ու սկսան Աոստանդիանոսին երեսէն վեր պօռալ թէ ատ ինչ է, անիրաւ դատաստան ըրիր մեզի: Մարկացաւ Աոստանդիանոս և ուզեց զանոնք մեռցնել . բայց Ովսիոս ուղղափառ եպիսկոպոսը թող չիտրվաւ . միայն անոնցմէ մէկքանին աքսորվեցան, ու ամմէն ունեցածնին կորսընցուցին: Ըս միայն բաւական է ուղղափառ հաւատքը հալածողներուն ճանչնալու իրենց սխալանքը:

Ուղղափառները երբէք ուրիշ աղանդմը չեն հալածած, գիտնալով իրենց եկեղեցւոյն հաստատութիւնը ու ամբուլթիւնը որ ամենեւին մէկ մոլորութենէ չիփլչիւր: Բայց հերետիկոսները շարունակ ուղղափառութիւնը հալածելու ետեւ են, վասն զի կրտսնան իրենց տկարութիւնը ու անոր համար կաշխատին բռնութեան նեցուկներով (տէստէկներով) վեր բռնել որ չըլլայ թէ կործանի:

Ասկից ետքը թուղթմը գրեց Աոստանդիանոս Ափրիկէին ուղղափառ եպիսկոպոսներուն՝ որ համբերութեամբ քաշեն ինչ նեղութի որ Ղոնատեանները իրենց կը հասցընեն, մանաւանդ թէ՛ եթէ կըրտան՝ իրենց չարիք ընողներուն բարիք հատուցանեն: Տեսնալով Ղոնատեանները որ ամենեւին բերան բացող չիկայ, իրենց լան ճամբայ բացին ամմէն տեսակ չարիքը ընելու, ու ուղղափառները չարչարելու: Աոստանդիանոս երբոր տեսաւ որ անով օգուտմը չեղաւ նմանեցաւ իմաստուն բժշկին՝ որ վէրբին վրայ նախ կակուղ դեղը կը դնէ, որով եթէ չիբժշկըվիրնէ կսկըծցնող դեղերու ձեռք կը զարնէ: Ըրաման իրկեց իր տեղակալին որ՝ որչափ եկեղեցի ունիննէ Ղոնատեանները՝ ամմէնը ծախսվին, ու ստակը մտնէ արքունի գանձին մէջը: Բայց և ոչ ասով օգուտմը եղաւ վասն զի Ղոնատեանները բռնութեամբ գացին տիրեցին Աոստանդեան ըսված եկեղեցւոյն՝ որ Աոստանդիանոս շինել տրված էր: Աս եկեղեցւոյս

Եպիսկոպոսը էր Սիդվանոս՝ գլխաւոր Վոնատեաննե-
րուն մէկը, որուն ամմէն ըրած չարութիւնները
յայտնըվեցան իր 'Վունտինարիոս սարկաւագին
ձեռքովը՝ որ գնաց մատնեց քաղաքապետին 'Վու-
միդիայ, թէ ստըկով ու բռնութեամբ եպիսկոպոս
եղած է, և թէ շատ անկարգ ճամբով Մայորինո-
սը եպիսկոպոս նստեցուցած է Աիկիլիանոսին տեղը:
Ըստ Մայորինոսը շատ մտերիմ բարեկամ էր վերի
ըսած սպանիացի տիկնոջ որ զԱիկիլիանոս հալածե-
լու ետևէ էր: Վննութիւնը ընելէն ետքը քա-
ղաքապետը՝ իրկեց զՍիդվանոսը Վոստանդիանոսին,
և Վոստանդիանոս ալ աքսորեց թէ զինքը և թէ իրեն
կողմը եղողները:

Ըսոր վրայ հաղիւ թէ վեց ամիս անցաւ՝ ահա
դոնատեան եպիսկոպոսները աղաչանաց զիրմը տը-
վին Վոստանդիանոսին, խնդրելով որ աքսոր գա-
ցողները ետ դարձնել տայ, բայց և միանգամայն
նորէն ամբաստանելով Աիկիլիանոսը, ըսին. թէ
չենք կրնար անոր հետ միաբանութիւն ընել:
Վոստանդիանոս գթած սիրտ ու խաղաղասէր բնու-
թիւն ունենալուն համար անոնց բաղձանքը կա-
տարեց: Մէջ թէ ինչ նեղութիւններ չեքաշեց Ափ-
րիկէին ուղղափառ եկեղեցին ասոնց ձեռքէն, որոնք
որ գլտորեցան մէկ մոլորութենէ մէկալ մոլորու-
թեան մէջ ինչպէս որ մէկը սանդխին (վերտիվէնին)
առջի ոտքէն կըսասհի (խայմիշ կըլլայ) ինչպէս վար

կրգլտորի: Բայց ամենէն ցաւալին ան է որ՝ կրպար-
 ծենային թէ Վրիստոսին ճշմարիտ վարդապետու-
 թիւնը իրենց քովը միայն անարատ մնացած է, ինչ-
 պէս նաև Հիմակ մեր ականջովը կրլսենք աս ան-
 ախորժ ձայնը անոնց բերնէն՝ որոնք որ չեն ուզեր
 ճշմարտութիւնը ճանչնալ, և կուզեն հռովմէական
 վիմին յաղթել, բայց չեն գիտեր եղկելիները որ ան
 վէմը շատերը՝ որ քան զիրենք ուժով էին, փշրեց ու
 կրփշրէ՝ ով որ իրեն կրզարնըվի: Հաւինք ու լանք
 ասոնց վրայ՝ որոնք որ այսպիսի նաւաբեկութիւններ
 կրնեն, և անոնց վնասովը մենք խելք սորվինք ու
 հռովմէական փարախին (մանտոային) մէջը աղէկ
 պահվըտինք, վասն զի շատ գայլեր՝ դուրս ելողիմը
 կրսպասեն:

ԳՎ. ԻԿ.

Առաքանդիւմնոս իւրադիւնէ նոր աղապատմէնէրուն, ու
 պատմութի պատրաստութիւնն իւրեանայ Լէիւանէսին
 դէմ:

Ամբ ամ 322 և 323:

Սարմատացի բարբարոսները չիկրնալով դիմանալ
 Աոստանգիանոսին իրենց վրայ դրած կարգերուն,
 միաբանեցան Աարբացւոց ու Գեթացւոց հետ, և

սկսան ասդին անդին վազել ու թալել : Բայց մի-
անգամայն ատանկ ալ կրվախնային Աոստանդիանո-
սէն որ՝ միայն անուներ լսած ատեննին կըսասանէին :
Եւ թէպէտ Աոստանդիանոսին զօրքը քանիմը ան-
գամ զարնըվեցան անոնց հետ , բայց զօրութիւննին
չիմարեցաւ : Սաստիկ կատղեցան ու գնացին պղտիկ
քաղաքմը պաշարեցին : Վաղքին բերդը ամուր
ըլլալով՝ քաղաքացիքակուանին սրխմեցին ու դի-
մացան , ինչվան Աոստանդիանոս իր զօրքովը վրայ հա-
սաւ : Եւ բարբարոսները մէջերնին մտմտալնինի որ
այսօր վաղը կառնենք քաղաքը , նայիս Աոստանդիա-
նոս անոնց կռնրկի դիէն խիտ անտառիմը մէջէն մէկէն
դուրս հանեց զօրքը : Աէսմը ջարդեց , կէսմը լեռնե-
րը ցրուեցան , ու կէսմի ալ դերի ընկան : Եսոր վը
ուրախացած ատենը Աոստանդիանոս՝ ահա մէկ ուրիշ
ուրախութի մի ալ ունեցաւ : Եր որդին Արիսպոս Աոս-
տանդիանոսին մօրը հետ Հոովմ եկաւ , որ ոչ միայն
զԱոստանդիանոս , այլև զԺողովուրդը ուրախացուց
մեծապէս , վասն զի Աոստանդիանոս իր որդւոյն գա-
լուստը փառաւորելու համար ազատեց բանտերէն
յանցաւորները , բաց անոնցմէ՝ որոնք որ շնութի
ու դեղատոճութեան (զէհիրլէմիշ ընելնուն) հա-
մար բանտ մտած էին : Եւ քաջ պատանին հո-
գևորական ձիրքերէն՝ ի զատ , մեծ անուն ունէր զօր-
քին առջևը , վասն զի զանազան ատեններ պատե-
րազմներ ըրած էր Ֆուանկներուն դէմ ու անոնց

յաղթած էր : Այլ Աոստանդիանոս ալ անոր աշխատանացը հատուցումը ընելու համար զինքը հիւպատոս ըրած էր երկրորդ անգամ իր պզտիկ եղբօրը հետ , որ կըսվէր Աոստանդիանոս , և շատ սիրելի էր Աոստանդիանոսին :

Նաղթութիւնը ըլլալէն տարիմը ետքը Աոստանդիանոս գնաց Թեոսաղոնիկէ այն է՝ Սէլանիք , և տեսնալով որ հոն տեղս շատ աղէկ յարմար տեղ է վաճառականութեան , նաւահանգիստներ շինել տրվաւ , ու չիզնաց անկից՝ ինչվան որ չիլըմննան՝ շոն տեղաց սկսաւ Աոստանդիանոս կամաց կամաց պատերազմի պատրաստութիւն տեսնալ Ղիկիանէսին դէմ : Սան զի Ղիկիանէս սրտին մէջը տեղ ընելով Աոստանդիանոսին ըրածին վրայ՝ որ ատանկ իր ձեռքէն շատ քաղաքներ փրցուց , կախոսար ու սիրտը կըխըրջըրջար , ինչվան ցաւը մոռցուց իրեն ըրած դաշնադրութիւնը , ու սկսաւ ծածուկ պատերազմի պատրաստութիւն տեսնալ : Ամացուկմը Աոստանդիանոս իրեն իմացուց թէ միտքը բերէ ըրած դաշնադրութիւնը , որուն Ղիկիանէս պատասխան կուտար , թէ միտքս է չեմ մոռցած , և քեզի բարեկամ եմ կըսէր , բայց սրտանց նոյն թշնամութեան խելքի վր կը պըտըտէր : Քիչմը ատեն ասանկ անցընելէն ետքը՝ չիկրցաւ իր թշնամութիւնը սրտին մէջը պահել , այլ դուրս հանեց : Վիտնալով՝ որ Աոստանդիանոսին քրիստոնեայնեըրը սիրելի են , ձեռք

ղարկաւ անոնց, ու սկսաւ չարչարել: Յորդորեց իր մեծամեծները որ անոնց վրայ յանցանքմը դնեն, ու իրեն մամբաստանեն: Աւ որոնք որ աս ճամբով յանցաւոր ելան՝ անոնց ունեցածը չունեցածը առաւ, ու զիրենք կէսմը մեռցուց, ու կէսմը աքսորեց: Հարուստ իշխանները վըռընտեց իր պալատէն ու երեսէ ձգեց, և ոմանք ալ գերիի պէս ծախեց, ու ստակը առաւ: Առոց քահանայներուն հրաման տրվաւ՝ որ նեղեն, ու չարչարեն քրիստոնեայները որչափ որ կրնան: Այնպիսի հրամաններ հանեց քրիստոնեայներուն դէմ՝ որ գիտէր թէ իրենց կրօնը թող չիտար ընել, և անոր պատճառաւ իբրև պատուիրանազանց կը պատժէր: () ր աւուր վրայ բանտորը լեցնելու ետևէ էր, որոնք որ բանտ չէին, այլ չորս պատ առանց դըռի, և արգելեց որ՝ անոնց ամենևին կերակուր չիտըրվի: Իսկ ով որ չի կրնալով դիմանալ անոնց խեղճութեանը ներս կերակուր կուտար, նոյն պատիժը կառնէր: Անծ հալածանք հանեց Պոնտոս և Հայաստան, ուր մարտիրոսութեան պսակով փայլեցան երևելի Հայրապետներ, ու ազնուական մարդիկներ: Քանի գնաց հալածանաց հրդէհը բորբոքեցաւ, ու ամմէն տեղ ճիւղեր երկընցուց, և վերջապէս Իլիկիանէս միտքը դրաւ քրիստոնէութիւնը ջնջէ ինչպէս տունկմը արմատէն կրփրցըվի, ու մէկդի կընետովի:

Աս ատեններս Արստանդիանոս հարկաւորու-

Թեանմը համար իրեն զօրքովը անցաւ Վիկիանէսին երկիրներուն մէջէն ու գնաց: Ահա ասոր վրայ բացաւ բերանը Վիկիանէս ու սկսաւ Աոստանդիանոսին դէմ տրտնջել, որպէս թէ իրեն իրաւունքը բռնաբարեց, իրեն ըրած դաշնագրութիւնը չի պահեց, և թէ՛ ան ուրիշ բան չէր նշանակէր, բայց եթէ յայտնի թշնամութիւն: Հրեշտակներ խրկեց իրեն Աոստանդիանոս ըսելով, թէ թողութիւն ընէ ամենւին ան մտքով չեմ անցած իր երկրին մէջէն, այլ ոտքիս յարմար ճամբայ ըլլալուն համար: 'Ա վերայ այսր ամենայնի Վիկիանէս չուզելով մոռնալ սկսաւ տրտունջ տրտունջի վրայ եւելցնել, և վերջապէս իրեն ըսաւ, որ ել դիմացս պատերազմինք: Աղէկ յարմար կուգայ հոս տեղս Պլուտարքոսին գրած պատմութիւնը, որ կըսէ՝ թէ մէկը ուզելով քարմը զարնել շան՝ կըզարնէ իր խորթ մօրը՝ որ զինքը չէր սիրէր ու կընեղէր, կըդառնայ կըսէ ծիծաղելով ինչ որ է նէ քարը պարապ տեղ չի թըռաւ ձեռքէս: Ասանկ ալ Աոստանդիանոս ուզելով պատերազմիլ Վիկիանէսին հետ, աս յարմար առիթը ունեցաւ որ իր ոտքին եկաւ: Հիմակ երկու ինքնակալներն ալ վախնալով իրարու ուժին ու քաջութեան վրայ սկսան մեծ պատրաստութիւն տեսնել, ու նոր նոր գունդեր կազմել: Բայց 'ի վերայ այսր ամենայնի թշնամիներուն զօրքը Աոստանդիանոսինէն շատ վեր էր: Հարիւր յիսուն հազար ոտա-

Նաւոր զօրք ունէր, և տասնըհինգ հազար ձիաւոր, և անոնցմով գնաց նըստաւ Ադրիանուպօլիսին (Աշտի- նէին) մօտ Աբրոս գետին աստի դին: Բաց ասկից երեք հարիւր յիսուն ցուկանաւ (չէքտիրի) ժողվեց Ագիպտոսէն, Փիւնիկիայէն, Բիւթանիայէն, ու Աիպրոսէն՝ որոնք ժիր ու քաջ նաւաստիներով (մարինարներով) լըցված էին, և կայնեցուց զանոնք շեղեսպոնտոսին (Աէլի պօլու պօղազին) մէջը: Աոս տանդիանոս ժողվեց 120000 ոտանաւոր, ու 10000 ձիաւոր, որոնք թէպէտ թուոյն կողմանէ վար էին, բայց ուժին ու քաջութիւն կողմանէ թշնամիներէն վեր էին: Արկու հարիւր մեծ պատերազմական նաւ ունէր, և երկու հազար պղտիկ բեռան նաւեր: Աոստանդիանոս իր յոյսը ու ապաւինուածիւնը դրած էր Աստուծոյ օգնականութեանը վրայ, ինչպէս իրեն խաչաձև դրօշակնալ կըցըցնէր: Աւ գիտնալով որ աղօթքը պատերազմի մէջ աւելի զօրաւոր է քան թէ իր զօրքին բազուկը, անոր համար առաւ հետը նաև քանիմը եպիսկոպոսներ ու քանիմը քահանայներ, որպէսզի երբոր ինքը կըսկսի պատերազմիլ՝ անոնք ծունկ չոքին աղօթք ընելու բանակին մէջը. ինչպէս սուրբ գրոց մէջը կը կարդանք Սովսէս մարգարէին վրայ՝ որ ձեռվոնբը դէպի երկինքը վերցուցած աղօթք կընէր երբոր իսրայէլացիները կըպատերազմէին Ամաղեկացիներուն հետ: Իրեն հետ բերած էր աղօթարան մը տաղաւարի (չատրուի) տակ շի-

նած, ուր կըմտնէր երբեմն երբեմն իր հազարապետ-
ներովը ու աղօթք կընէր: Եկեղեցիս կընախատէր
ու ծաղը կընէր զՎոստանդիանոս, որ ատանկ իր ա-
պաւինուածիւնը ու յոյսը դրեր է քրիստոսին խաչին
վրայ: Եւ ինքը բերած էր իր հետը էզմը հմայներ
գուշակներ ու զոհի քահանայներ: Երբոր ըսեց
անոնցմէ՝ թէ ինք պիտի յաղթէ, էզմը զոհեր մա-
տուցանել տրվաւ, և պատերազմ մտնալէն յառաջ
ալ իր արքունի պալատականներովը ու քահանայնե-
րովը քաշվեցաւ մտաւ անտառիմը մէջ, և քանիմը
զոհ մատուց կուռքերուն, և ասով հաստատվեցաւ
մտքին մէջ՝ թէ հին աստուածներուն զօրութեամբը
պիտի յաղթէ նոր Աստուծոյն որ Վոստանդիանոս
հնարեց (իճատ ըրաւ): Եւ հետո Եր ասկից
Ապողոն կուռքէն առած պատասխանը՝ որ ըսաւ՝ «Ո՛վ
,,ծեր դու, չես կրնար պատերազմիլ պատերազմական
,,պատանւոյն հետ, քու ուժդ ընկած է, և հասակդ
,,ալ եկեր անցեր է»: Եկեղեցիս ասոր ամենեւին
ականջ չի դրաւ, վասն զի բանին ձեռք չի տրվաւ:

ԳԼ : ԻԲ.

Վոստանդիանոս իւրապարէրապէի, ու իւրապէի Լէլիանէսին:

ԱՄ ան 323 :

Լճա երևեցաւ Վոստանդիանոս իր զօրքովը Լըբոս գետին անդի դին թշնամիներուն դէմը : Վրանիմը օր ուշացաւ պատերազմը գետին բարձրանալուն պատճառաւ : Վոստանդիանոս չիկրնալով Տամբերել պատերազմական հնարքմը փնտռեց գտաւ, ու բանեցուց : Հըրցուց դրսանց թէ կամուրջմը կուղէ ձգել գետին վը, որպէս զի զօրքը անցընէ : Ուստի չուաններ ու հաստը խոշոր գերաններ (տիրէկներ) երկնցնել տրվաւ դիմացի կողմէն իբրև թէ իսկապէս կամուրջ պիտի շինէ : Լըբոր թշնամիները խելվընին ասոր վրայ դրած կընայէին՝ Վոստանդիանոս առաւ հետը էզմը՝ զօրք, ու գնաց գետին վարի դիէն, ուր տեղ որ գետը ընդարձակած ու խորունկութիւնը կորսնցուցած էր՝ հոն տեղաց անցաւ ինքը և իր զօրքը՝ թշնամիներէն գաղտուկ, վասն զի ծառերը երկնցած ու գլուխնին դիմացէ դիմաց իրարու մտեցուցած ըլլալով՝ ով որ մէջ տեղաց կանցնէր, կըծածկէին : Տեսաւ Վոստանդիանոս որ թշնամիներուն մեծ բանակէն ՚ի զատ ուրիշ պզտիկ բանակ մի ալ կայ դէպի ասդի դին, իր զօրքովը

մէկէն ջուրէն ելածին պէս անոնց վրայ վազեց, ու կտոր կտոր ըրաւ անոնց մարմինը: Ա՛հկ քանին որ խալըսեցան Աոստանդիանոսին սրին բերնէն՝ գահաւիժարար վազելով բօթ լուր հասցուցին մեծ բանակին՝ թէ Աոստանդիանոս ջարդեց զմեզ: Ահա շիոթուժիմը աղմուկմը ու խռովուժիմը սկսաւ ելել ան մեծ բանակին մէջը, չիկրնալով հաւտալ թէ ինչպէս Աոստանդիանոս կրցաւ գետէն անցընել իր զօրքը, ու ան ջարդը տալ: Արբոր ասոնք այսպէս իրար անցած շիոթած էին՝ Աոստանդիանոս նայիս անձրևի պէս անոնց վրայ հասաւ իր զօրքովը ու սկսաւ թշնամիներուն արիւնովը ներկած օուրը անոնց մէջը խաղցընել: Ինչպան որ թշնամիները ձեռքերնին սրերնուն տարին, ու պատրաստվեցան, Աոստանդիանոս անոնցմէ երեքհազար երեքհարիւր հոգիի չափ ջարդեց: Իսկ ուրիշները ցիր ու ցան ըրաւ լեռներու անտառներու մէջ: Արկորդ օրը նայիս ան փախչողներէն շատերը ետ դարձան եկան, ու իրենք զիրենք յանձնեցին Աոստանդիանոսին:

Վիկիանէս թէպէտ յաղթըվեցաւ Աոստանդիանոսէն, բայց իրեն պատերազմելու զօրութիւնը բոլորովին չիքաշվեցաւ: Անոր համար Աոստանդիանոս շուտմը հրաման խրկեց իր Արիսպոս որդւոյն՝ որ նաւերուն վրէ էր, որպէս զի ինքնալ առանց ժամանակ կորսընցնելու թշնամիներուն պատերազմ տայ՝ որոնց գլուխը կըսվէր Ապանդոս: Արիսպոս շուտմը

Տօրը հրամանը կատարեց, գնաց իր նաւերովը թշնամ-
 ւոյն դէմ, ու պատրաստեց զինքը պատերազմելու :
 Այլ որովհետեւ նեղ էր տեղը՝ անոր համար իր նաւե-
 րէն դուրս հանեց միայն եօթանասուն ընտիր ու խո-
 շորնաւ, և որոշեց որ այնչափով միայն պատերազմի :
 Իսկ անխոհեմ Մպանդոս կարծելով թէ նաւերուն
 շատութիւնը կրնայ Արիսպոսին նաւերը շրջապատել,
 երկու հարիւր նաւ մէկէն դուրս հանեց : Բայց չի-
 կրննալով այնչափ նաւերը ատ նեղուցին մէջը հա-
 մարձակաս դին ան դին դարձընել ու պըտըտցնել,
 մեծ շփոթութիւն ելաւ, ու սկսան իր նաւերը ի-
 րար զարնելով խորտակել մէկզմէկ : Մպանդոսին
 նաւերէն շատերը երեցան, ու շատերը ընկղմեցան
 և եթէ գիշերվան մութը կոխելու չըլար անտարա-
 կոյս յաղթութիւնը ըրած կըլար Արիսպոս : Ահ
 թէ, ինչպիսի ցաւոց ու տրտմութեան մէջ թաղվե-
 ցաւ Մպանդոսնոյն գիշերը : Ստմըտաց որ երկրորդ
 օրը որչափ որ զօրութիւն ունի՝ ամմէննալ մէկ տեղ
 բերէ, ու անոնցմով պատերազմի : Արբոր սկսաւ
 առտու ըլլալ՝ Մպանդոս դուրս հանեց իր ամմէն
 նաւերը, և յաջող գտնելով հողմը, սկսաւ ծովին
 երեսը աս դին ան դին քայլել : Իսկ Արիսպոս գու-
 շակելով որ ատ երկնքին ծիծաղերեսը պիտի շուտ-
 մը խոժոռի ու փոթորիկ դուրս պիտի հանէ, նստաւ
 երկաթի վրայ ու չիշարժեցաւ տեղացը : Այլ աս
 հազիւ թէ արեգակը դէպի վեր ելաւ նայիս մրրիկ

մը ցածկեց ամպերէն դուրս : Օտովը սկսաւ կատ-
 ղիլ , ու լեռան պէս ալեքներ իրարու ետեւէ գլորցը-
 նել : Աերջապէս այնչափ մեծ ալէկոծութիւն եղաւ
 որ ինչպան Մպանդոսին 130 նաւը ընկղմեց և 5000
 հոգիի չափ խեղդըվեցան : Մպանդոս մեծ յուսա-
 հատութեան մէջ իյնալով մէկդի քաշվեցաւ , և
 ճամբայ տըվաւ Արիսպոսին որ երթայ պաշարէ
 զՖիւզանդիա ծովին կողմանէ , վասնզի Միկիանէս
 հոն փախած էր : Աոստանդիանոս ալ ցամաքին կող-
 մանէ պաշարած էր հողաբլուրներով (մէթէրիզ-
 ներով) , որոնց վրայ փայտէ աշտարակներ շինել
 տըված էր քաղքին բերդին բարձրութեամբը , և
 անոնց մէջը լեռուցած էր աղեղնաւորներ ու պարսա-
 ւորներ (սափան նետօղներ) , և պատրաստված էր
 մէկէն քաղաքը զարնելու : Միկիանէս տեսնալով որ
 վտանգի մէջ է , առաւ հետը իր քաջ զօրապետները ,
 ու Քաղկեդոն (Վատը քէօյիւ) փախաւ : Չօրք ժող-
 վեց 120000 հոգիի չափ , ու պատրաստվեցաւ պատե-
 րազմի : Իձող տըվաւ Աոստանդիանոս բիւզանդիոյ
 պաշարումը , և գնաց իր զօրքովը ճակատեցաւ
 թշնամւոյն դէմը : Աոստանդիանոս՝ ինչպէս իր սո-
 վորութիւն էր պատերազմի ձեռք չիզարկած , քաշ-
 վեցաւ մտաւ իր աղօթարանը զօրապետներովը մէկ
 տեղ , և հոն քիչմը աղօթք ընելէն ետքը , դուրս
 ելաւ բոլորովին բռնկած , և նշան տըվաւ զինուոր-
 ներուն որ սկսին պատերազմիլ : Մայց Միկիանէս

դիմացէն սկսաւ խաղաղական առաջարկութիւններ
 ընել Աոստանդիանոսին, որպէս զի պատերազմը չըս-
 կըսի: Ասան զի գիտէր որ պիտի յաղթելի Աոս-
 տանդիանոսէն իր զօրքին տգէտ ու անվարժ ըլլա-
 լուն պատճառաւ: Աւստի կըսպասէր՝ որ ուրիշ
 տեղած կրթեալ զօրք իրեն օգնութիւն գայ: Աոս-
 տանդիանոս ճշմարիտ կարծելով Վիկիանէսին ըսած
 խօսքերը ետ քաշեց զօրքը ուրախանալով՝ որ ա-
 թիւնհեղութիւն պիտի չըլլայ: Բայց Աոստանդիա-
 նոսին աս ուրախութիւնը շատ չիտուեց, վասն զի
 Վիկիանէս երբոր իմացաւ թէ օգնական զօրքը մօ-
 տիկցած է սկսաւ ծռմուտը կել խաղաղութեան հա-
 մար ըրած երդումները, ու այնպիսի թէութիւններ
 գրաւ, որով ցրցուց, թէ կուզէ պատերազմիլ: Աոս-
 տանդիանոս իմանալով Վիկիանէսին խաբեբայ միտ-
 քը, չըսպասեց որ ինչվան բանը բանէն անցնի,
 այլ դարձեալ առաջ բերաւ զօրքը, ու կարգ խօթեց՝
 որ նշանը տրվածին պէս պատերազմին: Բայց ինքը
 չիտրվաւ նշան ինչվան որ Վիկիանէս չուզեց, որ-
 պէս զի չըլլայ թէ ինքը երդմնազանց ըլլայ: Բայց
 Վիկիանէս այսպիսի մտածութիւններէն շատ հեռու
 ըլլալով ապաւինեցաւ իր զօրաց շատութեանը վրայ,
 որ գրեթէ 130000 եղած էր, ու յորդորեց զա-
 նոնք որ կտրըճութեամբ պատերազմին, յուսալով
 չաստուածներուն օգնութեանը, որոնց արձանները
 ամէն մէկ գնդի մէջ դնել տրված էր: Ապրսպը-

րեց իր զօրքին, որ խաչին դրօշակը տեսած ատեն նին մէկդի փախչին, ու թող չի տան իրենց քովը մօտիկնալ, վասն զի կըսէր անկէց մեծ վնաս կըծաղի ձեզի: Ահա պատերազմին տրվեցաւ նշանը, և երկու կողմնալ իրարու դէմ վազելով մէկըզմէկու զարնըվեցան: Բայց ո՞հ թէ որչափ սաստիկ արիւն վազեց Վիկիանէսին կողմէն, վասն զի իր զօրքը դեռ անվարժ ու անկիրթ ըլլալով, ուրիշ բանի չի ծառայեցին, բայց եթէ՛ Աոստանդիանոսին սուրին բերանը գլցնելու: Սենոնդներուն ու վիրաւորներուն թիւը ինչվան 100000 հասան, իսկ կենդանիներն ալ ցիրուցան եղան ասդին անդին: Վիկիանէս ինքիրմէն ելած ու ամօթով լցված՝ վազելով փախաւ մտաւ Աիկովիդիա: Ան ժամանակ Քաղկեդոնացիք ինչպէս նաև Աոստանդնուպօլսեցիք քաղքին դռները բացին, ու սիրով զԱոստանդիանոս և իրեն յօրքը ներս առին:

ԳՎ. ԻԹ.

Իլիկանէս իբն-տի : Առաքանդիւմնոս իբլայ հառվայեց-
 ոց Կէրս-Էլը Տիահեծան էնրնալար : ու ժողովուր-
 Կը Գարջընէլու- Էրեհ իբլայ :

ԱՄ ան 323 .

Լիկիանէսին երբոր ճարը հատաւ Աոստանդիա-
 նոսին յաղթելու , աղաչեց Աոստանդիայ իր կնկանը ,
 որ Աոստանդիանոսին քոյրն էր , որպէս զի իրեն կե-
 նացը համար բարեխօս ըլլայ իր եղբորը : Աոստա-
 նալով որ ալ ասկից ետքը քաղաքմը կը քաշվի ,
 թագաւորական նըշանները մէկ դի կը ձգէ , ու ա-
 տանկ կապրի : Ի՛նչ որ խնդրեց Լիկիանէս՝ Աոս-
 տանդիանոս ամմէննալ կատարեց , և երբոր Աոս-
 տանդիանոս գնաց 'Աիկովիդայ' ահա Լիկիանէս դե-
 մը ելաւ անզարդ անպաճոյճ ամմէն թագաւորական
 նշանները մէկ դի ձգած , ու ընկաւ Աոստանդիանո-
 սին ոտվըներուն , և թողութիւն խնդրեց : Աոս-
 տանդիանոս առանց յիշելու անոր անհաւատար-
 մութիւնը ու երգմնազանցութիւնը , բռնեց զինքը
 գետնէն վեր վերցուց , իրեն հետ նստաւ կերակուր
 կերաւ , ու խրկեց զինքը թեսաղոնիկէ որպէս զի
 հոն բնակի : Հատ չանցաւ ասոր վրայ նայիս հրա-
 ման գնաց Աոստանդիանոսէն՝ որ մեռցնեն զԼիկիա-

նէս : Թէ ինչ պատճառաւ մեռցնել տրվաւ չիզխոցրվիր . շատերը շատ իրաւացի (լայրն) պատճառներ կըբերեն, բայց քան զամենը հաւանական է ըսել՝ ինչպէս կըսէ Սոկրատէս, Թէ տրված խոստումը չիպահանջ, վասն զի յորդորեց բարբարոս ազգերը որ՝ ոտք ելլան ու Աոստանդիանոսին դէմ զէնք առնեն, և անոր տեղը զինքը Թիւր նստեցնեն . որպէս զի աղէկմը վրէժը առնէ Աոստանդիանոսէն : Իրաւցընէ նայելով Իկիանէսին հպարտութեանը սուտ չերևար աս կարծիքը, վասն զի ատ խոնարհութիւնը՝ որ Իկիանէս ըրաւ Աոստանդիանոսին, ակամայ էր . և բաղդը բռնադատած էր զինքը՝ որ Թող տայ իր Թագաւորութիւնը ու մէկ զի քաշվի : Ըրդ՝ ինչպէս իմաստնոց մէջը առակ է, Թէ որ ինչ է բռնական, ոչ է տեւական, այսպէս ալ Իկիանէս չիկրցաւ տեսել իր ըրած խոնարհութեանը մէջ . որովհետեւ բռնական էր . կարծեց Թէ ատ ճամբով կրնայ դարձել իր կործանել տէրութիւնը կանգնել . բայց ինչ օգուտ որ իշխանութիւն փնտռելինի կեանքը ձեռքէն կորսընցուց . ինչպէս շատերը կըփորձեն իրենց վնասով :

Սեռցնել տրվաւ Աոստանդիանոս Իկիանէսին գլխաւոր խորհրդականները, բայց զօրապետները չիմեռցուց, և Թող տրվաւ՝ որ իրենց զօրապետութիւնը ընին : Իկիանէս որչափ որ արձաններ կանգնել տրված էր իր կենդանութեան ատենը,

Աոստանդիանոս ամմէննալ կործանել տրվաւ : Ահա
 ատ ընդարձակ հռովմայեցւոց տէրութեան գաւա-
 զանը՝ որ առաջ եօթը ձեռք կըկրէր, հիմակ
 սկսաւ կրել մինակ Աոստանդիանոսին ձեռքը, ամ-
 մէն տեղ անոր հրամանին կընայէր, ու անիկայ իր
 վրայ թագաւոր կըճանչնար :

Ասկից ետքը Աոստանդիանոս՝ ինչպէս որ ար-
 ժանի էր՝ պատուոյ անուն ստացաւ՝ յաղթանակօղ,
 ինչպէս յայտնի կերևայ ստակներէն՝ որոնց վրայ որ
 գրած է : Աիկիանէսին մեռնելէն ետքը՝ Աոստան-
 դիանոս հինգ ամօոյ չափ՝ Աիկոմիդայ կեցաւ, ու
 զանազան կարգադրութիւններ ըրաւ : Արբոր Աիկիա-
 նէսին տակի եղօղ մարդիկները իմացան թէ իրենց
 տէրը մեռերէ, անպատմելի ուրախութիւն և ցնծութիւն
 հրեշտակներ խրկեցին Աոստանդիանոսին՝ իրենց
 յարգութիւնը ցըցընելու համար : Աոստանդիանոս
 ամմէն բանէն առաջ աղքատներուն ու տնանկներուն
 կարօտութեանը հոգ տարաւ, բացաւ արքունի գան-
 ձին դուռը, ու անոնց առատ ստակ բաշխեց : Ա՛ե-
 ծամեծները՝ որոնք կէսմը աքսորված ու կէսմը
 բանտերը դրված էին, խալըսեց, ու իրենց հարս-
 տութեան վիճակին մէջ դրուաւ : Աիկիանէսին ամ-
 մէն դրած օրէնքները ջնջըվեցան, և իրեն գաղա-
 նային անգթութեան յիշատակը միայն մնաց : Ամ-
 մէն տեղ ժողովրդեան բերնէն գոհութիւն ու փա-
 ռաբանութիւն կըլըսվէր, որ սուրբ խաչին զօրու-

Թեամբը այս հրաշալի յաղթութիւնը բրաւ : Իրաւ-
 ցընէ՛ կրսէր Աոստանդիանոս , այս սուրբ խաչին
 զօրութիւնն է , որ զիս ամմէն թագաւորներէն վեր
 բրաւ , ու ամմէնուն թագաւորութիւնը իմ ձեռքս
 տըվաւ : Ուստի աւելի ևս քրիստոնէական կրօնին
 սիրովը բորբոքելով սիրտը , և ուզելով իր հպա-
 տակեալներունալ ոչ միայն ճանչցընել այսպիսի
 գերազանց կրօնմը՝ այլ և գրկել տալ , երկու թուղթ
 գրեց , մէյմը եկեղեցականներուն , և մէյմընալ աշ-
 խարհականներուն , որոնց մէջը այսպէս կըխօսէր
 անոնց : « Հարկաւոր չէ՛ կրսէր , ընդհանուր նե-
 « ղութն , և բովանդակ աշխրբիս ցաւոցնորէն յիշա-
 « տակը ընել : Արոնք որ ատ մեծ վնասներուն պատ-
 « ճառ եղան՝ թշուառաբար սատկեցան , ու դժոխ-
 « քին տակը թաղվեցան : Սէկզմէկու դէմ՝ զէնք
 « առին , ու իրենց ձեռքովը՝ զիրենք կործանեցին ,
 « իրենց ոչ յաջորդ , և ոչ անուն ձգեցին աշխրբիս
 « վրայ : Իրաւցընէ չէին ունենար այսպիսի ցաւալի
 « ու ողբալի վախճանմը , եթէ Ապողոնին պատ-
 « գամները զիրենք խաբած չըլար : Արդ՝ կաղաչեմ
 « հիմակ քեզի ո՛վ Աստուած իմ՝ որ մեծ ես ան-
 « չափապէս , ողորմած աշվըներով նայիլ արևելեան
 « ժողովրդեանս վրայ , և յաջողել՝ որ ծառայիդ
 « ձեռքովը օգնութիւնմը գտնեն : Ո՛վ Աստուած
 « իմ և տէր , որովհետև ինչ որ ըրի՝ քուկին
 « հրամանաւդ ըրի , ուրեմն խսկապէս արժանի է որ

,, Ես այս խոնարհական պաղատանքը քեզի մատու-
 ,, ցանեմ : Բու խաչիդ փառաւոր դրօշակը միշտ իմ
 ,, զօրացս առջևէն գնաց , ու անոնց յաղթութիւն
 ,, տրվաւ , և քանի անգամ որ հարկաւորութիւնը
 ,, զիս բռնադատեց զէնքի ձեռք զառնել , քու բա-
 ,, րութեանդ վրայ ունեցած յոյսս ցրցընելու համար
 ,, յաջողեցաւ ինձի : Եսոր համար կրմատուցանեմ
 ,, քեզի միշտ՝ իբրև մեծ հաճելի զոհմը , այնպիսի
 ,, սիրտմը՝ որ լցված է քու սուրբ երկկողիւղ , սուրբ
 ,, անուանդ սիրովը , ու քու զօրութեանդ գողովը ,
 ,, որուն այնչափ յայտնի նշանները ինձի ցրցուցիր ,
 ,, որոնք խորունկ սրտիս մեջը քու հաւատքդ տպաւո-
 ,, րեցին ու հաստատ ամրցուցին : Ե՛հա ես կրմա-
 ,, տուցանեմ զիս քու հրամանդ առաջ տանելու ,
 ,, որն որ գարշելի բռնաւորները ջնջելու աշխատե-
 ,, ցան : Արբաղձամ սրտանց հասարակաց բարւոյն
 ,, համար , որպէս զի քու ժողովուրդդ հանգիստ
 ,, խաղաղութե մէջ մնայ , ու շիտթութիւնմը չի-
 ,, խուովէ զիրենք : Այնպէս կրբաղձամ որ որոնք որ
 ,, հեթանոսական խաւարի մէջ թաղված են , անոնք
 ,, ալ հաւատացեալներուն պէս հանգիստ ըլլան ,
 ,, յուսալով որ քաղցրութիւնս , ու բռնած հաւա-
 ,, սարութիւնս շատ կօղնեն զիրենք բարի ընելու ու
 ,, իրենց ճշմարտութիւնը ձանջընելու : Ոչ որ
 ,, կորսընցընէ իր հանգստութիւնը հաւատոյ հա-
 ,, մար , այլ իւրաքանչիւրդ ազատ ըլլայ ձամբայ

„դնելու զինքը իր խիղճմտանքին կէօրէ : Բայց
 „անոնք՝ որ աղէկ գիտեն մտածել , կըհամոզին
 „(խանմիշ կըլլան) ու յայտնի կըքարոզեն , թէ ա-
 „նոնք միայն սրբութեամբ ու անմեղութիւն կապրին՝
 „որոնք որ քու պատուիրաններուդ կըհնազանդին :
 „Ուրիշները՝ որ քու հնազանդութենէդ դուրս կել-
 „լան , թող ունենան ատճարներ , բայց այնպիսի
 „տաճարներ՝ որ նուիրեալեն ստութեան ինչպէս որ
 „կուզեն կոր : Ս՛ենք ամենայն սիրով ու յօժա-
 „րութիւն կըբնակինք քու ճշմարտութեան տանդ
 „մէջը , ուր կանչըվելու արժանի եղանք , բայց և
 „այնպէս կըբաղձանք՝ որ անոնք ալ մտնեն , ու
 „մասնակից ըլլան այն օգտին՝ որ կըծագի քու
 „ընկերութենէդ : Ա՛ս մեր կրօնքը նոր բան չէ ,
 „և ստոյգ գիտենք որ դուն սահմանեցիր պաշտել
 „զքեզ երբոր աշխարհքս ստեղծեցիր : Ատքը մար-
 „դիկները քեզմէ հեռացան , ու պէս պէս սխալա-
 „նաց մէջ ընկան , և դուն զանոնք փրկելու համար
 „քու որդիդ խրկեցիր , որ մարդիկներուն ամենա-
 „պայծառ լոյսմը ծագեց : Բու արարածներդ թող
 „վկայ ըլլան իմ ըսածներուս : Ի՞նչ աղւոր կարգ
 „ու կանոն ու զարմանալի համաձայնութիւն ունին
 „արևուն ու լուսնին քալվածքը՝ երբոր աստղնե-
 „րուն հետ մէկ տեղ կըշարժին : Ի՞նչ միօրինակ
 „ու հաստատուն պտոյտք ունին եղանակները :
 „Իբրև անշարժ հիմանմը վրայ , երկրիս մարմինը

„կայնած կեցած է քու խօսքիդ վրայ : Ենչպէս
 „աղւոր հողմերը կրփչեն օդոյս մէջ , ջուրերը կը
 „քալեն երկրիս վրայ , և ծովը քու դրած սահմա-
 „նէդ դուրս չելլար : Եմէն տարերքը զարմանալի
 „աղղեցութիւն մը ունին : Աթէ քու նախատես-
 „չութիւնդ աշխարքս այսպիսի ճամբովմը ստեղծե-
 „լու չըլլար , շատոնց կործանած էր մասանց իրա-
 „րու ներհակ ըլլալուն համար որոնցմէ որ կըբաղ-
 „կանայ : Աւ սատանայները որ հիմակ իրարու հետ
 „կըկռուինկոր , ան ատենը մարդիկներու հետ աւե-
 „լի սաստիկ ուժով կըսկըսէին կռիւ ընել . թէ-
 „պէտ հիմակ ալ առանց երկնալու շարունակ կը-
 „պատերազմին մարդիկներուն հետ , ու զանոնք
 „կըչարչարեն : Կոնարհութեամբ գոհութիւն քե-
 „զի կըմատուցանեմ ո՛վ Եստուած իմ և տէր , որ՝
 „որչափ մարդիկներ զանազան բերմունք ու զանա-
 „զան կարծիք ունեցան , այնչափ հաստատուն կե-
 „ցան քուկին ծառայութեանդ մէջը անոնք՝ որոնք
 „որ ճշմարտութիւնը յայտնի ըրին : Աթէ որ մէկը
 „չուզէր բռժչկըվիլ՝ իրն է յանցանքը ուրիշին վրայ
 „թող չիձգէ : Եւեղը բժչկութե՛ պատրաստուված
 „ու տրըված է ամէնուն : Եւրաքանչիւրոք զգոյշ
 „կենայ , չըլլայ թէ այնպիսի կրօնիմը ուզենայ վնաս
 „հասցընել՝ որուն անմեղութիւնը ու սրբութիւնը
 „յայտնի է : Ես հասարակ ամմէնքնիս քաղցր խա-
 „ղաղութեան մէջ ենք , նայինք որ խղճմտանքնիսմա-

„քուր պահենք ամեն աղտեղութիւններէն : Ոչ
 „ոք անհանգիստ ընէ զանոնք՝ որ չեն իր կարծի-
 „քէն : Որոնք որ երկնքէն քիչմը լոյս առածնն ,
 „պէտք է աշխատին որչափ որ կարելի է լուսաւո-
 „րել նաև զանոնք՝ որ խաւարի մէջ թաղված են ,
 „բայց երբոր կը յամառին՝ պէտք է հանգիստ թող
 „տալ : Ուրիշ բան է , անթառամ պսակը ձեռք
 „ձգելու համար պատերազմիլ , և ուրիշ բան է
 „բռնութիւն ընել զուրիշը նուաճելու համար , որ
 „այսպիսի կրօնմը դաւանի : Հեթանոսական աւե-
 „լորդապաշտութիւնները ինչպէս որ ստոյգ գի-
 „տեմ , արդէն շատ տեղերէն չնջովեցան : Ալուղէի
 „ամեն մարդու աս բանս համոզել , եթէ մէկ քա-
 „նիներուն յամառութիւնը առջևս անյաղթելի ար-
 „գելքմը դրած չըլար :

ԳԼ . Լ :

Աստուծոյ խնայանքն նոր տառած քաղաքներու մէջ քրիս-
 տոսէութեան համար ըրած Բարեխորհուրդները :

Ամ 20ն 323 :

Աստանդիանոսին օրէնքներուն մէկը , որ դրաւ
 նոր քաղաքներուն վրայ , աս եղաւ , որ կռապաշ-
 տութիւնը դադրի : Արգելեց՝ որ ամենևին նորէն

կուռքի արձան մը չիկանգնեն, զոհեր չիմատուցանեն, ու ան հարցումները որ կընէին կուսակաշտները իրենց չաստուածներուն՝ չընեն: Այսպէս հրաման հանեց Աոստանդիանոս, բայց և եղած անհնազանդութիւններուն ալ աչք գոցեց, ուզելով իր հրամանին դառնութեան մէջ կտոր մը անուշ խառնել, ինչպէս նաև շատ անգամ բժիշկներն ալ հիւանդին օգնելու համար լեղի բաժակին մէջ անուշ հեղուկ մը կը թափեն: «Ամանեցաւ հիմակ Աոստանդիանոս մարդու մը՝ որ ձեռքը կացին մը (պալթամը) առած ու կուռքերուն տաճարներու մէջ մտած անչունչ փայտի կտորները կը ջարդէ ու գետինը կը կործանէ: Փայտէն ու կացինէն ելած ձայնը տաճարներուն մէջ կը լըսուի, և սակայն ան փայտերը պաշտօնները կը կենան սուսիկ փուսիկ կընային: Մի թէ ինչպէս մարդու սիրտը Աստուծոյ ձեռքն է, իբրև ցնցուղ մի պարտիզպանին ձեռքը՝ որ դին կուզէ կը դարձընէ: Բայց Աստուած որ հիմայ ասանկ ժողովրդեան սիրտը կուսակաշտութենէն զանեցուց, մի թէ բնական ճամբէ դուրս եղանակաւ մի ըրաւ, ինչպէս առաքեալներուն ատենը, ո՛չ երբէք: Բաւական եղաւ ամմէնուն մտածել իրենց քաջած ներութիւնները իրենց պէս կուսակաշտ թագաւորներուն ձեռքէն: Աս մտածութիւնը մինակ դուռ մը բացաւ ամմէնուն սրտին՝ ուսկից որ դուրս ելաւ կուսակաշտութիւնը՝ որ այնպիսի անօրէնութիւններ ընե-

լու թող կուտար, և մտաւ ներս քրիստոնէութիւնը՝ որ կարգելէր մէկումը անիրաւութիւն ընել: Սէկ զի թողունք Արստանդիանոսին տրված բարի օրինակը, որ չէ թէ մինակ մարդկեղէն սիրտը, հասա քարեղէն սիրտը իսկ կրդարձընէր:

Արստանդիանոս հրաման հանելէն՝ ի զատ, որ նոր կուռքի տաճարներ չիշինվի, աղէկ բանմալ մտածեց: Ան քաղաքները, որոնց մէջ կուսպաշտութիւնը խիստ խորունկ արմատ կապած էրնէ, բունեց խըրկեց հոն քրիստոնեայ ու ճշմարիտ աստուածապաշտ իշխաններ՝ որոնք որ Արստանդիանոսին շատ սիրելի էին, ու առանց ուշացնելու իրեն հրամանը կրկատարէին: Ասոնց պատուիրեց, որ՝ աղէկ աչվընին բանան կուսպաշտներուն վրայ, ու բանիւ և գործքով նային, որ սա կուսպաշտ ժողովուրդը աստուածապաշտ ընեն: Աս իմաստուն մտածութիւնը շատ չանցաւ, ցրցուց՝ թէ ինչ աղէկ ճամբայ բուներ է Արստանդիանոս, վասն զի քանի գնաց հոգի տալ սկսաւ կուսպաշտութիւն քաղաքներու մէջ ուր տեղ որ յառաջ ձեռած տակ առած էր զքրիստոնէութիւնը: Հրաման հանեց՝ որ ետ դարձընեն ու տան քրիստոնեայներուն այն ամենայն հարստութիւնները՝ որ կրօնի համար կորսնցուցած են: Իսկ որոնք որ մարտիրոս եղած ու իրենց ունեցածնին չունեցածնին առնըված է, անոնք տրրվին յը մարտիրոսներուն ծնողացը կամ աղգականներուն: Այկեղեցի-

ները՝ ըսաւ, զարդարվին ու ճօխանան թէ շարժա-
 կան զարդերով, և թէ իրենց երկիրներովը: ‘Սո-
 րէ նոր՝ ըսաւ, եկեղեցիներ շինվին փառաւոր ըն-
 դարձակ ու գեղեցիկ, որպէս ղի կարող ըլլան իրենց
 մէջը սղմիլ նոր հաւատացեալներուն բազմութիւնը:
 Աս բանիս համար մասնաւոր նամակմը գրեց Աս-
 տանդիանոս Աբսարիոս Աբսարիոյ եպիսկոպոսին, և
 ուրիշ արևելեան եպիսկոպոսներուն այսպէս: ,, Ու
 ,, րովհետև Վի փրկչին մերոյ հաւատարիմ ծա-
 ,, ռայները մինչև հիմայ բռնաւորներուն ձեռքէն միշտ
 ,, հալածելով, ու ատ հալածանաց վախուն համար
 ,, եկեղեցիներուն շէնքին, ինչպէս որ պէտք է ու
 ,, կրվայլէ, չիկրցան հոգ տանիլ, կարծեմ թէ մեծ
 ,, մասն հինցած ու երեսէ ընկած պիտի ըլլան: Այց
 ,, հիմայ՝ որ քրիստոնէական կրօնը ունի իր կատա-
 ,, րեալ ազատութիւնը, և անդնդային վիշապը որ
 ,, ընկաւ իր ուժէն, կարծեմ թէ ամէն աշխարհք
 ,, կրճանչնայ ճշմարիտ Աստուծոյն մեծութիւնը ու
 ,, մեծվայելութիւնը: Աւ անոնք որ՝ կամ սխալե-
 ,, լով և կամ տկարութեամբ ընկան, կրճանչնան ու
 ,, կրչիտկեն իրենց սխալմունքը: Աւստի իմացուր
 ,, եպիսկոպոսներուդ, քահանայներուդ ու սարկաւագ-
 ,, ներուդ, որ մասնաւոր հոգմը տանին եկեղեցիներ-
 ,, րունչինութե վրայ, նորոգեն զանոնք՝ որ փլէշլու-
 ,, վրայ են, մեծցրնեն զանոնք՝ որ խիստ նեղ կու-
 ,, գանկոր, ու նորէն շինեն զանոնք՝ որ հարկաւոր

„կերևան : Վաղաքապետին արդէն հրաման տը-
 „ված եմ հարկաւոր եղած բաները ձեզի տալու
 „համար : Աստուած անփորձ պահէ զքեզ ո՛վ եղ-
 „բայր սիրելի : “ Ահա Կոստանդիանոսին այսպիսի
 խօսքերէն՝ եպիսկոպոսները հողի առին , ու մէկզմէ-
 կէ աւելի սկսան եռանդեամբ քրիստոնէական հա-
 ւատքին հարկաւոր եղած բաներուն հոգ տանիլ ,
 եկեղեցիներ շինել , ու սուրբ հաւատքը տարածե-
 լու ետէ ըլլալ :

ԳԼ : Լ .

Արիստեան տղանորդ : Արիստին Աղէքսանդրիոյ Ժողովին
 մէջ դատաւարարը լինելու Աղէքսանդրէն .- Կոստանդիա-
 նոսին գրած լեռնալէր ամոնոյ երկուսին :

Ամ օն 324

Արդացողին աղէկմը տեղեկութիւն տալու համար
 համառօտիւ պատմենք թէ ո՛վ և որպիսի մարդ էր
 Աղէքսանդր , և ո՛վ և որպիսի մարդ էր Արիստ :
 Աղէքսանդր՝ էր հոգեկիր ու ճշմարիտ կրօնասէր ե-
 րէցմը Աղէքսանդրիոյ եկեղեցւոյն մէջ , զարդարեալ
 իմաստութեամբ քաղցրաբանութեամբ ու պերճա-
 լօսութեամբ : Իսկ Արիստը էր քահանայմը նոյն
 եկեղեցւոյն մէջ , սաստիկ փառասէր ու յանդուգն ,

բայց արտաքին կերպարանքովը ծանր էր ու համեստ անուշ խօսօղ և շողորթորթօղ : Սորված էր թէ Մատուածային և թէ մարդկային գիտութիւններ : Օտարարված էր խելաց ու շիմութեամբ , մտաց արագութեամբ , և անոր համար մեծ անուն հանած էր ամենուն առջևը : Արդ՝ տեսնալով զինքը այսպէս իմաստուն ու խելացի , կարծեց թէ Ակիւղաս եպիսկոպոսը մեռնելէն ետքը՝ ինքը կըլլայ եպիսկոպոս : Բայց երբոր տեսաւ որ Աղեքսանդրը ընտրվեցաւ , բարկութենէն իր ժանտ հերետիկոսութեան թոյնը օձիմը պէս՝ բերնէն դուրս հանեց այսպէս : Օրմը երբոր Աղեքսանդր եպիսկոպոսը նստած խօսակցութիւն կընէր հաւատոյ վերաբերեալ բաներուն վրայ , ըսելով թէ երեք անձինք ալ հաւասար են , ու մեծ ու պզտիկ չիկայ մէջերնին . ահա Արիօս մէկէն ՚ի մէկ բարձր ձայնիւ ըսաւ ամմէնուն առջևը , թէ ատ ըսածդ Սաբելեան հերետիկոսութիւն է , և չէ ուղղափառ վարդապետութիւն : Արդին մեզի նման արարած է ոչնչէ ստեղծուած , որ կրնայ թէ բարեգործութիւն ընել , և թէ մեղանչել : Բայց Մատուած յառաջագոյն տեսնալով անոր ընելու բարեգործութիւնները՝ մասնաւորաբար զինքը բարձրացուց մարդիկներուն մէջէն , ու Մատուծոյ բնութեանը հաղորդ ըրաւ : Աղեքսանդրը սիրով ու անուշութենով պատասխան տրվաւ Արիօսին թէ ուղղափառ չէ ատ կարծիքը , հայհոյութիւն է որդ-

ւոյն Աստուծոյ դէմ : Ահա ասկից սկսաւ շփոթու-
 թիւնմը ու խռովութիւն մը ժողովրդեան մէջ տա-
 րածվիլ , մէկը կըսէր թէ ես արիոսեան եմ , մէ-
 կալը թէ ես աղէքսանդրեան եմ : Աս բանս տես-
 նալով քաջ հովիւն Աղէքսանդր , խիստ մեծ սրտ-
 ցաւութեամբ նշովեց զԱրիոս , որպէս զի ժողովուր-
 դը տեսնալով որ նշոված է՝ իրմէ հեռանան : Բայց
 երբոր ասկից շահմը չեղաւ , ուզեց Աղէքսանդրը
 ժողովմը ընել որպէս զի ժողովով այն չար աղան-
 դը կորսըվի վերնայ աշխրքէս : Կանչեց Ագիպոսին
 ու Իբրիոյ եպիսկոպոսները հարիւր հոգիի չափ , ու
 անոնցմով ժողով ըրաւ , և դատապարտեց Արիոսին
 կարծիքը իբրև թիւնաւոր ժանտ հերետիկոսութիւն :
 Արիոս երբոր տեսաւ որ Աղէքսանդրիա քաղքին մէջ
 իր անունը ասանկ վար ինկաւ , մէկուն մէկալուն
 սիրտը որսալու ետևէ եղաւ , որպէս զի իրեն պաշտ-
 պան ըլլան : Աս պաշտպաններուն մէջը երևելի ե-
 ղաւ Ալեսեբիոս նիկոմիդայ եպիսկոպոսը , որ ոչ
 միայն խօսք տրվաւ զինքը պաշտպանելու , այլ նաև
 դաշն դրաւ անոր հետ՝ որ ատ աղանդը առաջ տա-
 նելու համար աղէկմը աշխատին ու իրարու կռնակ
 ըլլան : Իշխանութիւնը՝ ըսաւ , իմ կողմանէս , զի-
 րը քու կողմանէդ , և այսպէս աղէկ կըրնենք
 մէկըզմէկ : Իշխանութիւն կըխոստանար Ալեսեբիոս ,
 վասն զի Աոստանդիանոսին սիրելին էր , և միանգա-
 մայն արքունի պալատին մէջ ալ ձեռք ունէր :

Այսպէս դաշնագրութիւն ընելէն ետքը Աւսերիոս ելաւ գնաց Արստանդիանոսին ու եղած կռիւր ծռուն մռուն անոր հասկըցուց, ըսելով թէ՛ Աղեքսանդր հայրապետը անխոհեմ մոլեգին (չըլկըն) ու խռովասէր մարդ մի է, և թէ ոչինչ բանի մը համար մեծ տարաձայնութիւններ ու խռովութիւններ կը հանէկոր :

Արբոր աս ցաւալի լուրը լսեց միաբանասէր ու խաղաղասէր կայսրն Արստանդիանոս, սաստիկ վերաւորեցաւ սիրտը ու տրտմեցաւ, և իբրև թէ պաղ ջուրմը լեցվեցաւ քրիստոնէական կրօնին սիրովը վառված սրտին վրայ : Բայց ասով չի յուսահատեցաւ՝ ցրցուց իր հոգւոյն արիութիւնը, և իսկոյն հաւատարիմ դեսպանմը խրկեց դէպ'ի Աղեքսանդրիա, որնոր Ավսիոս Աորդովիայ եպիսկոպոսներ, և տըվաւ անոր ձեռքը թուղթ մը՝ որ գրված էր Աղեքսանդրին և Արիոսին, որպէս զի ան թուղթը անոնց տայ ու զանոնք իրարու հետ հաշտեցնէ : Աս թղթին մէջ Արստանդիանոս ցըրընելէն ետքը իր սըրտին ցաւը՝ որ ատանկ ոչինչ բանիմը համար իրարմէ բաժնըված են, արտաքին իմաստասէրներուն օրինակը անոնց առջևը դրաւ, որոնք ըսաւ թէպէտ ամմէն բանի մէջ իրարու համաձայն չեն, սակայն գլխաւոր բաներու մէջ համաձայն են, և իրարու մէջ խաղաղութիւն ու բարեկամութիւն ունին : Հապա ուր մնաց որ Վրիստոսին ծառայները իրա-

րու մէջ աս խաղաղութիւնը պիտի ունենան, և ոչ
 թէ տղայական վիճաբանութիւններով ժողովրդեան
 մէջ տարաձայնութիւն ցանկը՝ որ ամենեւին չի վայել-
 լէր իրենց ծանրութեանը ու մեծութեանը : Ուստի
 յորդորելով զանոնք՝ որ ճանչնան իրենց անխոհ-
 մութիւնը, ու դառնան հաշտըվին իրարու հետ՝ իր
 նամակը այսպէս կրլըմնցընէ : « Թող տըվէք որ օրս
 ,, ուրախ օր ըլլայ, ու գիշերս հանգիստ գիշեր ըլլայ,
 ,, ապա թէ ոչ պէտք է որ հեծեմ ու հառաչեմ
 ,, և բողբոլին արցունքով թրչըվիմ, և մնացած
 ,, կեանքս ալ նեղութեամբ ու տառապանօք անցը-
 ,, նեմ : Ինչպէս կրնամ ես խաղաղութեամբ ու
 ,, հանգստութեամբ ապրիլ, երբոր շարունակ խռո-
 ,, վութիւն կազ ու կռիւ Մատուծոյ ժողովրդեանը
 ,, մէջ կրլան : Իայց որպէս զի սրտիս կսկիծը աղէկմը
 ,, հասկընաք, գիտնաք որ՝ երբոր եկայ աս քաղաքս,
 ,, որոշեցի զիս որ շուտմը արևելք երթամ : Եւ
 ,, թէպէտ գալուս հարկաւորութիւննալ զիս կըստի-
 ,, պէր կոր, որ արդէն բաղձանօք ու սրտիւ ձեզի
 ,, հետ էի, բայց երբոր ձեր խռովութիւններուն
 ,, գէշ լուրը առի, արգելվեցայ գալէն՝ որպէս զի
 ,, եղած անկարգութիւններուն աչքով տեսնօղ վկայ
 ,, չըլլամ, որոնց պատմութիւնը հազիւ կրցայ լսել :
 ,, Հապա իրարու հետ հաշտըվելով՝ ան ճամբան
 ,, բացէք ինձի, որն որ գօցեցիք ձեր ատ գէշ հակա-
 ,, ոակութեամբը : Ես ուզածս ըրէք, որպէս զի

„կարօղ ըլլամ թէ զձեզ , և թէ ուրիշները զուարթ
 ,, ու գոհ տեսնել , և հասարակայ խաղաղութեան
 ,, ու ազատութեան համար Աստուծոյ արժանաւոր
 ,, գոհութիւն մատուցանել“ : Աս լեզուն որ Աստ-
 տանդիանոս աս թղթին մէջը բանեցուց , կըրցընէ թէ
 ինչ բաղձանք ունի եղեր եկեղեցւոյն խաղաղութե-
 համար , բայց և միանգամայն կըրցընէ թէ ինչ-
 պէս Աստերիոս նիկոմիդացւոյն ձեռքովը ծուռ հաս-
 կըցեր է :

Ահաւ Ովսիոս Աղեքրանդրիայ ու հոն հասա-
 ծին պէս՝ շուտմը ժողվեց էզմը եպիսկոպոսներ ու
 անոնցմով ժողով ըրաւ : Վննեց աղէկմը Աղէք-
 սանդրին ու Արիոսին կարծիքը . և տեսաւ որ Արիո-
 սին ըսածը ուրիշ բան չէ , բայց եթէ զարհուրելի
 հայհոյութիւն : Ուստի դատապարտեց ինքնալ ,
 ու ետ դարձաւ հասկըցուց Աստանդիանոսին թէ
 ինչպէս ժանտ ու հերետիկոսական է Արիոսին կար-
 ծիքը :

Ասոր վն թուղթ մը գրեց Արիոս իրեն հաւա-
 տարիմ՝ բարեկամին , այսինքն Աստերիոս Նիկոմի-
 դացւոյն գանգատելով Աղէքսանդր հայրապետին ,
 ու Ովսիոսին վրայ , որ իրեն կարծիքը դատապար-
 տեցին . ու զինքը հերետիկոսապետ ըրին : Պատաս-
 խան տըվաւ Աստերիոս յորդորելով զինքը՝ որ այն-
 պիսի բաներէն չիվախնայ , այլ նայի որ իր աղան-
 դը յառաջ տանի : Արանի թէ՛ ըսաւ , ամմէնքը

քու ունեցած լոյսդ ունենային որով ճշմարտութիւնը տեսնէին : Ըս միջոցիս մէջ Աւսերիոս թուղթ մի ալ գրեց Աղէքսանդրին ըսելով՝ որ ետ կենաս առ ըրած բաներէդ, ու վիճաբանութիւնը ձեռքէ թողտաս, և Արիոսը սիրով նզովէն արձրկես : Ըսանկ իշխանութեամբ կրխօսէր Աւսերիոս, վնդի ինչպէս ըսինք կռնակ ունէր զՎոստանդիանոս, ու անոր քոյրը Վոստանդիա : Աղէքսանդրը քաջութեամբ մը Աւսերիոսին նամակին ամենեկին պատասխան չիտայէն՝ ի զատ, սկսաւ գործել : Գրեց անմիջապէս թուղթմը արևելեան Ապիսկոպոսներուն, և զատ թուղթ մի ալ Աղէքսանդրոս եպիսկոպոսին Ռիզանդիոյ որուն մէջը թէ ինչ է Արիոսին վարդապետութիւնը, և թէ ինչպէս ժողովին մէջը դատապարտուած է ցըցընելէն ետքը, Արիոսին ծածուկ հնարքները և Աւսերիոսին ըրած կեղծաւորութիւնները աղէկ մը բացատրեց : Հատ օգուտ ըրաւ աս թուղթը, վասն զի անոնք՝ որ խաբված էին Արիոսէն, շուտմը ասդին անցան, և ուղղափառ կողմը պաշտպանեցին : Սաստիկ բարկացաւ ասոր վրայ Աւսերիոս՝ Սիկոմիդացին, ու շուտմը Արիոսը իրեն կանչեց, որպէս զի երկուքնին ալ մէկ տեղ ըլլալով աղէկմը կարօղ ըլլան աշխատիլ : Արիոս Սիկոմիդայ հասածին պէս, Աւսերիոս հանց զինքը Վոստանդիա առջևը իբրև պատուոյ արժանի մէկմը, որ արդարութեան համար հալածանք

քաշած է: Խիստ մեծ սէր ցըրուց անոր Արատան, ղիա, և խոստացաւ թէ պաշտպան կըլլայ անոր: Ասկից Աստուծոս Համարձակութիւն առնելով, իր կողման եպիսկոպոսներուն գիրմը գրեց անոնցմով ժողովմը ըրաւ, ու ամմէնուն գրել տրվաւ թէ Արիոսին վարդապետութիւնը ուղղափառ և ողջամիտ վարդապետութիւն է: Աս բանս երբոր Աղեքսանդրին ականջը հասաւ, ինքնալ շուտմը ուղղափառ վարդապետութեան վերաբերեալ խօսքերը ու հաւատոյ մասունքները, և միանգամայն հերետիկոսապետին կարծեաց դատապարտութիւնը ամմէնը մէկ տեղ ժողովելով, բովանդակ եպիսկոպոսներուն խորկեց, որպէս զի անոր օտորագրեն, և միանգամայն անիկայ նշան մը ըլլայ որ ուղղափառները չարափառներէն զատէ: Ամմէնը ստորագրեցին ասոր ու հաստատեցին: Արիոս տեսնալով իր հակառակորդին անյաղթելի զօրութիւնը, որ իրեն ամմէն բանեցուցած հնարքներուն դէմ դուռ կը գոցէկոր ինքն ալ սկսաւ աւելի ևս կռուիլ ու նոր նոր բաներու ձեռք զարնել: Աւստի ինքն ալ որչափ որ իր ծուռ վարդապետութեանը համաձայն խօսքեր կամ գրուածքներ կարնէ, բռնեց մէկ տեղ ժողովեց ու ամմէն տեղ խրկեց, ինչվան նաւնոյն իսկ Աղեքսանդրին ըսելով թէ՛ ես ուրիշ բան չեմ սորվեցընէրկոր, բայց եթէ ինչ որ քեզմէ սորված եմ նէ: Վանի գնաց Արիոս իր ծուռ վարդապետութեանը

մէջ հաստատուեցաւ ու յամառեցաւ, և զիշեր ցորեկ հնարքներ փնտրուելու ետևէ եղաւ, թէ ինչ ընէ որ սա իր ստուծիւնը ճշմարտութիւն ձևացունէ: Աս ճամբան որ աս հերետիկոսապետը բռնեց, ոչ նոր է՝ և ոչ զարմանալու բան է՝ վասն զի հերետիկոսներուն սովորութիւնն է զանազան հնարքներու ձեռք զարնել, ու զանազան գրքեր ձեռքէ անցընել, որպէս զի գուցէ մէկ խորշմը (քէօշէ մը) իրենց ծուռ վարդապետութեան համեմատ բանմը չըսեմ ստուերմը գտնեն: Թէպէտ և առջևնին հարիւրներով կամ հազարներով ուղիղ գրուածքներ ելլայ՝ իբնք կերթան ան մէկը որ իրենց համաձայն կը գտնան, առաջ կը բերեն որպէս զի իրենց կռնակ ըլլան: Արդ կարդացողը ինքիբէն կրնայ իմանալ թէ արդեօք ստիկայ ընօղները ճշմարտութիւնը փնտրուելու ետևէ են, չէնէ տեսած ատեննին հալածելու:

ԳԼ . ԼԳ .

Սոստանդիանոս իրենց Երեւոյն հետ լին գրով և
 լին լինով . և ետքը 'Սելեոյ Ժողովն'
 պատարտարտութիւնը իրենցն :

ԱՄ ան 324 :

Լրիտս իր ամեն սատանայական հնարքները բա-
 նեցընելէն ետքը , հնարքմընալ բանեցուց , որով ոչ
 այնչափ իր չար աղանդը առաջ տանել ուզեց որ-
 չափ որ Աղէքսանդրին ու Ովսիոսին անունը կոտ-
 րել : Գիրմը գրեց Սոստանդիանոսին լի անամո-
 թութեամբ՝ բողոքելով Աղէքսանդրէն ու Ովսիո-
 սէն՝ որ իրեն կարծիքը առանց աղէկմը հասկընալու
 դատապարտեցին իբրև հերետիկոսական : Սոստան-
 դիանոս առաջուց Ովսիոսէն բանը իմացած ըլլա-
 լով , լի դառնութեամբ պատասխանմը գրեց անոր ,
 մերժելով իրեն գրածները , յայտնելով իրեն
 սխալմունքները , ու կանչելով զինքը կատաղի , յի-
 մար , ամբարիշտ , չարախօս , փառասէր , ու ունայ-
 նասէր : Այլ ըսաւ ուր որ քեզի հետևած է , եթէ
 շուտմը թող չիտար ատ չարափառական կարծիքը ,
 դիտնա որ ծանր ծանր պատիժներ կրկրէ : Բայց
 աս դառնութեան մէջը քիչմը անուշութիւն խառ-
 նեց հրաւիրելով զինքը որ իրեն գայ . որովհետև

ըսաւ շատ կրբադձամ քեզի հետ խօսիլ ու ճշմարիտ վարդապետութիւնը քեզի ցըցընել :

Ըս սպառնալիքը որ ըրաւ Աոստանդիանոս Երիոսին հետևողներուն , այնչափ զրգուեց զանոնք , ինչվան սկսան իրեն արձանները նախատել բարկութեամբ ու ծանակել (մասխարայ ընել) : Թէպէտ Աոստանդիանոսին իշխանները ու մեծամեծները կը յորդորէին զինքը որ վրէժինդրութիւն ընէ անոնց դէմ . բայց Աոստանդիանոս չըլլայ թէ նոր խռովութիւնմը դուրս ելլայ , կը լռուէր ու չիլըսելու կամ չիտեսնալու կը զարնէր : Այլ եթէ շատ որ զինքը կրբունադատէին իշխանները , կը դառնար պատասխան կուտար անոնց թէ , թէպէտ իմ արձաններս կը խոցեն ու կը նախատեն կոր , բայց ես զիս չեմ տեսնարկոր վիրաւորեալ , Ըսոր վրայ զարմացան մնացին իշխանները ու բերաննին խօսք չիմընաց մէկմընալ զԱոստանդիանոս յորդորելու :

Այլաւ Երիոս Աոստանդիանոսին 'ի Աիկովիդայ ու երկան երկան իրարու հետ խօսելէն ետքը , երբոր օգուտմը չեղաւ , այլ աւելի ևս հերետիկոսներուն կողմը հաստատեցաւ , մըտմըտոց Աոստանդիանոս , որ ասոր վրայ ընդհանուր ժողովմը ըլլայ՝ որպէս զի աղէկմը քննութիւն ընելով իմացվի թէ արդեօք Երիոսին վարդապետութիւնը սուտ է թէ ճշմարիտ : Արկարծըվի թէ աս բանս Աոստանդիանոս իր գլխէն չիհանեց , այլ Ովսիոս

եպիսկոպոսը սրբազան պապին կողմանէ խորհուրդ տրվաւ Աոստանդիանոսին, որ աս բանս ընէ: Արպիսի և իցէ. Աոստանդիանոս Աստուծոյ զօրութեանը ապաւինեցաւ, ու հաւանութեամբ սրբազան պապին սրբոյն Սեղբեստրոսի, որ ան ատեն եկեղեցւոյ կառավարութեան ղեկը (տիւմէնը) ձեռքը առած՝ իր հոգևորական նաւը չար ալիքներէն անխոց պահելու կըզգուշանար. կանչեց աշխրբիս ամմէն դիաց բանաւոր ոչխարներուն հովիւները. այսինքն եպիսկոպոսները, որ գան ժողովին ՚ի Աիկիայ, ու մայիս ամսոյն մէջը հոն գրտնըվին 325ին: Արաւ եպիսկոպոսներուն խիստ մեծ ծանրութիւն պիտի ըլլար անանկ շուտով հեռու տեղերէն գալ, եթէ Աոստանդիանոս իմաստութեամբ ու խոհեմութեամբ հոգալու չըլլար անոնց ճամբուն ամմէն պետք եղած բաները: Աս աշխատանքը սիրով յանձն առին ամմէն եպիսկոպոսները՝ ու շուտմբ ասդիէն անդիէն ճամբայ ընկան որ ատենին Աիկիայ գտնըվին: Աուրբ Սեղբեստրոսը Հռովմայու հայրապետը ծերութեան պատճառաւ ճամբուն տառապանաց չիկրնալով համբերել՝ իր կողմանէ հրեշտակներ խրկեց Ավսիոս հայրապետը, ու Աիկտոր և Աինկենտիոս երէցները, որպէս զի իրեն տեղը առաջին աթոռը առնեն ժողովին մէջ, ու ժողովոյն վճռոյն ստորագրեն: Արբոր եպիսկոպոսները եկան հասան ՚ի Աիկիայ 318 հոգի հաւասար

Թուոյն Արրահամին ընտրեալ զօրացը, որոնցմով
 փառաւոր յաղթութիւն ըրաւ իր թշնամիներուն
 դէմ: Կոստանդիանոս ալ ելաւ՝ Աիկոմիդայէն, ու
 եկաւ ՚ի Աիկիայ յուլիս ամսոյն սկիզբը: Աս ե-
 պիսկոպոսներուն շատերը իրենց մարմնոյն վրայ
 քրիստոնէական հաւատքին դրօշակը կրկրէին.
 իմացիր զանազան վէրքերը, որ հալածանաց ատե-
 նը անողորմ ու դահիճ բռնաւորներէն առած էին:
 Աւ շատերն ալ զանազան շնորհօք և ձրիւք զար-
 դարված էին. ոմանք սքանչելագործութեամբ, ոմանք
 մարգարէութեամբ. և ոմանք սրբակրօն քաղաքա-
 վարութեամբ: Ամէն ազգի եպիսկոպոսներ աս
 ժողովին մէջը կային. որոնց մէջն էր և սուրբն
 Ռատակէս: Աւ թէպէտ Կոստանդիանոս գրած էր
 Տրդատ Թագաւորին իր սիրելի ու մտերիմ բարե-
 կամին, որ զսուրբ Վրիգոր լուսաւորիչ հայրապե-
 տը հայաստանեայց՝ իր հետը առնէ ու շնորհք ընէ
 գայ ՚ի Աիկիայ. բայց Տրդատ Թագաւորը չունե-
 նալով յարմար ժամանակ, մանաւանդ որ վախ ալ
 ունէր մերձակայ թշնամիներէն, չուզեց երթալ, և
 իր աշխարհքը վտանգի մէջ ձգել: Իսկ սուրբ
 Վրիգոր լուսաւորիչը գիտնալով որ՝ եթէ երթայ
 նէ խիստ մեծ պատիւ պիտի ընեն իրեն ժողովոյն
 հայրապետները, թէ խոստովանող ըլլալուն համար,
 և թէ իր արժանաւորութեանը համար, ուստի
 խոնարհութիւնը զինքը արգելեց որ չերթայ. և իր

տեղը խորհրդակցութեամբ Տրգատ Թագաւորին, սուրբ Արիստակէսը խրկեց: Արիանոսներուն կողմանէ կային բոլորը քսան եպիսկոպոս, որոնց մէջը գլխաւոր ու անուանի էին Աւսերբիոս Նիկոմիդացին, ու Աւսերբիոս կեսարացին:

ԳԼ . ԻԳ .

Հայրապետութեան հետ շէճաբանութեան իրենն աւարտին իմաստասէրները, որոնցմէ մէկը իւրապէս ու իրւայ շրիստոնէայ: Աստուծոյ իմաստասէրութեանն: Իւրապէս իւրեն Եղիսիոսն էր:

ԱՄ ան 324 .

Աստուծոյ նայիս զուրս ելան քանիմը արտաքին իմաստասէրներ՝ որոնք կրծիծաղէին Աստուծոյ իմաստասիրութեանը վրայ, ու ծաղը կրնէին քրիստոնէական կրօնը՝ իբրև յիմարութիւն և գեղջկական աւելորդապաշտութիւն: Արհամարհէին քրիստոնէական կրօնին առաջնորդները ու հովիւները իբրև յիմար տգէտ պարզամիտ ու խռիւճ մարդիկներ: Ասոնց մէջէն քանիմը յանդրդնագոյնները համարձակեցան մտան ժողովին մէջը,

մտքերնին դնելով որ երթանք աս յիմար մարդիկ-
 ները որ իմաստուն կըսեպվին կոր քիչմը ծաղը
 ընենք ու մեր իմաստութեամբը որուն անկարելի է որ
 յաղթեն, զանոնք զարմացնենք ու դառնանք: Այ-
 լան գացին ու սկսան իմաստակական ձեռնարկու-
 թիւններով քրիստոնէական կրօնին գլխաւոր հի-
 մանցը վրայ վիճել հայրապետներուն հետ: Բայց
 ոչ եթէ վիճաբանութիւն էր ըրածնին, այլ ծաղը-
 բաբանութիւն. վասն զի ուրիշ բան չէր լրսվէր ա-
 նոնց բերնէն, բայց եթէ նախատինք ու ծաղը:
 Մէկը ասոնցմէ սաստիկ ամբարտաւանութեամբ
 լցված, ուղենալով իր պերճախօսութիւնը ու իր
 իմաստութիւնը ամփնուն աչքը խօթել, սկսաւ փի-
 լիսփայական պատճառներով պէսպէս ձեռնար-
 կութիւններ ընել հայրապետներուն, քաղցրու-
 թիւն բանից ու դառնութիւն իմաստից խառնելով
 անոնց մէջը: Արչափ որ սուրբ հայրապետները
 երկիւղածութեամբ ու խոնարհութեամբ կը ջանային
 ամփն գիաց ասոր հայհոյիչ լեզուն պապանձեցնել,
 անիկայ անչափ պէսպէս եղանակներ ծաղը ընելու
 ու նախատելու կը բանեցնէր: Բայց ողորմածն և
 մարդասէրն Աստուած՝ որուն շնորհքը ամենեկին
 ձրի է, ցըցընելու համար իր ամենակարօղ զօրու-
 թիւնը և տէրութիւնը որ ունի մարդուս սրտին ու
 խորհրդոցը վրայ, շարժեց հայրապետներուն մէջէն
 սուրբ ծերունիմը, որ թէպէտ իմաստութեամբ

երևելիմը չէր, բայց սրբութեամբ խիստ մեծ էր: Ասիկա ոտք ելաւ՝ ու անցաւ յանդուգն իմաստասէրին դէմը. և խնդրեց հայրապետներէն որ քիչմը լուռ կենան ու իրեն մտիկ ընեն: Ախոյցան եպիսկոպոսները՝ գիտնալով թէ ան սուրբ ծերունին չունի իմաստութիւն, չըլլայ թէ անով նախատինք ու վնաս հասնի սուրբ հաւատքին: Ահա մէկէն փռնկեցաւ ծերունին աստուածային հրովմը ու բացաւ բերանը իմաստասիրին դէմ: «Առէ ըսաւ ո՛վ փիլիսոսփայ յանուն Յիսի, և լսէ ու իմացիր ճշմարտութիւնը: Մի է Ա՞ծ արարիչ երկնի և երկրի, ու ամէն երևելի և աներևոյթ արարածներու, որ այս ամենայն բաները իր Ռանին զօրութիւնը և Հոգւոյն սրբոյ փշմամբը ստեղծեց: Աս Ռանը և Ռմաստութիւնը որուն և կըսենք Որդի, մարդուս մտլորութեանը վրայ գթալով, ծնաւ ՚ի Արևսէն, համբերեց մահու զմեզ մահուանէ ազատելու համար, և իր յարութեամբը մեզի կենաց ճամբայ բացաւ. և հիմակ կըսպասենք իրեն երկրորդ գալստեանը ՚ի դատել զաշխարհ: Արհաւտասասոր ո՛վ փիլիսոսփայ:» Աս խօսքէն պապանծեցաւ մնաց փիլիսոսփան ու ըսաւ կըհաւտամ ինչ որ ըսիր: «Աթէ անանկ է պատասխան տրվա՛ւ ծերունին, ելիր եկուր ինձի հետ եկեղեցին, ու աս հաւատքին նշանը ան վրադ:» Ան ատենը դարձաւ փիլիսոսփան իր քովը եղօղ ընկերներուն, ու

լսաւ : „ Ինձի մտիկ ըրէք դուք որ հոս կեցերէք՝
 „ ու կը պարծենաք կոր ձեր իմաստութեանը վրայ :
 „ Տորչափ որ վիճաբանութիւնը խօսքով կը լլար-
 „ կոր, ուրիշներուն պատճառներուն իմ պատճառ-
 „ ներս դէմ կը դնէի կոր, որովհետեւ արհեստը խօ-
 „ սակցութեան իրարու մօտ էին : Բայց վասն զի
 „ հիմակ աս ծերին բերնէն՝ որուն հետ որ կը խօ-
 „ սէի կոր, գերմարդկային զօրութիւն մը ելաւ, շատ
 „ երկան չի կրցայ դէմ դնել : Բլստի եթէ ձեզմէ
 „ մէկը նոյն զգացմունքը ունեցաւնէ, թող անալ
 „ հաւատա՛ ՚ի Հն Վն, ու աս ծերունւոյն ետեւէն
 „ երթայ, որուն բերնովը հաճեցաւ Լստուած իր
 „ ձայնը մեզի լսեցնել : “ Լս բանս եղաւ ժողովը
 չսկսելէն յառաջ :

Ըրդ հազիւ թէ Կոստանդիանոս հասաւ ՚ի
 Վիկիայ, ահա քանի մը եպիսկոպոսներ ամբաստա-
 նութեան թղթեր տրվին Կոստանդիանոսին գան-
 գատ ընելով իրարմէն : Եթէ ըսելու ըլլանք որ աս
 բանս ընողները էին երկու Եւսեբիոսները՝ կարծեմ
 թէ չենք սխալիր՝ ինչպէս շատերն ալ կը սեն : Վասն
 զի ասոնք ուղելով Կոստանդիանոսին սիրտը շա-
 հիլ, ժողովը չեղած ուղեցին Կոստանդիանոսին
 միտքը դարձնել ու գէշ համարում մը անոր միտ-
 քը խօթել ուղղափառ եպիսկոպոսներուն վրայ :
 Երբոր Կոստանդիանոս այսպէս յի քանի մը թղթեր

առաւ նայիս իրարու ետև սկսան շարունակել . ուս-
տի հրաման տրվաւ որ ամեննալ զատ օրմը բերին ,
որպէս զի անոնց դատը տեսնէ : Այլաւ օրը , առաւ
ամենուն ձեռքէն թղթերը , ու ծրարեց փաթոյթմը
ըրաւ , և կնքեց իր թագաւորական մատանիովը :
Այլաւ կայնեցաւ իր գահին վրայ , թէ ամբաստա-
նողներուն և թէ ամբաստանվողներուն առջևը ,
և ան ծրարը ձեռքը բռնելով ըսաւ անոնց : „ Այս
„ ամենայն բաներուն վրայ , օր պիտիգայ որ դա-
„ տաստան պիտի ըլլայ ճշմարիտ դատաւորէն , այս-
„ ինքն է Աստուծմէ : Աստուծոյ քահանայներն էք
„ դուք , և Աստուծմէ իշխանութիւն առած էք զմեզ
„ դատելու . անոր համար կրնանք մենք ձեր դատաս-
„ տանին տակը ընկնիլ . բայց դուք մարդկային դա-
„ տաստանէն բոլորովին ազատ էք : Ուրեմն Աս-
„ տուած ըլլայ ձեր մէջը դատաւոր , որուն դատաստա-
„ նին միայն պահված է ձեր դատը : Պէտք է ձեզի
„ անարատ քաղաքավարութիւն ունենալ , և աս-
„ տուածային բարութեանը նմանիլ , ու ներօղ ըլ-
„ լալ ինչպէս անիկայ կրներէ : Հապա՞ մոռնանք աս
„ ամբաստանութիւնները՝ իրարու հետ հաշտըվե-
„ լով ճշմարիտ հաշտութեամբ , և ուրիշ բանի միտ
„ չիդնենք , բայց եթէ հաւատոյ բանին , որուն հա-
„ մար որ հոս ժողվըված էք : “ Աս բանս ըսելէն
ետքը անոնց՝ կրակի մէջ ձգեց երէց ան թուղթե-
րուն ծրարը ըսելով : „ Պէտքը չէ յայտնել ժո-

„ղոյրդեան՝ Աստուծոյ ծառայներուն պակասու-
 „թիւնները, վախնալով որ չըլլայ թէ գայթակղին
 „ու առիթ առնեն համարձակ մեղանչելու :“

ԳՎ : ԼԳ .

Հայրապետները իրնսպին գտարելու Արեւոյն իարժեք :
 Աստուծոյ թիւնները զրոյս իրհասնը հայրապետներ-
 ըուն ժողով ըրած արեւնին . ե հրապարտիւս իրհաս-
 րապարար զի արեւոյնն հոյսոս-լեւնը :

ԱՄ ան 325 .

Աս երեւելի ու հռչակաւոր ժողովը եղաւ 325 ին
 Յունիսի 19 հոյակապ արքունի պալատանմը մէջ :
 Աւ եղաւ այսպէս : Անծ ու ընդարձակ գաւթին
 մէջը փառաւոր աթոռմը դրին, աս աթոռին վրայ կե-
 ցած էր Աստուածաշունչը իրրեւ պատգամ Աս-
 տուծոյ . ե եպիսկոպոսները կարգաւ երկու կողմա-
 նէ շարվեցան ամմէնը իր կարգաւ : Ժողովին գը-
 խաւորը եղաւ Ավսիոս եպիսկոպոսը որ սրբազան պա-
 պին կողմանէ եկած էր : Արբոր ամմէնքը իրենց տե-
 ղերնին նստան՝ ահա մէջ տեղ կայնեցաւ Արիոս հե-
 րեաիկոսապետը իր կարծիքը ամմէնուն առջևը ըսե-
 լու : Բացաւ իր հայհոյութեամբ լքված բերանը, ու

ըսաւ թէ որդին բնութեամբ ոչ է Մ^ծ, այլ ոչնչէ
 ստեղծուած է՝ որ կրնայ թէ բարեգործութիւն ը-
 նել և թէ մեղանչել: Մ^հ, որ անզգայ որ քարա-
 ցեալ մարդ չիզարհուրիր ու չիսոսկար աս քստմը-
 նելի հայհոյութիւնները լսած ատենը, ինչպէս որ
 սոսկացին մնացին եպիսկոպոսները ու ձեռվընին դէպի
 ականջնին տարին որ չիլսեն ատ չիլսված հայհոյու-
 թիւնը ու չիպղծեն իրենց ականջնին: Արիոս տես-
 նալով որ ատանկ մէկէն քաշվեցան հայրապետնե-
 ըր, ու իր կարծիքը պինտ անտեղի ու յիմարական
 սեպեցին, ամէն իր խելաց ու շիմութիւնը մէկ տեղ
 բերաւ՝ ու ատանկ սկսաւ հայրապետներուն հետ
 խօսիլ: Մ^վ թշուառական Արիոս՝ ճշմարտութիւնը
 չիճանչնալու պարապ տեղ կաշխատիս: Առջի բե-
 րանը հայրապետները ասոր հետ անուշ խօսիլ
 սկսան կարծելով թէ անուշութենով կրնան զինքը
 դարձընել, և երբոր տեսան որ, ինչ անուշութիւն
 ու ինչ քաղցրութիւն, Արիոս գիտցածէն չիդառ-
 նարկոր, պատրաստըվեցան քանիմը անձինքներ դէմ
 առ դէմ Արիոսին հետ վիճելու, ու անոր ըրած
 ձեռնարկութիւնները լուծանելու: Ասոնց մէջը եր-
 ևելին ու հզոր ախոյեանը եղաւ սի^ն Մ^թ անասը՝ որ դեռ
 ան ժամանակ սարկաւագ էր, և զինքը Աղեքսան-
 դըր եպիսկոպոսը հետը բերած էր, գիտնալով անոր
 սքանչելի խելաց ու շիմութիւնը ու իմաստութիւնը:
 Անցաւ ասոր դէմը Արիոս ու ինչ արհեստ որ բա-

նեցուց յաղթը վեցաւ : Այնքա՛ն պերճախօսութեան ձեռք զարկաւ՝ չեղաւ, մէյնք բարակ զանազանութիւններ ընել սկսաւ՝ չեղաւ, մէյնք նենգաւոր խարէութիւններ ընել սկսաւ՝ չեղաւ, և վերջապէս ինչ որ բրաւ՝ չիյաջողեցաւ, պապանծեցաւ լեզուն, անանկ որ՝ ալ իր սուտ կարծիքը պաշտպանելու միջոց չիմնաց : Այլ երբոր բանը հոն հասաւ՝ որ Արիոսին կարծեաց դատապարտութեան վճիռը պիտի տրուէր, հայրապետները խորհուրդ ըրին մէջերնին՝ որ ուշացնեն, ինչպէս որ Արիոստանդիանոս գայ ու ներկայ գտնուի . վասն զի Արիոստանդիանոս ըսած էր թէ օրմը պիտի գայ : Աստի երբոր ուրիշ անգամ մընալ՝ հայրապետները ժողովեցան արքունի պալատին սրահին (սուֆային) մէջը՝ ահա Արիոստանդիանոս սկսաւ ան դիէն ասդին դալ իր քանի մը հաւատացեալ բարեկամներովը : Ատք ելան ամմէնը յարգութեան պատիւ տալով անոր՝ որ ժողովին մէջէն անցած ատենը առաւել պարկեշտութեամբ ու ամօթխածութեամբ զարդարուած էր, քան թէ պատուական ու մեծագին ակամբք (ճէվահիրներով) ու մարգարիտներով, որոնց ճառագայթը՝ թէպէտ տեսնողներուն աչքը կը խրտատրդէին (խամաշտրմիշ կընէին), բայց ան ճառագայթը՝ որ անոր համեստութենէ ու պարկեշտութենէ կը ծագէր կոր, անոնց կը յաղթէր կոր : Անցաւ գնաց իր տեղը, ու ոտքի վրայ կեցաւ ոսկիէ աթոռիմը քով որ իրեն համար

պատրաստված էր սրահին փառաւոր տեղը, բայց
 աթոռին բարձրութիւնը հաւասար չէր եպիսկոպոս-
 ներուն աթոռներուն, և միանգամայն անոնցմէ վար
 էր: Շատ աղաչանք ընելէն ետքը իրեն հայրա-
 պետները, նստաւ ամէնուն յարգութիւն մը ցըցը-
 նելով. անոր ետեէն ամէննալ նստան իրենց ա-
 թոռներնուն վր: Ան ատենը եպիսկոպոսմը՝ որ աջ
 կողմը վերի դին էր նստած, ոտք ելաւ, ու յարգու-
 թեան նշանմը Աոստանդիանոսին տալէն ետքը՝ գո-
 վեստմը սկսաւ տալ Աոստանդիանոսին իրեն բարինա-
 խանձուն համար, որով կուպաշտութիւնը աշխրբէս
 հալածեց, ու ճշմարիտ աստուածապաշտութիւնը ծաղ-
 կեցուց: Այլ այն բարի նախանձն է որ՝ ըսաւ, զքեզ
 շարժեց զմեզ հոս տեղս ժողվելու, որպէս զի հոգ
 տանինք եկեղեցւոյն խաղաղութեանը ու յառաջա-
 դիմութեան վր: Ասոր նման է զմը գովեստներ Աոս-
 տանդիանոսին տալէն ետքը՝ նստաւ: Ամէնքը լուռ
 կեցած կընայէին Աոստանդիանոսին երեսը. իսկ
 Աոստանդիանոսին աչվըները գետնէն վեր չէին ել-
 լեր: Ասանկ քիչմը ատեն անցընելէն ետքը՝ վերցուց
 Աոստանդիանոս աչվըները գետնէն, ու անուշու-
 թենովմը նայեցաւ ամէնուն երեսը ու ամէնը աչ-
 քէ անցուց, և ինքը զինքը համեստութեամբ քիչ-
 մը ժողվըտելէն ետքը՝ սկսաւ խօսիլ այսպէս: «Ահա
 » բաղձանքս կատարեցաւ: Ամէն բարիքներուն մէջ՝
 » որոնցմով երկնի և երկրի թագաւորը զիս զարդա-

,,րեց, մէկն ալ ասիկայ էր, որ կրփափաքէի տես-
 ,,նել զձեզ ժողովեալ 'ի մի շունչ և 'ի մի հոգի :
 ,,Աւրախ եմ աս երջանկութեանս վրայ, գոհու-
 ,,թիւն բարձրելոյն : Արօղ չըլլայ թշնամին խա-
 ,,ղաղութեան՝ խոռովել աս մեր խաղաղութիւնը :
 ,,Քրիստոսի փրկչին օգնականութեամբը՝ յաղթե-
 ,,ցինք ամբարիշտ բռնաւորին : Արդ՝ ջերմ պաղա-
 ,,տինք Աստուծոյ որ ոգին չարութեան մէյմալ չի-
 ,,համարձակի նենգութեամբ և արուեստի՛ւ յարձա-
 ,,կիլ մեր կրօնին վրայ : Աս այսպէս կըմտածեմ
 ,,միշտ իմ սրտիս մէջ՝ թէ ներսէն եղած տարա-
 ,,ձայնութիւնը եկեղեցւոյն Աստուծոյ՝ իմ աչքիս
 ,,առջևը աւելի վտանգաւոր են, քան թէ ուրիշ
 ,,ամմէն պատերազմները : Աս իմ թշնամիներուս
 ,,յաղթելէն ետև, կրկարծէի թէ ուրիշ բան չիմնար
 ,,ինձի, բայց եթէ գովել ու փառաբանել զտուօղն
 ,,յաղթութեան, և զձեզ ուրախութեանս ընկեր ը-
 ,,նել : Իայց ձեր մէջը եղած տարաձայնութե՛ն բօթ
 ,,լուրը՝ ընկղմեց զիս դառն տրտմութե՛ն մէջ : Աս
 ,,չարեացս ճարը տեսնելու համար՝ որ քան զամմէն
 ,,չարիս չարագոյն է, ժողովեցի զձեզ առանց ուշացը-
 ,,նելու : Ալ հիմակ ուրախութիս՝ որ կուտայ ինձի ձեր
 ,,ներկայութի՛ր կատարեալ չըլլար, բայց եթէ՛ երբոր
 ,,դուք միաբան կըլլաք : Ո՛վ դուք պաշտօնեայք Աս-
 ,,տուծոյն խաղաղութեան, այն ոգին աստուածային
 ,,սիրոյ, որ ուրիշներուն սրտին մէջը պիտի արծար-

,,ծէք, ցըցուցէք ձեր մէջը: Խլեցէք ու հանեցէք
 ,,ամենայն սերմը տարաձայնութեան, ու այսօրվան
 ,,օրս անխռով խաղաղութիւն մը հաստատեցէք:
 ,,Ըսիկայ հաճոյական ընծայմը ըլլայ Ըստուծոյ՝ որուն
 ,,կրճառայէք, և ինձի յոյժ պատուական՝ որ ձեզի
 ,,հետ մէկ տեղ կրճառայէ անոր: ,, Ըսանկ խօսե-
 ցաւ Աոստանդիանոս յորդորելով հայրապետները՝
 որ տարաձայնութիւնը իրենց մէջէն հալածեն,
 և ասով չիմոռցաւ անոնց դատաւոր հաւատոյ ու
 յարգելի վարդպետ ըլլալին, այլ մանաւանդ հաս-
 տատեց՝ ինչպէս իրեն ըրած գործքէն կերևայ: Ըս
 խօսքը ըսելէն ետքը՝ հրաման տրվաւ որ երկու կողմն
 ալ ինչ պատճառ ունի նէ՝ թող ըսէ, և ինքնաւ
 բերանը գոցեց, և իբրև աչկերտ մտիկ ընել սկսաւ:
 Արբոր ըսեց Աոստանդիանոս Ըրիոսին հայհոյութիւն-
 ները, ու ՚բ Ըթանասին անոր դէմ ըրած ձեռնար-
 կութիւնները, զարմացաւ սուրբ Ըթանասին իմաս-
 տութեանը վրայ, ու զարհուրեցաւ Ըրիոսին ըսած
 հայհոյութիւններէն: Աւ այսպէս Աոստանդիանոսին
 առջևը Ըրիոսին կարծիքը դատապարտվեցաւ և
 Քրիստոսի ճշմարիտ Ըստուածութիւնը հաստատ-
 վեցաւ: Աւսերիոս նիկոմիդացին ուղենալով իր
 բարեկամը դատապարտութենէ ազատել, դիմեց
 Աոստանդիանոսին՝ որ իրեն օգնութիւն հասնի, ու
 խալըսէ զինքը ու իր բարեկամը հայրապետներուն
 ձեռքէն: Աոստանդիանոս իսկոյն վռնտեց զինքը

առջևէն, ու ականջ չի գրաւ ըսած խօսքերուն, և բարկանալով ըսաւ իրեն՝ Թէ որ չէք ստորագրեր ժողովոյն տրված ուղիղ հաւատոյ դաւանութեան, գիտնա՞ք՝ որ աքսոր կը խրկեմ զձեզ : Աւսերիոս սաստիկ վախցաւ, ու ականայ ինքը և մէկ քանի ուրիշ արիսեաններ ստորագրեցին : Բայց Արիոս, ու Սեկունդոս և Թէոփլա եպիսկոպոսները, ու քանիմը գղերներ յամառեցան, ու չստորագրեցին, և անոր համար քշվեցան ՚ի Վիրիկիա : Աոստանդիանոս ապսպրեց որ Արիոսին շարադրած գրքերը ամմէննալ կրակը նետվին, և որուն քովը որ գաղտուկ պահված կրգտնըվի՝ ըսաւ, գիտնայ որ մահուամբ կը պատուհասվի :

Արբոր ժողովը լըմնցաւ Աոստանդիանոս Թուղթմը գրեց Աղեքսանդրիոյ եկեղեցւոյն, որուն մէջը նախ գոհութիւն կը մատուցանէր Աստուծոյ, որ ճշմարտութե՛ն լուսովը հալածեց մոլորութեան խաւարը, և ետքը՝ իբրև ականատես վկայ կը վկայէր հայրապետներուն ըրած ճիշդ քննութեան, ու Արիոսին ըրած զարհուրելի հայհոյութեանը, և կը յորդորէր զանոնք՝ որ միամտութեամբ խաբվելով Արիոսէն՝ իրեն հետեւած էին, որպէս զի դառնան ու մօր գթած եկեղեցւոյն գիրկը վազեն : Այսպէս էգմը խօսելէն ետքը՝ իր նամակը աս խօսքով կը վերջացնէ : “ Ա՛ն վճիռը՝ որ երեք հարիւր եպիսկոպոսները տըվին, այնպէս պէտք է սեպել, որպէս Թէ

„ Ըստուծոյ բերնէն ելած է , որովհետեւ հոգին սուրբ
 „ էր՝ որ կըլուսաւորէր զանոնք , ու անոնցմով կը-
 „ խօսէր : Փութով և եռանդեամբ ճշմարտութեան
 „ ճամբան մտէք , որպէս զի երբոր հոն կըհասնիմ ,
 „ ձեզի հետ մէկ տեղ կարօղ ըլլամ գոհութիւն մա-
 „ տուցանել անոր՝ որ կըճանչնայ զխորս սրտի “ :
 Ըսկից ՚ի զատ ուրիշ նամակ մի ալ խրկեց ամմէն
 եկեղեցիներուն , որպէս զի իրարու հետ միաբանու-
 թիւն ընեն , ու ամենասուրբ զատիկը մէկ տեղ
 բռնեն : „ Որովհետեւ կըսէր չիվայլէր՝ որ այսպիսի
 „ սուրբ տօնիմը վրայ շիութութիւն ելայ քանիմը
 „ տարածայնութիւններու համար : Ընացէք եպիս-
 „ կոպոսներուն վճռոյն , որ ուրիշներուն սխալմունք-
 „ ներէն հեռու է ամենեին : Արյորդորեմ զձեզ աս
 „ աստուածային կարգադրութիւնը՝ որ երկնաւոր
 „ շնորհք մընէ՝ ամենայն յօժարութեամբ ընդու-
 „ նելու , առանց տարակուսելու թէ՛ ինչ որ եպիս-
 „ կոպոսները ժողովի մէջ որոշեցին՝ Ըստուծոյ կա-
 „ մօքը ըրին : Աւստի երբոր զատկին ծանօթութիւնը
 „ ձեզի կըհասնի , ընդունեցէք ինչ կարգ որ դըր-
 „ ված է աս ամենասուրբ օրը տօնախմբելու հա-
 „ մար , որպէս զի երբոր զձեզ տեսնալու ըլլամ ,
 „ ինչպէս որ շատոնց կըբաղձամ , կարօղ ըլլամ
 „ ձեր քովը նոյն տօնախմբութիւնը նոյն օրվան մէջ
 „ ընել , ու ձեզի հետ ուրախանալ , տեսնալով՝ որ
 „ աստուածային ամենակարողութիւնը մեր գործակ-

„ցումթեամբը յաղթեց սատանային անգթութեանը :
 „Փոյթ տարէք՝ որ ձեր հաւատքը ու միաբանու-
 „թիւնը ծաղկեցնէք, ու բոլոր աշխրբին յայտնի
 „ընէք :

Դողովը () գոստոսին 25 լմննալէն ետքը, հրաւիրեց Աոստանդիանոս ամմէն եպիսկոպոսները իրեն արքունի պալատը, ու ընդարձակ շքեղ ու փառաւոր սրահիմը մէջ իրենց կոչունք (զիաֆէթմը) ըրաւ : Արեք սեղան դնել տրված էր իրարմէ զատ, իրեքին վրան ալ անուշահամ կերակուրներով զարդարված : Արահին երկու կողմը զինուորներ շարված կայնած էին կարգաւ ամմէնուն սուրը իր ձեռքը : Աոստանդիանոս իրեն մեծ ուրախութիւն կըսեպէր պագնել ան սուրը վէրքերը՝ որոնց նշանները շատ եպիսկոպոսներ իրենց մարմնոյն վրայ կըկրէին : Լմմէնքը իրենց կարգաւ նստեցան ուսուլու, և Աոստանդիանոս ալ անոնց հետ մէկ տեղ : Արբոր ելան սեղանէն ամմէն մէկուն պարգևներ ու ընծայներ տրվաւ Աոստանդիանոս, և միանգամայն յանձնարարութեան թուղթ տրվաւ ցըցընելու իրենց քաղքըներուն քաղաքապետին, որուն մէջը կըպատուիրէր որ՝ ամմէն տարի էզմը ցորեն եկեղեցականներուն ու աղքատներուն տըրվի :

Արբոր ամմէնքը ճամբայ ելլալու եղան՝ դարձնլ Աոստանդիանոս անոնց ամմէն մէկը սիրով բարևեց, և յորդորեց՝ որ սէր ու խաղաղութիւն ունենան իրա-

րու մէջ, քրիստոնէական հաւատքը աճեցնեն, բանաւոր ոչխանները աղէկ արածեն, ու գայլերէն զգոյշ կենան: Աս քաղցր խօսակցութիւնը անոնց ընէլէն ետքը, խնդրեց ամմէնէն՝ որ իրեն համար աղօթք ընեն: Մայց ինչպէս գալու ատեննին, նոյնպէս գացած ատեննին ամմէնուն ճամբուն ծախքը Արստանդիանոս քաջեց:

Հազիւ թէ հայրապետները ոտվընին՝ Աիկիոյ մայրաքաղաքէն դուրս կոխեցին, ահա քանիմը խռովասէր մարդիկներ դուրս երևցան արիոսեան աղանդին ջատագովներ, որոնք սկսան դարձեալ աս չար հերետիկոսութիւնը պաշտպանել, ու իբրև ուղղափառական մէկին մէկալուն քարոզել: Ասի որ լսեցին Աւսեբիոս նիկոմիդացին ու Ռէոկնիտէս՝ խիստ ուրախացան ու յորդորեցին զանոնք թէ՛ մի վախնաք դուք համարձակ քարոզեցէք, մենք ձեզի կռնակ կեցեր ենք: Արստանդիանոս լսածին պէս ասիկայ, Աիկիոյ մէջ եղած եպիսկոպոսներուն՝ որոնք դեռ ճամբայ չէին ելած, պատուէր խրկեց՝ որ նային ու աղէկմը քննեն անոնց սորվեցուցած վարդապետութիւր: Հայրապետները քննեցին, ու պատասխան տրվին Արստանդիանոսին թէ՛ Արիոսին աղանդն է: Արստանդիանոս հարցուց և տեղեկացաւ՝ որ ասոնք աս բանս կրնեն կոր Աւսեբիոսին ու Ռէոկնիտէսին խրատովը, անոր համար բռնեց երկուքնալ իրենց ամթուէն վար իջեցուց, ու քջեց ՚ի Վաղղիա այն

է՛ ֆրանսա : Իմացուց ՚ի “Աիկոմիդա, ուր որ
 Ալեսքիոս իր աթոռը ունէր, և հասկըցուց Գլեր-
 ներուն՝ թէ ինչպէս Ալեսքիոսը աթոռէն վար ըն-
 կած ու արսորված է : Իր թղթին մէջը ցըցուց՝ թէ
 որչափ փառասէր էր Ալեսքիոս՝ որ մինչև կուզէր
 իր պալատին մէջը տէրութիւն ընել : Աիկիանէս բըռ-
 նաւորին պէս ուղղափառ հաւատացեալները ու հայ-
 րապետները կուզէր հալածել, ինչվան ինձի դէմ կը-
 ,, սէր, լրտեսներ (չաշուտներ) կըխրկէր ան խռովուե-
 ,, ատենները, և ուրիշ բան չիմնաց՝ բայց եթէ իմ ան-
 ,, ձինս դէմ սուր առնելը : Ստուգեցի ասիկայ խոս-
 ,, տրվանցնելով իր քահանայները ու սարկաւազ-
 ,, ները : (Թողունք ասիկայ մէկդի. երբոր ան մեծ
 ,, ժողովը կըլլար կոր, քանի անամօթութեամբ, ու
 ,, քանի յամառութեամբ պաշտպանեց իր մօլորու-
 ,, թիւնը, ինչ հնարքներ չիրանեցուց, որպէս զի
 ,, իմ պաշտպանութիւնս գտնէ, վախնալով՝ որ եթէ
 ,, հայրապետները իր բռնած ճամբան չիհաւնելու ու
 ,, դատապարտելու ըլլան, կըկորսընցնէ իր պատիւը :
 ,, Խարեց զիս ան խորամանկ մարդը, և ուզածին
 ,, պէս ամմէն բանը կարգաւորեց : “ Ահա անային
 արդար դատաստանը, ահա Աստուծոյ բարկութեան
 սուրը, որ միշտ իր ողորմածութեան պատենին մէջ
 չիկեննար. կըկենայ այնչափ՝ որչափ որ պէտք է մե-
 ղաւորիմը ապաշխարութե՛ն ճամբան մտնելու : Արբ-
 որ չզգաստանար, իր ուրիշին համար ըրած չա-

բիբը իր գլուխը կրգարցնէ և այսպէս իւր ձեռքովը իր գլուխը քարկոծել կուտայ, եթէ աս աշխարհիս մէջ չէնէ, անտարակոյս 'ի հանդերձեալն՝ որ չարագոյն է, բայց աս աշխարհքս ալ հանդերձեալ պատժոյն համը քիչմը առնել կուտայ, ինչպէս որ ըրաւ Աւսերիոսին:

ԳԼ: ԼԵ .

Աստուծոյ խնայողն՝ յառաջ եր ինչիւր, ու Արեւոյն
եր որդին հոսցնել կուտայ:

ԱՄ ԻՆՆ 326 .

Աս տարւոյն մնացած ատենը Աստանդիանոս ելաւ զանազան տեղեր պըտըտեցաւ, ու պէսպէս օրէնքներ և հրովարտակներ դուրս հանեց, որոնց մէկուն մէջը ըսաւ իր ժողովրդեանը թէ՛ ասկից ետքը սիրով կըլսէ ամմէնսն՝ ո՞վ որ դանգատմը կամ ամբաստանութիւնմը ունի իր պաշտօնատարներուն մէկուն վրայ, խոստանալով՝ որ զանոնք կըպատուհասէ ու իմացընողներուն պարգև կուտայ: Ասով Աստանդիանոս կըկարծէր թէ՛ անիրաւութիւններուն դէմ դուռ կըգոցէ, երբոր իր պալատին դուռը

ամմէնուն կրբանայ : Բայց՝ եթէ չըսենք նէ՝ որներ-
 Հակը եղաւ , գէթ կրնանք ըսել՝ որ իր յոյսը զինքը
 խաբեց , ինչու որ արքունի պաշտօնատարները գիտ-
 նալով որ Արստանդիանոսին կշիռը (Թէրազին) միշտ
 գթուծիւնը ծանր կըկշռէ , անոր համար պէսպէս
 եղանակներով անոր բարկացած սիրտը կըհանդար-
 տեցընէին ու ՚ի գթուծիւն կըշարժէին : Աւ եթէ
 իրենց ամմէն ճարերնին կըհատնէր Արստանդիանոսին
 բարկուծիւր ցածցընելու , իսկոյն աչվըներնէն քանի-
 մը արցունք կըթափէին , և անով Արստանդիանոսին
 բարկուծիւնը հովիմը պէս անոնց գլխերնուն վըայէն
 կանցնէր՝ առանց անոնց միասմը ընելու : () Ըմը ա-
 սոր վրայ երբոր կըմտածէր Արստանդիանոս , իրեն
 իշխաններուն մէկը քովը եկաւ խորածայ ընելու ,
 և աս իշխանը խիստ ազահ ըլլալով՝ ժողովուրդը
 քիչմը կրնեղէր : Այդմը խօսակցուծիւններ մէջեր-
 նին անցնելէն ետքը՝ Արստանդիանոս անոր թուէն
 բռնեց , ու ըսաւ կերպովմը : « Այ ինչ . պէտքը
 ,, չէ՞ մի՛ որ մենք մեր ցանկուծիւնը զըսպենք : « Աւ
 շուտմը ձեռքի նիզակին ծայրովը գետնի վրայ մար-
 դաչափի գիծմը քաշեց ըսելով : « Բիզէ եթէ կըր-
 ,, նաս ամմէն մարդիկներուն հարստուծիւնը . շահէ
 ,, բոլոր աշխարհքը , ուրիշ բան պիտի չիմնայ քեզի ,
 ,, եթէ ոչ այսչափ տեղ՝ որչափ որ քաշեցի : « Ար-
 ծես թէ աս խօսքը մարգարէաբար Արստանդիանոս
 ըսաւ , վն զի Արստանդիանոս մեռնելէն ետքը , ան

վերի ըսած իշխանը սպաննեցին, ու իր դին՝ շան սատակի պէս առանց թաղելու մէկդի ձգեցին:

Հին ատենները գէշ սովորութիւններ կար գրեթէ խաւորաբար Հռովմ քաղաքը՝ որ երկու հոգի սուրերնին բացած իրարու դէմ կելլէին տեսարանի մէջ մարդիկներուն առջևը, ու կըսէին կուռիլ: Ան կառնէր պատիւը ու քաջ կըսէպէր՝ ո՞վ որ իր ընկերը կրնար զարնել մեռցնել: Տեսնողները ամմէնքը անոր ծափ կըզարնէին առանց հոգալու թէ արդեօք միւսը՝ որ գետինը փռված արեան մէջ թաթխըվեր է մեռալ մի, կամ ինչ ցաւ կըքաշէ կոր: Արգելեց Աոստանդիանոս՝ որ աս խաղը ալ չի խաղացվի, որ ոչ եթէ խաղ էր, այլ գաղանային անգրթութիւն, որուն լսելը մարդու սիրտ ունեցողներուն սոսկում կըբերէ, թող թէ տեսնալը:

Աս ատեններս Աոստանդիանոս ելաւ Հռովմ գնաց, որպէս զի հոն տեղս իր թագաւորութեան քսաներորդ տարեդարձը ընէ փառաւոր հանդիսութեամբ: Ի այց ժողովրդեան ան օրերը ունեցած ուրախութիւնը շուտով փոխվեցաւ ՚ի տրտմութիւն, և այնպիսի տրտմութիւն՝ որ բոլոր Հռովմ քաղքին մէջ մարդ չի թողուց՝ որ չիտրտմեցընէ: Աս տրտմութեան պատճառը եղաւ Վաւստա թագուհին՝ Աոստանդիանոսին կնիկը, որ թշնամութիւն ուղննալով ընել Արիսպոսին Աոստանդիանոսին որդւոյն, ելաւ ամբաստանեց Աոստանդիանոսին՝ թէ

Արիսպոս բռնադատեց զինքը և պղծեց իր անկողինը : Աս որ լսեց Արստանդիանոս աչքին բանմը չերևցաւ , ոչ դատաստան ըրաւ , և ոչ քննութիւն , թէ արդեօք չար կնկան ըսածը ստոյգ է՝ թէ չէ . այլ իրեն երևցած յանցանքին մեծութիւնը գահավիժեց զինքը՝ որ շուտմը մահապարտութեւն վճիռ հանէ իր որդւոյն դէմ , և այնպիսի որդւոյն դէմ՝ որ ամմէն բնական ձիրքերով զարդարված ըլլալէն ետքը՝ պատերազմական քաջութիւնն ալ վրայ եւելցուցած էր : Արդ՝ այսպիսի դեռ 30 տարվան ծաղկահասակ ու կտրիճ իշխանմը՝ որ իշխաններուն մէջ քալած ատենը տեսնողներուն աչքը իրեն հետ կրկապէր , չիկրցաւ Արստանդիանոսին հայրական գութը շարժել իր վրայ , և այսպէս խեղճութիւն իր վզին արիւնը թափեց Արստանդիանոսին անխոհեմ ու անխորհուրդ հրամանաւր : Արդեօք կարգացողը կը յուսար Արստանդիանոսէն այսպիսի անգթութիւնմը , կամ աղէկմը ըսենք , արդեօք ան սիրտը՝ որ դէպ 'ի ուրիշներուն բամպակի պէս կրկակրղնար , կը յուսացվէր՝ որ այսչափ քարանայ դէպ 'ի իր որդին՝ որ և ոչ յանցանք ունէր : Ահա այսչափ գեշ բան է բարկութիւնը , որ մարդը մարդկութենէ դուրս կը հանէ՝ ու գազան կընէ , թէ ոչ կերպարանաւ գէթ գործքով : Եւ այց թողունք մենք Արիսպոսին վրայ սգալը ու գանք տեսնանք , թէ Արստանդիանոսին սիրտը ինչ վիճակի մէջ է : Ահա Արստան

դիանոս դուն քեզի ըրիր՝ ինչ որ ըրիր, իմացար
 դուն ալ՝ թէ ինչ խղճալի ու ողբալի բան ընել
 տրվաւ քեզի բարկութիւնը, բայց իրաւցընէ շատ
 ուշ իմացար: Չիկրնար պատմըվիլ թէ բարեպաշ-
 տուհի Հեղինէին մայրական սիրտը ինչ սաստիկ
 տրտմութեան մէջ թաղվեցաւ՝ երբոր լսեց իր սի-
 րելի թոռան չարաչար մահը, որ զինքը չիկրնալով
 բռնել՝ ելաւ գնաց Աոստանդիանոսին քովը, մէկ
 կողմանէ աչվըներէն գետի պէս արցունքը կը վա-
 զէր՝ մէկալ կողմանէ ալ կուզէր իր որդին յանդի-
 մանել՝ բայց չէր կրնար, վասն զի սրտին հառաչան-
 քը թող չէր իտար: Անոր մտածէ կարգացողը թէ՛
 Աոստանդիանոս տեսնալով թէ իր մօրը ցաւը, և
 թէ բոլոր քաղաքին ցաւը՝ որ Արիսպոսին վրայ սուգ
 առած էր, արդեօք ինչ ցաւերու մէջ թաղվեցաւ:
 Յաւմը ու սաստիկ տրտմութիւնմը տիրեց իր սր-
 տին վր՝ ոչ կրնար ուտել և ոչ կրնար խմել, քառա-
 սուն օր անցաւ վրայէն, և դեռ Աոստանդիանոսին
 աչվըներէն արցունքը չէր ցամքեր, և բերնէն հե-
 ծութիւնը ու հառաչանքը չէր պակսեր: Հաղիւ-
 լալէն քիչմը կը դադրէր, ահա աչքին առջևը կու-
 գային Արիսպոսին գեղեցկութիւնը, կտրծութիւնը,
 ու մարմնոյն զանազան ձիրքերը, մանաւանդ սէգ
 քալուածքը՝ որ ամէնուն աչքին զբօսանք էր,
 կըսկըսէր նորէնոր սիրտը ելլել, ու թագաու-
 րական ծիրանին արցունքով թրչել: Աւերջապէս

Արատանդիանոս չուզենալով աս ցաւը սրտին մէջէն հեռացնել, արժթէ արձանմը իր որդւոյն կանգնել տրվաւ, որուն գլուխը միայն ոսկի էր, և ճակտին վրայ գրված էր այսպէս: “Ըս է իմ որդիս, որ յանիրաւի դատապարտվեց աւ”:

Ըս անօրէնութիւնը ամմէ՛քը Փաւստային չարութեանը տալով՝ կրբարկանային անոր վրայ, ու կրբաղձային՝ որ ատանկ հրամանմընալ իրեն վրան ելէր, որ չար Սնքսիմիանոսին աղջիկը ըլլալով՝ իր հօրմէն իբրև ժառանգութիւն ունեցած էր չարութիւնը, եղեռնութիւնը, ու չըսվելու գէշութիւնները, որ որչափ գէշ էին՝ այնչափ չէին վայլեր իրեն պատւոյն: Ըմմէն ամօթը մէկդի ձգած՝ իր գէշ բաղձանքը յագեցնելու ետևէն էր, որուն համար ալ ամբաստանած էր զԱրիսպոս, վասն զի Արիսպոս զարհուրեցաւ ու չիկատարեց անոր չար կամքը ինչպէս շատերը կըսեն: Ըս Փաւստային բռնած գէշ ճամբան՝ թէպէտ ուրիշներուն յայտնի էր, բայց ծածուկ էր Արատանդիանոսէն: Ըրբունի պալատականներուն մէկը՝ չիկրնալով համբերել անոր ըրած գէշութիւններուն, գնաց Արատանդիանոսին, ու վեր հանեց անոր՝ Փաւստային ունեցած գէշ ընտանութիւնները, և թէ ինչպէս ատ բանի համար խեղճ Արիսպոսին արիւնը մտաւ: Եղտմը հրաման տրվաւ Արատանդիանոս որ բռնեն զՓաւստա ու բաղնիքի մը մէջ դնեն, և այնչափ կրակ տան բաղնիքին՝ ինչ-

վան տաքութենէ մարի ու մեռնի : Աոյննդս մեռցընել տրվաւ զՎիկինիոս որ դեռ տասվերկու տարվան անմեղ տղայ էր . թէ ինչ պատճառաւ չի գիտցրվի : Ըստ Աոստանդիանոսէն եղած արիւնները տեսնալով՝ ամմէնքը ահու գողու մէջ ընկան , վախնալով թէ՛ գուցէ Աոստանդիանոսին ողորմած ու մարդասէր բնութիւնը փոխված ըլլայ : Արպատմըվի թէ՛ Մակլավիոս ոստիկանը , ու ուրիշ արքունի պալատական մը՝ որ Աոստանդիանոսին շատ սիրելի էր , ուղենալով կարճ խօսքովմը արքունի պալատին ողբալի վիճակը Աոստանդիանոսին իմացնել , գրեցին աս խօսքս ու կպուցին արքունի պալատին դռանը վրայ թէ՛ ,, Սատուռնոսին ոսկիէ դարերուն ո՞վ կը բաղձայ , հիւսնմակվան դարերը մարգրտէ են , բայց Աերոնի դարեր : Ըստ որում՝ Աերոն խիստ արիւն խմօղ ու չարագործ կայսր էր և ուղմայեցւոց :

Ստոյգ Աոստանդիանոսին աս ըրածներէն իրեն թագաւորութեան պատիւը իմաստուններուն առջևը շատ քիչցաւ , և ժողովուրդը՝ որ ծափ զարնելով իրեն գրեթէ զինքը կը պաշտէին կոր , սկսան պաղիլ իրեն վրայ ու իրմէն քաշվիլ : Աոստանդիանոս այս ամենայն բաները տեսնելով՝ իմացաւ որ շատ անխորհուրդ գործքեր ըրաւ , և գրեթէ և՛ ընդամենը քաղաքը իրեն մէկ ցաւոց ու սգոյ տունմը երևցաւ , որովհետև աս բաներս հոն եղան , ուստի մըտմտաց որ ելլայ երթայ անկից , ու մէյմընալ հոն

չի՛հանդիպի : Մանաւանդ որ Հռովմայեցիք իրեն արժանի պատիւ չընելէն ետքը , սկսան իրեն վրայ դառն ու նախատական բաներ գրել : Բայց Աոստանդիանոս որ մոռցած էր իր առաքինութիւնը Արիսպոսին , Փաւստային ու Վիկինիոսին վրայ , դարձեալ միտքը եկաւ հիմակ , ու ամենեին վրէժխնդրութիւնմը չըրաւ :

(Օրմը երբոր Աոստանդիանոս իր եղբարցը հետ ժուռ կուգար , ասոնց դէմը ելան էզմը ռամիկ ժողովուրդ , ու սկսան նախատել զինքը : Հիմակ ինչ պէտք է որ ասոնց ընեմ ես , հարցուց Աոստանդիանոս իր եղբարցը : Մէկը պատասխան տրվաւ , թէ աղէկ կընես , եթէ անոնց մարմինը կտոր կտոր ընել կուտաս : Մէկալը խորհուրդ արվաւ բողոքովին տարբեր . իբրև թագաւոր մեծանձն ու մեծահոգի՝ ըսաւ , աչք գոցէ , ու խուլ եղիր անոնց ըսածներուն : Ողորմածութեան խորհուրդը հաճելի եղաւ ողորմած Աոստանդիանոսին այնչափ՝ մինչև անիկայ ետքը մեծ պատիւներու հասցուց , ու մեկալին պաղ աչքով սկսաւ նայիլ , ու երեսէ ձգել : Ըհա Աոստանդիանոս աս դիպուածիս մէջ դարձեալ իրողորմած սրտին բերմունքը ցըցուց , և իր կորսընցուցած պատիւը դարձեալ ստացաւ :

ԳԼ ԼՕ:

Բարեպաշտութիւն շէշիկէ կըգրնէ սուրբ Գերեզմանը,
 ու Վրիստոսին սուրբ Խաչը:

ԱՄ ան 327:

Վոստանդիանոս Սեպտեմբեր ամսոյն մէջ շուով
 մայէն ելաւ, ու գնաց 'ի Վիւրիկիա, և 'ի Թրակիա,
 և հոն տարիի մը չափ բնակեցաւ: Բայց ինչպէս
 եղջերու մը՝ որ որսորդէն զարնըվելով ուր որ կը-
 վազէ, հետը կըտանի նետը իր ցաւոց պատճա-
 ոը, այսպէս Վոստանդիանոս ալ ամմէն տեղ իր
 ցաւը մէկ տեղ կըկրէր: Իսկ սրբուհին շե-
 ղինէ, որ ան ատենը 79 տարւան էր՝ ուղե-
 լով իր սգաւոր սիրտը քիչմը մխիթարել՝ բաղձաց
 Լըրուսաղէմ երթալ, որպէս զի Վրիստոսին չար-
 չարանաց տեղերը տեսնալով իր ցաւը քիչմը մեղ-
 մանայ: Լըրբոր հասաւ Լըրուսաղէմ, շուտմը ելաւ
 Գողգոթայ լեռան վրայ, ու երբոր տեսաւ՝ որ ան յար-
 գելի ու սուրբ տեղը պզճըվեր է, զարմացաւ մնաց-
 վասն զի քրիստոնեայնեքը՝ որպէս զի չիգան ան
 սուրբ լեռան յարգութիւն՝ ու պատիւ ընելու,
 գարշելի Վիրողիտէ չաստուածուհւոյն տաճարմը
 շինվեր էր, ու աս պատճառաւ մոռցրված

գացած էր, և ոչ ոք գիտէր թէ՛ որն է Վրիստոսի Վրկչին սուրբ գերեզմանը: Արդ՝ քրիստոսասէրն շեղինէ ուղենալով ան սուրբ տեղերուն պատիւը պահել, փլցընել տրվաւ ան պիղծ տաճարը, ու վերցընել տրվաւ կուռքերը: Ատքը իմաստունն ու գրագէտ հրէիմը ձեռքով գտնելովցաւ Վրիստոսին գերեզմանին տեղը: Վորեցին գետինը հոն տեղս, ու երեք խաչ գտան, և անոնց հետ մէկ տեղ գտնելցաւ նաև բւեռները՝ ու անտախտակը՝ որուն վրայ որ Պիղատոս գրեց. Տիտուս Ազովրեցի թագաւոր շրէից: Բայց որովհետև աս տախտակը բաժնւրվեր էր խաչին վրայէն, անոր համար չէր գիտցըվեր, թէ որն է Վրիստոսին խաչը: Եւ շուտմը սուրբ Սակարիոս Արուսաղէմայ Ապիսկոպոսը, որ սրբուհի շեղինէին հետ մէկ տեղ գացած էր, առաւ խաչին մէկը ու դրաւ հիւանդ կնկանմը վրայ, երբոր անկից օգուտմը չեղաւ. բերաւ ուրիշմը դրաւ, երբոր անալ չօգտեց երրորդը ձեռքը առաւ, և հազիւ թէ քիչմը մօտիկցուց, ահա շուտմը բոլորովին ողջացաւ ու բրժչկըվեցաւ հիւանդ կնիկը: Ան ատենը ամմէննալ չօքեցան երկրպագութիւն ըրին սուրբ խաչին, և սրբուհի շեղինէին հրամանաւը շուտմը արծրթէ սնտուկմը բերին ու դրին մէջը, և սնտուկը յանձնըվեցաւ եպիսկոպոսին՝ որ աղէկ զգուշանայ ու յարգութեամբ պահէ: Տարին մէկ անգամ աւագ

ուրրաթ օրը աս սուրբ խաչը կրցուցընէին ժողովրդեան մեծ հանդիսութեամբ ու յարգութեամբ: Իսկ առաքինազարդն Հեղինէ մեծկակ կտորմը, բլեռները, ու ան գրուած տախտակը առաւ իր հետը, ու բերաւ տրվաւ Արատանդիանոսին. բայց կտորմը իր քօվը պահեց, որ ետքը իր արձանին մէջ դրվեցաւ, ինչպէս որ յնքը ուզած էր: Իսկ սուրբ բլեռներուն համար շատերը կրսեն՝ թէ Արատանդիանոս իր ձիոյն սանձէն (կէմէն) կախեց, և կամ թէ՛ իր գլխին սաղաւարտին մէջը դրաւ, որպէս զի զինքը պատերազմներու մէջ պաշտպանեն: Արբոր ասի այսպէս եղաւ, հրաման տրվաւ Արատանդիանոս՝ որ փառաւոր ու հոյակապ եկեղեցիմը շինվի, ուր որ սուրբ խաչը գտնուվեցաւ, և անունը դրվի, եկեղեցի յարուխեան, Խաչէ, շարչարանայ և Գեղեղմանի: Աւսերիոս եկեղեցւոյն ձեւը այսպէս կըստորագրէ: « Ընդարձակ ու լայն փակիմը վրայ՝ կըսէ, աս եկեղեցւոյն ճակատը աղւոր ու սիրուն զարդերով կերկրննար դէպ ՚ի վեր: Աս ճակատին դռնէն ներս մտնելից առնը կըբացվէր ընդարձակ փակիմը, որուն աջ ու ձախ դին կամարաշէն գաւիթներ կային: Արևմտքին կողմանէ աս տաճարը երեք դուռ ունէր, և եկեղեցւոյն շէնքն ալ իրեք բաժնուված էր: Սէջի կտորը շատ ընդարձակ ու բարձր էր, ներսէն սիրուն ու պայծառ մէրմէռ քարերով հագցուցած,

«իսկ դրսի կողմանէ ատանկ քարերը իրարու հագ-
 «ցուցած ու փայլեցուցած էին՝ որ մարմնուի կընըմա-
 «նէին : Առաստաղը (Թավանը) մէկդմէկու յար-
 «մարցուցած տախտակամած (տախտկէ խափլամա),
 «քանդակագործ (խալէմ իշի) ու խիստ փայլուն՝
 «ոսկեղօծ անանկ գեղեցիկ էր՝ որ կարծես թէ լուսե-
 «ղէն ովկիանոս մը եկեղեցւոյն վրայ տարածվեր է :
 «Իսկ դրսի դիէն արճըճով (ղուրշինով) պատած էր :
 «Այնպէս զէպ ՚ի գագաթը կըլոր գմբէթմը կար
 «տասվերկու սիւներու վրայ կեցած, որոնց թիւը
 «կընշանակէին առաքեալներուն թիւը, և սիւնե-
 «րուն գլուխները ոսկւով զարդարված էր : Այն-
 «ղեցւոյն շրջանակը երկայն կամարակապ գաւիթ-
 «մը կար, որուն երեսը զարդարված էր ոսկւով :
 «Սիւները՝ որ կէսմը գաւթին ու կէսմը եկեղեցւոյն
 «մէջն էին, խիստ բարձր էին. իսկ գաւթին միւս
 «կողման սիւները խիստ փառաւոր էին, որոնց վրայ
 «որ հեծած էր գաւթին կամարը : Աետնի տակն ալ
 «նմանապէս ուրիշ գաւթմը կար հաւասար վերի
 «եղած գաւթին : Այնպէս զանազան անցնելէն ետքը կու-
 «գար ուրիշ գաւթմը կամարակապ քարայտակ
 «(քարէ տէօչէմէ) փայլուն քարերով, և աս փա-
 «կին շրջանակը կային երեք գաւթներ կամարա-
 «կապ ներսէ ներս : Աս գաւթին գլուխը որ բոլոր
 «շէնքին ծայրն էր, սուրբ գերեզմանին մատուոր
 «կար, որ ուզած էր մեծն Աոստանդիանոս ոսկոյ

„ու մարգարիտներուն ճառագայթներովը նմանցը,
 „նեւ ճշմարիտ գերեզմանին փառաւոր լուսաւորու-
 „թեանը, ինչպէս որ լուսաւորեցաւ ան Կուրբ տե-
 „ղին յարութեան ատենը :“

Աս փառաւոր ու հոյակապ եկեղեցւոյն շրջա-
 նակը Աոստանդիանոս նոր քաղաքմը շինել տրվաւ,
 որ և կոչեցաւ Արուսաղէմ : Բայց այսպիսի մեծագին
 եկեղեցւոյն և ոչ շոշորդը կերևայ հիմակ . վասն զի
 վրայէն շատ ժամանակ անցնելով, ու երեսէ ձգած
 ըլլալով, քանի գնաց հինցաւ ու ինքիրէն փլաւ :
 Ասկից 'ի զատ բարեպաշտուհին Հեղինէ ուրիշ
 երկու եկեղեցի ալ շինել տրվաւ, մէյմը ձիթենեաց
 լեռան վրայ, ուսկից որ Վրիստոս Տէրն մեր փա-
 ռաւոր համբարձաւ յերկինս, և մէյմալ 'ի Բէթ-
 ղէհէմ քաղաքը, ուր որ աղքատի պէս ծնաւ ան-
 բաններուն (հայվաններուն) մտին (ախոռին) մէջը :
 Ատ բարեպաշտական գործքեր, ու աղքատաց ողոր-
 մութիւններ ընելէն ետքը՝ վախճանեցաւ բարեպաշտ
 ու քրիստոսասէր Հեղինէն տիկնաց տիկինը 80
 տարվան լի առաքինութեամբ ու բարի գործքերով,
 և զասեցաւ սրբոց կարգը, որուն եկեղեցին տարիէ
 տարի կընէ իր ցանկալի յիշատակը, ու իր բարե-
 խօսութիւնը կրկնորէ : Անոր մարմինը Աոստան-
 դիանոս Հոովմ տանել տրվաւ, ու հոն իրեն փա-
 ռաւոր ու մեծաշէն գերեզման մը շինել տրվաւ :

ԳԼ ԼԼ:

Լչմբ Խոոյ ասճարնէր Իբանդըձն, ու Էվբ Էլէղէ-
ցնէր Իբնէձն: Աբէոյբ Քրիստոնէոյ Իբլայ, ու
Սոստանդիանոսին յեւոյժ Էլէղէցնէր Իբնէ:

Ամբ ան 326 մինչև 331:

Այրապետները երբոր իրենց տեղը հասան, մըտ-
քերնին եկաւ Սոստանդիանոսին իրենց տըված պա-
տուէրը, որ կուոց տաճարները քանդեն, ու քրիստո-
նէից եկեղեցիներ շինեն: Աւ որովհետև ամմէնուն
ծախքը Սոստանդիանոս պիտի քաշեր, անոր համար
իւրաքանչիւր եպիսկոպոս կընայեր՝ որ որչափ կա-
րելի է փառաւոր ու աղւոր ըլլայ շինած եկեղեցին:
Լչմբ զինուորներ ու քանիմը քրիստոնեայ զօրա-
պետներ խրկեց Սոստանդիանոս, ուր որ շատ կուռ-
քերու տաճարներ կային, որպէս զի առանց ժողո-
վուրդը ոտք հանելու ան տաճարները քանդեն:
Ասոնք կերթային կըմտնէին տաճարներուն մէջը,
ու ոսկուով և արծաթով զարդարված կուռքերը ի-
րենց տեղերէն վար կիջեցընէին, և որչափ որ վրանին
զարդ կարնէ, ամմէնը կառնէին ու կըբաշխէին աղ-
քատներուն, և ետքը մնացած փայտին կոճղը (քիւ-
թիւկը) մերկ ժողովուրդեան առջին կընետէին ըսե-

լով թէ՛ աս է ձեր Աստուածը՝ որուն այնչափ ջերմեռանդութիւն կընէք կոր: Հեթանոս ժողովուրդը ամբշնալէն ձայն չէին հաներ, ու քիչ քիչ կը պաղէին իրենց կրօնէն, տեսնալով որ՝ իրենց ամենակարօղ ու ամենազօր կարծած աստուածնին՝ ոչ վրէժխնդրութիւն կընէ կոր, և ոչ բերանմը կըբանայկոր ընողներուն դէմ: Իսկ ան արձանները՝ որ մարմոռէ կամ մետաղէ էին շինած, ու իմաստուն և երևելի վարպետներու փորվածք էին, առին պահեցին, որոնցմով Աոստանդիանոս ետքը զարդարեց իր սիրած Աոստանդինուպօլիս քաղաքը:

Աս բարի նախանձը՝ որ Աոստանդիանոս ցրցուց հեթանոսական աւելորդապաշտութիւնները վերջընելու, ու քրիստոնէութիւնը հաստատելու համար, ոչ միայն քրիստոնեայներուն բարի օրինակ տրվաւ, այլ նաև նոյն իսկ հեթանոսներուն: Արատոն ըսված քաղաքմը ասօր նայելով ինքիրեն իր կուռքերը բռնեց կրակը նետեց, ու քրիստոնեայ եղաւ: Արբոր իմացաւ Աոստանդիանոս թէ ամբողջ քաղաքմը մէկէն քրիստոնեայ է եղեր՝ խիստ ուրախացաւ, և քաղքին անունը դրաւ՝ քաղաք Աոստանդիանոսի: Մէկ կողմանէ կռօց տաճարները կըփրւէ չէին, ու մէկալ կողմանէ քրիստոնէից եկեղեցիներ կըշինվէին: Ամենուն ժամանակը՝ թէ երբ շինվեցան՝ չիգիտցրվեր, բայց ստոյգ է որ Աոստանդիանոս շինել տրված է: Չիկարծէ կարդացօղը թէ Աոս-

տանդիանոս այսչափ շատ եկեղեցիներ շինել տրվաւնէ, զանոնք անզարդ ու անպաճոյճ թող տրված ըլլայ: Արնանք ըսել հիմակվան եկեղեցիներուն վրայ, թէ անոնց բաղդատելով ամենեին զարդ մը չունին, վասն զի խիստ անվայել կըսեպէր Աոստանդիանոս Աստուծոյ տունը անզարդ թողուլ, ու իր տունը զարդարել: Ոսկի արծաթ ու մարգրիտ ամմէն եկեղեցիներուն կըբաշխէր, իսկ եկեղեցականներուն համար ալ երկիրներ տրված էր, որպէս զի անոնցմով ապրին: Ազգիպտոսին տեսակ տեսակ անուշահոտ խունկերը ուրիշ բանի չէին գործածվեր, բայց եթէ եկեղեցիներուն իբրև սրբեալ Աստուծոյ: Չեմ ուզեր երկայն պատմել քանիմը եկեղեցիներուն՝ որոնք որ Աոստանդիանոս շինել տրված էր, հարստութեանը, մեծութեանը ու գեղեցկութեանը վրայ, այսչափ միայն կըզուրցեմ որ, այն եկեղեցիները որ քաղքին մէջն էիննէ՝ ան քաղքընէրուն մարդիկները պարծանքմը ու փառքմը ունեցած կըսեպվէին ուրիշներուն առջևը, և չէր գտնրվեր մարդմը՝ որ անոնց առջևէն անցած ատենը չիկենայ, ու չըզմայլի անոնց դրսի գեղեցկութեանը վրայ, առանց ներսինը տեսնալու: Ասկից կիմացվի՝ թէ այնպիսի եկեղեցիներ շինելը, ու վայելուչ զարդերով զարդարելը, և միանգամայն զանոնք պահելը քանի՞ եղած է Աոստանդիանոսին: Աողունք հիմայ աս նիւթս՝ որ Աոստանդիանոսին առատաձեռնութիւնը

գովելու համար աւելի կրպահանջէր մեզմէ՝ որ վրան
խօսէինք, ու առաջ անցնինք ուրիշ դիպուածմը
պատմելու, որ աս ատեններս եղաւ:

Այլէք ըսված հրէայ մեծ ռապպիմը իր կենա-
ցը մէջ միշտ կըտարակուսէր իր հաւատքին ճշմար-
տութեանը վրայ, և չէր կրնար զինքը համոզել
Թէ՛ Մեսիան եկած չըլլայ: Ասիկայ երբոր մեռնելու
մօտիկցաւ ճամբովմը իմացուց Տիբերիատէս քաղքին
եպիսկոպոսին իր միտքը, այսինքն Թէ՛ կուզէ քրիս-
տոնեայ ըլլալ, և աղաչեց իրեն՝ որ ինքը զինք
բժիշկմը ձեռացնէ, ու գայ զինքը մկրտէ: Այլաւ ե-
պիսկոպոսը, ու հրամայեց ծառայներուն որ հիւան-
դին բաղնիքմը պատրաստեն: Ստան բաղնիքին մէջ
հիւանդը ու եպիսկոպոսը, և ըսաւ Թէ՛ մինակ Թող
տան հիւանդը ու դուրս ելեն: Աս ռապպին խոր-
հրդականմը ունէր Յովսէփ անունով, որ միշտ իր
քովը կրպահէր նաև հիւանդութեան ատենը: Աս
ալ դուրս ելաւ ծառայներուն հետ, բայց սիրտը
հետաքրքրութիւնմը ընկաւ՝ Թէ արդեօք հիւանդը
մինակ ինչ պիտի ընէ բժշկին հետ: Ամացուկմը
մօտիկցաւ դրան քովը, ու ճեղքուածներէն նայե-
ցաւ որ ան բժիշկը մկրտեց զռապպին, և ռապպին
ալ իրեն էղ մը ստակ տըվաւ ըսելով՝ որ ասիկայ իմ
կողմանէս Աստուծոյ ընծայէ: Առ կեցաւ Յով-
սէփը՝ որ ինքն ալ հրէայ էր, ու իր տեսածը մէկու-
մը չըսաւ: Արեք օրէն ետքը վախճանեցաւ աս

ուսպպին, ու զՅովսէփը և մէկ ուրիշը իր ցեղէն՝
 որ դեռ շատ պզտիկ էր հասակաւ՝ իր տեղը ազգին
 վրայ տեսուչ կամ գլուխ դրաւ: Աստուծոյ ուսպ-
 պին իր պալատին մէջ ծածուկ խուկմը ունէր՝ ուր
 թող չէր խտար որ մէկը ներս մտնէ + ամմէնքը կը-
 կարծէին թէ ան խուցին մէջը շատ մեծ հարստու-
 թիւն կայ: Յովսէփը ասոր ստուգութիւնը ուզենա-
 լով իմանալ, կտրեց կնիքը (մէօհիւրը), և ահա ապա-
 կանացու գանձին տեղը՝ անապական գանձ, այսինքն՝
 սրբոյն Աստիճոսի, սրբոյն Յովհաննու աւետա-
 րանը, ու առաքելոց թղթերը գտաւ: Արբոր աս
 գրքերը կարգաւ սկսաւ, զարմացումն եկաւ իր վրայ
 և ուսպպին մկրտութիւննալ միտքը գալով մըտմը-
 տուքմը առաւ զինքը: Վորձմը փորձել ուզեց ասոր
 վրայ: Մէկալ տղան՝ որ ուսպպին տեղը անցած
 էր, գէշ վախճանի համար կախարդութիւններու
 ձեռք զարկած էր, ու մէկը մէկալը կրկախարդէր:
 Անգամը Յովսէփը անոր կախարդութիւն ըրած
 ատենը՝ քրիստոնէից պէս երեսը խաչմը հանեց, և
 ահա կախարդութիւնը առաջ չիգնաց, թէպէտ
 և շատ աշխատեցաւ կախարդը՝ բայց ճար չեղաւ,
 աս ճամբով ալ թող չիտըվաւ որ կախարդութիւն
 ընէ: ()րմը ասոր վրայ խորունկ մտածելնինի քու-
 նի մէջ մտաւ, ուր տեսլեան մէջ երեցաւ իրեն
 Վրիստոս ու ըսաւ: „ Այս եմ ճիսուս, որ չար-
 չարվեցայ քու նախնիներէդ, հաւատաւ ինձի“:

Արթնցաւ քնէն բայց հոգը չեղաւ, ընկաւ ծանր
 հիւանդութեանմը մէջ, անանկ՝ որ մահուան դու-
 ուր մօտիկցաւ, դարձեալ իրեն Յիսուս երեցաւ ու
 ըսաւ. « եթէ խօսք կուտաս ինձի՝ որ քրիստոնեայ
 » կըլլաս, կըբժշկեմ զքեզ « խօսք տրվաւ ու շուտ-
 մը առողջացաւ, բայց ինչ օգուտ որ խօսքին վրայ
 չիկեցաւ : Հիւանդացաւ ուրիշ անգամմընալ նոյն-
 պէս ծանր հիւանդութեամբ, ու երեցաւ իրեն
 Վրիստոս, և նոյն խօսքը ըսաւ. բայց վերջապէս աս
 անգամուն ալ պարսպ ելաւ, ու օգուտմը չեղաւ ի-
 րեն երեցած տեսիլքներէն : Աւ թէպէտ ասոնց
 նման ուրիշ շատ հրաշքներ ալ եղան, բայց մէկ
 կերպովմը չիկրցան դարձընել Յովսէփին քարացած
 սիրտը : Անգամ մը հրէայները տեսնելով՝ որ աս
 Յովսէփը աւետարանը ձեռքը առեր կըկարդայ,
 սկսան ետևէն ըլլալ որ զինքը մեռցընեն : Ասոնց
 երբոր շատ դէմ դնել չիկրցաւ, և աւելի ևս երբոր
 իր զարկած խղճին ալ դէմ չէր կրնար կոր դնել,
 քրիստոնեայ եղաւ ու փախաւ Աոստանդիանոսին
 պալատը : Պատմեց անոր ինչ որ գլխէն անցաւ :
 Խիստ ուրախացաւ Աոստանդիանոս, ու ըսաւ իրեն
 թէ՛ մի վախնար. ես քեզի կռնակ կեցեր եմ, քու
 ազգդ քեզի բանմը չեն կրնար ընել : Խառնեց
 զինքը իր պալատական իշխաններուն մէջ, և միան-
 դամայն ըսաւ իրեն որ՝ խնդրէ իզմէ շնորհքմը՝ որ
 ընեմ քեզի : Շնորհակալ եղաւ Յովսէփ, ու

խնդրեց, որ հրէից քաղաքներուն մէջ քրիստոնէից եկեղեցիներ շինել տայ: Առաւ աս հրամանը Առստանդիանոսէն ու շուտմը ելաւ դնաց իր քաղաքը՝ որ էր Տիբերիատէս: Յըցուց Առստանդիանոսին յանձնարարական թղթերը, ու Ադրիանոսէն մնացած կիսակատար մեծ շէնքմը փոխեց, ու եկեղեցւոյ ձև խոթել սկսաւ: Հրէայները սաստիկ կատղելով ասոր վրայ, կրոյ (քիրէճին) հնոցները մարեցին կախարդութեամբ: Մանկները շատ աշխատելէն ու օգուտմը չըլլալէն ետքը, իմացուցին իշխանին թէ կրոյ հնոցը մարեցաւ, և հիչ մէկ կերպովմը չիվառվիր կոր: Վմացաւ իշխանը իսկոյն՝ թէ իր ազգը կախարդութիւնմը ըրած է: Հրամայեց՝ որ սափորմը ջուր բերեն, և ամմէնուն առջևը խաչակրնքեց զջուրը՝ ըսելով այսպէս: «Յանունն Յիսուսի, նազովրեցւոյ, որ իմ և ձեր՝ որ հոս կեցեր էք, նախնիներէն խաչվեցաւ, տայ աս ջրոյս զօրութիւնմը, որ ցրէ ձեր կախարդութիւնը, ու հրոյն իր զօրութիւնը, որպէս զի տեառն Աստուծոյ տունը լըմնայ»: Ատքը առաւ աս ջուրը իր ձեռքը, ու ամմէն հնոցներուն մէջն ալ թափեց, և ահա ամմէնքը մէկէն սկսան եփիլ ու եռալ: Տեսնողները պօռալ սկսան ըսելով: «Չիկայ ուրիշ Աստուած՝ բաց ՚ի քրիստոնէից Աստուծմէն:» Արբոր տեսաւ Յովսէփի իշխանը՝ որ ազգին գլուխնե-

ըր իր ետևէն կը պըտըտին կոր, շուտմը լըմնցուց եկեղեցին, ու գնաց ուրիշ տեղեր, ու շատ եկեղեցիներ շինել տըվաւ:

ԳԼ՝ ԼԸ:

Եւսեբէոս «Նիկիոյացին, Թէոփիլոս» ու Երէոս Եր
 իւրապէս յարարաց:

Ամբ ամ 328 մինչև 331:

Լարիոսեան աղանդին գլուխները այսինքն Եւսեբիոս նիկոմիդացին ու Թէոփիլոս ծածուկ Թղթակցութիւն ընելով քանիմը պալատականներուն, ու Կոստանդիանոսին քրոջը հետ, ինչ ըրին չըրին երեք տարիէն ետքը Կոստանդիանոսին գութը շարժեցին, որ զիրենք յարսորանաց ետ դարձընել տայ: Ոչ միայն ետ դարձան, այլ նաև իրենց եպիսկոպոսութեան աթոռը դարձեալ ձեռքերնին բերին, վար իջեցընելով զանոնք՝ որ իրենց տեղը անցած էին: Երդ՝ ասոնք քիչ քիչ ոտվըներնուն տեղ ընելով Կոստանդիանոսին պալատին մէջ, ու իրենք զիրենք խաղաղասէր ու կրօնասէր և սուրբ եկեղեցւոյն ամենահնազանդ որդի ցըցընելով՝ սկսան Կոստանդիանոսին աչքը մտնել, մանաւանդ երբոր

Ճսին՝ թէ եկեղեցին ինչ վճիռ որ հանեց, սիրով կընդունինք, ու կըհաւտանք: Աոստանդիանոս կարծելով թէ ըսածնին սրտանց է՝ շատ ցաւեցաւ զիրենք քչելուն համար ըսելով՝ թէ ատ խաղաղասէր մարդիկը արժանի էին, որ ես զիրենք մեծ պատուոյ հասցընէի, և ոչ թէ անանկ անարգաբար քչէի: Ինչ որ է նէ սրտին ցաւը մեղմացընելու համար, զանոնք իրեն ընտանի բարեկամները ըրաւ: Ահա բարեկամութիւն օձի ու կարծի, որ ինչվան չիխածնէ՝ չիզատովիր: Ասչափով գոհ չեղան, այլ ջանացին որ ուրիշ քանիմը ուղղափառ եպիսկոպոսներնալ իրենց աթոռէն վար իջեցնեն, ու արիոսեան եպիսկոպոսներ տեղը նստեցնեն, ինչպէս ետքը կըտեսնենք:

Աս միջոցիս մէջ մահացու հիւանդութիւնմը ընկաւ Աոստանդիանոսին քրոջը վրայ, որ անիկայ ինչվան մահուան դուռը հասուց: Արբոր իմացաւ ասիկայ արիոսեան քահանայմը՝ վազեց գնաց անոր, ու աղաչեց՝ որ զինքը մասնաւորապէս յանձնէ իր եղբորը Աոստանդիանոսին, կամ բացայայտ ըսեմ, անանկ ընէ որ, ինքը կարօղ ըլլայ Աոստանդիանոսին սրտին վրայ տիրել: Բարի է՝ ըսաւ Աոստանդիա, ես քեզի համար կըխօսիմ անոր հետ, և երբոր Աոստանդիանոս զինքը տեսնելու համար եկաւ, Աոստանդիա շնորհակալութիւն ընելէն ետքը՝ ըսաւ իրեն թէ՝ ուրիշ բանի չէի բաղձար որ ընես ինձի,

բայց եթէ իմ մեռնելէս ետքը իմ՝ քահանայիս ազէկ հոգ տանէիր : „ Բեզի կը յանձնեմ ըսաւ աս „ սուրբ քահանան, որուն սուրբ խրատներուն վրայ „ մեծապէս գո՛հ եմ : Շնորհք ըրէ ո՛վ տէր, տուր „ իրեն համարձակութի՛ որ քեզի ապաւինի : Աս վեր „ ջին շնորհքն է՝ որ կը բաղձամ, ու կը լինդրեմ կոր „ քեզմէ քու կենացդ համար : Ահա ես կը մեռ „ նիմ կոր, և աշխրաբիս բաները շատ չանցնիր՝ ալ „ ինձ չեն իյնար, բայց ես կը վախնամ՝ որ չըլլայ թէ „ Աստուած բարկանայ քեզի : Խաբվեցար խաբ „ վեցար, բայց յանցանքը քու կդ չէ, որովհետև „ սխալելով քշեցիր ան արդար ու առաքինի մար „ դիկները “ : Այս վերջին խօսքերը Արստանդիան ոսին սիրտը սաստիկ վերաւորեց, ու առանց աղէկմը մըտմըտալու կարծեց թէ՛ Աստուած երկնքէն ազդարարութիւնմը կընէկոր իր քրոջը միջնորդութեամբ . ուստի ան քահանան շուտմը կանչել տըվաւ, ու իրեն ըսաւ թէ՛ մի վախնար դուն իմն ես, դուն իմին հաւատարիմ խորհրդականս եղիր : Ահա աս քահանան անանկ վարպետութեամբ տիրեց Արստանդիանոսին հոգւոյն վրայ, որ հազիւ մահը կարօղ եղաւ զինքը անկից բաժնել : Ինչ անուշութիւններ, ինչ շողոքորթութիւններ, ու ինչ խոնարհութիւններ չըբաւ Արստանդիանոսին աս քահանան . անանկ ճամբայմը բռնած էր՝ որ ոչ որ զինքը կը ճանչնար, ու ոչ որ զինքը մարդումը տեղ

կըղընէր պալատին մէջ, և սակայն ամմէն ուղա-
 ծը ձեռաց տակէն կըղործէր, նման ան մարդուն՝
 որ խաղի մէջ ամմէն բանը կընէ, բայց վարագու-
 ըին (փէրտէյին) ետևը ըլլալուն համար՝ ոչ ոք զին-
 քը կըտեսնէ: Ասոր էն առաջին գործքը Աոստան-
 դիանոսին ձեռքովը Արիոսը ետ կանչել տալը եղաւ:
 Աոստանդիանոս կարծելով թէ Արիոսին հաւատքը
 նիկիական հաւատքէն տարբերութիւնը չունի, հրաման
 խրկեց, որ Արիոսը ետ դառնայ: Վասնային բերա-
 նը միշտ աս էր Աոստանդիանոսին առջևը «Արիոսը
 ,,յանցաւոր ելաւ, վասն զի իրեն ականջ չիղրին,
 ,,հրաման տայ տէրութիւնդ անոր քեզի գալու,
 ,,ու տեսնայ թէ քինչպիսի հնազանդ կըլլայ ժողովին
 ,,վճռոյն: Թող գայ ուրեմն՝ ըսաւ Աոստանդիանոս,
 ,,և եթէ ըսածիդ պէս ընելու ըլլայ՝ փառօք և
 ,,պատուով կըխրկեմ զինքը յԱղէքսանդրիա «:
 Բայց Արիոս խորամանկը կեղծաւորութեամբ ցը-
 ցուց՝ թէ չուզէր թողուլ իր առանձնութիւնը,
 որպէս զի աւելի ևս շարժէ զԱոստանդիանոս զինքը
 ետ կանչելու: Իրաւցընէ՛ Աոստանդիանոս տեսնալով՝
 որ Արիոսը ասանկ ծանրէն կըբռնէկոր, թուղթմը
 դրեց անոր իր ձեռքովը, ըսելով թէ՛ շատ կըբաղձամ
 տեսնալ զքեզ, եկու, մի վախնար իզմէ, երեսէ
 չեմ ձգեր զքեզ. և որպէս զի շուտով գաս կըհը-
 րամայեմ որ թագաւորական կառք ու ձի բռնես:
 Աս եղածին պէս Արիոս խիստ ուրախացաւ, ու ճամ-

բայ ելաւ շուտմը Կոստանդիանոսին գալու : Թէ
 ինչ շիտթուծիւններ ասկից ելան՝ կը պատմենք
 քիչմը ետքը : Հիմակ պատմենք , թէ Կոստանդի-
 անոս ինչպէս շինեց զԿոստանդնուպօլիսը , այն է՝
 Ստամպօլ :

Գ Լ . Լ Թ .

Կոստանդնուպօլիսն շինուիլենը :

ԱՄ ԽՆ 330 .

Կոստանդիանոս տեսնելով զինքը մի միայն թա-
 գաւոր Հռովմայեցւոց ընդարձակ տէրութեան մէջ ,
 մըտմըտաց՝ որ մեծ քաղաքմը շինէ , բայց աս քա-
 ղաքը անանկ աղւոր , անանկ մեծ , ու անանկ փա-
 ռաւոր ուղեց շինել , որ աշխրքիս մէջը անոր նմանը
 չի գըտնըվի : Աս մտքի վրան ըլլալով , շարունակ
 յարմար տեղ փնտրուելու ետէէ էր , և որովհետև
 միտք ունէր իր ընտանիքը դէպ 'ի Արևելք փոխա-
 դրել շատ պատճառներու համար , անոր համար այն-
 պիսի տեղմը կը փնտրուէր որ անառիկ ըլլայ թշնա-
 միներէն : Սէյմը մըտմըտաց՝ որ զհին Տրովադան
 այսինքն՝ ծովեզերեայ մայրաքաղաքը Ասիային մէջ

այն է՝ Կէլե Սահմանադրութիւնը, շէնցընէ ու անոր վրայ սկսի ստակ խարճել, բայց ետքը երբոր տեսաւ Հելլենպոնտոսին ծովափուռները, այն է՝ Ալեյն պօլու պօլաղլը որուն վրայ որ՝ Հոմերոսին բանաստեղծական գրիչը աղւոր ստորագրութիւն ըրած էր, փոխեց միտքը, ու ընտրեց ընդարձակ դաշտմը երկու սարաւանդին (տաղպուռնուի) մէջ, և շուտմը սկսաւ պատերը շինել տալ: Պատերը գետնէն էղմը բարձրնալէն ետեւ, դարձեալ Աոստանդիանոս միտքը փոխեց, և անոր տեղը ընտրեց Ռիզանդիոյ աղւոր օսիրուն դիրքը: Հրաման խրկեց ամմէն դին ու որչափ որ իմաստուն, ու վարպետ ճարտարապետներ կարնէ՝ ամմէննալ կանչել տրվաւ: Ռացաւ թագաւորական գանձը, ու սկսաւ անխնայ խարճել: Վաղքին առաջուց ունեցած պարսպին վրայ պարիսպմնալ պատել տրվաւ երկու մղոն (միլ) աւելի, բայց աս պարիսպը իր որդւոյն ատենը լըմնցաւ: Երբոր շէնքը կը շինվէր, բանւորներուն մէկը տեսնելով որ պատը շատ կերկրննայկոր՝ հարցուց Աոստանդիանոսին՝ թէ ինչվան ուր պիտի շինվի պատը. պատասխան տրվաւ թէ՛ ինչվան որ իմ առջևէս գացողը (այսինքն Ղստուած) զիս կայնեցնէ: Ուզեց որ Հոովմայի պէս պատի մէջ ըլլան եօթը բլուրներնալ, որպէս զի ան բլուրները զարդարէ ու գեղեցկացընէ: Շուտմը շինել տրվաւ Հոովմայու կամբիտոլինին տեղը՝ անոր նման շէնքմը, որ զար-

գարված էր բաղնիքներով, ջրմուղներով, ու կամարակապ գաւիթներով: Արկու մեծամեծ շէնքեր շինել տրվաւ, որպէս զի հոն տեղս իմաստուն ծերերը մէկ տեղ գան, ու քաղքին բարւոյն համար իրարու հետ խորհուրդ ընեն: Աւերջապէս այն ամենայն բաները՝ որ քաղքիմը հարկաւոր էին շինել տրվաւ: Բայց ասոնց մէջը խիստ գեղեցիկ էին այն երկու հրապարակը, որուն ամմէն տեսնողները կը զարնըվէին: Արոնց մէկը էր քառակուսի ընդարձակ տեղմը, որուն շրջանակը կամարակապ գաւիթմը կար՝ երկու շաբթ սիւներով, և այս հրապարակը եղած էր իբրև թէ փակմը թէ մեծ եկեղեցւոյն և թէ արքունի պալատին, որ դիմացէ դիմաց միօրինակ բարձրութեամբ շինված էին: Հրապարակին մէջ տեղը մեծակառոյց սիւն մը էր տընկրված, և այն սեան վրայ կայնած էր սրբուհի Հեղինեայ արձանը: Ասան մէջ տեղը ոսկիէ մղոնաչափմը *) կար

*) Աս մղոնաչափը հնարեց Կայիոս Գրակիոս Հռովմայեցի տրիբունը, որ բոլոր Ճամբայները մղոնե վրայ բաժնեց, ու ամմէն մէկ մղոնին լրմնցած ատենը մարմուռ քարէ սիւնմը տնկել տրվաւ, որուն վրայ գրված էր թէ Հռովմայէն ինչվան հոն քանի մղոն տեղ է: Արդ Կոստանդիանոս ալ ուզելով իր շինած քաղաքը Հռովմայու նմանցընել, անոր նըմանը շինել ու կանգնել տրվաւ հաստեղս, որով-

փառաւոր ու արձաններով շինած կամարիմը վրայ
 հեծցուցած: Իսկ երկրորդ հրապարակը քաղքին
 մէջ տեղը շինված կլոր տեղ մի էր, որուն անունը
 կրտվէր՝ Հրապարակ Աոստանդիանոսի: Հրապարա-
 կին շրջանակը գեղեցիկ ու մեծաշէն սիւներ պար
 բռնածի պէս տընկրված էին, մէջ տեղաց գեղեցիկ
 աղբիւր մի կրբղխէր որուն վրայ հովուիմը արձան
 կար, ինչպէս ուրիշ աղբիւրներուն վրան ալ, բայց
 ասոր վրայինը խիստ զարդարուն էր ու պզտիկ պզտիկ
 փորված պատկերներով գեղեցկացուցած էր, և Վա-
 նիէլ մարգարէին պէս առիւծներուն մէջ կեցած էր:
 Բայց այս հրապարակին գլխաւոր ու մեծ զարդը էր
 պորփիւր (սօմաքի) քարէ մեծագին սիւնիմը, որ Աոս-
 տանդիանոս Հռովմայէն բերել տրված էր: Աս սեան
 վրայ կայնեցուց Ապողոնին պղնձի արձանը, որուն
 անունը դրվեցաւ Աոստանդիանոս: Աս արձանը աջ
 ձեռքովը բռնած էր արքունական դաւազանը, իսկ
 ձախ ձեռքովը աշխարհքը: Վլխուն վրայ խօթված
 էր Վրիստոսի բլեռը, և ձեռքին վրան ալ սուրբ
 խաչափայտը: Արձանին վարի դին կային 12 սա-
 կառի (սէլէ) ու 7 զամբիղ (զէմպիլ) հացի կտոր-

հետև ամեն արքունի ճամբայները ասկից կըսկը-
 սէին: Աս սովորութիւնը հիմաէ Եւրոպայի մէջ
 հասարակ է, որ մեծ դիւրութիւն կուտայ ճամբորդ-
 ներուն:

վանքներ, 'Աոյեան տապանին շինութեան գործիքները, և իւղին ամանը՝ որով 'Քրիստոս օծվեցաւ. և գրված էր այսպէս " Ո՛վ էս 'Քն որ տէրդ ես " աշխարհի, քեզի աս քաղաքը ու Հռովմայեցոց " տէրութիւնը հնազանդեցուցի, անփորձ պահէ ասի " կայ ամմէն վտանգներէն " : Ըմմէն տարի պատրիարքը իրեն քահանայներուն ու թագաւորին հետ մէկ տեղ թափօրապէս աս արձանին կերթային ու ձայնաւոր աղօթք կընէին քաղքին պահպանութեանը համար : Ըս արձանը ետքը սաստիկ հողմէ մը կործանեցաւ, և անոր տեղը խաչմը տընկրվեցաւ : 'Աոյն հրապարակին մէջ Աոստանդիանոս շինել տրվաւ նաև այն խաչանշանը որն որ՝ երկինքը իրեն երևցած էր բոլորովին ոսկեզօծ : 'Քաղքին երկու ծայրը երկու մեծամեծ պալատներ շինել տրվաւ, մէկը ծովին քովը, որուն ժողովուրդը մեծ պալատ կրսէր. վասն զի խիստ մեծ ընդարձակ բարձր ու փառաւոր ըլլալով՝ Հռովմայու կապիտոլիոնէն վարչէր մնար : Ըս պալատին մէջը մեծ սրահմը (սուֆա) կար, որուն ձեղունը (թափանը) բոլոր ոսկեզօծ կտոր կտոր փայտերէ էր շինած, իսկ մէջ տեղը մեծագին ու պատուական քարերէ խաչմը էր շինված, անանկ որ՝ եթէ մէկը գլուխը վեր կըվերցընէր նայելու՝ ոսկւոյն ճառագայթները իրար զարնելով ալեկոծութիւնմը կըձևացընէին : 'Ամանապէս

քաղքին մէկալ ծայրնալ ասոր պէս փառաւոր ու մեծաշէն պալատ մի շինել տրվաւ :

Արևելի շէնքերուն մէկնալ էր ձի վազընելու տեղը (աթմէյտանը), որ Արստանդիանոս շինել տրվաւ, բայց չէ հիմակվանը՝ որ աւրրված ու ապականած է, այլ ան ատենը՝ որ թէ քաղաքացիներուն, և թէ դրսեցիներուն աչքը իրեն գեղեցկութեանը հետ կրկապէր : Չեմ ուզեր մանր մանր ստորագրել թէ աս շէնքին և թէ ուրիշ շէնքերուն որպիսութիւնը, ով որ կուզէ կրնայ աշխարհագրութեան գրքեր կարդալ, ու անոնցմէ իր բարի հետաքրքրութիւնը գոհ ընել : Միայն կրսեմ՝ որ աս ձիւնթացին մէջք փառաւոր սրահ մի կար, ուր թագաւորը ու մեծամեծները մեծ օրերը, թէ կրօնի օր ըլլայ, և թէ թագաւորութեան՝ խրախութիւն կրնէին, բոլոր արծթէ սպասներով (թախըմներով) ու ամաններով . իսկ սուրբ հրաշափառ ծննդեան օրը ոսկիէ սպասներով :

Արստանդիանոս ուզելով ջնջել մարտիկներուն անգութ սովորութիւնը, ամփիթէատրոնմը շինել տրվաւ՝ որ հոն մարդիկները գազաններու հետ և ոչ թէ իրարու հետ կուռին սրով . և այսպէս քանի գնաց կամաց կամաց ատ գէշ սովորութիւնը վերցրվեցաւ, մինչև ետքի ատենները ուրիշ մարդ չէր ելլեր գազաններու հետ կուռիլ՝ բայց եթէ 'ի մահ դատապարտեալները :

Ի՛նչ շէնք որ շինել տրվաւ Արստանդիանոս,
 ամէննալ զարդարված էին գեղեցիկ սիւներով ու
 բարակ փորված արձաններով, որոնք որ Արստան-
 դիանոս կուռքերուն տաճարներէն հանած ու պա-
 հած էր: Ինչպէս ըսի, ո՛վ որ կուզէ տեղն ՚ի տե-
 ղը իմանալ պէտք է՝ որ ուրիշ գրքերու ալ ձեռք
 զարնէ, ու ուրիշ գրոց պարտէզներու մէջ ալ պը-
 տըտի, գիտնալով որ՝ քաղցր ու ախորժելի մեղրը
 մէկ պարտէզին ծաղիկներէն չիժողվելիր, այլ պէտք
 է մտօք անդին ասդին գրոց պարտէզներու մէջ
 թռչըտիլ, ու զանոնք աղէկմը կարդալով մեղուի
 (առքի) նման մեղր շինել մտքին բեթակին մէջ:
 Ըռաջ երթանք տեսնանք թէ՛ Արստանդիանոս ինչ
 եկեղեցիներ շինել տրվաւ Արստանդնուպօլսին մէջ,
 և թէ ինչ կարգեր դրաւ, կամ թէ ինչ ճամբայ-
 ներ բռնեց աս քաղաքը շենցնելու ու պայծառա-
 ցընելու:

ԳԼ : Խ .

Աստուծոյ շնորհակալութեամբ զի կրնալ
պահպանել իմացս իմս ի իմացս : ու շատ ելել-
ղէցիս զի կրնալ իմացս :

Ամբ ան 330 և 331 .

ԼՅԱՍԻ շնորհակալութեամբ, կրնալ պա-
րապ տեղ որոշեց Աստուծոյ շնորհակալութեամբ, որպէս զի կա-
մաց կամաց անոնք ալ հրապարակական շնորհակալութեամբ
զարդարէ : Բայց որովհետև քաղաքը բնակիչներուն
համար կը շինվի, անոր համար Աստուծոյ շնորհակալութեամբ ու-
րիշ տեղերէն մարդիկներ հրաւիրեց պարգևներով
ու արտօնութիւններով, որպէս զի գան ու հոն
բնակին : Այլ զմը հոյակապ պալատներ շինել տրվաւ
մեծ մարդիկներուն համար՝ որոնք որ հրաւիրեց, և
էզմընալ հասարակ տուներ շինել տրվաւ ուրիշ
հասարակ մարդիկներուն համար : Եւ պատճառաւ
չատ հռովմայեցի ազնուականներ ու զենալով Աս-
տուծոյ շնորհակալութեամբ բանմը ընել, ու անոր աչքը
մտնել՝ թող տրվին Հռովմ քաղաքը, ու Աս-
տուծոյ շնորհակալութեամբ եկան, և հոն իրենց մեծութեանը
ու հարստութեանը համեմատ տուն տեղ ըրին :
Բայց աս Աստուծոյ շնորհակալութեամբ սէրը ու բաղձանքը՝ որ

ունէր զՎոստանդնուպօլիս մեծցընելու, չափը շատ անցաւ, վնդի նոր օրէնքմը դնելով մինչև Ասիա և 'ի Պոնտոս իր հպատակեալները բռնադատեց, որ ոչ ոք կարօղ ըլլայ իր ժառանգութեանը վրայ տրամադրութիւնմը ընել, ինչվան որ տունմը շինել չիտայ 'ի Վոստանդնուպօլիս: Բայց աս օրէնքը փոքր թիւովսին ատենը վերցըրվեցաւ՝ որ ժամանակը քաղաքը բնակիչներով արդէն լեցված էր: Ասանկով այնչափ բազմամարդ եղաւ աս նոր քաղաքը ինչվան Աղէքսանդրիոյ, Ասիոյ, Ասորեստանի, ու Վիւնիկիոյ նաւերը չէին բաւեր կերակուր ներս բերելու:

Երբոր ասանկ Վոստանդնուպօլիսը կը շէննար ու կը գեղեցկանար, մարդիկները նայելով անոր գեղեցկութեանը՝ թէ հարուստ և թէ աղքատ ամմէն դիաց հոն կը թափէին, մանաւանդ ծովեզերեայ քաղաք ըլլալուն համար, ըստ որում վաճառականութեան շատ յարմար է: Վոստանդիանոս ուզեց՝ որ աղքատներուն օգնութիւնմը ընէ. ուստի հրաման հանեց՝ որ ամմէն օր աղքատներուն հաց միս ու եղ տըրվի որչափ որ պէտք է նէ: Ատքը 332 երրորդ տարին հացը՝ ցորենի փոխել տըրվաւ, ու ամմէն օր 80000 չափ ցորեն բաշխել կուտար աղքատներուն: Այ միայն կենդանի աղքատներուն հոգ տարաւ Վոստանդիանոս, այլև մեռեալ աղքատներուն: Բարեպաշտական ընկերութիւնմը դրաւ 950 հոգիի

չափ զանազան արհեստաւորներէն, և զանոնք ամ-
մէն քաղաքական տուրքերէն ազատ ըրաւ, որպէս
զի աղքատ մեռելները թաղեն: Բայց ամմէն բանէն
աւելի Աոստանդիանոս հոգ տարաւ՝ որ աս նոր քաղ-
քին մէջէն կռապաշտութիւնը ջնջէ, ուստի նորէն
հրաման հանեց՝ որ կռուքերը կործանին, ու անոնց
տաճարները աղէկմը մաքրելէն ու օծելէն ետքը՝
քրիստոնէից եկեղեցի շինեն: Աւրեց ու ջնջեց բո-
լորովին կռապաշտներուն տօնախմբութիւնները, ու
իր քաղաքը ըրաւ բոլորովին նոր քաղաք, և քաղա-
քացիները նոր ժողովուրդ:

Աոստանդիանոսին շինած եկեղեցիները չափէ
դուրս շատ են ու չափէ դուրս ալ ալւոր են:
Բայց մենք մէկ քանի երևելիները պատմելով՝ առաջ
կանցնինք: Արդ՝ ասոնք եղան. նախ եկեղեցին անուա-
նեալ Աստուծոյ Խնամութեանը այսինքն՝ որդւոյն Աս-
տուծոյ, և եկեղեցին սրբոց առաքելոց: Առաջինը՝ ի
հնուց կար, բայց ոչ այնչափ մեծ ու գեղեցիկ, որ
Աոստանդիանոսին ատենը առաջին մայր եկեղեցի ե-
ղաւ: Ետքը Աոստանդիանոսին որդին Աոստանդ ա-
ւելի ևս մեծցուց աս եկեղեցին, և անունը դրաւ
եկեղեցի սրբուհւոյն Աօֆիայ, որն որ հիմակ Այս
Աօֆիա կը կոչվի: Արկրորդ գլխաւոր եկեղեցին՝ էր
սրբոց առաքելոցը՝ ուր որ թագաւորներ ու եպիս-
կոպոսներ կը թաղվէին: Աս եկեղեցւոյն շէնքը Աւ-
սերիոս այսպէս կը ստորագրէ: « Ընքին մարմինը

« կրսէ էր խաչաձև , ու գետնէն մինչև վեր մարմնու
 » քարէ էին պատերը : Չեղունը արուրէ (Թուճէ)
 » գեղեցիկ ոսկէզօծած էր : Գամբեթին մէջքը գօտ
 » ւոյ պէս պատած էին ոսկի վանդակասիւններ (պար
 » մասլըխներ) . խսկ ճակատը ոսկեզօծ սախտակ
 » ներույժ գեղեցիկ շինած էր : Ըս մեծ շէնքը քառա
 » կուսի բակիմը մէջ կղզիի պէս մինակուկ կայնած
 » էր , ամենեին ուրիշ շէնքի մը հետ կապակցու
 » թիւն չունենալով : Բակին շրջանակը կամարակապ
 » ւերկայն գաւիթմը կար , ուսկից որ կը մտնը վէր քա
 » հանայներուն խուցերուն մէջը « : Ըս եկեղեցին
 Երբոր լըմնցաւ՝ Կոստանդիանոս ալ մեռնելու մօ
 տիկցած էր , և վրայէն քսան տարի անցնելէն ետ
 քը , Կոստանդնորոգեց ասիկա՝ որպէս զի չիփըլ չի :
 Բայց ետքը երկրորդ Սէհէմմէտը քակել տրվաւ ,
 ու անոր նիւթերով մզկիթ (ճամիմը) շինել տրվաւ :
 Կոստանդիանոս աս պակասութիւնը միայն խօթեց
 իր շինել տուած շէնքերուն մէջ , որ բաղձալով քա
 ղաքը շուտով շէնցած տեսնել , ու երկար ժամա
 նակ չիկարելուն համբերել՝ չափէ դուրս կարտոր
 ցընէր բանւորները որ շուտով լըմնցընեն , ասան
 կով շէնքերը խորունկ հիմ չունենալուն համար՝
 ամուր չէին ըլլար : Ինչպէս վերը ըսինք Կոստան
 դիանոս շատ եկեղեցիներ շինել տրվաւ թէ քաղ
 քին մէջը . և թէ քաղքէն դուրս , բայց թէ որն է
 իրեն շինածը և որը չէ՝ ստոյգ չիգիտցըրվիր : Ըս

միայն ստոյգ է՝ որ սուրբ Սիբայէլին եկեղեցին
 Արստանդիանոսը շինել տրված է, որ այնչափ գե-
 ղեցիկ ու փառաւոր էր, ինչպէս ժողովուրդը անոր
 նայելէն չէին կրնար կըշտանալ, և անոր համար ան-
 թիւ բազմութեամբ կուգային ու կըլեցվէին անոր
 մէջը: Արպատմըվի՛ թէ աս եկեղեցւոյն մէջ շատ
 հրաշքներ եղած է, ինչպէս կըպատմէ Սողոմենոս
 Բրոպիանոս թագաւորին բժշկին համար, որն որ կը-
 սէ, ինձի շատ ծանօթ էր: Ուստի աս բժիշկը, կը-
 սէ, ամենեին չէր հաւտար, որ Յիսուս Վրիստոս
 ու կենարար սուրբ խաչը զմարդիկ կարօղ ըլլան
 փրկութեան հասցընել: ()ր մը ասիկայ կըգտնըվե-
 աս եկեղեցւոյն մէջ, ու այսպէս տեսիլքմը կըլլայ
 իրեն: Խորանին վրայ եղած խաչերուն մէկը կե-
 րկայ իրեն տեսիլքին մէջը, ու խաչէն ձայնմը կու-
 գայ իրեն ըսելով, թէ Յիսուս Վրիստոս խաչ ել-
 լելէն ետքը՝ ոչ մարդիկները և ոչ հրեշտակները
 մէկումը կրնան օգնութիւն ընել առանց սուրբ խա-
 չին անբարբառ բարեխօսութեանը, և Յիսուսի
 Վրիստոսի միջնորդութեանը: Եսոր վրայ բոլորո-
 վին դարձաւ բժիշկը ու ամմէնուն քարոզեց իրեն
 եղած տեսիլքը: Եսոր նման շատ հրաշքներ աս
 եկեղեցւոյն վրայ կըպատմըվին:

Արստանդիանոս տեսնալով որ եկեղեցիներուն
 խիստ հարկաւոր է Եստուածաշունչ սուրբ գիր-
 քը, մարդ խրկեց Ալեսքիոս կեսարացւոյն՝ որ շուտմը

յիսուն ձեռք Աստուածաշունչ օրինակել տայ, և երկու թագաւորական կառքերու (առապաներու) վրայ դնէ, ու սարկաւազիմը ձեռքով խրկէ 'ի Աստանդնուպօլիս, և ինչ որ ծախք կերթայ՝ ամմէնը ինքը կը վճարէ :

ԳԼ. ԽԵ.

Առապանդիտանին ըրած հանդիսաւելիներ չաղարը նուիրելու տարէնը. ու զանապառն պատիւնելը՝ որ պըլու իր պաշտօնատարնելուն :

Ամբ 330 մինչև 333 .

Նրբոր քաղքին պատերը վեր ելլալ սկսան ու շէնքերով էզմը տեղեր՝ որչափ որ կարելի էր, զարդարվեցան, ու զեց Աստանդիանոս իր անունը դնել քաղքին վրայ, և միանգամայն անիկայ ամենօրհնեալ սուրբ Այս Աստուածածնին պաշտպանութեանը նուիրել : Ուստի մեծ տօնախմբութիւն՝ մեծ հանդէս, ու մեծ պատրաստութիւն տեսնելու ետեւէ եղաւ : Ու զեց որ որչափ մեծութիւն, որչափ հարստութիւն, ու որչափ կարողութիւն ունինէ՝ ամմէնը 'ի գործ դնէ աս հանդիսութիւնը փառա-

ւոր ու շքեղ ընելու համար : Հանդիսութիւնը սկսաւ Մայիս ամսոյն 11 երորդ օրը . 330 երորդ տարւոյն մէջ . և տևեց 40 օր : Ըն 40 օրը հողեւոր ուրախութիւն ու մարմնաւոր ուրախութիւն մէկ տեղ կրլային , մէկը զմէկալը չէր զըկեր : Եւ պիսկոպոսներուն ու քահանայներուն բերանները քաղցր սաղմոսերգութիւններով , ու երկնառաք փառաբանութիւններով լեցված էին : Ըմմէն օր Քրիստոսին գանձանակներուն այսինքն աղքատներուն առատ ողորմութիւն կը բաշխուէր , թէ հաց , թէ գինի , և թէ կերակուր : Իսկ մարմնական խաղեր զուարճութիւններ ու զբօսալի հանդէսներ անպակաս կրլային : Ըյսպիսի մեծ ու հռչակաւոր հանդիսութեան յիշատակը պահելու համար՝ Աոստանդիանոս ապսպրեց , որ ամմէն տարի հանդիսութիւնմը ընեն Մայիս ամսոյն 11 երորդ օրը , որ օրը իր անունը դրաւ իր շինած քաղքին վրայ : Աւստի երբոր նոյն օրը կուգար , պարգևներ կը բաշխէին զօրաց ու ժողովրդեան մէջ , Աոստանդիանոսին արձանը փառաւոր ու շքեղ կառքիմը վրայ կը դնէին , և անոր շրջանակը բոլոր իշխանները՝ զօրապետները՝ ու մեծամեծ պալատականները կը պատէին ձեռքերնին վառած հաստը մոմերով ու բերաննին անուշ երգերով լցված : Եւ ամանակին թագաւորը ձիրնթացին տեղը կը նստէր գահիմը վրայ , և առջևէն անցած ատենը , ոտք կելար ու անոր

յարգութեամբ բարև կուտար : Իսկ ժողովուրդը իրարու վրայ ելլելով արձանին ետևէն խուռն բազմութեամբ կերթային ու կերգէին , ինչպէս որ արձանը կը տարվէր ու կը դրվէր պորփիւր սեան վրայ :

Այսպիսի հանդիսութեամբ Աոստանդիանոս իր անունը քաղքին վրայ դնելէն ետքը , կոչեց անիկայնոր կամ երկրորդ շնորհ ինչպէս կիմացվի քարէ սիւնէմը որ տրնկրված էր հրապարակի մէջ , որուն վրայ փորված էր Աոստանդիանոսին տրված օրէնքներուն մէկը : Ինչ արտօնուիներ ու ինչ իշխանութիւներ՝ որ հին շնորհային տրված էր , նոյն արտօնութիւնները ու նոյն իշխանութիւնները տրվաւ նաև նոր շնորհային այսինքն Աոստանդնուպօլսին : Անոր իշխանութեան տակը ձգեց ամմէն արևելեան քաղաքները , բաժնեց անիկայ բոլորովին հին շնորհային իշխանութենէն . զատ հիւպատոսական աթոռ հոն տեղս դրաւ , ու զատ իշխանութիւն օրինաց մահու և կենաց հոն տեղս հաստատեց :

Շնորհային պէս ծերակուտական իշխանութիւն խօթեց անոր մէջ , բայց աս ծերակուտական իշխանութիւնը թէպէտ շնորհայի ծերակուտական իշխանութեան պատուոյն հաւասարեցաւ , սակայն անոր հեղինակութեանը չի հաւասարեցաւ , վասն զի Աոստանդիանոսին յաջորդները նոյն պատիւը ու նոյն իշխանութիւնը չէին իտար ծերակուտին Աոստանդնուպօլսի , որն որ կը տրվէր ծերակու-

տին Հռովմայու : Ուղեց Կոստանդիանոս որ իր քաղաքը Հռովմայէն զատէ նաև ուսման կողմանէ, ուստի ասոր համար նոր նոր դպրոցներ ու համալսարաններ բանալ տրվաւ, վարպետներ բռնեց, ու անոնց պէսպէս իշխանութիւններ ու արտօնութիւններ տրվաւ, որպէս զի սրտանց աշխատին տղաքը սորվեցնելու : Գրքատունմը սկսաւ շինել տալ, որ ետքը աշխրբիս մէջը երևելի շէնքերուն մէկը եղաւ : Յուլիանոսին ատենը անանկ փառաւոր ու անանկ մեծ էր, որ 120000 մեծամեծ մատեաններ մէջը կառնէր : Աս գրքատունը իր գրքապետովը ու տասվերկու գրագէտ մարդիկներով՝ որոնք միշտ գրքատան մէջը կրկենային՝ երեւ տրվաւ իմաստութեան ատեցօղ ամպարիշտ Ռասիլիսկոսը : Կոստանդիանոսէն ետքը եկօղ թագաւորները՝ ամ մէննալ իրենց թագաւորական աթոռին դրին՝ ի Կոստանդնուպօլիս, որ քանի գնաց այնչափ պայծառացաւ՝ ինչվան հարստութեան ու բազմամարդութե կողմանէ գերադանցեց քան զհին Հռովմ : Պատմիչմը աղէկ խորհրդածութիւնմը կրնէ աս քաղաքիս վրայ : Այնչափ հարստացաւ ու այնչափ մարդիկներով լեցվեցաւ կրսէ՝ աս քաղաքը, վասն զի Աստուծոյ օրհնութեանը արժանացաւ խիստ աղքատասէր ըլլալուն համար, ժողովուրդը սաստիկ ողորմած ու բարեպաշտ էին, և աս պատճառաւ թէ հեթանոս և թէ հրէայ տեսնալով քրիս-

տոնէից բարեկրօն քաղաքավարութիւնը՝ կը դառնային ու քրիստոնեայ կը լլային հոն տեղս :

Արստանդիանոս տեսնալով որ իրեն ընդարձակ թագաւորութիւնը շատ ճիւղ ունօղ ծառիմը պէս տարածած է, մտմըտաց իբնքը մինակ բաւական չէ անիկայ աղէկ կառավարել, ուստի ոստիկաններ (քեհհայպէյեր) նստեցուց, ու ասոնց մէկուն տըվաւ Արեւելք, մէկուն Ալլերիկիա, մէկուն Խտալիա, և մէկուն Վաղղիա : Աս երկիրները ունէին իրենց տակը զանազան քաղաքներ, և անքաղաքներուն վրայ ալ դրվեցան ամմէն մէկ ոստիկանին իր աթուակալը (վէքիլը) : Իսկ զօրաց վըայ դրաւ երկու ստրատելատներ (սէրասկէրներ), մէկը ոտանաւոր զօրքին վըայ, իսկ մէկալը ձիաւոր զօրքին վըայ, ուրիշ մարդ մի ալ դրաւ, որ ամմէն զօրաց թօշակը (էօլէֆէն) տայ : Աերևայ թէ աս բանս աղէկ ըրած չըլլայ Արստանդիանոս, վասն զի եթէ աս թօշակ բաժնելու իշխանութիւնը անոր ձեռքը ըլլար, որուն որ ձեռքն է զօրքը կառավըլը, զօրքը աւելի կը վախնար իր զօրապետէն, ու աւելի հնազանդութիւն կընէր անոր, որ չըլլայ թէ թօշակը քիչցընէ : Եւ պէտ կընանք ըսել թէ մէկ կողմանէ աղէկ ըրաւ, որ աս երկու իշխանութիւնը իրարմէ բաժնեց, ու զատ զատ հոգիներու տըվաւ, վասն զի ասով ապստամբութիւն դժուարաւ կընար ըլլալ, ըստ որում դժուար է երկու հոգույ միա-

բանիլ . քան թէ մէկ հոգւոյ ինքիրեն ուզածին պէս գործել : Ուրիշ պատիւմը նալ հնարեց Աոստանդիանոս , որ կըսվէր պատրկութիւն (պէյղատէութի) : Ըսիկա մինակ պատիւմը նէր , որ իր հետը ամեննին իշխանութիւնմը չունէր , բայց այնչափ մեծ պատիւ էր՝ որ միայն հիւպատոսութեան պատիւէն վար էր , իսկ մէկալ ամմէն պատիւներէն վեր էր : Ըն զօրպետները որ իրենց գնդերովը շարունակ ապստամբներու դէմ պատերազմի կերթային , զանոնք Աոստանդիանոս դուքս (փաշայ) անուանեց : Ըս պատիւը հօրմէն կրնար որդւոյն վրայ անցնիլ , բայց միայն պէտք էր որ որդին ծառայութիւն ընէր թագաւորին զօրքը կառավարելով , ու ան դին աս դին պէտք եղած տեղը երթար ու աշխատէր : Ըս պատիւները Աոստանդիանոս տըվաւ միայն անոնց , որոնք որ խիստ արդիւնաւոր էին իր տէրութեանը մէջ , ու արժանի էին այնպիսի պատիւ ընդունելու , որ եթէ Աոստանդիանոս տալու չըլար , անտարակոյս տրտունջ կընէին իրմէն իր պաշտօնատէրները , և միանգամայն սիրով ծառայութիւն չէին ընէր իրեն :

ԳԼ ԽԲ .

Աստուծանորդի մահու իր-պէս որ սուրբ Ալեանաս վարդա-
պետ ընդունի իր եկեղեցւոյն մէջ . եւ սուրբ
Ալեանասը անոր հորիչ շքեհիւր :

Ամբ ան 331 և 332 .

Արդացօղը միտքը բերէ քիչմը առաջ կարդա-
ցածը՝ թէ ինչպէս Արիոսը քշվեցաւ, և թէ ինչ-
պէս ետքը Աոստանդիանոսէն ետ կանչըվեցաւ :
Արդ՝ երբոր Արիոս Աոստանդիանոսին դէմը ելաւ,
հարցուց իրեն Աոստանդիանոս թէ՛ 'Աիկիոյ ժողո-
վին հաւատքը կընդունին : Պատասխան տըվաւ
Արիոս թէ հրամմերես կընդունիմ' : Արպէս զի
ամենայն տարակոյսը վերցըվի՝ ըսաւ Աոստանդիա-
նոս, հաւատոյ դաւանութիւնմը տուր գրով : Ե ուտ-
մը Արիոս գնաց գրեց հաւատոյ դաւանութիւնմը,
բայց այնպիսի բառերով որ երկու կողմնալ կընայ-
ին մեկնըվիլ թէ ուղղափառական և թէ հերե-
տիկոսական կողմը : Աս հաւատոյ դաւանութիւնը
Արիոս տալէն ետքը Աոստանդիանոսին, աղաչեց
որ շատ չուշացնէ զինքը նղովէն արձըկել տալու,
որովհետեւ՝ կըսէր՝ չեմ կընար պատմել՝ թէ ինչ
դառն տրտմութեան մէջ է սիրտս քանի որ եկե-

ղեցւոյն հաղորդութենէ դուրս ելած եմ, ես գիտեմ ինչ քաշեցի ու ինչպէս լալով անցուցի այն արտորանաց օրերը : Այլ հիմակ աչքիս հիչ մէկ բան չերևար անանկ ինձի սիրելի ու անանկ բաղձալի, ինչպէս եկեղեցւոյն մէջ մտնել : Այսպիսի խորամանկ խօսքերուն Աոստանդիանոս հաւտալով՝ կարծեց թէ ինչպէս որ խօսքերը զղջացեալ ապաշխարողիմը խօսքեր եննէ, ասանկ ալ ըսողը զղջացեալ ապաշխարող է, ուստի ուրախացաւ անոր վրայ ինչպէս հովիւմը կուրախանայ կորսըված ոչխարիմը վրայ, և ըսաւ իրեն թէ մի վախնար ես կը հոգամ զքեզ մայր եկեղեցւոյն գիրկը խօթելու, ուսկից որ չար տարածայնութիւնը հանեց զքեզ : Աւրախանալով Արիոս Աոստանդիանոսին աս խօսքին վրայ, առանց ատեն կորսնցընելու շուտմը գնաց յԱղեքսանդրիա, և պարծենալովմը սուրբ Աթանասին դէմը ելաւ, ու խնդրեց որ զինքը իբրև ուղղափառ ընդունի : Սուրբ Աթանասը իմանալով անոր խաբերայ միտքը, աս քաղաքը մտնալ իսկ քեզի կարգելեմ՝ ըսաւ՝ ո՛ր մնաց որ եկեղեցւոյն մէջ մտնելու : Արբոր ասանկ վռնտեց զինքը սուրբ Աթանասը, ամօթով լեցվեցաւ Արիոս, ու գնաց իր մտերիմ բարեկամներուն յայտնեց, որոնց ձեռքովը նայիս շնջիւնմը (փրսփրսմը) մտաւ ժողովրդեան մէջ սուրբ Աթանասին դէմ : Իսկ Աւսերիոս նիկովիդացին ու Թէոփիլոսէս անանկ բարկացան սուրբ

Աթանասին վրայ՝ որ ինչպէս մէջերնին խորհուրդ
 րին իրեն դէմ սաստիկ հալածում հանելու : Բայց
 որպէս զի ճամբովը ըլլայ՝ Ալեսքիոս նիկոմիդացին
 լաւագոյն համարեցաւ թուղթմը գրել սուրբ Աթա-
 նասին՝ աղաչելով որ թող տայ Արիոսին եկեղեցին
 մտնելու : Պատասխան տրվաւ սուրբ Աթանասը՝ թէ
 եկեղեցին չունի սովորութիւն առանց մեծամեծ ու
 շատ փորձեր ընելու այսպիսի մեծ հերետիկոսապե-
 տիմը վրայ՝ զինքը՝ ի հաղորդութիւն ընդունելու,
 մանաւանդ որ տիեզերական ժողովովմը դատապարտ-
 ված է : Կարձեալ գրեց Ալեսքիոս սուրբ Աթա-
 նասին, և երբոր շահմը չեղաւ, գրեց Աոստանդիա-
 նոսին հազար զրպարտութիւններով ու ստութիւն-
 ներով, ըսելով թէ յամառ է իր կարծիքին մէջ,
 թշնամի է խաղաղութեան, և թէ ինքը զինքը ճշ-
 մարիտ կրօնասէր ձեւացնելով անիրաւութեամբ
 կը հալածէ կոր խեղճ Արիոսը, որուն արդարութիւնը
 ու իմաստութիւնը ամօքնուն յայտնի է : Հաւտա-
 լով Աոստանդիանոս Ալեսքիոսին ըսածներուն,
 դառն խօսքերով թուղթմը գրեց սուրբ Աթանա-
 սին, և տրվաւ թուղթը երկու պալատականներուն
 ձեռքը՝ որ տանին տան սուրբ Աթանասին : Թուղթին
 մէջը այսպէս գրած էր : « Արբոր կիմանաս թէ ինչ
 ,, է մեր հրամանը, շուտմը թող տաս ո՛վ որ կուզէ
 ,, եկեղեցին մտնելու : Աթէ ասիկայ չես ըներ,
 ,, գիտնաս որ՝ առանց ատեն անցընելու իմ պաշ-

„տօնատարներուս մէկը կրխրկեմ, որ զքեզ ա-
 „ [Թողէ՞ք վար առնել կուտայ, ու եկեղեցիէն դուրս
 „ կրվոնտէ“ : Սուրբ Աթանասը առանց վախնալու
 ու առանց շփոթելու հանդարտութեամբ պատաս-
 խան տրվաւ Արստանդիանոսին, թէ իսկապէս մեծ
 ցաւ է սրտիս՝ որ աս բանիս մէջ չեմ կրնարկոր ծա-
 ոայել հրամանոցդ, ու քու մեծվայելչութեանդ
 հաճոյքը կատարել, որովհետեւ հովիւ եմ եղած բա-
 նաւոր ոչխարներուս, անոր համար չեմ կրնար աչք
 գոցել՝ որ հերետիկոսապետ գայլմը ոչխարի մոր-
 թով (տէրիով) մտնէ անմեղ ոչխարներու փարա-
 խը, ու փառատէ զանոնք : Աւ պարապ տեղ ինձի
 սպառնալիք միընէր՝ ըսաւ . ո՞վ [Թագաւոր. ես չեմ
 կրնար երկրաւոր [Թագաւորին կամքը կատարելու
 համար երկնաւոր [Թագաւորին անհնազանդ ըլլալ :
 Աս որ լսեց Արստանդիանոս նոյն ատենը սրտին մէ-
 ջը բարի ուրախութիւնմը զգաց, տեսնալով որ՝ սուրբ
 Աթանասը ամենևին մարդկային նկատմունքներ չը-
 նէր կոր, այլ քաջ հովուին պաշտօնը կրկատարէ-
 կոր : (Վայց երանի՛ թէ աս բարի մտքին վրայ մնար
 ու չիփոխվէր, ուրիշներուն սուտ զրպարտութիւննե-
 րուն ականջ դնելով : Աթէ եկեղեցին միշտ այսպի-
 սի քաջ հովիւներ ունենալու ըլլար, ուղղափառա-
 կան հաւատքը այնչափ մեծամեծ վնասներ չէր
 կրէր, թէպէտեւ երբեմն Աստուած իր անքննելի
 խորհրդով [Թող կուտայ, որ մտնայ իր այգիին

այսինքն՝ սուրբ Լկեղեցւոյն մէջ այսպիսի ապականիչ-
ներ, որպէս զի ուղղափառները աղէկ մը հաստատ-
վին, անհաստատները որոշվին, ու Վրիստոսի ճշ-
մարիտ վարդապետութիւնը՝ ալ աւելի մաքուր երեւ-
նայ իր անսահման փառացը համար:

ԳՂ. ԽԳ:

Երկուսն էլ իւր իւր ուղղափառ եղիւն-
պոսնէր:

Ամբ ամ 330 և 331:

Մարիոսեանները տեսնալով սուրբ Եթանասին
հաստատութիւնը, որ ամենեւին չի վախցաւ Կոստան-
դիանոսին սպառնալիքներէն (չըխըշներէն) աւելի
ևս կատղեցան, ու իրենք զիրենք պատրաստեցին
անկէց վրէժխնդրութիւն ընելու: Ան ատենները
վիճաբանութիւն մը ելած էր սուրբ Լւստաքէոսին
ու Լւսերիոս Կեսարացւոյն մէջ: Սուրբ Լւստաքէո-
սը զանի կամբաստանէր իբրև արիոսեան, ու Վի-
կիական հաւատքին դէմ խօսող: Իսկ Լւսերիոս
կեսարացին զանի կամբաստանէր իբրև սաբելեան
հերետիկոս: Արբոր աս վիճաբանութիւնը Լւսե-

բիոսնիկոմիդացւոյն ականջը հասաւ, շուտմը թիւնկ-
 նիտէսին հետ մէկ տեղ խորհուրդ ըրաւ՝ որ զսուրբ
 Եւստաքէոսը աթոռէն վար իջեցընեն: Բայց որ-
 պէս զի իրենց աս չար խորհուրդը Աոստանդիանոսին
 վեր չելայ՝ Եւսեբիոս Աոստանդիանոսին առջևը
 կեղծաւորեցաւ թէ՛ կուզէ մէյմը Արուսաղէմ քաղ-
 քին մէջ սուրբ տեղերուն այցելութիւնմը ընել,
 և նոր շինած եկեղեցին տեսնել: Արովհետև աս
 բանիս տակը չարիքմը չէր կրնար երևնալ, անոր
 համար Աոստանդիանոս սիրով հրաման տրվաւ և
 ըսաւ, որ թագաւորական կառօք ու ձիերով եր-
 թայ, և ճամբուն ամմէն պէտք եղած բաները իրեն
 տրովի, ինչպէս որ իր պատուոյն կրվայլէ: Եւսե-
 բիոս հպարտութեամբ լըցված՝ առաւ իր հետը
 զթիւնկնիտէս ու ճամբայ ելաւ: Արբոր յԱնտիօք
 հասան՝ սիրով հիւրընկալութիւն ըրաւ անոնց սուրբ
 Եւստաքէոսը, թէպէտ իրենց մոլորական մտաց
 վրայ թշնամի էր, ու անոնք ալ դրսանց բարեկա-
 մութիւն կըցուցընէին սուրբ եպիսկոպոսին: Արբոր
 Արուսաղէմ հասան, շուտմը իրենց չար խորհուրդը
 Եւսեբիոս կեսարացւոյն յայտնեցին, ու հոն տեղս
 քանիմը եպիսկոպոսներ կանչեցին, որպէս զի աս
 բանս կարօղ ըլլան դիւրութեամբ ընել: Սուրբ
 տեղերը ու նոր շինած եկեղեցին պտրտելէն ետ-
 քը, ամմէնքը մէկ տեղ դարձան յԱնտիօք: Հրա-
 տիրեցին սուրբ Եւստաքէոսը ու ուրիշ մերձակայ

քաղաքներուն ուղղափառ եպիսկոպոսները, ըսելով
 թէ՛ կուզենք ժողովմը ընել մէկ քանի եկեղեցական
 բաներու վրայ: Ա՛նքերնին օրմը որոշեցին, և ան
 օրը ամմէնքը ժողովեցան, ու մէկ տեղ նստան: Ա՛վ
 մարդկային չարութեանս. ահա երբոր ամմէն ա-
 թոռները լեցվեցաւ, նայիս ժողովին մէջը անամօթ
 աղջիկմը տընկըվեցաւ պզտիկ տղովմը գիրկը: Հար-
 ցուցին աղջկան հայրապետները թէ դու հոս ինչ
 բան ունիս: Պատասխան տրվաւ աղջիկը թէ ե-
 կած եմ ամբաստանութիւն ընելու Աւստաբէոսէն՝
 որ բռնաբարեց զիս, և աս տղուս՝ որ գիրկս է՝ հայր
 եղաւ: Սուրբ Աւստաբէոսը գփտնալով իրեն ան-
 մեղութիւնը, ու աղջկան ըրած անամօթ զրպար-
 տութիւնը, ըսաւ անոր թէ ո՛ր է վկադ: Աղջիկը
 Աւսերիոս նիկոմիդացիէն առաջուց համար առած
 ըլլալով՝ տրվաւ աս պատասխանը: Արդեօք մարդ
 այսպիսի յանցանքմը ըրած ատենը՝ վկայ կրփնտո՞ւ
 մի: Ատքը Աւսերիոս նիկոմիդացին Աւսերիոս կե-
 սարացին և Թէոկնիտէս ըսին աղջրկան թէ՛ չենք
 կրնար ըսածիդ հաւտալ, ինչվան որ երդումմը չը-
 նես, որովհետեւ այսպիսի մեծ յանցանքմը այսպիսի
 երևելի մարդու վրայ քիչմը դժուարաւ կը հաւտաց-
 վի, բայց թէ որ երդում ընելու ըլլաս՝ ան ատենը
 կը հաւտանք, ու զինքը աթոռէն վար կիջեցընենք.
 շուտմը երդումը ըրաւ անամօթ ու լիբբ աղջիկը՝
 Աւ ահա արիոսեան եպիսկոպոսները մէկէն ըսին,

արժանի է՝ որ աթոռէն վար ընի, որովհետեւ այսպիսի անվայել յանցանքմը ըրեր է: Ըստ անօրէնութիւնը ընելէն ետքը արիոսեան եպիսկոպոսները՝ վազեցին եկան Աոստանդնուպօլիս որպէս զի Աոստանդիանոս հիշ մէկէ մը խօսք ասոր վրայ չիլսած ըլլալով՝ ամմէնէն առաջ իրենցմէ լսէ, ու եղածին հաւտայ: Արբոր սուրբ Աւստաքէոսին վար իջնելը Ընտիրքայ մէջ համբաւեցաւ (չաւ եղաւ), շիթթութութիւնմը ու խռովութիւնմը եղաւ ժողովրդեան մէջ, կէսը կըսէր թէ՝ ձեր ըրածը անիրաւ զրպարտութիւն է, մենք մեր հովիւը կուզենք, և կէսը այսինքն արիոսեանները՝ թէ՝ չէ ճշմարիտ է, պէտք է անսալ ժողովին վճռոյն: Ըստ պատճառաւ նաև իշխանները ու զօրքը իրարմէ բաժնրված ըլլալով՝ ահա քեզի մեծ խռովութիւն ու կռիւմը, որ այնչափ սաստկացաւ՝ ինչպիսի երկու կողմանէ արիւններ վազեց: Ըստ խռովութեան հրդեհը քանի գնաց սաստկացաւ ու մեծցաւ, և թէպէտ սուրբ Աւստաքէոս շատ կաշխատէր խռովութիւնը ցածցընելու, բայց պարապ տեղ, վասն զի երկու կողմն ալ տաքցած ըլլալով բերններնէն ուրիշ բան չէր լսվեր, բայց եթէ արիւն ու վրէժխնդրութիւն: Ըստ միջոցիս մէջ Աոստանդիանոսէն հրաման եկաւ սուրբ Աւստաքէոսին, որ ելայ իր պալատը գայ: Սուրբ Աւստաքէոսը ճամբայ ելլալէն ետքը, ահա եկան հասան Ընտիրք երկու մեծամեծ իշխաններ Աոստան-

դիանոսին կողմանէ, և հազիւ կրցան կոիւր դադ-
րեցընել: Իայց սուրբ Ալստաքէոսը Անտիոքէն
չելած, արցունքով յորդորեց իր ժողովուրդը՝ որ
չըլայ թէ արիոսեաններէն խարվին, հայա ինչ որ
իրմէն սորված են նէ անոր մէջը հաստատուն կենան:
Աւերբիոս նիկոմիդացին վախնալով՝ որ բանը Աոս-
տանդիանոսին վեր ելայ, առջի զրպարտուն վրայ նոր
զրպարտութիւն մընալ եւելցուց, ըսաւ Աոստանդիա-
նոսին թէ սուրբ Ալստաքէոսը նախատեց զբարեպաշ-
տուհին շեղինէ: Ասամբաստանուիր Աոստանդիա-
նոսին ՚իւրտը սաստիկ վիրաւորեց, վասն զի մեծ սէր
ունէր իր մօրը վրայ: Աստի ասոր վրայ Աոստան-
դիանոս սաստիկ բարկացած ըլլալով, ամենևին ա-
կանջ չիդրաւ սուրբ Ալստաքէոսին, այլ շուտմը
անիկայ քչեց ՚ի Թրակիա, ուր մեռաւ խեղճութիւն
՚ի ցաւ և ՚ի տրտմութիւն ամմէն ուղղափառ հա-
ւատացեալներուն: Իսկ լիրբ ու անամօթ զրպար-
տիչ կինը երբոր մահուան դուռը մօտիկցաւ, չի-
կրնալով իր խիղճը հանդարտեցընել, էզմը քահա-
նայներու առջև խոստովանեցաւ թէ՛ սուրբ Ալս-
տաքէոսը արդար էր, և ան տղան ունեցած էր ու-
րիշ արհեստաւորէմը, որուն անունը էր Ալստաքէոս:

Տեսնալով արիոսեանները որ ուղածնին եղաւ,
ու չար խորհուրդնին առաջ գնաց, ուրիշիմը ալ
ձեռք զարկին: Ազգեցին որ սուրբ Ալստրոպիոսն ալ՝
որ եպիսկոպոս էր Ատրիանուպօլսոյ՝ վար իջեցը-

նեն իր աթոռէն . վասն զի Եւտրոպիոս շատ դէմ կեցած էր արիոսեան աղանդին , և միանգամայն գիրքմը շարագրած էր , ու նուիրած էր սուրբ Եւստաքէոսին , որուն մէջը զսուրբ Եւստաքէոսը խիստ կը գովէր իբրև առաքելաշնորհ , քարոզիչ բանին ճշմարտութեան : Ըրդ ըսին արիոսեանները թէ Բասիղինա իշխանուհին՝ որ Աոստանդիանոսին եղբորը (Նուրիոս Աոստանդին կինն էր՝ խիստ բարկացած է Եւտրոպիոսին վրայ , ու աս պատճառաւ ա նիկայալ բռնեցին վար առին իր աթոռէն , ու քշեցին սուրբ Եւստաքէոսին քշվելէն ետքը :

ԳՎ . ԽԳ .

Եւստիոս կեանքացին շուրջը եպիսկոպոս ըլլալ Անտիոքայ եկեղեցոյն , եւ Աոստանդիանոս կեանքացի տար . ու ետքը հերեպիսկոսներուն դէմ հրեշտակաբար իրենց կեանքը :

Ամբ ան 331 և 332 .

Խիստ ուրախացաւ Եւստրիոս նիկոմիդացին , թէ նաև աս անօրէնութիւննալ կրցաւ ընել . ուստի հիմակ մտմըտաց՝ որ սուրբ Եւստաքէոսին տեղը ուրիշ հայրապետմը նստեցընէ : (Նտրեց զՊաղինոս

արիոսեան եպիսկոպոսը, բայց ողորմելին շատ չի կրօն-
 ցաւ իր հայրապետական իշխանութիւնը բանեցը-
 նել, վասն զի վեց ամիսէն ետքը մեռաւ: Ասոր
 տեղը անցաւ Ալլաղիոս արիոսեան եպիսկոպոսը,
 որ առաջնոյն պէս քանիմը ամիս վրայէն անցնելէն
 ետքը մեռաւ: Ասոր վրայ Անտիոքայ ժողովուրդը
 սկսան դարձեալ իրար անցնիլ ըսելով թէ՛ Աստու-
 ծոյ արդարութիւնն է որ զանոնք կը պատժէ կոր:
 Արպէս զի աս ժողովուրդեան տրտունջը բոլորովին
 լռեցնեն արիոսեան եպիսկոպոսները՝ մտմտացին
 այնպիսի եպիսկոպոսմը դնել աս քաղքիս վրայ՝ որ
 երևելի մարդ մը ըլլալով կարող ըլլայ ժողովուրդը
 զսպել: Աս խորհրդով ընտրեցին Ալեսեբիոս կե-
 սարացին, և ստութեամբ գրեցին Աոստանդիանոսին
 որ թէ՛ քահանայք և թէ՛ ժողովուրդը անիկայ ու-
 զեցին իրենց հովիւ: Ալ որպէս զի զԱոստանդիա-
 նոս հաւտացընեն, աղաչեցին ան երկու իշխանա-
 ւորներուն՝ որ Աոստանդիանոսին կողմանէ Անտիոք
 եկած էին, որպէս զի անոնք ալ անանկ թուղթմը
 գրեն Աոստանդիանոսին: Իսկ Ալեսեբիոս կեսարա-
 ցին թուղթմը գրեց Աոստանդիանոսին աղաչելով՝
 որ զինքը չի բռնադատէ ան մեծ պատիւը ընդունե-
 լու, որովհետեւ Անտիոքայ եկեղեցին խիստ հարուստ
 ու երևելի էր: Աստուած միայն գիտէ՝ կրսէ մե-
 կը՝ թէ՛ այսպիսի փառասէր մարդմը ինչո՞ւ համար
 իր ոտքին եկած պատիւը չառաւ: Արպիսի և իցէ

Աոստանդիանոս խիստ ուրախացաւ Աւսերիոս կե-
սարացւոյն գրած թղթին վրայ, որ ատանկ պատուոյ
կրփախչի կոր, ու աշխարհական ունայնութիւնը չի-
սիրէրկոր. երանի թէ ճշմարիտ ըլլար: Թուղթմը
գրեց Աոստանդիանոս ընտրող հայրապետներուն՝
ըսելով թէ՛ շատ կըցաւիմ որ չեմ կրնար աս ձեր
կամքը կատարել, որովհետեւ ինձի խիստ անվայել
բանմը կերևայ՝ որ եպիսկոպոսմը իր եկեղեցին թող
տայ ու ուրիշ եկեղեցի երթայ առնէ: Բայց մի
վախնաք, ահա կըխրկեմ ձեզի երկու քահանայներ
որոնք ծաղկեալ են սրբութեամբ ու իմաստութիւն,
անոնց մէկը որն որ ձեր խոհեմութեանը յարմար
կերևայ եպիսկոպոս ձեռնադրեցէք Անտիոքայ եկե-
ղեցւոյն: Ասոնց երկուքն ալ արիոսեան էին, և Աւ-
սերիոս նիկոմիդացւոյն ձեռքովը ընտրված էին, մե-
կուն անունը էր Գէորգ՝ որ եղաւ եպիսկոպոս Ա-
վողիկեայ, և մէկալուն անունը Ափրոնիոս կեսարա-
ցի՝ որ ընտրվեցաւ եպիսկոպոս Անտիոքայ: Բայց
ինչ կընայիս ան մահուան մանգաղը որ մէկալները
մեռցուց, մեռցուց նաև ասիկայ մէկ տարի ու քա-
նիմը ամիս միջոց տալէն ետքը: Անոր տեղը անցաւ
Փղակիոս որ էր արիոսեան: Արջապէս ինչվան
361 երրորդ տարին ետեւէ ետեւ արիոսեան եպիսկո-
պոսներ նստան Անտիոքայ աթոռոյն վրայ, և անոր
համար ուղղափառներուն ճարը հատնելով՝ զատ
եկեղեցի ունեցան իրենց, և ըսվեցան Աւստա-

քեանք: Եւ թէպէտ շատ նեղութիւն ու հալածանք քաշեցին, բայց ամուր կեցան ու հաստատ մնացին իրենց սուրբ հաւատքին մէջը: Ահա աս եղաւ սուրբ Եւստաքէոսին տրված խրատներուն պտուղը, որն որ հիմակ իր ժողովուրդը տրվին: Աս միջոցիս մէջ արիօսեանները հնարքմը բանեցուցին Աոստանդիանոսին աչքը մտնալու համար, և միանգամայն իրենց չար աղանդը յառաջ տանելու համար: Խորհուրդ տրվին Աոստանդիանոսին որ աղէկ կրնէ եթէ հերետիկոսներուն դէմ վճիռմը կը հանէ, որպէս զի շատ առաջ չերթան, ու ուղղափառական հաւատքին մնաս չընեն: Աոստանդիանոս՝ որ առիթ կրփնտուէր ուղղափառական հաւատքը տարածելու՝ գովեց Եւսերիոս նիկոմիդացւոյն իբրև թէ բարի նախանձը, որ ջուրը միշտ իւր չաղացը դարձընել կընայէր, ու մէկէն վճիռմը հանեց ուրիշ հերետիկոսներուն, այսինքն՝ Դոնատեաններուն, Աովատեաններուն, Աղենտինեաններուն, Պաւղինեաններուն, Սարկիոնեաններուն, ու Սոնտանեաններուն դէմ: Տրված վճուոյ մէջը արգելեց՝ որ անկից ետքը կարող չըլլան մէկ տեղ գալ ժողովիլ, թէ եկեղեցի ըլլայ թէ հրապարակական տեղ ըլլայ, և թէ մասնաւոր տուն ըլլայ, և քաղաքապետներուն ալ հրաման խրկեց, որ անոնց ձեռքէն առնեն եկեղեցիները ու ուղղափառներուն տան: Դարձեալ հրաման հանեց՝ որ ան հերետիկոսները որչափ որ գրքեր

ունիննէ՝ ամմէննալ կարդացվին ու աչքէ անցը-
վին : Ալ եթէ ծուռ բանմը գտնելու ըլլան իմացը-
նեն որուն որ պէտք է նէ : Արբոր աս վճիռը հրա-
տարակվեցաւ , աղանդաւորներուն գլխաւորները
ամմէննալ մէկ դի քաշվեցան ու պահվըտեցան :
Իսկ մնացեալ ռամիկ ժողովուրդը դարձեալ ուղ-
ղափառ եղան :

Աս հրովարտակէն արիոսեանները խալըսեցան ,
վասն զի աս հերետիկոսութիւնը ան ատենը դեռ
այնչափ տարածեալ չէր , և միանգամայն զատ եկե-
ղեցի չունէր , ինչպէս որ միւս հերետիկոսները ու-
նէին : Խալըսեցան նաև դոնատեանները , վասն զի
Վոստանդիանոս չուզեց զանոնք շատ սխմել վախ-
նալով որ մեծ չարիքմը դուրս կը հանեն : Ասև
թող տրվաւ անոնց՝ որ ուղղափառներուն ձեռքէն
առնեն ան եկեղեցին՝ որն որ Վոստանդիանոս շինել
տրված էր ուղղափառ հաւատացեալներուն համար :
Արբոր ուղղափառները խնդրեցին Վոստանդիանո-
սէն , որ իրենց ուրիշ եկեղեցիմը շինել տայ , ըսե-
լով՝ որ չենք ուզէր կռիւ ընել հերետիկոսներուն
հետ մեր եկեղեցին ետ առնելու համար , Վոստան-
դիանոս գովեց անոնց խաղաղասէր ըլլալը , շինել
տրվաւ իրենց զատ եկեղեցիմը , և թուղթմը գրեց
անոնց այսպէս : ,, Գուք աս ձեր ըրած բանովը կը-
,, ցըցընէք՝ թէ իսկապէս զՎոստոլած ճշմարիտ ու
,, հաստատուն լուսով ճանչցած էք , և աս անկից

„ յայտնի է՝ որ կըբաղձաքկոր անանկ ապրիլ՝ ինչ
 „ պէս որ Մստուծոյ պատուիրանները կըհրամայեն,
 „ և ինչպէս որ քրիստոնէական կրօնին կըվայլէ,
 „ գիտնալով որ՝ որչափ ճշմարիտ հաւատքին թշնա-
 „ միներուն գթութիւն կըլլայ աս աշխարքիս մէջ,
 „ այնչափ աւելի պատիժ կառնեն ՚ի հանդերձեալն:
 „ Թէ ինչ է մեր պարտքը ահա առջևնիս է, կա-
 „ տարենք ինչ որ մեզի Մստուած պատուիրած է, և
 „ բարի գործքերով ջանանք՝ որ չգլորինք ու չիսը-
 „ խալինք, և ողորմած Մստուծոյն օգնականութեամ-
 „ բը աւետարանական անսխալ ճամբուն մէջը մենք
 „ զմեզ դնենք“ : Մն կորսնցուցած եկեղեցւոյն տե-
 „ ղը Կոստանդիանոս տրվաւ ուղղափառներուն թա-
 „ գաւորական պալատմը՝ որ քակեն, ու անոր տեղը
 „ եկեղեցիմը շինեն իրենց. և գանձապետին ալ հրա-
 „ ման խրկեց, թէ ինչ ծախք որ հարկաւոր կըլլայ
 „ նայի ու հոգայ:

ԳԼ . ԽԵ .

Առաստանդիանոս իւրազլէի Գալտացիներուն աւ Սարճա-
 րացիներուն : Ս'եւոյրնէլ ինորայ զՍողոմարոս
 փիլէսոփան . եւ Շաղոմէ լազաւորին յորտոր իւր-
 լայ որ յիւստանեայներուն հոգ արանի :

Ամբ ան 332 և 333 .

Երբոր Առաստանդիանոս խել մը ատեն պատերազմ
 ընելէն ետ կեցած կէսմը եկեղեցական բաներու՝
 կէսմը քաղաք շինելու՝ ու կէսմըն ալ բարեկար-
 գութիներ ընելու կրպարապէր , ահա Գոթացի-
 ները անհամար բազմութեամբ յարձակեցան Սար-
 մատացիներուն վրայ , ու սկսան ան դին աս դին
 արիւնհեղութիւններ ու ասպատակութիւններ ը-
 նել , թալել՝ քանդել՝ կործանել՝ ու զանազան
 չարիքներ ընել ասոնց : Սարմատացիները չիկրնա-
 լով անոնց դէմ դնել , դիմեցին Առաստանդիանոսին՝
 աղաչելով որ իրենց օգնութիւն հասնի : Առաստան-
 դիանոս էզմը զօրք առաւ իրեն հետը ու գնաց :
 Համի տեառն 332ին Եպրիլի 22ին թշնամի-
 ներուն հետ անանկ քաջութեամբ , ու անանկ յա-
 ջողութեամբ պատերազմեցաւ՝ որ թշնամիներէն
 100,000 հոգիի չափ մեռցուց . կէսմը սրով՝ ու կէս-

մընալ ցրտով : Արարիկոս Թշնամիներուն Թագա-
 ւորը՝ տեսնալով իր գլխուն եկած վնասը խոնար-
 չեցաւ, Թողութիւն խնդրեց Արստանդիանոսէն, և
 աղաչեց որ հաշտութիւն ընէ : Իր որդին պատանդ
 (ուհին) տրվաւ Արստանդիանոսին քովը, և միան-
 դամայն յանձն առաւ, որ 40,000 զինուոր պահէ
 ամէն իժիր Արստանդիանոսին համար՝ որ երբոր
 կուզէ նէ զանոնք բանեցընէ : Աս պատերազմին մէջ
 Արստանդիանոս մասնաւոր աստուածային օգնու-
 Թիմը զգաց, անանկ որ նոյն իսկ Ղոթացիք իմացան՝
 Թէ Աստուած է որ իրենց հետ կը պատերազմիկոր,
 և անոր համար անոնցմէ շատերը դարձան ու քրիս-
 տոնեայ եղան :

Բայց մենք ուր դնենք Սարմատացիներուն
 ապերախտութիւնը, որ շնորհակալ ըլլալու տեղ
 Արստանդիանոսին, ելան արիւնհեղութիւններ ը-
 նել սկսան Հռովմայեցւոց տէրութեան մէջ : Բայց
 շուտով անոնց վրան հասաւ Արստանդիանոս, պա-
 տերազմեցաւ ու յաղթեց անոնց : Ասկից ետքը
 Արստանդիանոս գնաց ՚ի Ղաղղիա, գուցէ եղած
 փոքր խռովութիւնները ցածցընելու համար, և
 կամ Թէ հոն տեղի քաղաքներուն այցելութիւնմը
 ընելու համար, որովհետեւ գաղղիացիները շատ կը-
 բաղձային մէյմը Արստանդիանոսը տեսնալ : Բայց
 շատ ատեն հոն չուշանալով՝ նոյն տարւոյն մէջ

Հոկտեմբեր ամսոյն 26ին գարձաւ Աոստանդնու-
պօլիս եկաւ :

Վանիմը գաւառներ մեծ սով կրեցին 333
տարւոյն մէջ, անանկ որ՝ Ասորեստանցիք ու Ափ-
լիկեցիք օրը երկու անգամ առտու իրիկուն յափշտա-
կութիւններ կընէին իրենց քովի քաղաքներուն մէջ,
որպէս զի փորերնին կըշտացընեն : Յորենին գինը
այնչափ բարձրացաւ՝ որ երբէք ոչ եղած էր և ոչ
լված էր : Ասիկայ տեսնալով Աոստանդիանոս հօր
պէս գթացաւ անոնց վրայ, սաստիկ աշխատեցաւ
որ աս նեղութենէ խալըսէ ան խեղճ սոված մարդի-
կը : Հրաման հանեց՝ որ ամմէն տեղ արքունի
ցորեննոցները բացվին, ու էզմը ցորեն խրկելին ե-
կեղեցիներուն, որպէս զի քահանայները տնանկ
աղքատներուն ու որբերուն թէ ազգային ըլլան՝
և թէ պանդուխտ բաշխեն : Միայն Անտիոքայ
եկեղեցւոյն 30,000 չափ ցորեն խրկեց : Ասկից
կրնայ իմացվիլ թէ որչափ ցորեն գացած պիտի
ըլլայ ամմէն եկեղեցիները մէկ տեղ առնելով : Արբ
որ աս սաստիկ սովը կըտուէր, Աոստանդնուպօլիս
մեծ նեղութեանմը մէջ ընկաւ. որովհետև ցորենի
նաւերը չէին կրնարկոր ներս մտնել հովին ներ-
հակ փչելուն համար : ()րմը մեծ հրապարակին մե-
ջը Սոպատրոս անունով փիլիսոփայ մը տեսնելե-
ցաւ. ահա աս փիլիսոփային վն նայիս ժողովուրդը
մէկէն պոռչըտալով վազեցին, և սկսան հալածել

ու նշովել անիկայ իբրև կախարդ, ըսելով որ՝ անոր
 կախարդութեամբը նաւերը չեն կրնարկոր նաւա-
 հանգիստը հասնիլ : Արբոր աս շփոթութեան լու-
 ըը Աոստանդիանոսին ականջը հասաւ՝ խիստ վախ-
 ցաւ՝ չըլլայ թէ ատ խռովութենէ ուրիշ մեծ խռ-
 վութիւնմը ելլէ, ուստի իրեն բարի երեցաւ՝ որ
 զփիլիսոփան ժողովորդեան ձեռքը յանձնէ : Բայց
 ետքը երբոր լսեց թէ կտոր կտոր փառատերեն
 զինքը ժողովուրդը՝ խիստ ցաւեցաւ ըրածին վրայ :
 Ըս Սոպատրոս փիլիսոփան երևելի ու անուանի
 իմաստասէր մի էր, և Աոստանդնուպօլիս եկած էր՝
 որպէս զի աղաչէ Աոստանդիանոսին՝ որ թող տայ
 կուսպաշտութիւն ընելու : Աւ իրեն գեղեցիկ պեր-
 ճախօսութիւնը հաճոյ եղած էր Աոստանդիանոսին, որ
 կրնստէր ու անոր հետ երկայն երկայն վիճաբանու-
 թիւններ կրնէր, ըստ որում շատ կըսիրէր Աոս-
 տանդիանոս իմաստուններուն ու գիտուններուն
 հետ խորաթայ ընել : Բայց թէ ինչո՞ւ համար ի-
 րեն սիրելի անձը կատղած ժողովորդեան ձեռքը
 յանձնեց, ոմանք կըսեն թէ՝ աս բանս ինքիրէն չը-
 րաւ, այլ ուրիշ իշխանմը իրեն խորհուրդ տրվաւ
 որ ընէ : Իսկ ոմանք կըսեն թէ՝ ինքիրէն ըրաւ, որ-
 պէս զի ցըցընէ ժողովորդեան թէ որչափ կըզանի
 կուսպաշտութենէ :

Աոստանդիանոսին անունը քանի գնաց մեծցաւ
 ու ամմէն տեղ տարածեցաւ : Աւստի ուրիշ ամմէն

Թագաւորները կը բաղձային բարեկամութիւն ընել
 Աոստանդիանոսին հետ, և անոր համար դեսպան-
 ներ կը խրկէին ոչ միայն մօտիկ տեղերէն, այլ նաև
 հեռու տեղերէն զոր օրինակ շնդկաստանէն, Աթէ-
 սփլիայէն այնէ՝ շապէշիստանէն, որ այլանդակ
 զարհուրելի ու հսկայ մարդիկներ էին, որոնք մէկ-
 ըզմէկէ աւելի մեծագին ու դժուարաւ գտնուե-
 լու ընծայներ կը բերէին Աոստանդիանոսին, իսկ
 ոսկիէ պսակներ, մարգարտով բանված ծիրանի-
 ներ, ահիպարանոց երկվարներ բերողները հասա-
 րակ էին: Իսայց Աոստանդիանոս՝ որ առատաձեռ-
 նութեան կողմանէ մէկէնմը վար մնալ չէր ուզէր,
 աւելի ևս մեծագին պարգևներ կուտար դեսպաննե-
 րուն, ու անանկ սիրով կը խրկէր զանոնք իրենց
 քաղաքը: Այս որպէս զի հռովմայեցւոց տէրութեան
 հետ աղէկմը կապվին սիրով՝ ամմէնուն զատ զատ
 պատուոյ անուններ կուտար. իսկ որոնք որ երևելի
 ու մեծամեծ մարդիկներ էին՝ անոնց մեծ իշխանու-
 թիւներ կուտար, ուստի ասոր համար անոնցմէ շատե-
 րը չէին ուզեր իրենց հայրենիքը դառնալ, այլ սիրով
 կուզէին հռովմայեցւոց տէրութեան մէջ բնակիլ
 ու Աոստանդիանոսին ծառայել: Աստուծոնցս Շա-
 պուհ Պարսից Թագաւորը հրեշտակներ խրկեց Աոս-
 տանդիանոսին հարուստ ու մեծագին ընծայներով,
 որ տանին տան Աոստանդիանոսին, ու անոնց տեղը
 աղաչեն՝ որ իրենց երկաթ տայ. և որպէս զի Աոս-

տանդիանոս ծուռ կարծիքի մը չերթայ՝ ըսին որ Շապուհ թագաւորը կուզէ պատերազմ ընել մերձակայ ազգերուն հետ, և անոր համար զէնքի կարօտ է: Այդէկ հասկըցաւ Աոստանդիանոս Շապուհին միտքը՝ որ ուրիշ բան չէր, բայց եթէ զէնք վերցընել հռովմայեցւոց տէրութեան դէմ: Իրաւցընէ իրաւունք ունէր Աոստանդիանոս այսպիսի բարեկամութենէ ու այսպիսի առուտուրէ մէկդի կենալ, բայց հասարակաց խաղաղութիւնը չիխուովելու համար, թող տրվաւ անոնց՝ որ իր երկրէն երկաթ դուրս հանեն: Այնչ պատճառն ալ՝ որ Աոստանդիանոս աս բանը յանձն առաւ՝ ասիկայ եղաւ: Աոստանդիանոս գիտնալով՝ որ Պարսկաստան շատ քրիստոնեայներ կան, չըլլայ որ Շապուհ թագաւորը անոնց վնասմը ընէ, յանձն առաւ աս առաջարկութիւնը: Աւստի և թուղթ մի ալ գրեց Շապուհ թագաւորին՝ գովելով ու բարձրացընելով քրիստոնէութիւնը, և միանգամայն վար զարնելով կռապաշտութիւնը: Իսիստ մեծ յիմարութի է՝ ըսաւ՝ արարածները՝ որ մեզի ծառայելու համար ստեղծուեցան՝ ելլալ ամմէն մէկը աստուծոյ տեղ դնել ու պաշտել: Թէպէտ և՛ ըսաւ՝ ան արարածները լուսաւոր ու պայծառ ըլլան (աս խօսքով կիմանար արեգակը և հուրը՝ որոնք կրպաշտըվէին պարսիկներէն) տակաւին արարած են՝ որ ստեղծուեցան ճշմարիտ Աստուծմէն: Ետքը Աոստանդիանոս զին-

քը օրինակ բերաւ ըսելով թէ՛ ես այսչափ մեծցայ
 ու այսչափ յաղթութիւններ ըրի, վասն զի սրտիս
 մէջը ուրիշ բան չունէի՝ բայց եթէ ճշմարիտ աս-
 տուածապաշտներուն պաշտպան ըլլալ : Աստի կա-
 ղաչեմ որ դուն ալ անոնց ուրիշ աչքովմը նայիս,
 վասն զի ան թագաւորները՝ որ քրիստոնեայնե-
 րուն թշնամութիւն ըրին՝ ճշմարիտ Աստուծմէ չա-
 րաչար պատժը վեցան : Այսպիսի խօսքերով յոր-
 դորեց Աոստանդիանոս զՇ ապուհ՝ որ քրիստոնէից
 սէր ու մարդասիրութիւն ցըցընէ :

ԳՂ. Խ.Օ.

Աոստանդիանոս աղօլէ իրենդրէ Տէր սէ Անդուն Ա՛բ-
 Բահօրէն : Իրէն արոց ու էդէօրորդոց Տէ՛ջ
 էր Լագասորո-Լի-նը իրէաթնէ :

Ամբ ան 334 և 335 *

Թէպէտ Աոստանդիանոս ամենևին մէկ տեղացմը
 պատերազմի վախ չունէր, 'ի վերայ այսր ամենայ-
 նի միշտ իրեն հարկաւոր սեպելով աղօթից օգնա-
 կանութիւնը, թղթեր գրեց եպիսկոպոսներուն՝ ա-
 ղաչելով որ իրեն համար աղօթք ընեն : Թուղթ
 մի ալ գրեց մեր սուրբ հօրը Անտոն Աբբային, և

աս թղթին ստորագրել տրվաւ իր ամմէն որդւոցը, որուն մէջը կրխնդրէր սուրբ Անտոն Աբբաճօրէն որ՝ իր սուրբ և աստուածահաճոյ աղօթքին մէջ յիշէ զինքը ու իր ընտանիքը: Երբոր աս թուղթը սուրբ Անտոնին ձեռքը հասաւ, առանց հպարտանալու՝ թէ իրեն այսպիսի մեծ թագաւորմը թուղթ գրեր է, կանչեց իր ճգնաւորները, ու անոնց կարգաց Կոստանդիանոսին գրած թուղթը: Ետքը այսպէս ըսաւ անոնց: «Սի զարմանաք՝ որ թագաւորմը, մեզի նամակ գրեր է, որովհետև ան ալ մեզի նման, մարդ մի է. այլ անոր զարմացէք՝ որ Աստուածմը մարդիկներու համար օրէնք գրեց, և մեզի խօսանկից եղաւ իր Արդւոյն միջնորդութեամբը»: Աս թղթին չէր ուզերկոր պատասխան տալ մեր նբ Անտոն Աբբաճայրը, ըսելով թէ՝ չեմ կրնար ես այնպիսի մեծ թագաւորի վայելուչ թուղթ գրել: Բայց երբոր իրեն ճգնաւորները զինքը շատ յորդորեցին պատասխան մը տալու որպէս զի Կոստանդիանոսին դժարը չիգայ, զիջաւ անոնց կամացը նբ Անտոն Աբբաճայրը, ու առանց շողոքորդութիւն մը ընելու, բարի ու պատուական խրատներով զարդարված Կոստանդիանոսին ու որդւոցը միանգամայն աս կերպով թուղթ մը գրեց: «Աշխարհային մեծութիւնները ամենևին բանիմը տեղ չիղնէք, այլ շարունակ աչվընիդ հանդերձեալ դատաստանին վրայ ըլլայ. մի միայն թագաւոր երկնի և

,, երկրի զՔրիստոս ճանչցէք՝ ուսկից որ ամենայն
 ,, թագաւորք կախեալ են, գթած մարդասէր ու ողոր-
 ,, մած եղէք. մասնաւոր հոգմը տարէք աղքատնե-
 ,, րուն. և հուսկ յետոյ սիրեցէք զարդարութիւն՝ :
 Ըհա կատարեալ ճգնաւորի գլուածք՝ որուն զար-
 դարանքը ուրիշ բան չէ՝ բայց եթէ ճշմարտութիւ-
 նը բացայայտ առջնին դնել : Ըս թղթին վրայ
 մեծապէս ուրախացան թէ Աոստանդիանոս և թէ
 իր որդիքը, և այնպէս սիրով կարգացին՝ իրրև թէ
 հոգին սուրբ կըխօսիկոր մէջը :

Համին 334 Գթացիները դարձեալ յանդրգ-
 նեցան, ու Սարմատացիներուն դէմ՝ զէնք վեր-
 ցուցին : Ըսոնք ալ որպէս զի անոնց դէմ դնեն,
 բռնեցին իրենց գերիները աղէկմը զինաւորեցին,
 ու անոնց դէմը հանեցին՝ որ պատերազմին : Իրաւ
 աս գերիները ցըցուցին իրենց ձեռվոններնուն քա-
 ջութիւնը, ու անանկ կըտորըճութեամբ մը պատե-
 րազմ տրվին թշնամիներուն դէմ, որ թէ իրենց
 տէրերը ու թէ թշնամիները զարմացան մնացին :
 Իայց ինչ օգուտ՝ որ աս գերիները իրենց տէրեր-
 նին մէկ վտանգէմը խալըսեցին, ու մէկալ չարա-
 գոյն վտանգի մէջ ձգեցին. վասն զի նոյն սուրե-
 րով՝ որ իրենց թշնամեաց կողէն հանած էին, ի-
 րենց տեարցը դէմ սկսան ծեծկրվիլ ու ջարդել :
 Եւ որովհետև տեարքը՝ մէյմը որ զէնք չունէին,
 մէյմալ որ անոնց նայելով իրենք շատ քիչվոր էին,

անոր համար չի կրնալով անոնց դէմ դնել, թող տրվին իրենց երկիրները տուները ու բովանդակ հարստութիւնն, ու անանկ խեղճ ողորմելի փախան եկան Արստանդիանոսին 300,000 հոգիի չափ: Վթացաւ անոնց վր Արստանդիանոս, ու զանոնք սիրով իր պաշտպանութեան տակը առաւ: Արոնք որ զօրեղ էին՝ զանոնք զինուոր ըրաւ, իսկ մնացեալները բաժնեց ՚ի Թրակիա յԱսորեստան ՚ի Սակեդոնիա և յԱտալիա, ամմէնուն երկիրներ բաժնելով, որ սերմանեն ու անով ապրին: Ետքը հռովմայեցիները գերիներուն ձեռքէն առին ան երկիրները, ու իրենց տեարցը դարձուցին:

Յամին 335 Տարսոս ըսված անարգ ցեղէ մարդուն մէկը գլուխ վերցուց ու ապստամբեցաւ. էզմը պարապ պրտըտօղ ու արիւնկզակ մարդիկներ իր գլուխը ժողվեց, ու անոնցմով յանդգնութիւ գնաց տիրեց Արարոս (Սպարզ) կղզւոյն, և հոն տեղս ինքը զինքը թագաւոր ըրաւ: Ես որ լսեց Արստանդիանոս՝ շուտմը զօրք խրկեց հոն տեղս, ու ան ապստամբ թագաւորը բռնել և հրապարակի մէջ երել տրվաւ:

Ես տարի Արստանդիանոսին թագաւորութե երեսներորդ տարին էր: Երաւցընէ արժանի էր՝ որ Արստանդիանոս զինքը երջանիկ սեպէր, վասն զի Ակտավիանոս () գոստոսէն սկսեալ ինչվան իրեն ատենը ոչ ոք կայսր այնչափ ատեն թագաւորած

էր: Վիճակը տիանոս խիստ բաղդաւոր սեպւած էր, վասն զի կրցած էր իր թագաւորութեան քսաներորդ տարեդարձը ընել: Արդ՝ Աոստանդիանոս անպատմելի ուրախութեամբ լեցւած ըլլալով, ուզեց նոյն օրվան փառաւորութիւնը Աոստանդնուպօլսին մէջ թէ՛ աշխարհական և թէ՛ հոգևորական ուրախութեամբ ու մեծ հանդիսութեամբ կատարել: Բայց ահա այսպիսի ուրախութեան մէջ արիօսեանները իրեն խորհուրդ տըվին որ՝ երկու ժողով ընել տայ, մէյմը՝ ՚ի Տիւրոս, որպէս զի Արիօսին պատճառաւը եղած խռովութիւնները վերնայ, և մէյմընալ Արուսաղէմ, որպէս զի Արուսաղէմայ եկեղեցւոյն՝ որ Աոստանդիանոս շինել տըված էր, նաւակատիքը՝ նուիրագործիւթիւնը փառաւոր հանդիսութեամբ կատարեն: Աոստանդիանոս անզգուշութեամբ հրաման տըվաւ՝ որ աս երկու ժողովը ըլլայ: Թէ ինչ եղաւ աս երկու ժողովին մէջը՝ ետքը կը պատմենք, հիմակ տեսնանք՝ որ Աոստանդիանոս իրեն թագաւորութեան երեսներորդ տարեդարձը ընելէն ետքը՝ ինչ բանի ձեռք զարկաւ:

Աոստանդիանոս ուզեց կեսարական պատուով պսակել իր եղբօրորդին Վաղմատիոսը՝ որ խիստ քաջ պատերազմական երիտասարդ մի էր, և մեծ անուն ունէր զօրաց առջևը: Բայց երբոր տեսաւ Աոստանդիանոս՝ որ ասոր վըայ իր որդիքը կը բարկանանկոր ու դիժարնին կուգայկոր, կարծեց թէ՛ ա-

նոնց բարկութիւնը կրնայ իջեցընել՝ եթէ ամ-
մէն մէկուն զատ զատ երկիրներ բաշխելու ըլլայ,
որպէս զի անոնց վրայ տիրեն : Ուստի աս խորհրդով
երկիրները բաժնեց այսպէս : Սեծ որդւոյն՝ որ
կըսվէր Աոստանդին՝ տըվաւ ինչ երկիր որ իր հօր-
մէն իրեն մնացած էր : Արկրորդ որդւոյն՝ որ կըս-
վէր Աոստանդոս՝ տըվաւ արևելքը : Արրորդ որդւոյն՝
որ կըսվէր Աոստաս՝ տըվաւ Իտալիա, Եփրիկէ,
ու Ալիւրիկիա : Իսկ Վաղմատիոսին իր եղբօրորդւոյն՝
տըվաւ Թարակիա ու Ալիւրիկիոյ մէկ բաժինը, այսինքն՝
Սակեդոնիա և Եփայիա : Ես Վաղմատիոսը եղ-
բայրմը ունէր՝ որ կըսվէր Եննիբաղիանոս : Եսոր
հետ Աոստանդիանոս կարգեց իր աղջիկը՝ որ կըս-
վէր Աոստանդիա, և զինքը իշխանական պատուոյ
հասցուց : Բայց Աոստանդիանոսին աս երկու եղ-
բօրորդիքը՝ իրեն մեռնելէն ետքը՝ իր տղոցմէ
սպանվեցան :

Ես ատեններս Աոստանդիանոս երկու օրէնք
հրատարակեց Աարթագինոյ մէջ . մէյմը՝ արգելեց
Հրէայներուն՝ որ ամենևին չինեղեն ու չիչարչարեն
զհրէայն՝ որ կուզէ քրիստոնեայ ըլլալ . և մէյմը-
նալ որ՝ եթէ հրէայմը իր գերին թլփատելու ըլլայ,
թէ քրիստոնեայ ըլլայ և թէ հեթանոս, կարօղ
չըլլայ ան գերին իր քովը պահել, այլ պէտք է որ
ազատ ընէ :

Գ 1 . Խ Ե 2 .

Սուրբ Աւետարանի դէմ էլած զըպարտութիւնները :

Ամբ ԹՆ 331 մինչև 333 .

Եւսեբիոս 'Աիկոմիդացին երբոր տեսաւ՝ որ սբ Աթանասը եկեղեցւոյն մէջ չառաւ զԱրիոս, և զՎոստանդիանոս ալ համոզեց, ինչպէս որ վերը ըսինք, քիչմը ատեն կանկ առաւ, որպէս զի վրայէն ատեն անցնելով՝ կարող ըլլայ Վոստանդիանոսին միտքը փոխել, ու իր չար կամացը ծառայեցնել : Ուստի մելիտեան ըսված հերձուածողներուն հետ խօսքը մէկ ըրաւ, ու խօսք տրվաւ անոնց՝ թէ Վոստանդիանոսին առջին իրենց բարեխօս կրլայ, եթէ սուրբ Աթանասին դէմ զըպարտութիւն ընել յանձն կառնունէ : Ասոնք թէպէտ արիոսեաններուն դէմ էին, բայց 'ի վերայ այսր ամենայնի զսուրբ Աթանասն ալ հալածելու բաղձանք ունէին, որովհետև սուրբ Աթանասը անոնց բռնած ճամբուն չէր հանած, ուստի ամենայն սիրով ու յօժարութեամբ խօսք տրվին Եւսեբիոսին՝ որ անմեղը կըզըպարտենք : Առումը Եւսեբիոս 'Աիկոմիդացին բռնեց անոնցմէ իրեք եպիսկոպոս 'Աիկոմիդիա խրկեց, որպէս զի, ամբաստանութիւն ընեն Վոստանդիանո-

սին, թէ սուրբ Աթանասը ժողովրդեան վրայ ծանօթութիւն կը դնէկոր, եկեղեցւոյն համար կտաւ կը պահանջէկոր: Երբոր ասոնք աս ամբաստանութիւնը կընէին, դիպուածով հոն գտնուեցան նր Աթանասին երկու քահանայները, որոնք տեսնալով ասոնց ըսած ստութիւնը՝ ջատագովեցին զսուրբ Աթանասը, ու զասոնք իրրև ստասաց խայտառակեցին: Աոստանդիանոս տեսնալով սուրբ Աթանասին անմեղութիւնը՝ սիրեց զինքը, ու իրեն թուղթ գրեց՝ որ իր պալատը գայ: Իսկ Եւսեբիոս Արևմտափոքացին երբոր տեսաւ՝ որ աս ճամբով իր անօրէնութիւնը չի կրցաւ յառաջ տանիլ, ճամբան փոխեց և ուրիշ հնարք ձեռք առաւ: Ապսպրեց ան երեք եպիսկոպոսներուն՝ որ ամենևին չի վախնան ու ետ չի դառնան, այլ սպասեն՝ ինչ վան որ սուրբ Աթանասը գայ, որ երբոր հոն կը հասնի՝ շուտմը նոր ամբաստանութիւն ընեն անոր դէմ, և ինչ որ պիտի ամբաստանէիննէ՝ անոնց սորվեցուց: Արդ՝ հազիւ թէ սուրբ Աթանասը Աոստանդիանոսին պալատին մէջը ոտքը դրաւ՝ ահա նոր ամբաստանութիւնը ըրին՝ որ գուցէ սուրբ Աթանասը ատ ըսած բաներնին և ոչ միտքէն կրնար անցընել: Իսին թէ՛ սուրբ Աթանասը էզմը ստակ տրված է Աոստանդիանոսէն ապստամբ մարդումը՝ որ կըսվէր Վիդոմէնէս, որպէս զի իրեն ապստամբութիւնը կարող ըլլայ առաջ տանել, և թէ Սակարիոսը՝

որ վերի ըսված երկու քահանայներուն մէկն էր՝ որոնք զսուրբ Աթանասը արդարացուցին՝ խորան մը կործանեց, զսուրբ սկիհը կոտորտեց, և Իսքիրաս մելիտեան քահանան խորանին վրայէն քաշեց ու հրեց, և թէ այս ամենայն բաները սուրբ Աթանասին խորհրդովը ըրաւ : Չարմացաւ մնաց Աոստանդիանոս՝ երբոր այսպիսի չիւսված ամբաստանութիւնները լսեց սուրբ Աթանասին ու Սակարիոսին վրայ : Հարցուց սուրբ Աթանասին՝ թէ ստոյգ՝ աս ըսած բաներնին ըրիրմի : Պատասխան տրվաւ սուրբ Աթանասը, ոչ երբէք, զրպարտութիւն է ըրածնին, և ինչպէս որ պէտք էր նէ նք Աթանաս արդարացուց թէ զինքը և թէ իր ընկերը : Հաւտաց Աոստանդիանոս սուրբ Աթանասին ըսածներուն, ու զինքը ոչ միայն անմեղ հանեց իր դատաստանին մէջէն, այլ նաև ձեռքը թուղթ մը տրվաւ՝ որուն մէջը կը գովէր զինքը իբրև ճշմարիտ ու քաջ հովիւ, և անանկ խրկեց յԱղեքսանդրիա, և հրամայեց՝ որ ան թուղթը կարգայ իր ժողովրդեան առջին, որպէս զի իրեն անմեղութիւնը՝ ու մէկալներուն զրպարտութիւնը դուրս ելլայ : Իսպց որովհետև ան սուտ զրպարտողները իրենց յանցանաց արժանի պատիժը չառին, անոր համար աներեսութեամբ ուղեցին իրենց ամբաստանութիւնը ոչ միայն առաջ քշել՝ այլ նաև նոր ամբաստանութիւն մ' ալ վրան եւելցընել, և ան այնպիսի

ամբաստանութիւն որ զսօղը ակամայ կըհաւտացը-
նէ, վասն զի ամենեին չիտարակուսիր՝ թէ ասչափ
մեծ սուտ զրպարտութիւն մէկու մը վրայ դրվի:
Իսին՝ թէ սուրբ Աթանասը մեռցուց զԱրսենիոս
մելիտեան եպիսկոպոսը, և կտրեց անոր մէկ թևը,
ու անով կախարդութիւններ կընէկոր: Արպէս զի
ասոր ամմէնքը հաւտան, սնտուկ մը դուրս հանե-
ցին, որուն մէջը կտրած ձեռք մը կար: ու սկսան
ասդին անդին տանիլ բերել, ու չիհաւտացողին
նաև բանալ ցրցընել: Ահա աս ան օձն է՝ որուն
Աւսերիոս նիկոմիդացին ծովուն մէջ ընկած ըլլա-
լով ձեռքը երկնցուց որ բռնէ, բայց ինչ օգուտ
որ զինքը խածաւ:

Արբոր Կոստանդիանոս աս զարհուրելի ամբաս-
տանութիւնը սուրբ Աթանասին վրայ լսեց՝ յանձ-
նեց իր եղբօրը Ղաղմատիոսին որ աս բանս նայի
տեսնէ, իրաւ է սուտ է իրեն հասկըցընէ: Ղաղ-
մատիոս քննեց իմացաւ, որ Արսենիոսը մեռած չէ,
այլ Ագիպտոս վանքի մը մէջ պահվտած կեցեր
է: Արբոր սուրբ Աթանաս աս բանս իմացաւ՝ շուտ
մը իր սարկաւազը խրկեց, որ երթայ տեսնէ:
Վանքին մեծաւորը՝ որ էր Սելիտեան՝ երբոր լսեց
թէ սուրբ Աթանասին սարկաւազը զԱրսենիոս
փնտռելու կուգայկոր, գաղտուկ նաև մը հեծցուց
զԱրսենիոսը՝ Սեղոս գետին վրայ՝ ու փախցուց:
Սարկաւազը երբոր Ագիպտոս հասաւ՝ վանքին մե-

ծաւորը դատաստանի կանչեց, և ինչ ըրաւ չըրաւ
 խոստովանել տրվաւ անոր՝ թէ ինքը փախցուց
 զԱրսենիոս. և այսպէս բոլոր Ազգիպտոսին մէջ տա-
 րածեցաւ աս բանս : Արսենիոս զինքը վտանգի մէջ
 տեսնալով, նաւը դարձուց դէպ 'ի Տիւրոս, կար-
 ծելով թէ՛ հոն տեղս անծանօթ կրմնայ : Արբոր
 հոն հասաւ, տէրութիւնը հարցուց իրեն՝ թէ դու
 ո՞վ և որպիսի մարդ ես : Ասիկայ սկսաւ ծուռ մուռ
 պատասխաններ տալ . և որովհետեւ սուտին մէկ
 ոտքը կաղ (թօփալ) է, անոր համար աս ալ կաղալ
 սկսաւ իր պատասխաններուն մէջ : Ա երջապէս քաղ-
 քին եպիսկոպոսը՝ որ Պօղոս կրսովէր՝ շատ ետեւէն
 իյնալով՝ խոստովանել տրվաւ անոր իր բերնովը՝
 թէ ինքը է Արսենիոսը : Ահա դարձեալ արդարա-
 ցաւ սուրբ Աթանասը ու իր թշնամիներուն վրայ
 յաղթանակ կանգնեց, և ուրախութիւն մ' ալ ու-
 նեցաւ՝ որ Արսենիոսը ճանչնալով իր սխալմունքը՝
 հեռացաւ բոլորովին Սելիտեաններէն, ու թողու-
 թիւն խնդրեց սուրբ Աթանասէն : Արբոր լսեց
 հովհաննէս Արգաբոս Սելիտեան հերձուածողնե-
 րուն գլուխը՝ թէ Արսենիոսը անդին դարձերէ՛
 ամբշնալէն ինչ ընելիքը չէր գիտեր . կրվախնար՝
 որ Արսենիոսը ամմէն խայտառակութիւնները դուրս
 կըհանէ սուրբ Աթանասին առջին : Ուստի ինքն ալ
 իմաստութեամբ մտմտալով՝ թող տրվաւ մեղի-
 տեանները ու սուրբ Աթանասին կողմը գարձաւ :

Աստանդիանոս խիստ ուրախացաւ ասոր դառնալուն վրայ, և իր ուրախութիւնը անոր ցրցընելու համար՝ շուտով թուղթ մը գրեց իրեն՝ որ արքունի կառք ու երիվար բռնէ ու ելլէ իր պալատը գայ, որովհետև մեծամեծ բարիքներ մտքին մէջը պատրաստած է իրեն ընելու:

ԳԼ ԽԲ.

Տէրտին շարժողովը, և սուրբ Աթանասին դատաւարութիւնը:

Ամբ ան 334 և 335 •

Քիչ մը ատեն աս ներհակ հովերը՝ որ սուրբ Աթանասին դէմ կրկուռէինկոր՝ դադրեցան ու ձայներնին քաշեցին, և որպէս թէ պատրաստութիւն տեսնալու ետեւէ եղան անանկ մը զարնըվելու՝ որ սուրբ Աթանասը դէմ չիկրնալով դնել չարաչարնաւարեկութիւննէ: Յամին 334, ահա հին ամբաստանութիւնները նորոգեցին, սկսան հաստատել թէ ստոյգ սուրբ Աթանասը մեռցուց զԼիւսենիոս եպիսկոպոսը, և Սակարիոս ալ զԼիւսիւրաս քահանան խորանին վրայէն մէկ դի քաշեց և զսուրբ բաժա.

կը խորտակեց : Այս և առաջ աս Իսքիրասը քահանայ չէր , ահա առաջին ստուծիւնը : Արկրորդ ըսին թէ Արսենիօսը մեռած ու թաղված է , և սակայն Արսենիօսը կենդանի էր , ահա երկրորդ ստուծիւնը : Բայց մենք թողունք ասոնց ստուծիւնները համրելը ու առաջ երթանք նայինք թէ այս ամենայն բաներուն ծայրը ուր ելաւ : Ինչպէս վերը ըսինք՝ Աւսերիօս նիկոմիդացին աղաչեց Աոստանդիանոսին որ եկեղեցւոյն խաղաղութեանը համար ժողով մը ընել տայ , և սուրբ Աթանասն ալ հոն գայ , ու իրեն դատը տեսնելի : Աոստանդիանոս թէպէտ գիտէր սուրբ Աթանասին անմեղութիւնը , բայց ՚ի վերայ այսր ամենայնի թող տրվաւ որ ասոր վրայ ժողով մը ըլլայ , որպէս զի անոր անմեղութիւնը աղէկ մը իմացվի : Ժողովին տեղը ընտրվեցաւ Աեսարիա Պաղեստինոյ , բայց ժողովը հոն չեղաւ , վասն զի սուրբ Աթանասը ժողովին չեկաւ , ըսելով թէ՛ պարապ տեղ դատաւորները կընստին դատելու ուր որ յանցանք կամ յանցանաց հիմն չիկայ : Աւսերիօս որ առթի կըսպասէր սուրբ Աթանասին դէմ՝ ամբաստանութիւն ընելու՝ շուտ մը իմացուց Աոստանդիանոսին՝ թէ սուրբ Աթանասը իրեն հրամանը ոտքի տակ առաւ ու ժողովի չեկաւ : Ասոր վրայ Աոստանդիանոս մտմտութի մէջ մտաւ , ու տարակուսեցաւ սուրբ Աթանասին անմեղութիւնը վրայ , ըսելով մտքին մէջը՝ թէ որ արդար էր պէտք

էր որ գար իր արդարութիւնը ցըցընելու համար, իսկ արդ չեկաւ, ուրեմն յանցաւոր է: Ուստի այսպիսի մտքի վրայ ըլլալով Աոստանդիանոս՝ սաստիկ պատուէր տրվաւ սուրբ Աթանասին թէ պէտք է որ ժողովին գայ, և ժողովին տեղը ընտրեց զՏիւրոս: Բայց Ալեսեբիոս նիկոմիդացին գիտնալով որ Աոստանդիանոս սաստիկ կըսիրէ զխաղաղութի՝ աղաչեց Աոստանդիանոսին որ շատ եպիսկոպոսներ ժողովին, որպէս զի՝ ըսաւ՝ աղէկ մը քննըվի ու նայվի թէ ինչ հակառակութիւն է աս՝ որ կայ նր Աթանասին ու Արիոսին մէջը, բայց ասանկ խօսած ատենն ալ զսուրբ Աթանասը կէսմը կամբաստանէր ըսելով թէ՝ աս խռովութիւնները ու կռիւնները չէր ըլլար թէ որ սուրբ Աթանասը քիչ մը մէկ դիթող տալու ըլլար իրեն հպարտութիւնը, խռովասիրութիւնը, ու չիբաշվելու յամառութիւնը որ ըսածէն և ոչ կէտ մը (նօխտայմը) կուզէ ետ դառնալ: Ինչ որ է նէ սուրբ Աթանասը երբոր առաւ Աոստանդիանոսին հրամանը՝ քառասունըվինը եպիսկոպոսներով ճամբայ ելաւ ու Տիւրոս եկաւ: Ալեսեբիոս՝ Աիկոմիդացին վաթսուն եպիսկոպոս բերած էր ամմէնն ալ ուսուցիչներնէն ինչվան գլուխնին արիոսեան աղանդին մէջը թաղված: Աոստանդիանոս թուղթ մը գրեց աս ժողովին այսպէս: Արցաւիմ՝ կըսէր՝ որ եկեղեցւոյն խաղաղութիւնը քանի մը հողիններուն յամառութեանը համար կըվրդովիկոր:

Ա՛ղէ նայեցէք որ աս բաժանմունքները ու տարա-
 ձայնութիւնները միացընէք: ()գնութիւն հասէք
 անոնց՝ որոնք որ կարօտ են ձեր օգնութեանը, որ-
 պէս զի սին ցանկալի միաբանութիւնը՝ որ այնչափ,
 քաղաքներէն վերցըվեցաւ՝ դարձեալ հաստատվի
 և վերաւորեալ անդամները ողջանան: Ա՛յսպէս զրեց
 Արոստանդիանոս՝ ան որ պաշտպան և ջատագով էր
 ուղղափառ եկեղեցւոյն, ան որ կը պարծենար թէ
 սրտին մէջը ուրիշ բան չունի բայց եթէ ուղղափա-
 ռական հաւատքը ամբողջ պահել ու ամմէն աղտոտ
 հերետիկոսութիւններէն սրբել: Այսպէս և Արոս-
 տանդիանոս նիկոմիդացւոյն հնարքներէն, խարվե-
 ցաւ անոր բերնին անուշ խօսքերէն, կարծեց թէ որ-
 չափ որ եպիսկոպոս ժողոված է նէ ամմէնն ալ ճշմա-
 րիտ կրօնասէր ուղղափառ և ՚ի Վրիստոս խաղա-
 ղասէր են: Ա՛րդ երբոր ժողովը կազմըվեցաւ, հրա-
 մայեցին սուրբ Աթանասին որ ոտքի վրայ կենայ
 յանցաւորի մը պէս. ուր նք Աթանասին եկեղեց-
 ւոյն մեծութեանը նայելով՝ պէտք էր անոր նա-
 խագահ նստել ժողովին մէջ: Ի՛այց անոր տեղը ժո-
 ղովին նախագահը եղաւ Վրակիղոս Անտիոքայ հայ-
 րապետը: Ա՛ս որ տեսաւ Պոտամոնէս սուրբ եպիս-
 կոպոսը սիրտը չդիմացաւ, աչվըները արցունքով
 ծով կտրեցաւ՝ ու հառաչելով մը դարձաւ Աւսե-
 բիոս կեսարացւոյն ըսաւ. «Ո՛վ Աւսեբիոս՝ ո՞վ կրնայ
 » համբերել, և ո՞վ կրնայ տեսնել, որ դուն դա-

„տաւորի մը պէս նստիս, ու անմեղ Մթանասը մե-
 „ղապարտի մը ու յանցաւորի մը պէս ոտքի վրայ
 „կենայ: Աղաչեմ ըսէ ինձի՝ բռնաւորներուն ու
 „հալածանաց ատենները՝ մէկ տեղ բանտը չէինք
 „մի: Աթէ իմ վրաս ըսելու ըլլամ, ահա՛ ճշմար-
 „տութիւնը պաշտպանելու համար աջ աչքս կորսն-
 „ցուցի, բայց դուն մարմնոյդ հիչ մէկ անդամը չի-
 „կորսնցուցիր, զքեզ կրտսնանքկոր հոս տեղս մեր
 „առջին ողջ և առողջ ամենայն անդամօք, չես կրը-
 „նար ցրցընել մեզի նշան մը կամ փորձ մը որ հա-
 „ւատքի մէջը հաստատուն կեցար: Ի՞նչպէս կրցար
 „դուն բանտէն խալըսիլ ու ազատութիւն ստա-
 „նալ, ուրիշ կերպով չէ՛ բայց եթէ կամ խոս-
 „տացար թագաւորին հրամանացը հնազանդիլ, և
 „կամ բռնաւորին կամքը կատարեցիր“ : Ասոր վն-
 սաստիկ բարկանալով Աւսերիոս կեսարացին, և
 չիկրնալով ինքը զինքը արդարացընել, որովհետև
 ըսածները ճշմարիտ էին, սկսաւ կոպտութեամբ նա-
 խատել ու արհամարհել զՊոտամոնէս եպիսկոպո-
 սը, և այն օրը ասոր պատճառաւ ժողովը արձը-
 կեցաւ : Աոստանդիանոս աս ժողովին խրկած էր
 Վրդավիոս Վիոնէսիոս կոմսը՝ ինչպէս որ արիոսեան-
 ները ուզած էին, ժողովին կարգադրութիւնը ասոր
 յանձնըված էր որ իբրև ո՛չ ասդիէն և ո՛չ անդի-
 էն միօրինակ աչքով պիտի նայէր ամմէնուն, և
 զգուշանար պիտի որ անկարգութիւն մը չըլլայ,

բայց առաջին անկարգութիւնը ինքը ըրաւ՝ որ արիօսեաններուն կողմը բռնեց՝ ու ժողովոյն վրայ բռնաւորութիւն ըրաւ : Աւսերեանց հրամանովը խել մը զինուորներ ալ եկած էին անոնց բռնութիւնները՝ ի գործ դնելու համար : Օ՛վ Ակարիոս սուրբ Աթանասին քահանան՝ որուն վրայ՝ ինչպէս վերը պատմեցինք՝ ամբաստանութիւն ըրած էին՝ թէ սուրբ սկիհը կոտրեց՝ և սուրբ խորանը կործանեց՝ շղթաներով կապված հոն ժողովին մէջը բերին :

Աւսերեանք իբրև ամբաստանողներ սկսան զսուրբ Աթանասը հայրապետներուն առջին ամբաստանել, ըսելով թէ՛ սուրբ Աթանասը ոչ միայն Ակարիոս քահանային խորհուրդ տրվաւ որ ատ բաները ընէ, և ոչ միայն զԱրսենիոս եպիսկոպոսը մեռցուց, այլ նաև կոյս աղջիկ մը նալ պղծեց : Ասիկայ էր գէշ ու աներես կին մը՝ որ արիօսեաններէն էր մը ստակ առաւ ու համարձակեցաւ ժողովին մէջը մտնել ու աս զարհուրելի ամբաստանութիւնը սբ Աթանասին դէմ ընել : Աս՝ ըսաւ՝ իմ կուսութիւնս Աստուծոյ նուիրած էի, բայց աս Աթանասը իրիկուն մը եկաւ իմ քովս պառկեցաւ ու զիս բռնադատեց, և ետքը էղ մը ընծայներ ինձի բաշխեց որպէս զի ձայն չիհանեմ : Սուրբ Աթանասին ականջը յառաջագոյն հասած ըլլալով որ Աւսերեանները իրեն ասանկ հնարք մը պիտի բանեցընեն՝ խորհուրդ ըրաւ Տիմոթէոս անունով քահանայի մը

Հետ, որ իրեն տեղը պատասխան տայ այն անամօթ
 կնկան: Ուստի երբոր հայրապետները ըսին թէ Ա-
 թանասը առաջ գայ պատասխան տալու կնկան,
 սուրբ Աթանասը ամենևին տեղացը չիշարժեցաւ,
 և ոչ ոտքը տեղէն վերցուց: Այլաւ անոր տեղը
 Տիմոթէոս քահանան ու ըսաւ կնկան: Ի՞նչ, ես
 քեզի Հետ խօսեցայ մի, և կամ քու տունդ եկայ
 պառկեցայ մի: Անիկը յիմարաբար ձայն վերցուց
 ու պոռչրտալ սկսաւ և ձեռքով զՏիմոթէոսը ցը-
 ցընելով ըսաւ: Էրամներես դուն ես, գիտեմ
 ստոյգ, որ այսպիսի տեղ զիս բռնադատեցիր ու
 տառապեցուցիր զիս և իմ կուսութեանս ծաղիկը
 թռոմեցուցիր, ան որ ես պզտիկուց Աստուծոյ
 նուիրած էի: Ասոր վրայ ալ բերանը բացաւ անա-
 մօթ լըբութեամբ, և ինչ որ այնպիսի կնկանէ մը
 կը յուսացվինէ ըսաւ: Իսոյց արչափ որ անիկայ իր
 ձայնը կը բարձրցընէր ու ըսածը հաստատել կը ջա-
 նար, այնչափ թշնամիներուն երեսնին ամօթէն
 կը կարմըրէին՝ ու գետինը կանցնէին: Եւստ մը Աւ-
 սեբեանք դուրս վընտեցին կնիկը, և թէպէտ սուրբ
 Աթանասը շատ ստիպեց որ կենայ որպէս զի հար-
 ցընէ իրեն թէ՛ ո՛վ զինքը աս բանի յորդորեց,
 բայց օգուտ չեղաւ: Թշնամիները շուտ մը խօսքը
 փոխեցին ու ըսին, հոգերնիս չէ որ աս կնկան
 ամբաստանութիւնը սուտ ելաւ, մենք ունինք ու-
 թիշ ամբաստանութիւններ՝ որուն Աթանասը դէմ

շիկրնար դնել, որոնց մէկը աս է: Աթանաս մեռ-
 ցուց զԱրսենիոս եպիսկոպոսը: Բայց հոս տեղս խ-
 կապէս պէտք է զարմանալ Աւստրեաններուն յի-
 մարութեանը ու անխոհեմութեանը վր: Գիտէին
 որ Արսենիոս եպիսկոպոսը սուրբ Աթանասին հետ
 հաշտրված է՝ ու անոր կողմն է, և Աոստանդիանո-
 սին ալ խիստ սիրելի եղած է, սակայն հիմակ կել-
 լին ամբաստանութիւն կրնենկոր թէ սուրբ Աթա-
 նասը մեռցուց զԱրսենիոս: Սեբ Աստուծոյ դա-
 տաստանին յանձնենք ասիկայ՝ որ շատ անգամ թող
 կուտայ որ մարդս ինք իրեն փոս փորէ՝ որպէս զի
 մէջը իյնայ, և առաջ երթանք ու վերջը տեսնենք:
 Արսենիոսը ժողովին եկած չէր, կամ Աւստրեան-
 ները թող չէին տրված որ գայ, և կամ սուրբ
 Աթանասը խորհուրդ տրված էր՝ որ պահվուտի ու
 դուրսը չերևայ: Ուստի աս բանս իմանալով Ար-
 սենիոս առջի իրիկվունէ պահվուտեցաւ Տիւրոս քա-
 ղաքը, և սուրբ Աթանասը իրեն ապսպրեց որ՝ երբ
 որ մարդ խրկէ նէ զինքը կանչելու ելէ գայ:
 Արկորդ որը ժողվեցան հայրապետները, ամենքը
 նստան իր տեղը, և ահա մտուկ մը բացվեցաւ,
 որուն մէջէն կտրած ձեռք մը դուրս հանեցին ու
 ըսին սուրբ Աթանասին, ահա՛ ո՛վ Աթանաս՝ ահա՛
 զքեզ ամբաստանող, ահա՛ Արսենիոս եպիսկոպոսին
 թևը ու ձեռքը, ըսէ մեզի ինչո՞ւ համար աս թևը
 կտրեցիր: Աայիս մէկէն շնչիւն մը փրթաւ

խուցին մէջը, ամմէնքը սոսկացին թէ աս ինչ մեծ
անօրէնութիւն է ըրեր սուրբ Աթանասը : Աս
շփոթութիւնը երբոր քիչ մը հանդարտեցաւ ու
ամմէնքը լուեցին՝ սուրբ Աթանաս հարցուց թէ ար-
դեօք Արսենիոս եպիսկոպոսը տեսած էք կամ կը-
ճանչնա՞ք, շատերը պատասխան տրվին, ինչպէս
չէ՝ խիստ աղէկ կըճանչնանք : Ան ատենը սուրբ
Աթանասը աչք ըրաւ իր սարկաւազին որ երթայ
զԱրսենիոսը կանչէ : Այլաւ Արսենիոսը ու ժողո-
վին մէջ տեղը տնկըվըցաւ, բայց երկու ձեռքերն ալ
վերարկուին տակը պահած էր : Ոտք ելաւ սուրբ
Աթանասը ու հարցուց թէ աս է Արսենիոսը,
ըսին՝ հրամմերես : Ան ատենը մէկ դի քաշեց վե-
րարկուն, ու անոր ձեռվըներէն բռնեց վեր վերցուց
ըսելով . « Ահա Արսենիոսը կենդանի է և երկու
« ձեռքերն ալ ողջ առողջ կեցերեն, չեմ կարծեր
« որ մէկը ուզենայ հարցընել թէ ո՞ւր է երրորդ
« ձեռքը : Ուրեմն դուք որ զիս կամբաստանէքկոր՝
« ըսէք ինձի հիմակ՝ ինչպէս աս կտրած թևը ձեր
« ձեռքը անցած է, որ իբրև յաղթանակ աս դին
« ան դին կըպտըտցընէքկոր : Հիմակ ձեզի կիյ-
« նայ՝ ո՞վ դատաւորներ որ ասոնց աղէկ մը հարցը-
« նէք քննէք՝ ու զանոնք դատապարտէք » : Թէ
ինչպիսի ամօթ պաշարեց անոնց երեսը, և ինչպի-
սի դող անոնց սրտերնին ընկաւ, կարդացօղը կրնայ
իմանալ, հարկ չիկայ որ մենք պատմենք, միայն

այսչափ ըսենք որ՝ եթէ թագաւորական զինուոր-
ներ հոն գտնուվելու ու զսուրբ Աթանասը խալըսե-
լու չըլլային՝ զինքը կտոր կտոր պիտի փառատէին .
այնչափ կատղած էին ամբաստանողները , որոնց
բերներնէն ուրիշ բան չէր լսվէրկոր՝ բայց եթէ՝
Աթանասը կախարդութիւն ըրաւ :

Ինչ ամբաստանութիւն որ ինչվան հիմայ
ըրին սուրբ Աթանասին՝ ամմենէն ալ սուրբ Աթա-
նասը զինքը խալըսեց՝ ու իր անմեղութիւնը ցըցուց ,
և ոչ միայն ցըցուց՝ այլ և աչվընին խօթեց : Մնա-
ցին հիմակ մէկ քանի ուրիշ ամբաստանութիւններ՝
այսինքն բաժակին խորտակելը և այլ ուրիշ բանե-
րը՝ որ սուրբ Աթանասին վրայ ձգեցին իբրև անոր
խորհրդովը եղած : Երբոր աս դատը բացվեցաւ
սուրբ Աթանասը ըսաւ Եւսեբիոս կեսարացւոյն
թէ՝ աս բանիս մէջ զքեզ ինձի դատաւոր չեմ ըն-
դունիր . նոյնպէս չեմ ընդունիր թէ՝ Իսքիրասը՝ որ
քահանայ կանվանվիկոր՝ իսկպէս քահանայ
ըլլայ , որովհետև ստոյգ է՝ որ ուղղափառ եկե-
ղեցւոյն մէջ չիձեռնադրեցաւ : Աս որ լսեցին անի-
րաւ դատաւորները ձայներնին վերցուցին ու ըսին
թէ՝ ահա քեզի ուրիշ յանցանք մը որ Իսքիրասին
անունը կոտրեցիր , և շուտ մը բռնեցին Թէոկնի-
տէսը՝ Սարիոսը՝ Սակեդոնը՝ Թէոդորոսը՝ Ուրսա-
կինոսը՝ և Վաղենաթինոսը հոն խրկեցին՝ ուր որ
կամբաստանէինկոր թէ սուրբ բաժակը կոտրեց

Սակարիոս, որպէս զի երթան ու աղէկ մը քննութիւն ընեն: Եւ թեպէտ սուրբ Աթանասը կաղաղակէր թէ՛ չեմ ուզէր որ անոնք երթան՝ վասն զի ինձի թշնամի են, բայց մտիկ ընող չեղաւ: Գացին հոն տեղս, և ուղղափառ քահանայներուն հարցընելու տեղը կանչեցին հեթանոսները ու հրէայները, յորդորելով զանոնք որ սուրբ Աթանասին ու Սակարիոսին դէմ սուտ վկայութիւն տան: Ասանկ քննութիւն ընելէն ետքը հրեշտակները ետ դարձան ուրախանալով որ՝ գէթ աս անգամ սուրբ Աթանասին անմեղութիւնը չիկրնար յաղթել զըպարտութեան դէմ: Բայց երբոր ասոնք Տիւրոս հասան՝ նոյն ժամանակն ալ թուղթ մը եկաւ ժողովին հայրապետներուն որ գրած էին Աղեքսանդրիոյ քահանայները: Թղթին մէջը գրված էր թէ՛ բռնադատեալ ՚ի սիրոյ ճշմարտութեան չիկրոցան համբերել սուրբ եպիսկոպոսին դէմ եղած յայտնի զըպարտութեանը: Սենք ամենքնիս միաբան գրեցինք՝ կրտէին՝ աս թուղթը, և կրվկայենք որ ամենեկին սուտ է ու յայտնի զըպարտութիւն: Եւ որպէս զի մենք լուռ կենալով այն անիրաւութեան ընկեր չըլլանք՝ Աստուծոյ առջև կըհաստատենք որ՝ ոչ սկիհ կոտրած է, ոչ խորան կործանած է, և ոչ քահանայ մը վըռընտած է, սուտ զըպարտութիւն է որ կընէկոր Խաբիրասը: Աս թուղթը թեպէտ կարդացին ու հոս ալ տեսան

Ճշմարտութիւնը՝ որ անոնց աչքին առջևէն չէր պակսէր . բայց անիկայ իրենց դատաստանէն դուրս վըռնտեցին, ստութեան ականջնին բացին՝ ճշմարտութեան խուլ եղան, և այսպէս սուրբ Մթանաօր դատապարտեցին, իր աթոռէն վար իջեցուցին, և արգելեցին որ Մղեքսանդրիա չերթայ, որպէս զի հոն ժողովրդեան մէջը խոռովութիւն մը դուրս չելլայ: Եւ ժողովին աս գործքը գրեցին Արտատանդիանոսին ու ամմէն եպիսկոպոսներուն ըսելով թէ՛ չըլլայ որ ամմէնին հաղորդութիւն ընեն Մթանասին հետ, վասն զի ժողովին մէջ յայտնի յանցաւոր ելած ու դատապարտը ված է՝ և իր աթոռէն վար առնը ված է, և աս թղթին մէջը չամբչցան ըսել թէ՛ Մրսենիոսին մեռնելը գրեթէ ստոյգ է: Եւ աս եպիսկոպոսներ սուրբ Մթանասին դատապարտութեանը ստորագրել չուզեցին, որոնց մէկը էր Սարկեղոս Մնկիրիոյ հայրապետը: Եւ շնամիները ուղելով հատուցում մը ընել Խաբիրասին՝ բռնեցին զինքը եպիսկոպոս ձեռնադրեցին անարգ գեղի մը ուր որ առաջ կրբնակէր, որ ոչ եկեղեցի ունէր և ոչ հոգ հոգւոյ, և խոստացան որ՝ իրենք Արտատանդիանոսին հրամանաւը իրեն եկեղեցի մը շինել կուտան, բայց աս խոստումը չիկրցան կատարել, և այսպէս Խաբիրաս մնաց եպիսկոպոս առանց եկեղեցւոյ:

ԳԼ ԽԹԻ

Արուստղէնայ Ժողովք, Արիոս 'ի հաղորդութեան
 Էկեղէցւոյ իբրեւե, և սուրբ Աթանասը
 Իւրչիք:

Ամբ ան 335 և 336 :

Աստուծոյն ստեղծած բանքն չէ թէ
 սուրբ Աթանասին յաղթահարել (հասկէն գալ)
 էր, այլ Արիոսը 'ի հաղորդութիւն ընդունել և
 արիօսեան հերետիկոսութիւնը յառաջ տանիլ:
 Ուստի երբոր զսուրբ Աթանասը դատապարտեցին,
 սկսան մտմտալ թէ ինչ ճամբով աս իրենց
 չար կամքը կրնան կատարել: Աս այսպէս ըլլալով՝
 Աոստանդիանոսէն թուղթ մը եկաւ ասոնց որ՝ շու-
 տով Արուստղէմ երթան ժողովին եպիսկոպոսնե-
 րը, ու եկեղեցւոյն նաւակատիքը կամ նուիրագոր-
 ծութիւնը հանդիսութեամբ կատարեն: Ահա յար-
 մար միջոց՝ ըսին Աստուծոյն ստեղծած բանքն
 հիմակ կրնանք մեր ուղղութիւնը ընել: Այսպիսի խորհր-
 դով ելան գացին Արուստղէմ: Աոստանդիանոս
 պատուիրեց որ՝ աս հանդիսութիւնը խիստ շքեղ
 ու խիստ փառաւոր ըլլայ, ուստի խրկեց հազարա-
 պետներ ու արքունի մեծամեծ պալատականներ, և

անոնց հրամայեց որ առատաձեռն պարգև բաշխեն ամէն ժողովրդեան, և ջանան որ՝ որչափ կարելի է նէ մեծ հանդիսութիւն ընեն: Աս իշխաններուն մէջ զխաւոր էր Սարիանոսը՝ որ թագաւորական գրագիր ու խորհրդական էր և մեծ անուն ունէր ամէնուն առջևը: Ասիկայ՝ ինչպէս որ Աոստանդիանոս իրեն հրաման տրված էր՝ մեծ յարգութիւնով մեծ պատիւ ցրցուց եպիսկոպոսներուն, ծառայեց անոնց ամենայն առատութեամբ՝ որչափ որ կրնար ըլլալ, և ոչ միայն անոնց՝ այլ և աղքատներուն, որոնց թէ ստակ թէ ցորեն և թէ հագուստ տրվաւ: Ասկ եկեղեցւոյն տրված ընծայները՝ ոսկւով ու մարգարտով բանված զարդերը՝ ո՞վ կրնայ պատմել: Ասոնց ամէնուն վրայ, այսինքն թէ եկեղեցւոյն, թէ մատուան, և թէ զարդերուն Ալսեբիոս կեսարացին ամբողջ գիրք մը շինեց, բայց այս գիրքը կորստրված է հիմայ: Այկեղեցւոյն նուիրագործութեան հանդիսութիւններուն մէկն ալ եղան այն ներբողները ու այն խօսակցութիւնները որ եպիսկոպոսներուն մէջէն երևելիները հրապարակաւ եկեղեցւոյն մէջ ըրին: Վովեցին Աոստանդիանոսին բարեպաշտութիւնը ու առատաձեռնութիւնը, գովեցին անոր բարի նախանձը ու կրօնասիրութիւնը, և միանգամայն զարմացուցին ժողովուրդը եկեղեցւոյն գեղեցկութեանը ու զարդերուն փառաւորութեանը վրայ: Աս հանդիսութիւններուն յիշատա-

կը ամմէն տարի կընորոգվէր եօթնօրեայ տօնախմբութեամբ, ժողովուրդը ամմէն դիաց կըվազէին հոն՝ որպէս զի տեսնեն զսուրբ խաչը որ նոյն օրերը եպիսկոպոսը ժողովրդեան կըցըցընէր . և ասոր համար աս տօնիս անունը դրած էին **Խաչվէրայ** :

Վանք հիմակ տեսնանք թէ Եւսեբեաններուն անօրէն խորհուրդը ինչպէս յաջողեցաւ : Իրաւցընէ եկեղեցին Քրիստոսի այնչափ ցաւ չիմացաւ երբ որ իրեն քաջ հովիւը՝ այսինքն սուրբ Եթանասը կորսընցուց, որչափ որ ցաւեցաւ երբոր պատառօղ դայլը՝ այսինքն Երիոսը հօտին մէջը սպրդեցաւ մտաւ, և թէ ինչպէս մտաւ հիմակ կըտեսնենք : Եսիկայ խորհուրդ ըրաւ Եւսեբեաններուն հետ մէկտեղ որ Աոստանդիանոսին հաւատոյ դաւանութիւն մը տայ, բայց նոյն հաւատոյ դաւանութիւնը՝ որը որ յառաջ՝ երբոր քշվելէն դարձաւ նէ տրված էր : Եսոնք իրեն խոստացան որ՝ մենք ալ կաշխատինք ձեռքերնէս եկածին չափ, ու ինչ կընենք չենք ընէր Աոստանդիանոսին միտքը կըհամոզենք : Ուստի աս խորհրդով Երիոսը իր ընկերոջը Եվզոյոսին հետը գնաց Աոստանդիանոսին առջին, ու իր հաւատոյ դաւանութիւնը տրվաւ անոր, և աղաչեց որ հրաման խրկէ Երուսաղէմայ հայրապետներուն՝ որպէս զի զինքը նշովէն արձրկեն : Ես համանուն հաւատոյ դաւանութիւնը Աոստանդիանոսին ուղղափառական երեցաւ, և գրեց եպիսկո-

պոսներուն որ՝ առէք աս հաւատոյ դաւանութիւնը ու մէջերնիդ քննեցէք, ինձի ուղղափառական կերևայ, բայց որովհետև դուք էք դատաւորը՝ նայեցէք տեսէք ինչպէս է, և եթէ ճշմարիտ է նէ առանց ուշացընելու Արիոսը և իր ընկերը Ավզոյոսը՝ որ մէկ տեղ նշոված ու դատապարտըված էր՝ եկեղեցւոյն մէջը առէք: Խնտացին ու ուրախացան Աւսեբեանները երբոր աս թուղթը առին, և առանց քննութիւն մը ընելու ըսին թէ՛ աս հաւատոյ դաւանութիւնը ուղղափառական է, և այսպէս հաղորդութիւն ըրին Արիոսին հետ: Յուլիոս առաջներորդ սրբազան պապը թուղթ մը գրեց Աւսեբեաններուն յանդիմանելով զանոնք որ Արիոսին հետ հաղորդութիւն ըրին: Բայց Աւսեբեանները բանի տեղ չիսեպեցին անոր ըսածը, և սիւնհոգոսական թուղթ մը գրեցին ամմէն եկեղեցիներուն ըսելով թէ՛ ուրախ կեցէք Արիոսը մտաւ եկեղեցին, ուսկից որ անիրաւութեամբ վըռընտրված էր: Աս ժողովոյն վճռոյն թէպէտ շատերը չըստորագրեցին՝ բայց անոնց մէջը երևելի եղաւ Սարկեղոս Անկիւրիոյ եպիսկոպոսը, որովհետև Արիոսեաններուն շատ դէմ էր: Ասիկայ գիրք մը գրած էր Աստերիոս սուտ փիլիսոփայի մը դէմ, ու անոր մէջը արիոսեանց դէմ ալ կըխօսէր. և որովհետև աս գրքին մէջը քիչ մը մոռթ ոճ բանեցուցած էր՝ շատերը կարծիքի գացին՝ որ Պօղոս սամոստացւոյն հերետիկոսութեը

մէջ ընկած է Սնկարիոս. թէպէտ Յուլիոս պապը ետքը քննելով զինքը՝ ու գտնելով պաշտպան ուղղափառ հաւատոյ՝ արդարացուց անիկա: Արդ Ալեսերեանները ուզելով աս Սարկեղոսին վրէժխնդրութիւն ընել՝ ժողովին մէջը զինքը պարտաւորեցին որ պատասխան տայ ատ իր գրութեանը վրայ: Ալ թէպէտ մտքերնին գէշ էր, բայց չիկրցան կատարել, վասն զի Աոստանդիանոսէն թուղթ եկաւ որ շուտով Աոստանդնուպօլիս գան, և թէ ինչ պատճառաւ՝ հիմակ կըզրուցենք: Սուրբ Աթանասը երբոր Տիւրոսին ժողովին մէջը դատապարտըվեցաւ, ելաւ շիտակ Աոստանդնուպօլիս գնաց, որպէս զի ինք իր բերնովը Աոստանդիանոսին հետ խօսի, ու անոր աղէկ մը հասկըցընէ իրեն եղած անիրաւութիւնը: Ան ատենը Աոստանդիանոս քաղաքը չէր, այլ ուրիշ տեղ մը գացած էր, և երբոր երկու իրեք օրէն ետքը ձիու վրայ հեծած կըդառնար, նր Աթանասը ճամբուն վրայ անոր դիմացը ելաւ, ու բարձր ձայնիւ ըսաւ Աոստանդիանոսին. կաղաչեմ քեզի ո՛վ թագաւոր խալըսէ զիս թշնամիներուս ձեռքէն որոնք իմ վրաս զօրացերեն: Օարմայաւ մնաց Աոստանդիանոս, չիճանչցաւ թէ ո՞ր եպիսկոպոսն է ան որ ասանկ երած սրտով ճամբուն վրայ իրմէն օգնութիւն կըխնդրէկոր, բայց երբոր քովինները իրեն իմացուցին թէ սուրբ Աթանասն է, յառաջագոյն Ալեսերեաններէն բանը ծուռ հասկը-

ցած ըլլալով երես դարձուց ու չուզեց մտիկ ընել,
 և քիչ մնաց որ պիտի հրամայէր թէ՛ վերցուցէք
 սրվիկայ աչքիս առջևէն : Իսկ սուրբ Աթանասը
 ձայնը աւելի ևս բարձրացուց ու ըսաւ Արստանդիա-
 նոսին . « Աստուած ըլլայ իմ ու քու մէջդ դատա-
 յար, որովհետեւ դուն ալ կը միաբանիսկոր անոնց
 « հետ՝ որոնք որ զիս կը նեղենկոր՝ ու իմ վրաս
 « զրպարտութիւն կը նենկոր » : Աս խօսքերէն ա-
 մենակին չիխուովեցաւ Արստանդիանոս , չիլսելու
 զարկաւ ու սկսաւ առաջ երթալ : Գարձեալ ըսաւ
 սուրբ Աթանասը . « Տէր իմ՝ մինակ աս կաղաչեմ
 « քեզի որ Արուսաղէմ գացօղ եպիսկոպոսները
 « կանչել տաս և ես քու առջևդ զիս պաշտպանեմ
 « այն սուտ յանցանքներէն որ իմ վրաս կը ձգեն-
 « կոր , և կամ կարգով ու ճամբով ժողով մը ընել
 « տրվէք , որ ազատ ըլլայ զինուորներուն ու կոմսե-
 « րուն բռնաւորութենէ , և դուն քիչ մը դատէ
 « զիս » : Չիկրցաւ Արստանդիանոս աս խօսքերուն
 խուլ ըլլալ , այլ յանձն առաւ , ու շուտ մը գրեց
 Տիւրոսի եպիսկոպոսներուն որ՝ առանց ատեն ան-
 ցընելու ելլեն Արստանդնուպօլիս գան , ինչու որ
 ըսաւ՝ վախնամ թէ անմեղութեան ճշմարտութե
 ու կրօնի վնաս հասուցիք : Այսչափ տառապանաց
 մէջը մինակ աս եղաւ սուրբ Աթանասին երած
 սրտին պաղատելով՝ որ պիտի կարենայ ինքը զինքը
 պաշտպանելու համար խօսիլ : Արբոր Արստանդիա-

նոսին հրամանը Տիւրոս հասաւ Ալսեբեանք շատ տրտմեցան, մէյ մը որ՝ չիկրցան անմիջապէս իրենց ուղածին պէս Արուսաղէմայ ժողովը ընել, և մէյ մըն ալ որ վախցան թէ գուցէ բանը դուրս կելլայ: Բայց ասոր ճարը շուտով գտան. ան եպիսկոպոսն երուն՝ որ սուրբ Աթանասին կողմը էին՝ ճամբայ տրվին ըսելով թէ՛ դուք գացէք ձեր տեղը, մենք՝ թէ որ հարկաւոր կըլլայ՝ ձեր տեղը Աոստանդիանոսին պատասխան կուտանք, և այսպէս զանոնք խրկեցին ու իրենք ելան Աոստանդնուպօլիս եկան: Ալան Աոստանդիանոսին առջին, և ինչ կընայիս, ըուծիւն եղաւ այն յանցանքներուն վրայ որոնց համար որ սուրբ Աթանասը դատապարտած էին: Ալսեբիոս ուրիշ ամբաստանութիւն մը դուրս հանեց ըսելով թէ՛ Աթանասը թող չիտարկոր որ Աղեքսանդրիայէն Աոստանդնուպօլիս ցորեն գայ: Չիկրնար ըսվիլ թէ ինչ բարկութեան, ու ինչ այլայլութեան մէջ ընկաւ Աոստանդիանոսին սիրտը: Ալ նոյնպէս չիկրնար ըսվիլ թէ ինչպիսի տրտմութեան մառախուղ սուրբ Աթանասին սրտին վրայ տարածեցաւ, որ սրտին ցաւէն աս պատասխանը միայն կրցաւ տալ թէ՛ « իրեն պէս սոսկական » (պայադի) ու աղքատ մարդ մը ինչպէս կընայ այս « պիսի յանդուգն բանի ձեռք զարնել »: Ալսեբիոս նիկոմիդացին սկսաւ երդում ընել թէ սուրբ Աթանասը հարուստ ու հզօր մարդ է, և թէ որ

ուզէ նէ՛ ասանկ բաներ կրնայ ընել : Ըն ատենը
 Կոստանդիանոս ալ շատ չիփրնտրուեց, ու հրաման
 հանեց որ սուրբ Լ.Թանասը ու իր չորս քահանայ-
 ները որոնք էին Լ.փոքոնիոս, Լ.Թանաս՝ Կապիտո-
 նին որդին, Պողոս, և Պղուտինոս քշվին Տրեվերի՛
 որ Գաղղիային (Սուանսային) մեծ քաղաքն էր :
 ուր Կոստանդին Կոստանդիանոսին որդին կեսարական
 պատուով կրտիրէր ու կրկառավարէրկոր, և քաղ-
 քին եպիսկոպոսն ալ էր նք Սաքսիմինոսը : Երբ
 որ հոն հասան քշվողները, թէ եպիսկոպոսը և
 թէ Կոստանդինը սիրով ընդունեցան զանոնք, ու
 մեծ սէր ցրցուցին, ինչվան Կոստանդինը ըսաւ նք
 Լ.Թանասին թէ՛ կըցաւիմ որ իմ հայրս խաբված
 ըլլալով այսպիսի քաջ հովուի մը ասանկ բան ըրաւ :
 Սուրբ Լ.Թանասը քշվելէն ետքը՝ անոր թշնամի-
 ները մտմտացին որ իր տեղը ուրիշ եպիսկոպոս
 մը նստեցընեն, որպէս զի անոր դարձը անկարելի
 ըլլայ : Բայց աս իրենց խորհուրդնին պղտորեց
 Կոստանդիանոս, երբոր ուրիշ եպիսկոպոս նստե-
 ցընելու համար հրաման չիտրվաւ անոնց :

Լուսեբեանք սուրբ Լ.Թանասին դատը լմըն-
 ցուցածնուն պէս Սարկեղոս Ընկիւրիոյ հայրապե-
 տին ձեռք զարկին : Ըմբաստանեցին Կոստանդիանո-
 սին թէ եկեղեցւոյն նուիրագործութեանը որ եղաւ
 յԱրուսալէմ Սարկեղոս չեկաւ, և թէ հասարա-
 կաց խաղաղութիւնը կըխուովէկոր : Կոստանդիա-

նոս իրաւ կարծեց անոնց ըսածը, ու իրենց յանձնեց զՍարկեղոսը՝ որ պատժեն ինչպէս որ կուզեն : Եւսեբեանները շուտ մը արքունի պալատին մէջ ժողով մը ըրին, հոն դատապարտեցին անոր գրած գիրքը՝ որուն վրայ որ վերը ըսինք, և զինքը նզովեցին ու քշեցին : Եւ ժողովին թէպէտ շատ ընդդիմացաւ Եղեքսանդրոս Արևմտանդնուպօլսոյ հայրապետը, բայց օգուտ չեղաւ, վասն զի Եւսեբեանները զԱրևմտանդիանոսը իրենց կռնակ ըրած էին :

ԳԼ Ծ

Արևմտին շարաշար ստորինք :

ԱՄ ԹՆ 335 :

Արևկրսինք Արևոսին ցաւալի ու արտասուելի մահը պատմելու, որ իրեն թշուառութիւն մեզի օրինակ տրվաւ, ու ցրցուց թէ որչափ Աստուած կը բարկանայ ու վրէժխնդրութիւն կընէ անկից՝ որ իր եկեղեցւոյն մնաս կըհասցընէ՝ ոչ միայն անդիւ աշխարհք, այլ նաև աս աշխարհքս : Ուստի աս գրուիսը կարդացօղը վայ տայ Արևոսին, բայց ինքն

ալ վախնայ ու դողայ, վասն զի թէ որ Աստուած իր շնորհքը իր վրայէն ալ վերցընելու ըլլայ՝ ինքն ալ կրնայ ուղղափառ հաւատոյ մարգարիտը ձեռքէն կորսընցընել, և ո՞վ գիտէ որ Աստուծոյ բարկութեանը գուցէ աս աշխրքիս մէջն ալ չիհանդըպիր:

Արդ Արիոս երբոր Արուսաղէմայ ժողովին մէջը եկեղեցւոյ հաղորդութեանը մըտաւ, շուտ մը ելաւ Աղեքսանդրիա գնաց, կարծելով թէ ժողովուրդը ու քահանայները խնտալով ու ձեռք զարնելով զինքը ներս կառնեն, որովհետեւ սուրբ Աթանասը հոն չէր: Բայց որչափ տարբեր եղաւ գործքը իր մտացածէն: Հազիւ թէ Աղեքսանդրիա մտաւ, ահա շփոթութիւն մը ելաւ քաղքին մէջը, առ հասարակ թէ քահանայները և թէ ժողովուրդը բարկացան անոր դէմ, և ըսին որ շուտով կորսըվի երթայ քաղքէն, և թէպէտ շատերը Արիոսին կողմը կրբռնէինկոր, բայց անոր դէմ ըլլօղները աւելի շատ էին: Աս շփոթութեան լուրը երբ որ Աոստանդիանոսին ականջը հասաւ, շուտ մը հրաման խրկեց Արիոսին որ Աոստանդնուպօլիս գայ, ըսելով թէ՛ կուզեմ դարձեալ քննել քու հաւատքդ, որովհետեւ շատերը կրսենկոր թէ դուն առջի հերետիկոսութեանդ մէջ ես: Ելաւ Արիոս Աոստանդնուպօլիս եկաւ, և Աոստանդիանոսին առջևը չելած Աւսերեանները գացին Աղեքսանդրոս

Աոստանդնուպօլսոյ Հայրապետին աղաչեցին որ
 ինքն ալ միաբանութիւն ընէ Արիօսին հետ, որպէս
 զի Աոստանդիանօսին մտքէն ամմէն կասկածանաց
 ու տարակուսանաց ծուխը փարատի: Սուրբ Աղեք-
 սանդրոս ծերունին առաքելական քաջութեամբ
 դէմ կեցաւ անոնց, և թէպէտ իրեն սպառնալիք
 ըրին ըսելով թէ զքեզ ալ ամոռեղ վար կառ-
 նենք ու կըքշենք, բայց 'ի վերայ այսր ամենայնի
 իր հաստատութիւնէն չիխախտեցաւ: 'Այն
 օրերը մեր սուրբ Յակոբ Ս'ծբնայ Հայրապետը
 Աոստանդիանօսին հետ իր եկեղեցւոյն վերաբերեալ
 բաներուն վրայ խօսելու համար Աոստանդնուպօլիս
 եկած էր, ու երբոր տեսաւ սուրբ Աղեքսանդրօսին
 Աստուծաններուն ձեռքէն քաշած նեղութիւնը
 յորդորեց զինքը ու քաջալերեց որ հաստատ կենայ
 ու Աստուծոյ ջերմեռանդ աղօթք ընել տայ: Սուրբ
 Աղեքսանդրօսը պատուիրեց իր ժողովրդեանը որ
 եօթը օր պաք պահեն ու աղօթք ընեն Աստուծոյ
 որ թող չիտայ իր եկեղեցին պղծըվելու, որովհետև
 Աստուծանները զԱրիօս եկեղեցին խօթելու՝ ու
 անոր պատարագ ընել տալու կըջանայինկոր:
 Աոստանդիանոս կանչեց զԱրիօս իր առջևը, ու
 հարցուց իրեն թէ արդեօք իր հաւատքը ուղղա-
 ռական է: Առանց տարակուսելու պատասխան
 տրվաւ Արիօս թէ՛ կերդնում հաւատքիս ուղղա-
 փառութեանը վրայ, և ան ժամանակը հանեց հա-

ւատոյ դաւանութիւն մը տրվաւ Արստանդիանոսին,
 որուն մէջը իր ամմէն մոլորութիւնը ծածուկ խօ-
 թած էր, բայց աս մոլորութիւնը չգիտցօղը չէր
 կրնար իմանալ, վասն զի բառերը բոլոր սուրբ գիր-
 քէն առած էր: Պատասխան տրվաւ Արստանդիա-
 նոս որ, ,,եթէ հաւատքդ ուղիղ է՝ աղէկ ըրիր որ
 ,,երդում ըրիր, բայց եթէ ծուռ է և դուն երդում
 ,,ըրիր ծուռ բանին վրայ, Աստուած դատէ զքեզ
 ,,ինչպէս որ երդում ըրիր“: Սոկրատէս կը պատ-
 մէ թէ՛ Արիոս երկու հաւատոյ դաւանութիւն
 գրած էր իրարմէ տարբեր, մէկը յայտնի մոլորու-
 թիւններով լեցված, իսկ մէկալը ուղիղ, ուստի երբ
 որ երդում ըրաւ՝ դրսէն ցըցօց Արստանդիանոսին
 թէ ուղիղ հաւատոյ դաւանութեան վրայ երդում
 կընէկոր, բայց մտքէն մէկալին վրայ ըրաւ: Ո՛րպիսի
 և իցէ, աս ստոյգ է որ Արստանդիանոս խաբվե-
 ցաւ, և հրաման խրկեց սուրբ Աղեքսանդրոսին որ
 զԱրիոս իբրև ուղղափառ ընդունի: Արբոր լսեց
 թէ սուրբ Աղեքսանդրոսը իրեն հրամանին չհհը-
 նազանդիրկոր, կանչեց իր առջևը և իր բերնովը
 խօսեցաւ անոր հետ ըսելով՝ պէտքը չէ որ վըռըն-
 տես այնպիսի մարդ մը, որ կուզէ փրկրվիլ: Սուրբ
 Աղեքսանդրոսը պատասխան տրվաւ իրեն ու ըսաւ,
 մի խաբվիր ո՛վ թագաւոր մի խաբվիր: Բայց երբոր
 տեսաւ թէ Արստանդիանոսը երեսը կը ծռմուկէկոր
 ու ծուռ աչքով կընայիկոր, լսեց ու դուրս ելաւ

Կոստանդիանոսին առջևէն : Շատ չանցաւ Լուսե-
 բեանները Լճիօսը հետերնին առած եկան սուրբ
 Լղեքսանդրոսին ու սրդողելով մը ըսին անոր թէ՛
 պէտք է որ թող տաս որպէս զի մենք Լճիօսը ե-
 կեղեցւոյն մէջը խօթենք : Սուրբ Լղեքսանդրոսը
 պատասխան տրվաւ անոնց՝ ու ըսաւ , Լստուած
 թող չիտար որ ատ գարշելի պիղծ ու Լստուծոյ
 թշնամի անձը իր սուրբ եկեղեցւոյն մէջը մտնէ ու
 պղծէ : Ընոնք ալ ըսին . ,,ինչպէս որ Լճիօսը Կոս-
 ,,տանդնուպօլիս եկաւ և դուն նախատվեցար , այս-
 ,,պէս ալ վաղը քու եկեղեցւոյդ մէջը աստուա-
 ,,ծային պաշտօնին պիտի գայ և դուն պիտի նախատ-
 ,,վիս “ : Ըն դիէն Լուսերիոս նիկոմիդացին որ մեկ-
 տեղ եկած էր՝ պատասխան տրվաւ . ,,վաղը ինձի հետ
 ,,պիտի եկեղեցին մտնէ , և դուն ինչպէս պիտի
 ,,արգելուս զինքը “ : Ըս խօսքերը ըսելով սուրբ
 հայրապետը սաստիկ ցաւոց տրտմութեան ու վշտաց
 մէջը մտաւ , և որովհետեւ ոչ ոք կրնար զինքը մխի-
 թարել՝ դիմեց առ ճշմարիտ մխիթարիչն առ
 Լստուած , մտաւ եկեղեցւոյն մէջը , ծունկ չոքե-
 ցաւ գետնի վրայ , ձեռվոնները վերցուց դէպ ’ի եր-
 կինքը , աչվոններէն գետի պէս արցունք թափելով
 ու հառաչելով աղօթեց այսպէս . ,,Տէր Լստուած
 ,,եթէ Լճիօսը վաղը պիտի գայ աստուածային
 ,,պատարագին , կաղաչեմ որ զիս հիմակվոնէ այս
 ,,կեանքիս կապէն արձրկես , որպէս զի արդարը

„ամպարչտին հետ չհկորսրվի : Բայց եթէ կուզես
 „ողորմիլ քու եկեղեցւոյդ (և գիտեմ որ քու
 „ողորմութիւնդ անբաւ է) նայէ մէյմը ինչպիսի
 „հպարտութեամբ խօսեցաւ Ալեսբիոս, մի թողուր
 „որ քու ժառանգութիւնդ կործանի ու նախատվի :
 „Ալբրցո՛ւր աշխրբէս զԱրիոսը, որպէս զի անիկայ
 „եկեղեցւոյն մէջ մտնելով՝ անոր հետ մէկ տեղ
 „հերետիկոսութիւնն ալ չիմտնէ, ու ամբարչտու-
 „թիւնը բարեպաշտութեան հետ չիխառնրվի“ :
 Անոր հետ մէկ տեղ եկեղեցին մտած էր Սակա-
 ռիոս անունով քահանայ մի ալ, և անիկայ ետքը
 այս մաղթանքը պատմեց սուրբ Աթանասին : Աս
 աղօթքը ընելէն ետքը քաջվեցաւ սուրբ Աղեքսանդ-
 րոսը իր խուցը բոլորովին սիրտը ու աչվըները ար-
 տասուաց մէջ թաթխրված ըլլալով, ու սկսաւ
 մտմտալ հոգալով թէ արդեօք աս բանս ինչպի-
 սի վախճան պիտի ունենայ : Ան օրը շարաթ էր,
 և կէս օրն ալ իրեք ժամ (սահաթ) անցած էր, և
 ահա եւսերեանները հետերնին առած Արիոսը ժուռ
 կուգային, ու կըպըտըտէին քաղքին հրապարակնե-
 րուն մէջը ուր որ սովոր էին շատ մարդիկներ ըլլալ,
 կըխնտային ձեռք կըղարնէին իբրև թէ յաղթեցին .
 իրար կանցնէին արիոսեան ժողովուրդը ու ուրա-
 խութենէ վեր վեր կելլային . բայց որչափ որ անոնք
 կուրախանային՝ այնչափ կըտրտմէին ուղղափառնե-
 րը՝ գիտնալով թէ ինչպիսի ցաւոց մէջ է իրենց

Հովիւնին՝ այսինքն սուրբ Աղեքսանդրոս եպիսկոպոսը :

Արդ երբոր Արիոս իր ընկերներուն մէջը գլուխը վեր բռնած պարծենալով կը պըտըտէր ահա յանկարծ սիրտը խառնըվեցաւ ու հարկաւորութիւնը բռնեց, հարցուց քովիններուն թէ արդեօք կը գտնըվի՞ հոս տեղուանքս կարիքը հոգալու տեղ մը : Անոնք ալ ցըցուցին տեղ մը, գնաց հոն, դռան առջևը իր ընտանիներուն մէկը կայնեցուց, և ինքը մտաւ ներս : Ահա հոն տեղս մահացու պատուհաս մը խրկեց իրեն Աստուած, անանկ որ կարիքը հոգալու ատենը փորոտիքը մէկէն դուրս թափեցան ու չարաչար սատկեցաւ : Շատ սպասելէն ետքը իր ընտանին դուռը բացաւ նայիլ թէ ինչ եղաւ որ ասանկ ուշացաւ : Ահ զարհուրելի տեսիլ, տեսաւ այն ողորմելի վիճակը Արիոսին, և վազեց իմացուց Աւսեբեաններուն : Ամէնքը արտորալով վազեցին հոն, և երբոր տեսան՝ ակամայ իմացան թէ Աստուծոյ բարկութեանը հանդըպերէ Արիոս : Շուտ մը Աւսեբեանները անոր դին (լէշը) թաղել տըվին, որպէս զի մոռացութեան մէջ ալ թաղվի այն գարշելի յիշատակը, և միանգամայն ամօթոյ և խայտառակութեան նիւթն ալ վերնայ : Իսկ ժողովը դեան բերնէն ելած խօսքերը ո՞վ կրնայ համրել ոմանք կըսէին թէ Արիոս սաստիկ ուրախութիւն մը ունեցաւ իր սրտին մէջը հպարտանալով որ թշնա-

միներուս յաղթեցի, և այն ուրախութիւնը իրեն մահուան պատճառ եղաւ: Ոմանք կրօսէին թէ՛ չէ՛, այլ ուղղափառները կախարդութիւն ըրին ու անով մեռցուցին: Իսկ ոմանք ալ կրօսէին թէ ուղղափառները թոյն խմցուցին և անկից մեռաւ: Ըսանկ կրմտածէին ռամիկ ժողովուրդը որոնք չէին կրնար կամ աղէկ ըսեմ՝ չէին ուզէր աչվընին բանալ ու տեսնել թէ ատ բանը բնական ճամբով եղած բան չէ, այլ Ըստուծոյ պատուհասն է, ինչպէս որ Կոստանդիանոս լսածին պէս ըսաւ: Ըս բանս հանդըպեցաւ շաբաթ օրը իրիկվան դէմ արեգակը չիմըտնալէն յառաջ: Երկրորդ օրը կիրակի առտուան ատենը որ գարշելի Ըրիոսը եկեղեցին պիտի մտնէր՝ ու ուղղափառները պիտի տրտմեցընէր՝ նոյն ատենը սուրբ Ըղեքսանդրոս եպիսկոպոսը առաւ իր հետը իր քահանայները ու ուրախութեամբ գնաց պատարագ մատոյց հանդիսապէս՝ ու շնորհակալութիւն ըրաւ Ըստուծոյ մասնաւոր նախախնամութեանը՝ որով իր եկեղեցին թող չի տրվաւ որ պղծըվի: Եւսեբեանները որչափ որ կըջանային Ըրիոսին չարաչար սատկիլը ժողովրդեան մտքէն հանել, այնչափ ժողովուրդը չէր մոռնար, վասն զի ով որ ան ճամբուն վրայէն կանցնէր այն տեղը կըտեսնէր, և իր ընկերին ալ մատով կըցըցընէր, և ոչ ոք կըհամարձակէր հոն երթալու: Ըսանկ էլ մը ատեն տեւելէն ետքը, արիոսեան հարուստ

մարդուն մէկը գնեց հոն տեղս, ու տուն մը շինել տրվաւ, և այսպէս կամաց կամաց չար յիշատակը մոռցրվեցաւ :

Լորանի՛ թէ աս բաներս ըլլալէն ետքը Աոստանդիանոս սուրբ Աթանասին անմեղութիւնը իմանար : Բայց ոչ միայն չիմացաւ, այլ նաև իր առաջին կարծիքին մէջը աւելի ևս հաստատվեցաւ : Աղեքսանդրիոյ ժողովուրդը իրեն աղաչեցին որ զսուրբ Աթանասը պքսորէն (սիւրկիւնէն) դարձընել տայ : Աոստանդիանոս պատասխան տրվաւ անոնց թէ՛ պարապ տեղ մի աղաչէք ինձի, ես չեմ ուզեր այնպիսի խռովասէր ու ապստամբ մարդ մը ետ դարձընել որ եկեղեցական ժողովի մէջ դատապարտւած է : Բայց առաւել զարմանալին ան է որ՝ Աոստանդիանոս և ոչ մեր սուրբ Անտոն Աբբասոյ խօսքին մտիկ ըրաւ : Գրեց իրեն մեր սուրբ Աբբասայրը թէ, մի խաբվիր Աելիտեաններուն սուտ զրպարտութիւններէն, աղէկ մտմտայ ու արգար դատաստան ըրէ, գիտես որ ճգնաւոր եմ, և ճգնաւոր մարդ թագաւորի մը հետ առնելիք տալիք չունի, ուրեմն ես որ կըխօսիմկոր նէ իմ շահիս կամ իմ օգտիս համար չեմ խօսիրկոր, այլ եկեղեցւոյն հարկաւորութեանը համար : Աոստանդիանոս պատասխան տրվաւ սուրբ Անտոն Աբբասոյ թէ. « Ես չեմ կրնար արհամարհել ժողովին վճիռը : Թեպէտ և քանի մը հոգի ատելութեան կամ

„նախանձու համար ըրած ըլլան, բայց հաւատալի
 „բան չէ որ այսպիսի կիրք մը այնչափ բաղձութեան
 „վրայ տիրած ըլլայ, որոնք բարի ու խոհեմ հայ-
 „րապետներ էին“ : Ահա աս խօսքերէն կերևայ թէ
 Աոստանդիանոս ինչպէս խաբւած է Աւսերեաննե-
 ըրէն : Այն բաղձանքը որ ունէր եկեղեցւոյն խաղա-
 ղութեանը վրայ՝ թող չէր խտար իրեն որ ընտրու-
 թիւն ընէ բարին գէշէն որոշելու կամ սուտը
 ճշմարտէն զատելու : Արբոր լսեց Աոստանդիանոս
 թէ Աղեքսանդրիոյ ժողովուրդը երկու բաժնւոված
 է, մէկը զսուրբ Աթանասը կրպաշտպանէ, իսկ մե-
 կայը զՆովհաննէս Արգաբոսը որ մելիտեան հեր-
 ձուածողներուն գլուխն էր, բարկացաւ ու բռնեց
 զՆովհաննէսն ալ քշեց, թէպէտ և անիկայ
 դարձած ու ուղղափառ եղած էր, ինչպէս վերը
 ըսինք :

Աս բանս ըլլալէն ետքը քանի մը ամիս ալ ապ-
 րեցաւ նր Աղեքսանդր եպիսկոպոսը՝ ու մեռաւ սրբու-
 թեամբ հարիւր տարւան հասակի մէջ : Շատ աչ-
 խատեցան չարափառները անոր տեղը իրենցմէ մե-
 կը նստեցընել, բայց չիկրցան, և անոր տեղը ընտր-
 վեցաւ սուրբ Պօղոս ուղղափառ եպիսկոպոսը, որ
 թէպէտ մանուկ էր հասակաւ, բայց իմաստութիւն
 և բարեկրօն քաղաքավարութեամբ ծեր էր :
 Աւսերեանները ինչ ըրին չբրին ասոր անունն ալ
 Աոստանդիանոսին առջին կոտրեցին, ըսելով թէ՛

ան՝ ալ Աթանասին կողմն է, ուստի կրնայ ժողովուրդեան մէջը խռովութիւն հանել, և Աոստանդիանոս ալ անիկայ բռնեց Պոնտոս քշեց:

ԳԼ ԾԵ.

Աոստանդիանոս պարելուպէ պարբասարութիւն իւրեանս
նէ Շապուհ Պարսկաց լազա-որն գէմ.

Եւ Եւր Շապուհ լուսութիւն ու
հաշարութիւն իւրեանց:

Ամբ նն 336 և 337:

Աոստանդիանոս յամին 336 երորդի իր պալատին մէջ փառաւոր հարսանիք ըրաւ իր երկրորդ որդւոյն՝ որ կրսվէր Աոստանդոս, ու կարգեց անիկայ Աւսեբիա օրիորդին հետ՝ որ էր իր եղբօրը Յուլիոս Աոստանդին աղջիկը: Ինչպէս Աոստանդիանոսին սովորութիւնն էր որ ամմէն հանդիսութեան ատենները պարզեներ ու արտօնութիւններ կուտար պէսպէս քաղաքներուն, այսպէս ալ աս անգամուն հարսանեաց անունը մեծցրնելու համար հրապարակաւ խաղարկութիւններ ու հանդիսութիւններ

ընել տրվաւ, և միանգամայն զանազան պարզէններ բաշխեց ժողովրդեան :

Աս ըլլալէն ետքը արևելեան հնդկաստանէն հրեշտակներ եկան Աոստանդիանոսին պալատը դաշն խաղաղութեան դնելու համար անոր հետ, որոնք մեծամեծ ընծայներ բերին Աոստանդիանոսին, բայց անոնցմէ հիշ մէկը այնչափ հաճելի չեղաւ Աոստանդիանոսին՝ ինչպէս այն դժուարաւ գտնուելու կենդանիները որ հետերնին բերած էին : Աոստանդիանոս սիրով յանձն առաւ անոնց դաշնադրութիւնը, ու ըսվեցաւ թագաւոր նաև արևելեան հնդկաստանի : Շատ չանցաւ ասոր վրայ Շապուհ Պարսից թագաւորը ուզելով այն հինգ քաղաքները՝ որ Վաղերիոս առած էր՝ ձեռք ձգել՝ հրեշտակներ խրկեց Աոստանդիանոսին որ զանոնք ետ դարձնէ : Աոստանդիանոս իմանալով որ Շապուհ աս խօսքով ուրիշ բան չուզէր հասկըցընել, բայց եթէ պատերազմիլ, անոր համար պատասխան տրվաւ հրեշտակներուն թէ՛ դարձէք ետ ու ըսէք Շապուհին թէ՛ ես շատոնց է որ միտքս դրած եմ անձամբ իրեն երևալու ու իրեն իմ ըսելիքս ըսելու : Ասից ետքը Աոստանդիանոս շուտ մը զօրք ժողովեց սաստիկ բազմութեամբ, ու պատրաստըվեցաւ պատերազմելու, ըսելով թէ՛ ամմէնուն յաղթեցի, և միայն պարսիկները մնացած էին, հիմակ պէտք է որ անոնց ալ յաղթեմ : Այս առաջ Շա-

պուհ նշան տրվաւ թէ Արստանդիանոսին թշնամին է, վասն զի որչափ որ զօրք ունէր նէ անոնցմով եկաւ Միջագետքը (Տիարպէքիր) մտաւ Արստանդիանոս՝ ինչպէս որ իրեն սովորութիւնն էր՝ աղօթք յանձնեց եկեղեցականներուն, զիտնալով թէ Աստուծոյ օգնականութեանը առաւել կրկարօտի քան թէ զէնքի կամ զինուորներու շատութեանը, և բաց անկից քանի մը եպիսկոպոսներու ալ աղաչեց որ իր հետը գան, և աս վախճանաւ փառաւոր խորան մը (չատրու մը) շինել տրվաւ, որուն մէջը կրնամանէր պղտիկ եկեղեցւոյ մը, բայց անանկ որ կրնար առանց աւրբվելու ասդին անդին տարվիլ ու բերվիլ, որպէս զի պատերազմ մտնելէն յառաջ մտնէ ան խորանին մէջը ինքը զինքը Աստուծոյ յանձնէ՝ ու անանկ սկսի պատերազմիլ, և երբոր ինքը պատերազմինէ եպիսկոպոսները աղօթք ընեն անոր մէջը : Շապուհ երբոր լսեց թէ Արստանդիանոս մեծ պատերազմի պատրաստութիւն տեսերէ իրեն դէմ՝ սաստիկ վախցաւ, ու նորէն հրեշտակներ խրկեց որ իր կողմանէ երթան թողութիւն խնդրեն Արստանդիանոսէն, ու աղաչեն որ հաշտութիւն ընէ : Արստանդիանոս՝ որ միշտ կուզէր խաղաղութիւն ընել, ու խաղաղութեան բառը լսածին պէս սիրտը վեր վեր կելլար, սիրով յանձն առաւ ու լսեց Շապուհին աղաչանացը, և այսպէս առանց արիւն վազցընելու յաղ-

Թող սեպվեցաւ նաև պարսիկներուն *) : Արմնայ
 հիմակ մեզի առջևի գլխին մէջը տրտմութիւնը ու-
 րախութեան հետ բարեխառնել , պատմելով Կոս-
 տանդիանոսին մահացու հիւանդութիւնը՝ որ է
 տրտմական , և միանգամայն պատմելով իրեն
 մկրտութիւնը , որ է ուրախական :

ԳԼ . ԾԻ .

Կոստանդիանոս իւհիւանդանայ , ու իւնդանի
 զսուրբ Կրիստոսիւնը :

Ամ ան 337 :

Կոստանդիանոս Շապուհ Թագաւորին հետ հաշ-
 տութիւն ընելէն ետքը , Աստուծոյ շնորհակալու-
 թիւն ընելու համար ամենասուրբ զատկին ճրագա-

*) Գուցէ աս հաշտութիւնը ըլլայ՝ որուն համար մեր
 երանելի Մովսէս խորենացին ալ իր հայոց պատ-
 մութեանը մէջը կը պատմէ ըսելով Թե . « Շա-
 ,, պուհ Թագաւորը յաղթող Կոստանդիանոսին
 ,, աղաչեց՝ որ մշտնջենաւոր հաշտութիւն ու խա-
 ,, ղաղութիւն ընէ իրեն հետ . սուրբ Կոստանդիա-
 ,, նոս ալ կատարեց անոր խնդիրքը » : Մովս .
 խորեն . հատ . ք . պր . 27 :

լուցին գիշերը գնաց եկեղեցին, և ուրիշ ռամիկ
 ժողովրդեան հետ ջերմեռանդութեամբ աղօթք
 րրաւ: Աոստանդնուպօլսի մէջ սովորութիւն էր որ
 սուրբ զատկին ճրագալուցին գիշերը ոչ միայն եկե-
 ղեցիները, այլ նաև քաղքին փողոցները (սօխախ-
 ները) ճրագներով կը զարդարէին: Այլ ասոր համար
 մասնաւոր մարդիկներ սահմանված էին, որոնք մեծ
 մեծ կերօններ կը վառէին: Օչատկին օրը Աոստան-
 դիանոսին սովորութիւնն էր աղքատներուն ողոր-
 մութիւն բաշխել ու պալատականներուն պարգև-
 ներ ու շնորքներ ընել: Արդ աս հանդիսութիւն-
 ները Աոստանդիանոս աս անգամուն ալ ընելէն ետ-
 քը, շատ չանցաւ կորսընցուց իրեն առողջութիւնը
 ու հիւանդացաւ: Բայց իր հիւանդութեանը մէջ
 այնչափ խելքը միտքը ժողովրդեան վրայ էր որ
 ինչվան նոր նոր օրէնքներ ու նոր նոր բարեկար-
 գութիւններ կուզէր ընել անոնց: Վրիստոնէական
 կրօնին սէրը սրտին մէջը այնչափ վառված էր որ
 ամէն օր սուրբ գիրքը կառնէր կրկարդար ու կը-
 սորովէր: Սե՛ծ ուրախութիւն կունենար երբոր սբ
 գիրքին մէջէն խօսք մը միտքը կը պահէր՝ ու անոր
 վրայ իր ընտանիներուն հետ խորաթայ կընէր:
 Աերջին հիւանդութեան մէջ իյնալէն յառաջ օր
 մը բացաւ Աոստանդիանոս բերանը իր պալատա-
 կաններուն առջին, ու սկսաւ երկան խօսիլ հոգ-
 ւոյն անմահութեանը ու երկնից արքայութեանը

վրայ, որ իբրև վարձ խոստացած է Մատուած արգարներուն: Այնչափ նախանձու ու այնպիսի բորբորմամբ խօսեցաւ, ինչպէս ամմէն քովի եղողները իմացան թէ Աոստանդիանոս ասով կուզէկոր մէկը յանդիմանել: Այլ իրաւցընէ շատ երկան խօսելէն ետքը դարձուց Աոստանդիանոս իր աչվըները իշխաններուն մէջէն մէկու մը՝ որ աշխարհական իմաստութեամբ կը պարծենար, հարցուց անոր թէ՛ ըսածներս քեզի ինչպէս կերևան՝ ճշմարիտ են թէ սուտ: Պատասխան տրվաւ իշխանը՝ թէ պէտ չուզենալով՝ թէ ճշմարիտ են՝ ո՛վ տէր իմ արքայ:

Վանի գնաց հիւանդութիւր Աոստանդիանոսին մարմնոյն չորս դին տարածեցաւ, ուստի բժիշկները պատուիրեցին որ տաք բաղնիք մտնէ շատ անգամ: Արբոր անկից օգուտ մը չեղաւ, առին զԱոստանդիանոս և եղինուպօլիս տարին՝ որ հոն տեղացի բաղնիքն ալ փորձեն: Արբոր հոն ալ օգուտ մը չորաւ՝ այլ աւելի ևս ծանրացաւ, մտմտաց Աոստանդիանոս այն մեծ ճամբուն պատրաստութիւնը տեսնել, որ զմարդը ժամանակաւոր կեանքէն յաւիտենական կեանքը կը տանի: Ուստի ըսաւ որ զինքը սրբուհւոյն Ղուկիանեայ եկեղեցին տանին, հոն երկու իրեք ժամ աղօթք ընելէն ետքը ջերմեռանդութեամբ, ու Մատուածէ իրեն մեղացը համար թողութիւն խնդրելէն ետքը, ըսաւ թէ՛ կուզեմ մկրտը վիլ, ուստի ծունկ չօքեցաւ գետնի վրայ եկե-

զեցւոյն մէջ՝ ու խոնարհ խոստովանութիւն ըրաւ
 իրեն մեղացը . և ետքը սկսան մկրտութեան խորհր-
 զոյն նախընթաց հանդիսութիւնները կատարել :
 Ուղեց Կոստանդիանոս որ զինքը անկից առնեն տա-
 նին Աքիրոն ըսված գիւղաքաղաքը , որ Նիկոմիդայ-
 էն շատ հեռու չէր : Ըն հասածին պէս կանչեց
 քանի մը եպիսկոպոսներ իր առջևը ու խօսեցաւ
 անոնց այսպէս : « Աս այն օրն է որուն շատոնց կը-
 « բաղձայի , սրտիս մէջը միշտ կըբորբոքէր Աստու-
 « ծոյ ձեռքէն աս փրկութեան գրաւը (ուհիներ)
 « ընդունել : Արդ հիմակ ժամանակն է որ ես առ-
 « նում իմ վրաս աս սուրբ նշանը , որ մահկանա-
 « ցուաց անմահութիւն կուտայ : Իմ դիտաւորու-
 « թիւնս էր մկրտըվիլ Յորդանան գետին մէջը , ուր
 « որ հաճեցաւ փրկօղն Աստուած մեզի օրինակ տա-
 « լու համար մկրտըվիլ : Բայց Աստուած որ քան
 « զմեզ աղէկ կըճանչնայ թէ ինչ բան մեզի աւելի
 « աղէկ է , մկրտութիւնը հոս տեղս ինձի տալ ու-
 « ղեց : Բայց աղէկ գիտնաք որ եթէ Աստուած
 « դատաւորն կենդանեաց և մեռելոց իմ կեանքս
 « երկընցընելու ըլլայ , և սահմանելու ըլլայ որ աս-
 « կից ետքը միաբան Աստուծոյ ժողովրդեանը հետ
 « ըլլալով՝ և 'ի մի մարմին եկեղեցւոյ խառնըվելով
 « հասարակաց աղօթից հաւատացելոց հաղորդ ը-
 « լամ , այնպիսի կեանք մը ու այնպիսի օրէնքներ
 « ինձի կըսահմանեմ , որպիսի որ Աստուծոյ ծառայի

„մը կը վայել“ : Աս խօսքը լմննալէն ետքը՝ մկրտու-
 թեան հանդիսութիւնները կատարեցին, և ետքը
 դրոշմ ու ամենասուրբ հաղորդութեան խոր-
 հուրդը տրվին անոր : Արբոր Վրիստոսին սրբա-
 զան մարմինը ճաշակեց Աոստանդիանոս՝ չիկրնար
 պատմը վիլ թէ ինչ ուրախութիւն ու ինչ ցնծու-
 թիւն ունեցաւ սրտին մէջը, նոր լոյս մը ծագեցաւ
 իրեն հոգւոյն՝ որով քրիստոնէական կրօնին որպի-
 սութիւնը աւելի ևս իմացաւ : Արբոր հանդիսու-
 թիւնները լմնցան՝ Աոստանդիանոս հագաւ ճեր-
 մակ զգեստ մը, և ալ չուզեց թագաւորական ծի-
 րանին վրան առնուլ, և սկսաւ բարձր ձայնիւ աղօթք
 ընել, և այսպէս վերջացուց իր աղօթքը : „ Հիմակ
 „ ճշմարտապէս կրսեպեմ՝ զիս երջանիկ ու արժանի
 „ անմահական կենաց՝ և հաղորդ աստուածային
 „ լուսոյ : Աշուառական են անոնք և մեծապէս
 „ թշուառական, որոնց չը վիճակիր մտնել ՚ի մասն
 „ այսպիսի մեծ բարութեան“ : Ասկից ետքը իշ-
 խանները ու պալատականները ամմէնքը մտան Աոս-
 տանդիանոսին խուցը, ու լացով իրեն բարեմաղ-
 թութիւններ սկսան ընել ըսելով՝ Աստուած հրա-
 մանոցդ երկար կեանք տայ : Արբոր կէտնք բառը
 լսեց Աոստանդիանոս շուտ մը պատասխան տրվաւ
 թէ, „արդէն Աստուած տրվաւ ինձի ճշմարիտ
 „ կեանքը, և թէ՛ հոգիս մինակ գիտէ այն մեծ բա-
 „ րութիւնները, որոնք որ ստացաւ իբրև ժառանգ-

,, գութիւն, ուստի չեմ բաղձար որ ուշանայ իմ
 ,, վախճանս, այլ կրցանկամ ու կրփափաքիմ որ
 ,, մարմնոյս կապը արձրկվի, որպէս զի յաւիտեանս յա-
 ,, լիտենից վայելեմ ընդ Աստուծոյ“ : Իբրև
 ստոյգ կըսեպվի՝ ինչպէս քանի մը պատմիչներ ալ
 կըսեն՝ թէ Արստանդիանոս մեռնելու ատենը կտա-
 կին մէջը պատուիրեց իր որդւոցը որ զսուրբ Աթա-
 նասը ու մէկալ եպիսկոպոսներն ալ քշվելէն ետ
 դարձընեն ու իրենց աթոռը նստեցընեն :

ԳԼ . ԾԳ .

Առաքանդիանոս իրմեանի, եւ իրեն լաղման հանգի-
 սո-լի-նե-րը իբրաքարէն :

Ամ ան 337 :

Արստանդիանոս սուրբ մկրտութիւնը առնելէն ետ-
 քը՝ քանի մը օր վրայէն անցաւ անանկ տկարա-
 ցաւ՝ որ վրան ամենևին ուժ չիմնաց : Աւստի կան-
 չեց իրեն իշխանները ու զօրապետները, ու անոնց
 երդում ընել տրվաւ որ ինքը մեռնելէն ետքը վնաս
 մը չընեն ո՛չ իր որդիներուն, և ո՛չ քրիստոնէա-
 կան կրօնին : Իր կտակը ըրաւ և կտակին մէջ հաս-

տատեց իրեն որդւոցը համար քաղաքներուն ան բաժանումը որն որ յառաջ ըրած էր : Այս կտակին կատարումը յանձնեց իր երկրորդ որդւոյն՝ որ կըսվեր Աոստանդոս , կամ վասն զի անիկայ շատ կըսիրէր , և կամ թէ մէկալ եղբայրներէն աւելի մօտիկ էր Աոստանդիանոսին : Ասան զի Աոստանդոս երբոր լսեց թէ իր հայրը մահուան վտանգին մէջը ընկած է , շուտ մը ճամբայ ելաւ իր հօրը գալու , բայց ինչ օգուտ որ ինքը Աոստանդիանոսին չի հասած , Աոստանդիանոս հասած էր իր տեղը ուր որ պիտի երթար : Արդ Աոստանդիանոս իր որդիներուն մէկը իր քօվը չունենալով , շինած կտակը յանձնեց այն արիստեան քահանային , որն որ իր քոյրը Աոստանդիա մեռնելէն յառաջ յանձնած էր Աոստանդիանոսին : Արդում ընել տըվաւ Աոստանդիանոս աս քահանային որ կտակը կուտայ կամ կըյանձնէ իր Աոստանդոս որդւոյն ձեռքը : Ո՛վ վնասակար յանձնարարութիւն , ինչ չարիքներ չելան քեզմէ : Արիստեան քահանան աս կտակին ձեռքովը հաճելի ու սիրելի ըլլալով Աոստանդոսին , ինչ խորհուրդ որ կուտար՝ կրկատարէր Աոստանդոս : Չեմ պատմեր թէ ինչ ըրած է Աոստանդոս ուղղափառութեան դէմ , միայն աս կըսեմ թէ՛ հաւատոյ բաներու մէջ ունեցաւ իրեն խորհրդական աս քահանան՝ որ գլխէն ինչվան ոտքը արիստեան էր :

Աոստանդիանոսին հիւանդութիւնը քչքչե-

լով բերաւ հասուց զինքը ինչպան սուրբ Պէնտէ-
կոստէին այն է Հոգեգալստեան օրը. և ահա
նոյն օրը կորսնցուց իր ամմէն զգայութիւնները :
Այս օրը հազիւ անցած էր՝ երջանիկ մահուամբ փո-
խեցաւ Աոստանդիանոս աս աշխարքէն՝ յանձնելով
իր հոգին Աստուծոյ ձեռքը : Ապրեցաւ աս ան-
ցաւոր աշխրբիս վրա վաթսունը չորս տարի ու թա-
գաւորեց երեսուն տարի՝ ինը ամիս՝ ու քսանը եօթը
օր : Ա՛վ կրնայ պատմել թէ ինչ ողբ ու ինչ սգա-
ւորութիւն եղաւ այն օրը արքունի պալատին մէջ :
Իրեն սիրելի ու հաւատարիմ ծառայները ամմէնքը
մէյ մէկ դի քաշված, մէկը ձեռքը գլխուն զարնելով
կըհառաչէր, մէկալը սրտին խշխշալէն կրբռնէր
իր վրայի լաթերը կրբզքտէր, միւսին հառաչան-
քէն շունչը կըհատնէր, ու մարածի պէս գետնի
վրայ կըփռվէր, մէկալը չէր կրնար լալէն գլուխ
վերցընել ու իր աչվըները չորցընել. և վերջապէս
որչափ որ սիրելի էր ամմէնուն՝ այնչափ ամմէնուն
ցաւոց ու սգոյ նիւթ եղաւ Աոստանդիանոս : Այս-
պէս ցաւալի եղաւ պալատականներուն Աոստան-
դիանոսին մեռնիլը, վասն զի կըսիրէին զինքը, հա-
պա ինչպիսի սգալի եղած պիտի ըլլայ ժողովրդեան
ու մանաւանդ աղքատներուն, չէ թէ մինակ վս զի կը-
սիրէին անիկայ, այլ վասն զի գրեթէ իրենց հացն
ալ կորսնցուցին : Այն բերանները որ Աոստանդիա-
նոսին ողորմութեամբը կըլեցվէին, հիմակ լեցվեցան

լալով և ողբով, և այն անձինքը որ Արստանդիանոսին առատաձեռնութենէ կը կշտանային, հիմակ չէին կրնար կշտանալ լալէն ու հառաչելէն: Բոլոր քաղաքը ան օրվան մէջ դարձաւ ու եղաւ սգոյ տուն մը, և մարդ չիմնաց որ այս բօթ լուրը լսէ ու սիրտը գէթ չհկոտրի, ու իր ուրախութիւնը չդարձընէ 'ի տրտմութիւն:

Արդ Արստանդիանոս մեռածին պէս, ահա շուտ մը իր որդիներուն մարդ խրկեցին որ ելան գան: Աւ երբոր անոնք ճամբան էին, պալատականները ոսկիէ դագաղ մը շինել տրվին, և Արստանդիանոսին մարմնոյն հագուցին իր թագաւորական լաթերը, ու դրին դագաղին վրայ, և բոլոր զնուորները շարվեցան անոր շրջանակը, և անանկ առին անիկայ Արստանդնուպօլիս բերին: Արքունի պալատին մէջ մեծ սրահ մը պատրաստեցին թագաւորավայել զարդերով, սրահին մէջ տեղը կառուցին փոքր բուրգն մի (այն է փիրամիտէզ) որուն ռամկօրէն կը սենք Վաւարան, այս բուրգը զարդարեցին ոսկի աշտանակներով ու ջահերով, անանկ խիտ (սըխ) որ կը կարծը վէր թէ բոլոր բուրգը բոց մը կտրած է: Աս բուրգին վերի դին Արստանդիանոսին մարմինը դրին, և իր մեծամեծները ամմէնքը մէկիկ մէկիկ եկան ու իրեն նշան յարգութեան ցըցուցին՝ որպէս թէ կենդանի էր: Արկու իրեք օր Արստանդիանոսին մարմինը ասանկ կեցաւ՝ որ-

պէս զի թաղման իր որդիները ներկայ գտնուին .
բայց առաջին և երրորդ որդին այսինքն Աոստան-
դին , և Աոստաս չիկրցան հասնիլ , վասն զի շատ
հեռու էին , միայն Աոստանդոս ներկայ գտնուեցաւ ,
վասն զի՝ ինչպէս ըսինք՝ մտ էր : Արբոր հասաւ
անիկայ՝ մեծ փառքով ու հանդիսութեամբ Աոս-
տանդիանոսին մարմինը առին տարին առաքելոց
եկեղեցին : Վագարին առջևէն կերթար Աոստանդոս
սևերը մտած , և անոր ետևէն կարգաւ կերթային
գունդ գունդ զինուորներ : Ասոնցմէ ետքը կուգար
Աոստանդիանոսին մարմինը դագաղով , որուն չորս
դին շարված էին Աոստանդիանոսին թիկնապահնե-
րը և արքունի պալատականները : Արբոր եկեղեցին
հասան՝ տարին դրին դագաղը փառաւոր քաւարա-
նին վրայ՝ որ յառաջագոյն պատրաստուած էր : Աոս-
տանդոս՝ որ դեռ մկրտուած չէր՝ իր զինուորներուն
հետ մէկ դի քաշուեցաւ , ու ան ատենը եկան եկե-
ղեցւոյ պաշտօնեայները մեծ հանդէսով թաղման
կարգը կատարեցին : Աս հանդիսութիւնը կատա-
րելէն ետքը , եկեղեցւոյն մեծ դռան քովը սրահին
մէջ թաղեցին Աոստանդիանոսին մարմինը , ուր
պատրաստուած էր այնպիսի մեծ ու երևելի ինքնա-
կալի վայել հոյակապ գերեզման մը :

Արբոր Աոստանդիանոսին մահուան լուրը
Հոովմ քաղաքը հասաւ , զրէթէ ամմէն քաղաքա-
ցիները սգոյ մէջ մտան , անանկ որ ամենայն հրա-

պարական զուարճութիւնները ու խաղերը դադարեցան, բաղնիքները ու մեծ հրապարակները քոցվեցան: Խնդրեց ծերակոյտը որ Աոստանդիանոսին մարմինը Հռովմ խրկեն, և երբոր չիտրվին՝ շատ տրտմեցան: Պատկեր մը քաշել տրվին, որուն մէջը Աոստանդիանոս քառաձի (չորս ձի լծած) կառքի մը մէջ նստած կրկառավարէր, և երկինքէն ձեռք մը երկնցած էր իրեն վրայ՝ իբրև թէ զինքը վեր առնելու՝ ու երանելոյ կարգին մէջը խօթելու:

Ահա այսպիսի մեծ թագաւոր մը երեսուն տարի և աւելի ևս թագաւորելէն ետքը, և աշխրփիս վրայ մեծ անուն ձգելէն ետքը՝ փոխվեցաւ երկնից արքայութիւնը, որուն համար որ աշխարք եկած էր: Արդ՝ եթէ այսպիսի մեծազօր թագաւոր մը կրցաւ այնչափ բիւրապատիկ վտանգներուն մէջը արքայութիւնը ժառանգել, հապա մենք քանի դիւրութեամբ կրնանք ձեռք ձգել այն յաւիտենական հանգիստը՝ որուն համար պէտք է որ գիշեր ցորեկ աշխատինք: Ուրեմն զօրանանք ու քաջ ըլլանք և սուրբ Աոստանդիանոս թագաւորին վարքը աչվըներնուս առջին զնելով անոր հետևինք, անոր բարեխօսութիւնը խնդրենք երկինքէն, որպէս զի այն զօրութիւնը որ ինքը Աստուծմէ առաւ ու անով սատանային յաղթեց, նոյնը խնդրէ մեզի համար ալ: Այլ ինչպէս որ ինքը սուրբ հաւատոյ գարունը աւետարանեց մեզի իր սուրբ հաւատքին

ջերմ սիրովը, մենք ալ նայինք որ այն հոգևոր
 գարնան պտուղը ճաշակենք սրբութեամբ, աճեցը-
 նենք սիրով, ու պահենք անապական, ինչվան
 այնչափ որ՝ պէտք եղած ատենը արին ալ թա-
 փենք ուղղափառ հաւատքին համար, և հաւատա-
 ըրմ մնալով Վրիստոսին սուրբ փրկական և անա-
 բատ վարդապետութի մէջ, արժանի ըլլանք իրեն
 անսուտ խոստմանը որ է յաւիտենական արքայ-
 ութիւնը:



Յ Լ Ն Կ

ԳՎԽՈՅ ՊԼՏՄՈՒԹԵԼՆՍՍ՝

ԳՎ.Ը. Աստուծոյ խնայանքն լուսաւորելն ծնունդ դը. եր հօրը կեանքը ըլլալը, ու երկն Ղեկիչի խնայանքն չողջ ըրած գործիքը:	1
ԳՎ.Թ. Աստուծոյ խնայանքն լուսաւորելն:	6
ԳՎ.Չ. Ղեկիչի խնայանքն ու Սնտիստիանոս իւր հրածարին ինչն իմաստաւորելն: Ղեկիչի խնայանքն կուսակցի վաստակաւորելն լուսաւոր ը նելը, ու Ղաղէրիսոս զաննիկոյ իւր յիշատակը:	10
ԳՎ.Ժ. Ղաղէրիսոսն գաղափարային լուսաւորելն:	14
ԳՎ.Ի. Աստուծոյ խնայանքն զաննապան ձգանքն ը րու մեջ ինչն իմաստաւորելն Ղաղէրիսոսն չողջ, ու աննիկոյ իւր յիշատակը, ու եր հօրը չողջ իւր լուսաւորելն:	17
ԳՎ.Լ. Աստուծոյ իւր յիշատակը: Աստուծոյ խնայանքն կեանքը իւր լուսաւորելն. ու եր հօրը երկն ըրած գործիքը:	21
ԳՎ.ԼԵ. Հոգեւորականացոյ տապաւորութիւնը Ղաղէ- րիսոսն, ու Աստուծոյ խնայանքն ինչն իմաստաւորելն ըլլալը:	25

- ԳԼ Զ Բ. Սնտախնայնոսն ի սուրբ իր սրբունն ի զնայնեւ
 եմքնայնայնայնայն : Ի զնայնեւն ի Սնտախնայնոսն
 նոսն ի իրայնն ինքնայնայն : 30
- ԳԼ Զ Գ. Սնտախնայնոսն ի սուրբ Աստուածաբանայն
 սնն արեւելեանայն, Բայց չնկրնար : 34
- ԳԼ Զ Ժ. Սնտախնայնոսն ի սուրբ պատարանայնայնոսն
 սնայնեւ : Արարատապարտի 'ի հաս : Աս-
 Գաստիլիոսն չարաչար ի իրայնն : 37
- ԳԼ Զ ԺԱ. Աստուածաբանայնոսն Բարբարոսն երանոն
 ի իրայնն, սուրբ Երանոն չարայնն այցելոսն
 ի իրնն : 43
- ԳԼ Զ ԺԲ. Նոստրայնայն Աստուածաբանայնոսն ի սու-
 րայնն՝ սր արեւելեան Սնտախնայնոսնն յետ-
 չեան տարակ : Ի Աստուածաբանայնոսն սուրբ
 ի իրայնն արեւելեան, Ի ճամբան արեւ-
 ի իրնն ի իրայնն : 46
- ԳԼ Զ ԺԳ. Սնտախնայնոսն սուրբ ի իրայնն Նոստրայն
 հայնն սուրբ, Ի Աստուածաբանայնոսն ի ի-
 հասնն Նոստրայն : 56
- ԳԼ Զ ԺԴ. Աստուածաբանայնոսնն նի Աստուած ի ի-
 րայնն : սուրբ սուրբ ի իրայնն
 Սնտախնայնոսնն : 59
- ԳԼ Զ ԺԵ. Աստուածաբանայնոսն յարկնայնայնայն ի ի-
 հասնն Նոստրայն : 65
- ԳԼ Զ ԺԶ. Աստուածաբանայնոսնն երեւելի Գործ-
 ի իրնն Նոստրայն ի իրայնն տարակ : 71

ԳԼ ԺԻԶ. Առարամեղեանոս յընարանեան-լեւնը
իննինի արարածէլը . ու անոր հասար Լ Է-
ինանեանն հեղ իրեն գրած հրովարարիլը : 75

ԳԼ ԺԻԶ. Առարամեղեանոս յընարանեան-լեւնը
ազարո-լեւնը հասար Սասնիմնանն հրո-
վարարիլ յը հանէլը ինարայ , եւ ելեզկե-
այնն զանազանն Բարեբնէլը իրենն : . . 79

ԳԼ ԺԻԹ. Առարամեղեանոս իւրեայ Սերանն :
Անիկ իւրեայ իւրայլեւ Բարեարոսնե-
րոնն : Լ ինանեանն իւրայլեւ Սասնիմնան-
նն . եւ Սասնիմնան շարաշար իւրարիլն : 84

ԳԼ ԺԻ. Առարամեղեանոս ազարովեանեղեանն ու
եկեղեցայանն-լեւնն զանազանն օգնու-
լեւնն-լեւնն իրենն : 95

ԳԼ ԺԻԵ. Առարամեղեանոս Լ ինանեանն հեղ
երիւն անգամ իւրարիլ-րոսիլ . ու երիւն-
անգամ ալ իւրայլեւ : 100

ԳԼ ԺԻԸ. Առարամեղեանոս ու Լ ինանեան իրա-
րոն արարայ հեղ զնննն ՚ի զնննը հեարա-
րոսո-լեւն իրենն : Առարամեղեանոս իր յա-
ղասնեղեանն արեւ իւրեայ , ու զանազանն
օրեանն-լեւնն իւրենն : , 106

ԳԼ ԺԻԿ. Առարամեղեանոս իւրեայ Հասով ,
ու հոն արեւ իր Լեւգոս-արո-լեւն արոս-
նեղարար արարեղաւ իւրենն , եւ զանա-
զանն իարգեղ իւրենն : 110

ԳԼԻԳ. Սուրբ Գրեգոր Լուսաւորելի յա-
Տրդատի լեագաւորը հառձիկ լերլեան Ասու-
րանդիանսին հետ ուրախակնց ըլլալու-
համար. ու անոնց Տաւանու-լէ լեաղլէր: 115

ԳԼԻԽ. Ասորանդիանոս զանազան հոգեոր-
թարեւորգո-լէ-ննէր կընէ: . . . 120

ԳԼԻՅ. Ասորանդիանոս կընուածէ Գրանա-
որեան հերեորիկոսնէրոն յանդգնու-լէր: 123

ԳԼԻԶ. Ասորանդիանոս կըյազլէ նոր ա-
պարաճենէրոն, ու պարեւրազի պարա-
բասարու-լէ կըրեանայ Լէկիանէսին պէճ: 133

ԳԼԻԷ. Ասորանդիանոս կըպարեւրազի, ու
կըյաղլէ Լէկիանէսին: . . . 140

ԳԼԻԸ. Լէկիանէս կըՏեանի: Ասորանդիանոս
կըլլայ հառձիայեաց պերու-լէր Տա-
հեժան ինքնակալ, ու ժողովորաբար պար-
ջընէրու էրեւէ կըլլայ: . . . 146

ԳԼԻԹ. Ասորանդիանոսին նոր առած խաղա-
նէրոն Տեղ յընդոնէրու-լէան համար
ըսած թարեւորգո-լէ-ննէրը: . . . 153

ԳԼԻՂ. Ըրեոսեան աղանդը: Ըրեոսին Աղէ-
սանդրեոյ ժողովին Տեղ պարասպարա-
ղիւ Աղէսանդրեոն. Խ Ասորանդիանո-
սին գրած լեաղլէր անոնց էրիոսին: . 157

ԳԼԻՂԲ. Ասորանդիանոս կըլուսի Ըրեոսին
հետ լէ՛ գրող Խ լէ՛ թերնսլ. Խ էրաբ

Սեկեոյ ժողովին պարտադրութեանը իւր
արեւմտայ : 166

ԳԼ ԼԳ . Հայրատկարներուն հետք վեճաբան-
նութիւն իւրեան արտասիւն իմաստասէրներ-
ըր, որոնցմէ մէկը իւրատանայ ու իւրեայ
սրբնորոշեալ : Արտասնորոշանոս պարիկի ար-
տեւանութեանութիւն մը իւրեկ էպիսկոպոսներ-
ըրան : 170

ԳԼ ԼԴ . Հայրատկարները իւրեարին գտարեւո-
ւելնոսին իարժիւր : Արտասնորոշանոս ան-
գամ մը վրայ իւրհասնի հայրատկարներուն
ժողովը ըրած արեւնիին . եւ հրատարա-
նաւ իւրատարտարարովն արեւոտան մը ը-
րութեանը : 175

ԳԼ ԼԵ . Արտասնորոշանոս՝ ժառանգութեան իր ինկիւլ
ու Արեւոս իր որդին մտայնելը ինարայ : 186

ԳԼ ԼԶ . Բարեպաշտոհին Հեղինիկ իւրարեկ
սք գերեւսմանը, ու Վսին սք Խոսը : 194

ԳԼ ԼԷ . Լը մը ինոց արածարներ իւրանորը-
վին, ու ել մը եկեղեցիներ իւրեանովն :
Հրեայ մը սրբնորոշեալ իւրայ, ու Արտ-
ասնորոշանոսին յետոսովն եկեղեցիներ
իւրեան : 199

ԳԼ ԼԸ . Եստեթիոս Սեկեոյի «Սեկեոյի» թեոսի-
որեւ ու Երեւոս եր իւրատանան յարտ-
ըրանայ : 206

ԳԼ Է Լ Թ . Առսարանդիանոսի շինութիւնը : . 210

ԳԼ Է Խ . Առսարանդիանոս յազատք Տեճացիներու
էրեւել իբրևայ . որևորևա Բարեկարգու-
թիւննիւնիւ իբրևի : 217

ԳԼ Է ԽԱ . Առսարանդիանոսին ըրած հանդիսու-
թիւնիւն յազատք շնորհիւն արեւելոս ու պու-
նասան որարիւնիւնը՝ որ արևուտ էր որաչ
հոնսարարնիւնն : 222

ԳԼ Է ԽԲ . Առսարանդիանոս ինպէ որ ար ար Լեւո-
նաս զԱրիսու ընդոննիւ էր էկեղեցոսոյն
Տեճ . եւ ար Լեւոնասու անոր յորիւ չննիւր : 228

ԳԼ Է ԽԳ . Արիսուանիւնի իբր չնն յանի յոսու-
ղաժատ էղեւնիսոսանիւր : 232

ԳԼ Է ԽԴ . Եւսեթիոս ինասարացին չոսպէր է-
ղեւնիսոս ըրու լեւորիսոս էկեղեցոսոյն ,
եւ Առսարանդիանոս ինհաննիւ ասոր , ու
էոր չն հերեղիսանիւնն որեւ հրոջարու
արաի յը ինհաննիւ : 237

ԳԼ Է ԽԵ . Առսարանդիանոս իբր յաղթի Գալեացի-
նիւնն ու Սարմատացիներոսն : Սեու-
ցանիւն ինասոս զՍոպարոս Փիլիսոփան .
եւ Շատոսն Լեւոսուսին յորոր իբր-
ւայ որ չնորոնեայնիւնն հոգ արանի : 243

ԳԼ Է ԽԶ . Առսարանդիանոս ար լեւորի իբրևորի
Տեճ արարի Լեւորն Լեւոսոսիւնն : Իբրևն

դրոյց ու Եղեօբորոյրոց Տեղ իր Լեագա-
-որոս-Լեւել իր Լեագաձնէ : 249

ԳԼԿԽԵՆ. ՍԷ Լեւանասին գեղ Եղած զբար-
-որոս-Լեւանելը : 255

ԳԼԿԽԶ. Տեւրոսին շարածոյրով, Խ սուրբ
Լեւանասին գագապարորոս-Լեւանը : . . . 260

ԳԼԿԽԾ. Արոսագեղաց ժողովը. Արեոս ՚ի
Հաղարդոս-Լեւան Ելեղեցոց իր Գնէ. Խ
սուրբ Լեւանասը իր շէն : 272

ԳԼԿԾ. Արեոսին շարաշար սարիկը : . . . 280

ԳԼԿԾԱ. Ասորոսանդիանոս պարեւոսյի պար-
-բասորոս-Լեւան իր Եւանոյ (շարոս-Պարո-
-սոյ Լեագա-որոսին գեղ. Խ Երսը (շ-
-արոս-Լեագա-Լեւ ու Հաղարոս-Լեւ իր Ենդրէ : 290

ԳԼԿԾԲ. Ասորոսանդիանոս իր Եւանոսոյ,
ու իր Երոսանի զեւր Տիրորոս-Լեւել : . . . 293

ԳԼԿԾԳ. Ասորոսանդիանոս իր Եւանի, Խ իր Եւ
Լեագան Հանդիսոս-Լեւանելը իր Երարովն : 298



